ՆՈՐ ԲԱՌԵՐ

Ա ՊՐԱԿ

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՆՈՐ ԲԱՌԵՐ

Ա պրակ

***

ՀՏԴ 81'374=19
ԳՄԴ 81.2Հ-4
Ն 930

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագիր՝ բ.գ.թ., դոցենտ Վ.Լ.Կատվալյան
Գրախոս՝ բ.գ.թ., դոցենտ Լ.Գ. Թելյան

Ն 930 Նոր բառեր. Ա պրակ: Կազմողներ՝ /Ա.Ս Գալստյան,
(ղեկավար), Գ.Կ.Հովսեփյան, Ա.Գ.Սահակյան,
Լ.Ե.Սահինյան.– Եր.: «Գիտություն» հրատ., 2015, 196 էջ:

Գրքում ներկայացված են մամուլում, գեղարվեստական և գիտական գրականության մեջ շրջանառվող բառեր, որոնք գրանցված չեն բացատրական և նորաբանությունների բառարաններում: Աշխատանքը կարող է օգտակար լինել հայոց լեզվի բառագիտությամբ և բառակազմությամբ հետաքրքրվող մասնագետներին, ուսուցիչներին, բանասիրական ֆակուլտետների ուսանողներին, լրագրողներին, հրատարակիչներին:

ISBN 978-5-8080-1189-2
© ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, 2015

ԱՌԱՋԱԲԱՆ

Լեզվի բաղադրիչ տարրերից ամենաարագ փոփոխվողը բառապաշարն է: Հասարակական կյանքի բոլոր փոփոխությունները, նոր հասկացություններն ու նոր իրողությունները իրենց արտացոլումն են գտնում լեզվի բառապաշարում:

ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը ձեռնամուխ է լինում նոր բառերի հավաքման, բացատրման աշխատանքներին: Մամուլից, գիտական և գեղարվեստական գրականությունից (ինքնուրույն և թարգմանական), համացանցից, հեռուստաէկրանից, տարբեր գովազդային հոլովակներից և ցուցանակներից, բանկերի, նախարարությունների հրատարակած բուկլետներից, ձևաթղթերից հավաքվել են բացատրական բառարաններում[1] և նորաբանությունների բառարաններում[2] չվկայված բառերը: Նշված յոթ բառարաններում չարձանագրված բառերը, արտահայտություններն ու դարձվածքները համարվել են նոր և գրանցվել են ինստիտուտի «Նոր բառերում»: Բառարանի բնույթի թելադրանքով՝ նպատակահարմար ենք գտել նյութը հրատարակել պրակներով: Հրատարակումը լինելու է շարունակական: Ընթերցողի դատին ներկայացվող «Նոր բառերի» Ա պրակը պարունակում է ավելի քան 1500 բառամիավոր: Գլխաբառից հետո նշվում են խոսքիմասային պատկանելությունը, բառի բացատրությունը, օրինակը, աղբյուրը: Տրվում են բառա-

---

[1] Մտ.Մալխասեանց, *Հայերէն բացատրական բառարան,* Ե., ՀՍՍՌ պետ. հրատ., հհ. 1-3, 1944, հ.4, 1945, *Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան,* հհ. 1-4, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1969-1980, Հ.Խ Բարսեղյան, *Հայերեն ուղղագրական-ուղղախոսական տերմինաբանական բառարան,* Ե., Լույս, 1973, Էդ. Բ.Աղայան, *Արդի հայերենի բացատրական բառարան,* Ե., Հայաստան, 1976:

[2] Ֆ.Հ Խլղաթյան, *Բառարան-տեղեկատու: Նոր բառեր և իմաստներ,* Եր., Հայաստան, 1982, Փ.Գ. Մեյթիխանյան, *Նոր բառերի բացատրական բառարան,* Ե., Փյունիկ, 1996, Ս.Ա.Էլոյան, *Արդի հայերենի նորաբանությունների բառարան,* Ե., Նաիրի, 2002:

գիտական և ոճական նշումներ: Բառի բացատրությունը տրվում է ըստ տվյալ տեքստում ունեցած նշանակության:

Բառացանկում չեն ներառվել բառատարբերակները (հընչյունափոխական, հոդակապային, ուղղագրական)՝ դրանք բառային միավոր չհամարելու պատճառով:

Թե ներկայացված բառերից որոնք կընդհանրանան, կդառնան համագործածական, իսկ որոնք կունենան եզակի գործածություն, կարճ կյանք, կմոռացվեն ու կհնանան, պարզ կդառնա ժամանակի ընթացքում: Հավաքված հազարավոր նորակազմություններից հետագայում որոշակի սկզբունքով բառընտրություն կատարելով, զտելով և ի մի բերելով 8-10 պրակների ընձեռած նյութը՝ հանրությանը կներկայացվի «Նոր բառերի ընդարձակ բառարանը», որում կարտացոլվեն 21-րդ դարասկզբի հայերենի բառապաշարում տեղի ունեցած տեղաշարժերը:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱԶ Ալմաստ Զաքարյան, Գրականության և պատմության ընթացքներ: Գրակ. քննադատ. – Եր.: Խորհրդ. գրող, 1989:

ԷԱ Էդ.Բ.Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն.- Եր.: ԵՊՀ հրատ., 1984:

ԼԽ Լևոն Խեչոյան, Երրորդ որդին: Պատմվածքներ. Արշակ արքա, Դրաստամատ ներքինի .- Եր.: Նաիրի, 2002:

ԼԽ 2 Լևոն Խեչոյան, Սև գիրք Ծանր բզեզ. - Եր.: Նաիրի, 1999:

ԼՀ Լևոն Հախվերդյան, Պարույրը: Խոհագրություն. - Եր.: Սով.գրող, 1987:

ԼՄ Լևոն Միրիջանյան, Լուսաստղ: Անտիպ և հրատարակված երկերի ժողովածու.- Եր.: «Գրական հայրենիք» ՓԲԸ («Հայաստան» հրատ.), 2013:

ԼՋ Լևոն Ջավախյան, Արծաթագիր. - Ե., 2010:

ԼՋՎ Լևոն Ջավախյան, Վերնիսաժ. – Ե., Վան Արյան, 2014:

Համ.գ.-ուղ. Հայադարան-հ.2, Համահայկական գիդ. ուղեցույց – 2009, Եր., «Գործարար տիեզերք» ՍՊԸ, 2009:

ՀԲ Հրաչ Բեգլարյան, Կաղնին ու մեխը: Պատմվածքներ. – Եր.: ՀԳՄ հրատ., 2013:

ՀՀԶՀ «Հայերենագիտության հիմնահարցեր և զարգացման հեռանկարներ» միջազգային գիտաժողովի զեկուցումներ, Եր., ԵՊՀ հրատ., 2014:

ՀՄ Հրանտ Մաթևոսյան, Նանա իշխանուհու կամուրջը: Արձակ / Հրանտ Մաթևոսյան . – Եր.: Օգոստոս, 2006:

ՀՄԵՀ Հայագիտական միջազգային երկրորդ համաժողով. հայագիտությունը և արդի ժամանակաշրջանի մարտահրավերները: Զեկուցումների ժողովածու. – Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2014:

ՀՊ Հ.Պետրոսյան, Խաչքար: Ծագումը, գործառույթը, պատկերագրությունը, իմաստաբանությունը. – Ե., Փրինթ-ինֆո, 2008:

ՄՍ Մարտիրոս Սարյան, Գրառումներ իմ կյանքից. – Եր., Հայաստան հրատ., 1966:

ՋԸ Ջահուկյանական ընթերցումներ: Հանրապետական գիտական նստաշրջանի զեկուցումներ (Երևան, 2012թ., հունիսի 7-11). –Եր.: Զանգակ, 2012:

Ռ.Իշխ. Ռ.Ա.Իշխանյան, Ակնարկ հայերենի տերմինաշինության. – Ե., Լույս, 1981:

ՍՀ Սարգիս Հարությունյան, Հայ առասպելաբանություն, Համազգային Վահէ Սէթեան տպարան, 2000:

ՍՍ Սուրեն Սարգսյան, «Մերոնք» կաղրում և կաղրից դուրս. – Վանաձոր «Սիմ» տպագրատուն, 2007:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՎԱԾ ԱՄՍԱԳՐԵՐ

Անդին - Անդին

ԲՀԲՄ – Բարև, հայրիկ, բարև, մայրիկ

Գարուն – Գարուն

ԳԱ –Գիտության աշխարհում

Դ – Դիտարան

Երևան –Երևան

Լրատու -

ՀԴ – Հայկական դեղաբույսեր

Ձեռ. -Ձեռագործություն

ՃՇ –Ճարտարապետություն Շինարարություն

Տն.առ. – Տնային առողջարան

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՎԱԾ ԼՐԱԳՐԵՐ

Ա - Ագրոլատու

Ազգ – Ազգ

Ավ - Ավանգարդ

ԳԹ – Գրական թերթ

Եր.համ.- «Երևանի համալսարան» ամսաթերթ

Ժամ. – Ժամանակ

Ժ - Ժողովուրդ

Իրավունք - Իրավունք

Իրատես – Իրատես de facto

ՀԶ – Հայ զինվոր

Համացանց

Հրապ. - Հրապարակ

ՀՀ – Հայաստանի Հանրապետություն

168ժ. -168 ժամ

ՉԻ – Չորրորդ իշխանություն

TV ալիք - TV ալիք

TV մոլ - TV մոլ

Ա

ԱԲԵՂՅԱՆԱԿԱՆ, ած. Այնուհանդերձ, շարականի կարգի **աբեղյականական** հայեցակետը մեզանում տիրապետող է (ՀՄԵՀ, էջ 409):

ԱԳՌԱՎԱԿՌԻՆՉ, գ. **Ագռավի կռնչոց, ագռավի հանած ձայնը** : Այդ **ագռավակռինչը** իմ գլխավերևում որքա՜ն է հնչել հայ շուրթերով, երբ անցել եմ գյուղից գյուղ (ԳԹ,15.11. 2013):

ԱԳՐՈԲԻԶՆԵՍ, գ. **....Ագրոբիզնեսում** Հայաստանն ունի եզակի հնարավորություններ՝ գյուղմթերք, պտուղ-բանջարեղեն, գինի արտադրելու և արտահանելու համար (168 ժ., 19.10. 2014):

ԱԳՐՈԼԱՆԴՇԱՖՏ, գ. **Գյուղատնտեսական լանդշաֆտ**: ….Կարկառ ու Վարանդա գետերի ջրահավաք ավազաններում էապես խախտված է **ագրոլանդտշաֆտների**ի չափավոր կառուցվածքը ….(ՀՀ, 01.22.2015):

ԱԳՐՈԼՐԱՏՈՒ, գ. Գյուղատնտեսությանը վերաբերող լուրեր: (Ագրոլրատու, 05.02.2015):

ԱԳՐՈՏՈՒՐԻԶՄ, գ.**Գյուղատնտեսական զբոսաշրջություն:** ....Վերջին տարիներին զարգանում են նաև ոլորտի նոր տեսակներ՝ **ագրոտուրիզմը,** առողջարանային տուրիզմը .... (ՀՀ, 14.03.2014):

ԱԴԵԿՎԱՏՈՒԹՅՈՒՆ, գ. **Համապատասխանություն, հավասարություն, նույնականություն:** Հայաստանում մայիս մեկին աշխատանքի կամ աշխատավորության տոն նշելը **ադեկվատության** բացակայության հերթական նշաններից է (Ժամ., 02.05.2014):

ԱԴՐԲԵՋԱՆԱՀԱՃ, ած. **Ադրբեջանին հաճո:** Միայն զեկույցի վերնագիրը բավական հակահայկական և **ադրբեջանահաճ** բնույթ ունի: Բռնությունների աճը Լեռնային Ղարաբաղում և Ադրբեջանի մյուս օկուպացված տարածքներում» (168 ժ., 07.10.2014):

ԱԶԳԱՆՇԱՆԱԿ, ած. **Ազգի համար կարևորություն ունեցող:**....Այն ունի ոչ միայն տնտեսական, քաղաքական հեռանկար, այլև **ազգանշանակ** խորքային իմաստ (Իր., 31.01.2014):

ԱԶԳԱՊԱՌԱԿՏԻՉ, ած. **Ազգը քայքայող, պառակտող**:

ԱԶԳԱՏԵՍԱԿ, գ. **Ազգի ինքնություն է:** Ու կեցցե սփյուռքը, որ կպահպանի հայ ժողովրդին իբրև **ազգատեսակ** (Իրատես, 07.02.2014):

ԱԶԳԷԹՆՈՍ, գ. Ցեղասպանության 100-րդ տարեդարձը շատ քիչ մեր կամքով, իսկ իրականում տիեզերական ուրույն ցիկլով **ազգէթնոսին** տանում է այնտեղ, ուր էթնոսը վաղուց պետք է լիներ (Իրատես, 14.04.2015):

ԱԶԳՈՒԵՐԱՄ, գ. **Ազգակից, տոհմ:** Ցավում էր, որ այդ կապը գնալով թուլանում է և ամեն ինչ անում էր **ազգուերամին** իրար կապելու համար (TV մոլ, 24.04.2014):

ԱԶԴԱԿԱՆՉ, գ. Սկսված շաբաթի **ազդականչը ,** վերնագիր, (Իրատես, 24.02.2015):

ԱԶԴՐԱԾԱԼ, գ. **Ազդրի վրայի ծալքը:** Աղջիկները կարճ, հետույքների կլորը հազիվ տեղավորվող, նեղ շրջազգեստներ են հագնում՝ դեպի վեր, **ազդրաածալը** գնացող խորը կտրվածքով (ԼԽ,2002):

ԱԶԵՐԻԱԿԱՆ, ած. **Ազերիներին հատուկ,ազերիներին բնորոշ**: Այդ ճանապարհն արդեն իսկ փորձությունների լաբիրինթոս է, ինչին էլ ավելացել է **ազերիական** արգելքը, որը քարի պես կախված է թուրքերի պարանոցից .... (ԳԹ, 22.11.2013):

ԱԹՈՌԱԲԱՂՁՈՒԹՅՈՒՆ, գ. **Պաշտոնաբաղձություն, աթոռապաշտություն:** Այսօր իմացանք, որ նախագահը մայրաքաղաքում պարետային ժամ է սահմանել. կուսակցական զզվռտոցներ, քաղաքական մտորումներ, **աթոռաբաղձություն** (ԼԽ, էջ 98):

ԱԹՈՌԱՎԱԽՈՒԹՅՈՒՆ, գ. **Վերադաս մարմիններից վախենալը**: Աթոռապաշտության և **աթոռավախության**, անձնական հաշիվ-հաշվեհարդարի լրացուցիչ նկրտումներով մթնոլորտը ծանր էր և 50-ականների սկզբին (ԱԶ, էջ 473):

ԱԼԻՔԵԶՐ, ած. **Ալիքավոր եզրերով:** Ծովաբողկը ….ունի հողի մեջ խոր թափանցող, մսոտ, սպիտակ արմատներ խոշոր ու լայն նշտարաձև **ալիքեզր**, արմատամերձ տերևներ (Ագրոլրատու, 05.02.2015 /:

ԱԼՄԱՍՏԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ, գ. **Ալմաստի մշակմամբ զբաղվող արտադրաճյուղ:** Ժամանակին ՀՀ ՀՆԱ կառուցվածքում լուրջ ներդրում ունեցող **ալմաստագործությունը** գրեթե կորցրեց իր նշանակությունը.... (Իրավունք, 29.04.2014):

ԱԼՐԱՓՈՇՈՏ, ած. **Ալյուրի փոշով պատված, ալրոտված:** Աղջիկներն **ալրափոշոտ** էին, ճիշտ ճերմակ ալենուշիկներ (ԳԹ, 13.06.2014):

ԱԿԱՆՋԱՀԱՃ, ած. **Լսողությանը հաճելի**: Վեհափառը հիանալի, ավելին՝ որոշապես տիրապետում է հռետորական արվեստի նրբություններին, ունի հրաշալի, խրոխտ ձայն**, **ականջահաճ** առոգանություն (Ազգ, 26.09.2014):

ԱԿՆԱՀՈՒՐ, գ. **Աչքերի հուրը:** –Քե՛զ եմ կտակում հար և առհավետ// **Ակնահուրն** իրենց՝ դեմքերը մարող...// Բոլորատևիր՛ ապրողների հետ,// Օ՛ակնահրից դեմքեր արարող (ԳԹ, 20.12.2013):

ԱԿՈՍԱՓՈՂ, ած. **Փողի վրա ակոսներ ունեցող:** ...Հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի երկու հոդվածներով՝ ...սպանություն, ապօրինի կերպով հրազեն, բացի ողորկափող հրազենից և դրա փամփուշտներից, ռազմամթերք, **ակոսափող** հրազենի փամփուշտներ, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելը, իրացնելը, փոխադրելը կամ կրելը (168 ժ., 28.01.2014):

ԱԿՈՍԴԻՐ,գ. **Հիմնադիր:**Բերանում ունեղծ հողով լեզուն դարձնում էր զորավոր: Ընդվզում էր գրով, դառնում **ակոսդիր** (ԳԹ, 21.02.2014):

ԱԿՈՒՆՔՎԵԼ, բ. **Սկիզբ առնել:** Փոքրիկ տղան լեռնաղբյուրից **ակունքված** առվակին խնդրում է, որ մի պահ կանգ առնի, խաղա իր հետ (ԳԹ, 16.05.2014):

ԱԿՏՈՒԱՐԱԿԱՆ, ած. **....Ակտուարական** մաթեմատիկայի ամբիոնը վերակազմավորվել և դարձել է **ակտուարական** և ֆինանսական մաթեմատիկայի ամբիոն (Եր. համ., թ. 11, 12.2013):

ԱՀԵՂԱՁԱՅՆԵԼ, բ, **Ահեղ ձայնով գոռալ**: Համարձակ , շիտակ բանաստեղծուհի է Մետաքսեն: Նա կանգնում է աշխարհի հզորների դեմ ու **ահեղաձայնում** (ԳԹ, 05.09.2014):

ԱՂԱՀԻՄՆԱՅԻՆ, ած. **Աղի և հիմքի խառնուրդ:** Կարող եք **աղահիմնային** խառնուրդ խմել կամ թեյ, հանքային ջուր (TV մոլ, 24.02.2014):

ԱՂԱՆԴԱԿԵՐՊ, ած. **Աղանդի նման գործելակերպ ունեցող:** Կարելի է **աղանդակերպի** դեմ պայքարել, քանի որ դրա վնասակար գործելակերպն այն է, որ նրանք չեն ենթարկվում պետական օրենքներին, այսինքն՝ պետության մեջ պետություն են ստեղծում: **Աղանդակերպ** գործող հոգևորականները ազդում են մարդու մտածելակերպի վրա, նրանց եսի վրա (Իրավունք, 21.01.2014):

ԱՂԱՆԴԱՌՐՍ, ած. **Աղանդ որսացող:** Այս նկարը նվիրում եմ մեծ ու փոքր օլիգարխներին.... աստվածավախ ու **աղանդաորս** հոգևորականներին .... (Համացանց):

ԱՂԱՎՆԱՉՔ, ած. **Աղավնու աչքի նման:**….//Որոնում էին դեռ շատ առաջ // Ու չէին կարող իրար գտնել/ /Քո առավոտը **աղավնաչք**//Ու իմ երեկոն մոխրաթև// (ԳԹ, 28.11.2014):

ԱՂԲԱԶԱՄԲՅՈՒՂ, գ. **Աղբի զամբյուղ**: Նրա հրամանով է Դմիտրի Կեսայանցին թույլ տրվել **աղբազամբյուղներից** հավաքել ժապավենի կտորները և մոնտաժելով 1966-ին ստեղծել այդ հոյակապ էքսցենտրիկ, երգիծական կատակերգությունը (Իրատես, 09.12.2014):

ԱՂԲԱՑԱՆՑ, գ. **Աղբանոց, աղբի ցանց**: Սա ասում եմ հասկանալի դարձնելու համար, որ պատկերացում չունեմ, թե ինչ են գրում այնտեղ՝ այդ նույն համացանցում, որն ինչ–որ մեկն անվանել է «համաշխարհային **աղբացանց** » (Ազգ, 14.03.2014):

ԱՂԵՓՔԱՆՔ. գ, **Աղիքների փքվածություն:** Խատուտիկի հյութը օգտագործում են մի շարք հիվանդությունների…**աղեփքանքի**, փորկապության ժամանակ (ՀԴ, թիվ 1, 2014):

ԱՂՈԹՔԱՇՇՈՒԿ, ած. **Ցածրաձայն աղոթող:** Հաճախ ինձ թվում է, թե պատերին խաչվել են անգամ նրանց ձայները, ինչ–որ տեղ գինով, ինչ–որ տեղ սթափ, մշտախոս ու **աղոթքաշշուկ**, ուր չկա քարացում (ԳԹ, 04.07.2014) :

ԱՃՈՒՐԴԱՎԱՐ, գ. **Աճուրդը վարող անձ:** Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, **աճուրդավարի** մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից (Իր., 14.10.2013):

ԱՄԱՌՆԱԿԵՍ, գ. **Ամառվա կես** .... Երբեմն ձյուն է գալիս **ամառնակեսին**, բայց մարդիկ սիրում են բնությունը և ավելի են կապվում նրան (ԳԹ, 06.09.2013):

ԱՄԵՆԱԱՇԽԱՏԱՄՈԼ, ած. **Ամենաշատ աշխատող:** Ճապոնիայի բնակիչներն աշխարհում **ամենաաշխատամոլն** են (TV մոլ, 24.04.2014):

ԱՄԵՆԱԹՈՂՈՒԹՅՈՒՆ, գ. **Ամեն ինչ բարձիթողի անելը:** Բռնությունների ու տնտեսական **ամենաթողության** շարունակականությունն առավել ևս համոզում է, որ իշխանությունը չի պատրաստվում փոխել մեթոդները՛ անկախ սահմանադրական նորմերի վերանայումից (Ժող., 17.12.2015):

ԱՄԵՆԱՓԱՓԱԳԱԿԱՏԱՐ, ած. **Բոլորի փափագները կատարող**: Հայկական ուշ ավանդությամբ ս. Կարապետը հռչակված է իբրև **ամենափափագակատար** սուրբ (ՍՀ, էջ 149):

ԱՄՊՐՈՊԱԿԱՅԾԱԿՆԱՅԻՆ, ած. **Ամպրոպին ու կայծակին բնորոշ՝ հատուկ՝ վերաբերող:** Ծովյան-Ծովինարը կապված է ջրային տարերքի՝ ծովի հետ, իսկ վերջինս թե հավատալիքներում և թե հերոսավեպում ընկալվել է երկնային ծովի իմաստով, իբրև **ամպրոպակայծակնային** տարերքի ջրային մարմնացում (ՍՀ, էջ 83):

ԱՄՊՐՈՊԱՋՐԱՅԻՆ, ած. **Ջրին և ամպրոպին հատուկ՝ վերաբերող:** Երեք դեպքերում էլ **ամպրոպաջրային** տարերքը (խոնավություն) առնչվում է իգական (հղիացած ծիրանի ծով, այծ, կով, կույս) սկզբունքի հետ (ՍՀ, էջ 84):

ԱՅԳԵՏԱՐԱԾՔ, գ. **Այգիների տարածք:** Հիվանդություններից և վնասատուներից պաշտպանված են եղել նաև խաղողի **այգետարածքները** (Ագրոլրատու, 05.02.201):

ԱՅՍՐԿՈՎԿԱՍ, գ. Ազգային անվտանգության ապահովման քաղաքական-իրավական հիմնախնդիրները վերլուծելիս պետք է հաշվի առնել այն բոլոր իրողությունները, որոնք գոյություն ունեն ինչպես Հայաստանում, այնպես էլ **Այսրկովկասում** և ամբողջ աշխարհում (Լրատու, էջ 146):

ԱՅՐԱԹԱՓԵԼ, բ. **Արական սեռը ոչնչացնելը:** Մի դար առաջ Արևմտյան Հայաստանի գյուղերն ու քաղաքներն էին **այրաթափում**, որ հեշտ լինի անզեն, անայր բնակչության բնաջնջումը (ԳԹ, 13.09.2013):

ԱՅՑԱԳԻՐ, գ. **Որևէ երկիր մուտք գործելու թույլտվություն**: ՌԴ մուտքի **այցագիր՝** կենսաչափական տվյալների դիմաց (Ազգ, 05.12.2014):

ԱՅՓԱԴ, գ. «Ծիծեռնակ», «Աղբյուր», «Ցոլքեր» և մյուս ամսագրերը պետք է դպրոցական երեխայի գրասեղանին դրված լինեն համակարգչի և **այփադի** կողքին (ԳԹ, 07.11.2014):

ԱՆԱՂԱՐՏԵԼ, բ. **Մաքրել:** Շողի շոյող ձեռքը մեզ է **անաղարտում,//**Գանձանակում ասքով, հնչյուններով երգի .... (ԳԹ, 14.03.2014):

ԱՆԱՊԱՏԱՎՏԱՆԳ, ած. **Անապատացման վտանգված:** Արարատյան դաշտը դասական **անապատավտանգ** տարածք է, որտեղ առկա են հողերի աղակալում, էռոզիա և մարդու տնտեսական ազդեցությամբ արտահայտված ամենատարբեր պրոցեսներ (Իրավունք, 24,10.2014):

ԱՆԱՍՆԱՀԱՄԱՃԱՐԱԿԱԲԱՆԱԿԱՆ, ած.**Անասունների համաճարակին վերաբերող**: Կենդանիների շրջանում բրուցելյոզ հիվանդության **անասնահամաճարակաբանական** և անասնաբուժական հսկողության համակարգի …. տեղեկատվության փոխանակման մեխանիզմերը կկատարելագործվեն (ՀՀ, 29.01.2014):

ԱՆԱՐԵՎ ՄՆԱԼ, բ. **Կյանք չունենալ:** Արևածագից առաջ դուրս գալ եկեղեցուց՝ նշանակում է **անարև մնալ**, այսինքն՝ կյանք չունենալ, կյանքից զրկվել (ՍՀ, էջ 248):

ԱՆԳՆԴԱԿԱԹԱՓԱՆՑ, ած. **Որի միջով գնդակը չի թափանցում:** Բանկի աշխատակցուհին չի վախեցել չարագործից, քանի որ հանցագործից իրեն բաժանող ապակին **անգնդակաթափանց** է եղել (TV մոլ, 12.05.2014):

ԱՆԴՐՈԳԵՆԱՅԻՆ, ած. Տղամարդկանց մոտ տարիքի հետ կապված լինում է **անդրոգենային** անբավարարություն (TV ալիք, 23.12.201):

ԱՆԹԵՐԻՈՐԵՆ, մկբ. **Անթերի կերպով**: Նա իր մահը երգել, իմաստավորել, կարծես ծրագրել էր դեռ պատանի հասակից, և ասես, այդպես մեռավ խոսքի տերը լինելու, իր գրածներն **անթերիորեն** հաստատելու համար (ԼՀ, էջ 192):

ԱՆԺԱՄԱՀԱՐ, ած. **Առանց ժամահարի**: Ձյունը՝դժվար ապրողների այրուձի,// Որ սուրում է քո դեմ անծես, // անաստված,// Պատահաբա՞ր դու // բանաստեղծ ծնվեցիր՝ // **Անժամահար** հոգեվարքին // համընթաց / / (ԳԹ, 05.09.2014):

ԱՆԻՄԱՑԻՈՆ, ած. **Անիմացիոն** ֆիլմ ստեղծելը դժվար գործընթաց է. Պահանջվում են լուրջ ներդրումներ (Ազգ, 11.07.2014):

ԱՆԼՑՆԵԼԻ, ած. **Չլցվող**: Նրա հեռանալուց հետո մի մեծ, մի **անլցնելի** դատարկություն է պատել ներսս, ու ես ճչալ, լաց լինել եմ ուզում (ՀԲ, էջ 114):

ԱՆԿԱՂԱՊԱՏ, ած. Ուիթմենի հզոր շունչը, մտքի ու հուզմունքի թելադրանքով «պատահական»ձև գտած **անկաղապատ** ոգին Պարույրի սիրած մոդելն էր (ԼՀ, էջ 13):

ԱՆԿԱՍԵԼԻՈՒԹՅՈՒՆ, գ. **Անձեռնմխելիություն:** Ուկրաինայում, եթե հիշենք, ամեն ինչ նույնպես սկսվում է մարդու իրավունքների **անկասելիության** մասին բարձր հայտարարություններից (Ազգ, 07.11.2014):

ԱՆՀԱԿԱՇՐՋԵԼԻ, ած, **Չշրջվող:** …. Կյանքից քաղած դառը հիշողություններն են և որպես դրա գագաթնակետ՝ 1915–ին մեզ պատահած, գործնականում այլևս **անհակաշրջելի** թվացող արհավիրքը (ԳԹ, 21.02.2014):

ԱՆՀԱՏԱԿԵՆՏՐՈՆ, ած. **Անհատը որպես կենտրոն ունեցող**: ....Մեր հասարակությունը սկսեց ապրել **անհատակենտրոն** տրամաբանությամբ (Իրատես, 12.12.2014):

ԱՆՁՆԱՆՎԱՆԱԿԱՆ, ած.**Անձնանվանը վերաբերող:** ....Հաշվել է, թե հինգերորդ դարի պատմիչներից յուրաքանչյուրի մոտ **անձնանվանական** և տեղանվանական քանի միավոր կա (ԳԹ,15.11.2013):

ԱՆՁՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ, գ. **Պաշտոնը գրավող անձին փոխելը**:....Արմեն Ռոստամյանը հավելեց, որ իրական իշխանությունը երբեք չի կարող **անձնափոխությամբ** սահմանափակվել, պետք է զուգորդվի համակարգային փոփոխությամբ (Իրավունք, 20.10.2014):

ԱՆՁՐԵՎԱԲԵՐՈՒՄ, գ. Միջնադարյան վկայությամբ դրանք կապված են եղել գարնան, խոնավության, **անձրևաբերման** ու պտղաբերման հետ (ՍՀ, էջ 340):

ԱՆՁՐԵՎԱՀԵՂԵՂ, գ. **Վարար, հորդ անձրև:** Երբ Սանասարը նետահարումով սպանում է նրան, **անձրևահեղեղ** է տեղում, կայծակ-փայլակ է շամփրում, դղրդում է աշխարհը, ապա արևի լույս ցայտում (ՍՀ, էջ 173):

ԱՆՁՐԵՎԱՎԵՐԱՐԿՈՒ, գ. **Անձրևից պաշտպանող վերարկու**: Մենք էլ սպասում էինք, անձրևը չէր դադարում, հարկ եղավ հագնել Նելլիի ու Պարույրի **անձրևավերարկուները** (ԱՋ, էջ 540):

ԱՆՁՐԵՎՈՐՍԻՉ, գ. **Անձրև որսացող սարք:** ....Իրականացվում են դիտահորերի և **անձրևորսիչների** նորոգման ու նորերի տեղադրման, ինչպես նաև վնասված հատվածների վերանորոգման, ճաքալցման աշխատանքներ (Իրավունք, 28.03.2014):

ԱՆՄԵՂՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ, գ. **Մեղսակից չլինելը:** Մանիի կրոնի հետևողներից ամենանվիրյալները, որոնք կոչվում էին ընտրյալներ կամ կատարյալներ, երբ ճաշակում էին հացը իբրև հաղորդություն, դիմում էին հացին՝ աղոթքի հետևյալ բանաձևով, ապացուցելու իրենց **անմեղսակցությունը** հացի կրած չարչարանքների նկատմամբ (ՍՀ, էջ 360):

ԱՆՄՈՌՈՒԿԱՅԻՆ, ած. **Ցեղասպանության 100–ամյակի խորհրդանիշ հանդիսացող անմոռուկին վերաբերող:** Շատ տեղերում **անմոռուկային** բիզնեսն արդեն դադարեցվել է (168 ժ., 10.03.2015):

ԱՆՇՐՋԱՆՑԵԼԻՈՒԹՅՈՒՆ, գ. **Որը հնարավոր չէ շրջանցել:**....Հերոսների փոխտվությունը, փոխզիջումների **անշրջանցելիությունն** աշխարհը միասնական մի շուկայի է վերածում .... (ԳԹ, 07.03.2014):

ԱՆՈԹԱԶԱՐԿ, գ. **Անոթների զարկը**: Հավասարակշռության օրգանի գրգռման ժամանակ կարող են առաջանալ սրտխառնոց, փսխում, **անոթազարկի** փոփոխություններ (TV ալիք, 27.01.2014):

ԱՆՈԹԱՆԵՂԱՑՆԵԼ, բ **Արյան անոթները նեղացնել**: Իսկ **անոթանեղացնող** դեղամիջոցներ օգտագործել կտրականապես արգելվում է (TV մոլ, 25.01.2015):

ԱՆՈՉՆՉԱՑՆԵԼԻ, ած. **Չոչնչացվող**: **Անոչնչացնելի** տարականների պես մամուլն ու հրատարակչությունը նվաճած այս ոտանավորներն արժանանում էին քննադատության բարեհաճ լռությանը …. (ԳԹ, 19.09.2014):

ԱՆՎԱՇՂԹԱ, գ. **Սահող ճանապարհներից մեքենայի անվտանգ երթը ապահովող շղթա:** Ստեփանծմինդա- Լարս ավտոճանապարհն այսօր մինչև 18.00 –ը բաց է միայն մարդատար ավտոմեքենաների համար՝ **անվաշղթաների** կիրառման դեպքում (Ժող., 11.02.2015):

ԱՆՎԱՍԱՅԼԱԿ, գ. **Անիվներով սայլակ՝ տեղաշարժման խնդիրներ ունեցողների համար:** Էլեկտրական սարքին ամրացած **անվասայլակը** առանց ուժ գործադրելու հաղթահարում է ցանկացած աստիճանավանդակ (Համացանց, 09.05.2014):

ԱՆՎԵՐԱՀՍԿԵԼԻ, ած. **Չվերահսկվող, չենթարկվող**: Թվում է չեմ սթափվելու, քանզի **անվերահսկելի** է շարժման ընթացքը.... (ԳԹ,19.07. 2013):

ԱՆՎԻՐԱՀԱՏԵԼԻ, ած. **Վիրահատության ոչ ենթակա:** Իմ այցելուների խմբում մի աղջիկ կար, 14 տարեկանում նրա մոտ **անվիրահատելի** ուռուցք էին հայտնաբերել (TV մոլ, 03.03.2014):

ԱՆՏԱՌԱԹԵՐԱՊԻԱ, գ. **Անտառաբուժում:** Վերջին տարիներին հանրահայտ է դարձել **անտառաթերապիա** կոչվածը (TV մոլ, 24.04.2014):

ԱՆՏԱՌԱԽԱԽՏՈՒՄ, գ. **Անտառի մասին օրենքները խախտելը:** Նշված յոթ **անտառա-խախտման** արձանագրություններն ուղարկվել են ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության Տավուշի տարածքային բաժին (TV մոլ, 03.11.2014):

ԱՆՏԱՌԱՃՈՒՄ, գ. **Անտառի ծառերի աճը:** .... Ներկայիս «Խոսրովի անտառ» արգելոցի տարածքում **անտառաճման** խիստ անբարենպաստ պայմաններում, հիմնվել է անտառ, և ծառ կտրողը թագավորի հրամանով խստագույնս պատժվել է (ՀՀ, 19.06.2014):

ԱՆՏԱՌԱՋԱՐԴ, գ. Տե՛ս ՀԱՆՔԱՀԱՐՍՏԱՀԱՆՈՒՄ-ի օրինակը:

ԱՆՏԱՌԱՏԵՍ,գ. **Խորագետ՝ խորաթափանց միտք ունեցող անձ**: ….«Ոմանք. Ծառերի ետևում չեն տեսնում անտառը, իսկ Սարինյանը գերազանց **անտառատես է**» (ԳԹ, 21.11.2014):

ԱՆՏԱՌՊԱՐԿ, գ. **Պտղատու ծառերի անտառ:** ….«Ջրվեժ» **անտառպարկ**ի աշխատակիցները …. տարածքում շրջայց կատարելու ժամանակ լսելով կասկածելի ձայներ,, լապտերներով մտել են անտառպարկ, սակայն գիշերային մութը խանգարել է որևէ հետք հայտնաբերել (ՀՀ, 24.12.2014):

ԱՆՐՋԱԲՈՒՅՐ, ած. **Անուրջներ բուրող՝ երազային:** ....Ծիրերը իր հայրենաշխարհի գույն ու խաղերի մեջ էին, ծննդավայրը Կողբ գյուղի **անրջաբույր** //Առավոտների անքուն օրորոցում (ԳԹ, 11.10.2013):

ԱՆՐՋԱՏԵՆԴ, ած. **Հիվանդագին անուրջներ:** Ջերմում եմ **անրջատենդի** մեջ, իսկ ոսկեգեղմ գառները վաղուց խախտել են արտի սահմանները....(ԳԹ, 06.09.2013):

ԱՆՑՈՒՑԱԴԻՐ, ած. **Չցուցադրվող՝ չգովազդվող:** –Ես շատ եմ սիրում քո «Ամենատաք երկիրը» պատմվածքը, որը համակված է մարդկային ջերմությամբ և **անցուցադիր** սիրով (ԳԹ, 20.12.2013):

ԱՆՈՒՐԱՑ, ած. **Ինչ որ չի կարելի ուրանալ, անուրանալի, անժխտելի, անհերքելի:** Խաչքարը հենց հայն է, մեկը մեկի նման, բայց տարբեր- չկրկնվող, **անուրաց** քրիստոնյա՝ հեթանոսական կրքով ու բնեղեն քանքարով (ՍՍ, էջ 3):

ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎ, գ. **Աշխատանքային ժողով**: ....Տեղի ունեցավ առաջին **աշ-խատաժողովը** (Եր. համ., N 9, 2014):

ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎ, գ.**Նիստ, աշխատանքային ժողով**: Հանձնաժողովի նախագահ Արա Բաբլոյանը, ներկայացնելով **աշխատաժողովի** թեման, նշեց, որ Հայաստանում վերջին տարիներին արհեստական ընդհատումը դարձել է հաճախակի երևույթ (ՀՀ, 21. 05.2014):

ԱՇԽԱՐՀԱԿԱԶՄ, ած. **Աշխարհ կազմող**: Գիտեմ, որ ժողովուրդների **աշխարհակազմ** ընտանիքում մեկին բնական անբավ հարստություններ են բաժին հասել, մեկին հանգիստ ու փափուկ բնական պայմաններ .... (Ազգ, 11.04.2014):

ԱՇԽԱՐՀԱՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆ, գ. **Աշխարհայացք, աշխարհընկալում:** Ընթերցողներիս համար այս գիրքը, իբրև հուշագրություն, իր **աշխարհամտածողությամբ,** ողբերգական տրամադրությունների ալեկոծումներով....հատուցումի սպասումներով, ամեն, ամեն ինչով նման է հայերիս երբեք չմարող վիրավորվածության ապրումներին (ԳԹ, 13.06.2014):

ԱՇԽԱՐՀԱՊԱՏԿԵՐՈՒՄ, գ. **Աշխարհընկալում:** Ամեն ազգ իր ձևով, ոճով, իր կերպով հոգեդրսևորում ունի, մարմնացում է իր ապրումների ու մտածումների, իր տեսիլների և իրեն հատուկ **աշխարհապատկերման** (ՄՍ, էջ 182):

ԱՇԽԱՐՀԱՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ, ած. Հայաստանը գտնվում է **աշխարհառազմագիտական** այնպիսի վայրում, որը շրջապատված է արտաքին թշնամիներով (Ազգ, 31.10.2014):

ԱՇԽԱՐՀԱՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ, գ. **Աշխարհում տարվող ռամավարու-թյուն**....Ամերիկյան և չինական **աշխարհառազմավարության** գլխավոր հիմնադրույթը դառնում է նոր աշխարհակարգի ձևավորումը, ավելի ճիշտ, աշխարհի բաժանումը ԱՄՆ-ի և Չինաստանի միջև (Իրատես, 24.12.2013):

ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ, ած. .... Այդ հանրահավաքների ուղերձները պետք է որոնել ոչ թե իշխանությանը, կամ էլ ժողովրդին, այլ ԵՏՄ անունով նոր ձևավորվող **աշխարհաքաղաքական** միավորին ուղղված լինելու մեջ, ենթատեքստով ....(Ազգ, 31.10.2014):

ԱՇՆԱՆԱԼԱՑ, ած. **Թախծալից, տխուր:** ....Հրաժեշտի թախծոտ արար՝ **աշնանալաց** մի բուռ աշուն՝ երկնաճամփորդ Լևոնի վաստակած ու վիրավոր սրտում (ԳԹ, 11.10.2013):

ԱՇՆԱՆԱՀԱՄ, ած. **Աշնան համ ունեցող, աշնանային:** Ուռին դեղին տխրությունը փռել է խաշամին,// **Աշնանահամ** անձրևի տակ տկլոր պարում է.... (ԳԹ, 14.11.2014):

ԱՊԱԱԿՏԻՎԱՑՈՒՄ, գ. Մշտական շատակերության դրդում է ախորժակի կենտրոնը՝ բերելով կենտրոնի **ապաակտիվացման** (TV ալիք, 23.01.2014):

ԱՊԱԲԱՐՈՅԱԿԱՆԱՑՈՒՄ, գ. **Բարոյազրկում:** Հայաստանում միասնաբար լուծում են **ապաբարոյականացման** և ապաքաղաքականացման խնդիրը (Հրապ., 12.11.2014):

ԱՊԱԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Անբարո վարք, անբարոյականություն:** Այսպես է, որ աշխարհում բարոյականությունը տեղի է տալիս **ապաբարոյականության** առջև, խոսքի

ազատությունը վերածվում է խոսքի սանձարձակության, վկայությունը՝ ճշմարտության խեղումի: Գարեգին Բ կաթողիկոս (Իրավունք, 14.01.2014):

ԱՊԱԻՆՏԵԳՐԱՑԻՈՆ, ած. ԱՊՀ-ն համագործակցության կամուֆլյաժ է, որ շարժվում է **ապաինտեգրացիոն** տրամաբանությամբ, իրավիճակ, որ պայմանավորված է 90-ական թվականներով (Իր., 18.11.2014):

ԱՊԱԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. ....Հունվարին «Ժնև-2» բանակցությունները «սիրիական ընդդիմության» **ապակառուցողականության** և ընդդիմադիր շարքերում պառակտման հերթական ալիքի պատճառով, փաստորեն, չկայացան (Իրատես, 14.03.2014):

ԱՊԱԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ, ած. **Ոչ կուսակցական, անկուսակցական, ոչ մի կուսակցության չպատկանող:** Բյուրոյում պետք է իր տեղը մարդ նշանակվեր, երբ բյուրոյի անդամը դառնում է **ապակուսակցական** պաշտոնյա (Հրապ., 14.11.2014):

ԱՊԱՀԱՎԱՍԱՐԱԿՇՌՈՒԹՅՈՒՆ, գ. **Հավասարակշռության խախտում:** Հետաքրքիրն այն է, որ և կլինիկական դեպրեսիայի, և «աղիների դեպրեսիայի» դեպքում դիտվում է նույնանման հորմոնային **ապահավասարակշռություն** (TV մոլ, 03.02.2014):

ԱՊԱՀՈՎԱԳՐԱՏԵՐ, գ. **Ապահովագրության տերը :** Ստացված գումարը ժամանակին հատկացվեց **ապահովագրատերերի** ժառանգներին (Ազգ, 07.11.2014):

ԱՊԱՀՈՎԱԴԻՐ, գ. ....Հետագայում կապահովի ավելի արդարացի ապահովագրավճարների բաշխում **ապահովադիրների** միջև .... (ՀՀ, 18.03.2014):

ԱՊԱՀՈՎՎԱԾՈՒԹՅՈՒՆ, գ. **Ապահովված լինելը:** Մեր գյուղոլորտի պատասխանատուները տարիներ շարունակ նշում են ՀՀ բնակչության ցորենով **ապահովվածության** հազիվ 30–40 տոկոսի մասին (Ազգ, 14.03.2014):

ԱՊԱՃ, գ.. **Հետաճ:** Քրոնիկական գաստրիտը խանգարում է ստամոքսի լորձաթաղանթի բջիջների հասունացմանը, հետո էլ հանգեցնում հյուծման և **ապաճի** (TV մոլ, 02.03.2015):

ԱՊԱՄԵԿՈՒՍԱՑՈՒՄ, գ. **Քաղաքական մեկուսացման դադարեցում:** ՆԱՏՕ–ն նշեց ՌԴ **ապամեկուսացման** պայմանները (Ազգ, 31.10.2014):

ԱՊԻԹԵՐԱՊԻԱ, **Բուժում մեղվաբուծական միջոցներով՝ մեղվաբուժություն:** Հայաստանի մեղվաբույծների ազգային միավորման նախագահ Ռոզա Ծառուկյանը ցանկանում է Հայաստանում **ապիթերապիայի** հիվանդանոց բացել (TV մոլ, 17.11.2014):

ԱՊՈՒՇԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. ….Կոմունիստական դարաշրջանի մեր վերջին ղեկավարները …. ղեկավարվում էին բացառապես ազգային շահերով և կարողացան շատ հայրենանպաստ ծրագրեր իրականացնել՝ ի հեճուկս կոմունիստական մառազմի, լենինյան զառանցաբանության և Մ.Սուսլով վիժվածքի «գաղափարախոսական» **ապուշաբանությունների** (Ազգ, 07.11.2014):

ԱՌԱՆՁՆԱՁԵՎԱՅՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Առանձնահատուկ ձև, յուրահատկություն ունենալը**: Գրական հանրության կողմից հատկապես բուռն ընդունելության արժանացավ գրողի «Խաշաթաղ» վեպը , որը իր կոմպոզիցիայի **առանձնաձևայնությամբ** շարադրանքի արտասովորությամբ ուշագրավ իրողություն է արդի վեպի ճանապարհին (ԳԹ, 18.07.2014):

ԱՌԱՋԱԳՆԱ, ած. **Առաջ գնացող** : …..Իր ծննդյան 75–ամյակը նշող ականավոր գրողը միշտ մնում է ժամանակակից նոր, միշտ պարտադրում է տեսնել իր ու գրականության ժամանակների **առաջագնա** ընթացքը (ԳԹ, 09.05.2014):

ԱՌԱՋՆԱԳԻԾ, **գ. Զորքերի առաջին գիծ:** Հանդիպման ընթացքում ամփոփվեցին **առաջնագծում** ….զորքերի մարտական պատրաստության ….աշխատանքները (Հ Զ, 06.02.2015):

ԱՌԱՋՆԱԽՈՍՔ, գ. **Ներածական՝ առաջին խոսք**: Երևանում, համազգային թատրոնում տեղի ունեցած շնորհանդեսին **առաջնախոսքը** տրվեց ՀԳՄ նախագահ Էդվարդ Միլիտոնյանին … .(ԳԹ, 12.09.2014):

ԱՌԱՋՆԱՇԵՇՏ, ած. Հիշում եմ, մի օր Նելլին ասաց, թե Սայաթ-Նովայի հայերեն տաղերը վրացերենի շեշտերն ունեն, **առաջնաշեշտ** են (ԼՀ, էջ 83):

ԱՌԱՋՆԱՊԱՏ, գ. Հանեք եզրահատը, իսկ նմացած բոլոր հատերը գործեք **առաջնապատի** նման (Զեռ., էջ 8):

ԱՌԱՍՊԵԼԱԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ, ած. Դրանք հիմք են ծառայել **առասպելաբանաստեղծական** հարուստ երևակայությամբ կերտված ավանդական բազմատեսակ զրույցների (ՍՀ, էջ 196):

ԱՌԱՍՊԵԼԱԻՄԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ, ած. Սա, ըստ բնույթի, ստուգաբանական ավանդություն է, ուր հայերեն հորթ և որթ նույնահունչ բառերի միջև **առասպելաիմաստաբանական** առումով կապ է ստեղծվել (ՍՀ, էջ 264):

ԱՌԱՍՊԵԼԱԾԻՍԱԿԱՆ, ած. Մեր կարծիքով, այս երկու տեսակետները միմյանց չեն հակասում, անգամ լրացնում են և առավել խորիմաստ դարձնում այս քանդակների **առասպելածիսական** բովանդակությունը (ՍՀ, էջ 30):

ԱՌԱՍՊԵԼԱՄՇԱԿՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ, ած. Արա անվան ծագմանն ու իմաստին անդրադարձել են շատերը, որոնք դիմելով տարբեր ավանդությունների՝ հավաքել են բազմապիսի տվյալներ և քննական մոտեցումով փորձել **առասպելամշակութաբանական** հարաբերություններ արտահայտել նույն կամ նմանանուն կերպարների և նրանց գործառույթների միջև (ՍՀ, էջ 378):

ԱՌԱՍՊԵԼԱՏԻԵԶԵՐԱԲԱՆԱԿԱՆ, ած. Այնպես որ երկնային և երկրային ջրերը **առասպելատիեզերաբանական** հայացքով նույնական են, և մեկը մյուսին փոխարկվելը հաճախադեպ է առասպելներում (ՍՀ, էջ 83):

ԱՌԱՎ-ՓԱԽԱՅՈՒԹՅՈՒՆ, գ. (ճիշտը՝ առավ-փախավություն) Իսկ գիտեք, թե Ֆրանսիայում ինչքան դատական գործ կա **առավ-փախայության** և խաբեբայության հետ կապված (168 ժ., 20.11.2014):

ԱՌԵՎՏՐԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ, գ. **Կատարված առևտուր և շրջանառությունը:** Ավտոմեքենաների առևտուրը կազմում է ընդհանուր **առևտրաշրջանառության** 3,7 տոկոսը (ՀՀ, 05.02.2015):

ԱՌԵՎՏՐԱՏՆՏԵՍԱԿԱՆ, ած. «Մենք բարձր ենք գնահատում ռուս–գերմանական հարաբերությունների կուտակված ներուժը , **առևտրատնտեսական** փոխգործակցության բարձր մակարդակը (ՀՀ, 28.06.2014):

ԱՌՅՈՒԾԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Առյուծին սպանելը:** Այն նույն **առյուծասպանության** սյուժեն է, փոխարինված վիշապասպանությամբ (ՍՀ, էջ 179):

ԱՌՆԵՏԱՎԱԶՔ, գ. **Առնետների վազքը:** Սերժ Սարգսյանի համար ստեղծված իրավիճակը լավ հնարավորություն է՝ հասկանալու համար…. ովքեր են հավատարիմները, իսկ ովքեր վտանգի դեպքում խորտակվող նավի **առնետավազքի** շարքերն առաջնորդողները (Համացանց, 30.01.2014):

ԱՌՑԱՆՑ, մկբ. Այսուհետ Հայաստանի քաղաքացիները….. կարող են համապատասխան տեղեկատվությունը գտնել նշված վեբ կայքում և իրենց հարցերն ուղղել՝ **առցանց,** զանգահարելով թեժ գծին կամ կայքից հետզանգ պատվիրելով (Ազգ, 14.03.2014):

ԱՍՈՒՐԱՈՒՐԱՐՏԱԿԱՆ, ած. **Ասուրաուրարտական** (իմա՝ հայկական) այս իրադարձություններն են, ըստ երևույթին, պատմականորեն անդրադարձել Արա Գեղեցիկի և Շամիրամի վիպականացված առասպելում (ՍՀ, էջ 365):

ԱՍՏԻՃԱՆԱՇՆՈՐՀՈՒՄ, գ. **Գիտական աստիճան շնորհելը**: Նախարարը դեսպանին ներկայացրել է գիտական **աստիճանաշնորհման** համակարգում ընթացող փոփոխությունները .... (ՀՀ, 14.06.2014):

ԱՍՏՂԱՇԵՋ, ած. **Աստղերով հրդեհված, շիջված**: Գալիս եմ իմ սերնդի, մեր հայրերի ու պապերի դժվար անցյալը փնտրելու քո խոհուն ու ներամփոփ ձորերում, քո բարձր ու հպարտ լեռներում, քո **աստղաշեջ** երկնքում (ԳԹ, 06.09.2013):

ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ, ած. **Աստվածաշնչին հատուկ**: **Աստվածաշնչյան** լինելու առաջին վկայությունը հայոց լեզուն և հայոց բառը զգալ և ճանաչելն է (ԳԹ, 18.04.2014):

ԱՎԱԶԱԿՈՊՃԱՅԻՆ, ած. **Ավազի և կոպիճի խառնուրդից պատրաստած**: Մեկ այլ որոշմամբ **ավազակոպճային** խառնուրդի հանքաքարը հատկացվել է Տավուշի մարզի սահմանամերձ Կիրանց համայնքին …. (ՀՀ, 17.10.2014):

ԱՎԱԶԱՀՈՒՄՈՒՍԱՅԻՆ, ած. **Ավազոտ հողեր:** Ծովաբողկը աճի համար նախընտրում է **ավազահումուսային** հողերը (Ագրոլրատու, 05.02.2014) :

ԱՎԱՆԴԱԽՈՀ, ած. **Ավանդական մտածելակերպ ունեցող**: «Վերջին ժպիտ» գիրքը հայ **ավանդախոհ**, կրծքափակ շորերով կնոջ լիաբաց սրտի տրոփյունի արձագանքից ծնված ժպիտ է .... (ԳԹ, 22.11.2013):

ԱՎԻԱՌՄԲԱԿՈԾՈՒՄ, գ. (ռազմ.) **Ռազմական ինքնաթիռներից արված ռմբակոծում:** 1935թ. Հավայան կղզիներում փորձ արվեց **ավիառմբակոծումով** կանխել հրաբխի ժայթքումը (TV մոլ, 27.10.2013):

ԱՎԻԱՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ, գ. **Օդանավերի՝ թռչող սարքերի ցուցահանդես:** Փարիզի երրորդ **ավիացուցահանդեսում** ներկայացվեց առաջին ամբողջական մետաղից կառուցված աերոպլան-մոնոպլան «Տյուբավիոնը», որի հեղինակները ֆրանսիացիներ էին (TV մոլ, 09.12.2013):

ԱՎԻԱՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑ, գ. **Օդային ուղիներով փոխադրամիջոց:** Իսկ Ռուսաստանն ընդամենը մոտ մեկ տարի է, ինչ փակել է իր օդային միջանցքը ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի անդամ երկրների **ավիափոխադրամիջոցների** առջև (Իր., 07.11.2014):

ԱՎԻԱՓՈԽԱԴՐՈՂ, գ. **Օդային ուղիներով փոխադրող:** …. Մենաշնորհ ունեցող **ավիափոխադրողը** խիստ անարդյունավետ և ոչ գրագետ ձևով էր կառավարվում…. (Ազգ, 19.09.2014):

ԱՎՏՈԱՐՇԱՎԱՐԱՆ, գ. **Ավտոմեքենաների արշավարան**: Վտանգը ներկայացնողները սպորտային մոտոցիկլետներով քաղաքի փողոցները «հերկող», դրանք **ավտոարշավարանների** վերածողներն են, որոնց թիվն օրեցօր շատանում է (ՀՀ, 08.06.20142) :

ԱՎՏՈԳԱԶԱԼՑԱԿԱՅԱՆ, գ. **Ավտոմեքենան գազ լցնելու կայան:** Բաժանորդներին մատակարարվող բնական գազի շուրջ մեկ երրորդը բաժին է ընկնում **ավտոգազալցակայաններին** (TV մոլ, 02.03.2015):

ԱՎՏՈԵՐԹ, գ. **Մեքենաների երթ:** Երեկ մայրաքաղաքի կենտրոնական փողոցներում **ավտոերթ** տեղի ունեցավ, որոնց վարորդներն ու ուղևորները պաստառները մեքենայից դուրս հանած շրջում էին քաղաքով մեկ ու հայտարարում. «Դեմ ենք պարտադիր 5 տոկոս կուտակայինին» (Իր., 06.12.2013):

ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԻ, գ. **Ավտոմեքենաների կայանման տեղ:** Ճանապարհաշինարարներն արդեն մոտեցել են համալիրի ավտոկայանատեղիին (Հրապ., 06.11.2015):

ԱՎՏՈՀՐԴԵՀ, գ. **Ավտոմեքենաները այրելը**: Ճիշտն ասած, տեղյակ էլ չէինք լինի, թե մեր կողմից հարգված Ժիրայր Սեֆիլյանը հերթական անգամ վատ բան է ասել իշխանություններին, եթե չլիներ այդ **ավտոհրդեհների** մասին լուրը (Իր., 28.11.2014):

ԱՎՏՈՄԱՔՍԱԶԵՐԾՈՒՄ, գ. **Արտասահմանից ներկրվող ավտոմեքենայի մաքսը վճարելը:** Հայաստանում **ավտոմաքսազերծման** գործընթացն այսօր իրականացվում է 30 րոպեում.... (168 ժ., 13.03.2014):

ԱՎՏՈՄԱՔՍԱՏՈՒՆ, գ. **Ավտոմեքենաների մաքսատուն**: Այս մասին **ավտոմաքսատանը** լրագրողների հետ հանդիպմանը նշել է ՊԵԿ ավտոտրանսպորտային միջոցների մաքսային ձևակերպումները մասնագիտացված մաքսատան պետը .... (ՀՀ, 13.03.02014):

ԱՎՏՈՇՔԵՐԹ, **Մեքենաների շքերթ:**

ԱՎՏՈՊԱՏՈՒՀԱՆԻԿ, գ. **Մեքենայի համար պատուհան**: 2013-ի վերջին Ջորջիայի բնակչուհին սովորականի պես մոտենում է «Wendys»-ի **ավտոպատուհանիկին՝** բուրգեր գնելու համար (TV մոլ, 24.11.2014):

ԱՎՏՈՖՈԿՈՒՍ, գ. **Ավտոմատ ֆոկուս:** Սելեկտիվ **ավտոֆոկուսով** համալրված տեսախցիկը մշտապես կապահովի գեղարվեստական բարձր որակի լուսանկարների նկարահանում (168 ժ., 09.10.2014):

ԱՏԱՄԿՌՃՏՈՑ, գ. **Ատամների կոճտոցը**: Դա շատ հեշտ է անել, ընդամենը **ատամկոճտոցի** պես մի բան է .... (ԳԹ, 21.02.2014):

ԱՏԱՄՆԱԵԶՐ, ած. **Ատամի եզր հիշեցնող:** Կաղնին ունի հերթադիր, կոշտ, կտրտված բլթակավոր կամ ամբողջական **ատամնաեզր** (ՀԴ, թիվ 1, 2014):

ԱՏԱՄՆԱՏԱՇ, ած. **Ատամների նման տաշված:** Թեպետ քիվի **ատամնատաշ** տուֆաքարը, նռան քանդակները փշրվել էին հենց առաջին հարվածներից, սակայն պատերի մեջ եղած հիշողությունը, սերը, առաջնեկի ճիչը, տանից դուրս հանած գլխավորի սև դագաղի հիշողությունը չէին թողնում, որ պատերը շուտ քանդվեն (ՀԲ, էջ 118):

ԱՏԿԱՏ, գ. Ասենք՝ տարիներ անց հանկարծ բացահայտվի, որ կուտակայինի անվան տակ հսկայական փողեր են աշխատել՝ **ատկատների** կամ կանխիկ կաշառքի տեսքով (Հրապ.,1.02.2014):

ԱՐԱԲԱՊԱՏԿԱՆ, ած. **Արաբներին պատկանող:** Ավելին է Հին քաղաքում կարող են քանդվել **արաբապատկան** ևս 20 հազար բնակարան՝ առանց արտոնագրի կառուցված լինելու պատրվակով …. (Ազգ, 21.11.2014):

ԱՐԱՐԱՏԱՑԱՎ, ած. **Արարատի նկատմամբ ցավ ունեցող**: Էրգիր չտեսած **արարատացավ** հայդ, որ Զորի Միրոյի ցավն առած՝ երկիրդ եղար, եղար սասունցի ու էրզրումցի, եղար Նահապետ, եղար խոսքի ու խոհի վարպետ (ԳԹ, 04.10.2013):

ԱՐԱՐՈՂԱԿԱՐԳԱՅԻՆ, ած. **Արարողակարգին հատուկ՝ բերաբերող:** Պետական բյուջեից իրենց **արարողակարգային** ծախսերի համար խոշոր գումարներ են հատկացրել….վարչապետն ու նախագահը (Ժամ., 16.05. 2014):

ԱՐԳԵԼՈՑ-ԹԱՆԳԱՐԱՆ, գ. Զվարթնոց պատմամշակութային **արգելոց-թանգարանի** աշխատակիցներն ու ՀՀԶՈՒ ինժեներասակրավորական գնդի 20-ից ավելի

զինծառայողները սանիտարական մաքրման աշխատանքներ են իրականացրել արգելոց-թանգարանի տարածքում (ՀՁ, 19.02.2015):

ԱՐԵԳԱԾՈՒՌ, ած. Օ՛, բավական է, քույր՝ **արեգածուռ**, //Որ քո փոխարեն //Այս արևելյան տաք գիշերներին// Մեկ–մեկ ընդունեմ (ԳԹ, 20.09.2013):

ԱՐԵԳՆԱՃԱՌԱԳ, ած. **Արեգակի լույս ճառագող**: Ջնարակապատ լեռներ տիրական, **արեգնաճառագ** լույս ու ջերմություն (ԳԹ, 31.01.2014):

ԱՐԵԳՆԱՄՐՈՒՐ, ած. Եվ արեգակը բարձր է, շատ բարձր,/ /Եվ լույսը ընկած իմ ոտքերի տակ,//Եվ լույսը թովված աչքերիս,//Եվ հայտնության պահ **արեգնամրուր** (ԳԹ, 20.09.2013):

ԱՐԵՆԱՊՂԾՈՒՄ, գ. Այս առասպելների հիմքում, ըստ երևույթին, ընկած է **արենապղծման** սովորույթը (ՍՀ, էջ 259):

ԱՐԵՎԱԱՌԻՐԱ , գ. **Արևի էներգետիկ դաշտը**: Հիմա հերսոտվել են աստղունք ու լուսին,// արևակեղևն ու **արևաաուրան**, արևաթևը// արևագոտին, արևապաշտները, արևորդիները.... (ԳԹ, 25.04.2014):

ԱՐԵՎԱԳՈՏԻ, գ. **Արևի գոտի**: Տե՛ս ԱՐԵՎԱԱՌԻՐԱ –ի օրինակը:

ԱՐԵՎԱԿԵՂԵՎ, գ. **Արևի կեղևը**: Տե՛ս ԱՐԵՎԱԱՌԻՐԱ –ի օրինակը:

ԱՐԵՎԱՀՈՏ, ած, **Արևի հոտ ունեցող**: Առավոտ է, //Արևանթեմ լիզող տաք աչք,// Արևանթեմ բացող տաք աչք, //Արևանթեմ, արևանթեմ, **արևահոտ,** //Կանա՜չ, կանաչ՜ (ԳԹ, 20.09.2013):

ԱՐԵՎԱՀՈՒՆՉ, ած. **Արևի պես հնչող**: ....Խոր վերլուծությամբ ներկայացրեց Արևշատ Ավագյանի «զարմանալի և անշփոթելի աշխարհը», նրա սովորական–անսովոր գունախաղերն ու լուսաճառագ **արևահունչ** պատկերները .... (ԳԹ, 23.05.2014):

ԱՐԺԵԿԱՐԳ, գ. **Արժեքների համակարգ**: 20–րդ դարավերջին հայ ժողովրդի կյանքում տեղի ունեցան նոր քաղաքական–հասարակական իրողություններ՝ անկախություն, Արցախյան հերոսամարտ, **արժեկարգերի** փոփոխություն, ազատություն .... (ԳԹ, 28.11.2014):

ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳ, գ. **Արժեքների համակարգ:** Մենք պետություն կառուցեցինք ....բարոյական **արժեհամակարգը** փոշիացնելով և վերածելով կրիմինալին մոտեցող արժեհամակարգի (Հրապ.,10.3.2014):

ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ, ած. Երիտասարդների շրջանում արտագաղթը վերացնելու համար…. հարկավոր է երկրում կատարել **արժեհամակարգային** հեղափոխություն (Հրապ., 05.03.2015):

ԱՐԻՍՏՈՏԵԼԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, գ. **Արիստոտելի մասին գիտություն:** Հարկ չկա ապացուցելու, թե ինչ կարևոր նշանակություն ունի Դավթից բերված հատվածը առհասարակ **արիստոտելագիտության** համար.... (ՀՄԵՀ, էջ 507):

ԱՐԾՎԻԿԱՀՅՈՒՍ, ած. **Հյուսքի տեսակ:** Շիտակ հյուսքի առաջապատի եղանակը կոչվում է նաև պարանահյուս, ալիքավոր, **արծվիկահյուս** (Զեռ., էջ 8):

ԱՐՁԱԿԱՋԵՆ, ած. **Ազատ արձակված**: ԱՍԱԼԱ–ի **արձակազենները** ազատվեցին բանտերից, Հայաստան վերադարձան, մարտախմբեր կազմեցին, փութացին Արցախ (ԳԹ, 05.12.2014):

ԱՐՁԱՆԱԳՐԵԼԻ, ած. **Արձանագրվող:** Երեխաներն ուզում են նրանց հետ ապագային մի բան ուղարկել իրենցից, որովհետև դեռևս չեն տվել իրենց **արձանագրելի** ճակատամարտը, առայժմ մազութագրում են «Վազգեն + Նելլի» (ՀՄ, էջ 65):

ԱՐՁԱՆԱՔԱՆԴ, ած. **Արձան քանդող:** Ռուբեն Թովմասյանը նամակ է գրել Ս. Սարգսյանին, թե տվյալ վիճելի անձնավորության արձանն այդտեղ տեղադրելն ընդմիշտ նրանց ճակատներին կդաջի **«արձանաքանդ»** անվանումը (Հրապ., 04.11.2014):

ԱՐՄԱՏԱՓՈՇԻ, գ. **Բույսի մանրացրած արմատներից ստացված փոշի:** Ամբողջ բույսը վերածելով փոշու՝ միանվագ ընդունում են 2-3 գր., իսկ **արմատափոշին** դանակի ծայրով օրական 3 անգամ (ՀԴ, թ.1,2014):

ԱՐՆԱԾՈՐԵԼ, բ. **Արյուն ծորել:** Որքան թանձր է **արնաածորել** ի ծնե «անճոռնի ճուտիկի» համարում ունեցող չարաճճի տղայի վաղաժամ խզված մանկության **արնաածոր** նախերգանքը (Ավ., 12.01.2015):

ԱՐՆԱԿԱՐՄԻՐ, ած. **Արյան պես կարմիր:** Այս լուսինը// **արնակարմիր**// իր լույսերը// թափում է ներքև// հանց ջրահարսի վարսեր .... (ԳԹ, 20.06.2014):

ԱՐՆԱՎԱԽՈՒԹՅՈՒՆ, գ. **Արյունից վախենալը:** Այդ հատկությունը, երևի, կապված էր Պարույրի **արնավախության** հետ (ԼՀ, էջ 28):

ԱՐՏԱՋԱՏԻՉ, ած. **Արտազատող**: Քրտինքի **արտազատիչ** ծորանների նման բլոկադան կարող է առաջացնել այտուց (TVալիք, 13.04.2015):

ԱՐՏԱԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ, ած. **Խորհրդարանում ներկայացուցիչներ չունեցող:** ....Կոնգրեսը խորհրդարանական ոչ իշխանական ուժերին կոչ է անում միանալ այս նախաձեռնությանը, իսկ **արտախորհրդարանական** ուժերին՝ աջակցել և հրապարակավ պաշտպանել այն (168 ժ., 19.12.2013):

ԱՐՏԱՀԱՅՏՉԱԵՂԱՆԱԿ, գ. **Իրականությունը պատկերելու, վերարտադրելու ձև, արտահայտվելու եղանակ**: Այսպես, տեսնում ենք, որ հայ բնատեսարանային առասպելներում անձնավորումը, իբրև առասպելաբանաստեղծական մտածողություն ու **արտահայտչաեղանակ**, դրսևորվել է միայն Հայկական լեռնաշխահի նշանավոր լեռնազանգվածների նկատմամբ (ՍՀ, էջ 209):

ԱՐՏԱՀԱՅՏՉԱԼԵԶՈՒ, գ. **Արվեստում իրականությունը վերարտադրելու, պատկերելու գեղարվեստական միջոց, արտահայտվելու կերպ՝ միջոց:** Բայց և այնպես, Կոջոյանին հաջողվեց մշակել բնանկարչության ասպարեզում իր անհատական **արտահայտչալեզուն** (ՀՄԵՀ, էջ 428):

ԱՐՏԱՀԱՆՁՆՈՒՄ, գ. **Հանձնելը ինչ- որ մեկին:** Կոսովոյում 15-ամյա աղջկա և նրա ընտանիքի անդամների **արտահանձնումը** Ֆրանսիայում բարձրացրեց բողոքի ալիք (Ժամ., 22.10.2013):

ԱՐՏԱՀԱՆՁՎԵԼ, բ. **Հանձնվել ինչ- որ մեկին:** Հայաստանից **արտահանձված** ենթադրյալ քիլլերը եղել է Ադրբեջանում ծնված հայ (Համացանց, 18.04.2014):

ԱՐՏԱՀԱՆՈՂ, գ. **Արտադրանքն այլ երկրներ փոխադրող:** Մասնավորապես, սննդամթերքի գծով Ռուսաստանի սահմանած պատասխան պատժամիջոցների շնորհիվ հայ **արտահանողները** կարող են գրավել ռուսական շուկան (168 ժ., 10.10.2014):

ԱՐՏԱՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ, ած. **Հիվանդանոցից դուրս կատարվող** : …. Հիվանդին ուղղված՝ **արտահիվանդանոցային** բուժման նոր մեթոդների ներդրմանը քաղաքացիական հասարակության և համայնքների ակտիվ ներգրավմամբ (ՀՀ, 04.11.2014):

ԱՐՏԱՀՈՍՔ, գ. **Բնակության վայրը փոխելը, երկրից դուրս բնակվելը:** Գյուղական շրջաններից բնակչության **արտահոսքը** պետության անվտանգության համար լուրջ վտանգ է ներկայացնում (ՀՀ, 10.11.2014):

ԱՐՏԱՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ, ած. Վերջերս մեծ **արտաճանապարհային** սպիտակ մեքենա գնելու կապակցությամբ ռուս դերասան Անդրեյ Չադովը որոշել է փոխել իր ոճը (TV մոլ, 07.05.2014):

ԱՐՏԱՄԱՐՄՆԱՅԻՆ ԲԵՂՄՆԱՎՈՐՈՒՄ, Առաջին **արտամարմնական բեղմնավորման** արդյունքում լույս աշխարհ եկած երեխաներն արդեն 10 տարեկան են (ՀՀ, 04.10.2014):

ԱՐՏԱՄԶՎԱԾՔ, գ. **Մզվածք:** Մասուրի յուղը սերմերի **արտամզվածքն** է (ՀԴ, թ.1,2014):

ԱՐՏԱՇՆՉԱՌԱԿԱՆ, ած. Տեղի են ունենում ներքին և արտաքին արյունահոսություններ, որոնց հաջորդում է մահը, **արտաշնչառական** նոպայից (Ազգ, 04.04.2014):

ԱՐՏԱՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ, ած. **Տարածությունից դուրս եղող:** Եթե ներտարածաշրջանային սպառնալիքները պայմանավորված են ազգամիջյան հակամարտություններով, ապա **արտատարածաշրջանային** սպառնալիքները հետևանք են ԽՍՀՄ փլուզումից հետո արտաքին ուժերի համար նոր շահերի ձեռքբերման հնարավորությունների ու ձգտումների (Լրատու, էջ 144):

ԱՐՏԱՐԺՈՒՅԹԱՅԻՆ, ած. **Արտարժույթով արտահայտված:** Գյուղատնտեսությունում տրված **արտարժութային** վարկերը վերածել դրամայինի (ՀՀ, 11.06.2014):

ԱՐՏԱՐԾՈՒՄ, գ. .... Պահպանելով իր հոգեբանական **արտարծումների** ողջ ավանդականությունը այնուհանդերձ երևան է բերում ժամանակի հարցը .... (ԳԹ, 14.03.2014):

ԱՐՏԱՔՆԱԶԱՐԴ, ած. **Արտաքինից զարդարված՝ արտաքուստ**։Այսպես մենք աստիճանաբար կորցնում ենք մեր առինքնումի հավերժամուխ հոգեկերտվածքը՝ փոխարենը ձեռք ենք բերում համաշխարհային շուկայում վաճառքի հանված **արտաքնազարդ** հարմարավետության խաբուսիկ ու թվացյալ գանձերը (ԳԹ, 21.02.2014):

ԱՐՅՈՒՆՔԱԳԵՂՁ, գ. **Արտասվագեղձ:** Ակնախտը բուժելու նպատակով եփուկից պատրաստել քսուք, դնել **արցունքագեղձի** վրա (ՀԴ, թ.1,2014):

ԱՐՔԱՅԱՑԱՆԿ, գ. **Արքայացուցակ, արքաների ցուցակ, մի երկրի ժամանակագրորեն իրար հաջորդած թագավորների ցուցակ:** Խորենացու **արքայացուցակում** վերջին երեք հաջորդական թագավորներն են՝ Հայկակ-Երուանդ, Սակաւակեաց-Տիգրան.... (ՀՄԵՀ, էջ 149):

ԱՐՔԵՏԻՊ, գ. **Նախաձև** .... Ամենաելակետում կերևակվի Արա ամենահայկական ու ամենանախնական **արքետիպը**՝ փակվող և բացվող, որ այլ կերպ մեռնող–հառնող ենք անվանում (ԳԹ, 12.09.2014):

ԱՐՔԵՏԻՊԻԿ, ած. **Նախաձևային:** Նորից մտքիս էկրանին գծագրվեց նորվեգացի մեծ մարդասերի կերպարը, Ծեր Իմաստունի **արքետիպիկ** կերպարը (ԳԹ, 11.10. 2013):

ԱՈՒԴԻՈԳԻՐՔ, գ. **Գրքի տեսակ:** Չեք մտածում **աուդիոգրքեր** ունենալու մասին (TVալիք, 13.01.2014):

ԱՈՒԴԻՈՁԱՅՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ, գ. Դատական նիստի ժամանակ լսեցին հայցվոր կողմի վկաներին, հաջորդ նիստին արդեն կհրապարակվի **աուդիոձայնագրությունը,** որից հետո էլ դատարանը կգնա խորհրդակցական սենյակ (Իրավունք, 14.03.2014):

ԱՈՒԴԻՈՎԻԶՈՒԱԼ, ած. Պետական **աուդիովիզուալ** արշավը մեծ հաջողությունների է հասել անաչառության տեսակետից .... (ՀՀ, 13.02.2014):

ԱՓԱԿՈՐԾԱՆ, ած. **Ափերը կործանող, քանդող**: Եվ **ափակործան** գետը, նախախնամության զարկի շեշտակիությամբ, քեզ ու շատերին իր մեջ առնելով՝ գնաց ողողելու արցախյան հովիտները (ԳԹ, 01.11.2013):

Բ

ԲԱԶԿԱՀՅՈՒՍԱԿ, գ. **Պարանոցի շրջանի նյարդեր:** Հայաստանում **բազկահյուսակի** ծննդաբերական կաթվածի իրական վիճակագրությունը դեռևս հայտնի չէ (Համացանց):

ԲԱԶԿԵՂ, ած. **Հզոր, ուժեղ, հաստ բազուկներ ունեցող:** Իսկ գութանի տերը՝ լայնաթիկունք , **բազկեղ**, / Ժպտաց իր աչքերի ծեքծեքումով .... (ԳԹ, 04.10.2013):

ԲԱԶՄԱԵՓԻՉ, ած. **Տարբեր բաներ եփող**: Սրճեփներն իրենք են սուրճ պատրաստում, իսկ **բազմաեփիչների** մասին էլ չենք խոսում, քանի որ դրանք միանգամից մի քանի բան են «եփում-թխում» (TV մոլ, 17.02.2014):

ԲԱԶՄԱԷԹՆԻԿ, ած. **Բազմաթիվ էթնիկական խմբեր ունեցող:**: Որովհետև ոչ մի կայսրություն, որ **բազմաէթնիկ** հիմքի վրա է ստեղծված, ունի նյութական դիմախեղված խճանկար, չի կարող հեռանկար ունենալ (TV մոլ, 12.05.2014):

ԲԱԶՄԱԹԵՄԱ, գ. **Բազում թեմաներ ունեցող:** Վարուժանը շարունակ խորացնում է իր նկարչությունը և բազմաթեմա դարձնում (Համացանց, 01.12.2013):

ԲԱԶՄԱԿԱՐԾ, ած. **Շատ կարծիքներ ունեցող:** Միջխորհրդարանական միությունը խթանում է համայն աշխարհում ներկայացուցչական կառավարման **բազմակարծ** համակարգերի հաստատումը (ՀՀ, 18.03.2014):

ԲԱԶՄԱԿԵՆՏՐՈՆ, ած. **Շատ կենտրոններ ունեցող:** ....Գլոբալիզացիան .... հանդիպում է տարբեր տեսակի ուժերի դիմակայությանը, որոնք ինչպես հետաքրքրված են գիտական գիտելիքի զարգացմամբ, այնպես էլ **բազմակենտրոն** աշխարհի ձևավորմամբ.... (Ազգ, 11.04.2014):

ԲԱԶՄԱԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ, ած. **Բազմաթիվ կուսակցություն ունեցող:** Երեք կուսակցություններից մեկի ղեկավարը խոսեց, որ պետք է ունենանք **բազմակուսակցական** կառավարություն (Ժամ., 21.11.2014):

ԲԱԶՄԱՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ, ած. **Բազում մարտահրավերներ ունեցող**: Ինչ հարցեր պիտի բերվեն հայ-չինական և հայ-իրանական օրակարգեր, որպեսզի դրանք ուղղակիորեն կամ կողմնակիորեն շոշափեն ոչ միայն արդի **բազմամարտահրավեր** զարգացումներում Հայաստանի ազգային անվտանգության հետ սերտորեն առնչվող խնդիրներ, այլև հետաքրքրություն ներկայացնեն պարտնյորների համար (168 ժ., 20.11.2014):

ԲԱԶՄԱՄՇԱԿՈՒԹԱՅՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Բազմամշակույթ լինելը:** Նա հիշեցրեց **բազմամշակութայնության** քաղաքականության մասին.... (Իրատես, 02.12.2014):

ԲԱԶՄԱՆՇԱՆԱԿԵՏ, ած. **Շատ նշանակետներ ունեցող**: Հնարավո՞ր է արդյոք Եվրասիայի տարածքում նման **բազմանշանակետ** և գերբազմագործոն խնդրի իրականացումը (Ազգ, 11.04.2014):

ԲԱԶՄԱՎԵԿՏՈՐ, ած. **Շատ, բազում վեկտորներ ունեցող**: Սա արդեն նախորդ տարիների **բազմավեկտոր** քաղաքականությունը չէ, սակայն հայտ է և առաջարկ խորացնելու առևտրատնտեսական կապերը Արևմուտքի հետ (Ազգ, 16.05.2014):

ԲԱԶՄԱՎԻՏԱՄԻՆ, գ. Պետք է վերականգնել աղիների նորմալ միկրոֆլորան, իսկ դրան կօգնեն կեֆիրը կամ կենդանի մանրէներ պարունակող պատրաստուկները և **բազմավիտամինները** (TV մոլ, 07.05.2014):

ԲԱԶՄԱՔԱՅԼ, ած. **Բազում քայլեր ունեցող:** Եթե Ս. Սարգսյանը իր դիվանագիտական հմտություններն ու **բազմաքայլ** խարդավանքները գործադրեր հանուն Հայաստանի Հանրապետության, հիմա պետք է որ Թուրքիան ծնկի եկած լիներ մեր առաջ (Հրապ., 19.04.2015):

ԲԱԽՏԱԳԻԾ, գ. **Բախտի գիծ**: Տարօրինակ ապրումներով // անկողիններում շուռումուռ են գալիս // միայնակ կանայք, //լուսնահաչ են տալիս // անտեր շները, // աստղաբջիջները մտնում են // **բախտագծերի** մեջ // մի նորածինի// (ԳԹ, 19.12.2014):

ԲԱՂԴԱԴԱՀԱՅ, գ. **Բաղդադում ապրող հայ:** Ինչ միջոցներ են ձեռնարկում **բաղդադահայերը՝** ստեղծված կացության պայմաններում... (168 ժ., 14.10.2014):

ԲԱՆԱԳԱՆՁ, գ. .... Համո Սահյանն էն զանձարանն է, որին ինչքան էլ կողոպտես–կորզես, նա անսպառ է, նա երբեք էլ լռած զանգ չէ և ավերակ վանք չէ ու միշտ իր աղոթողն ունենա, նա հայոց ինքնության **բանագանձն** է (ԳԹ, 18.04.2014):

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՌՈՒՅՑ, գ. **Բանաստեղծության կառույցը** :....Խոսքերն ավելի խոհուն է, քան պաթետիկ, **բանաստեղծակառույցն** ավելի զատ, քան կառուցիկ (ԳԹ, 28.02.2014):

ԲԱՆԴՈՆՅՈՆԱՀԱՐ, գ. **Բանդոնյոն նվագող երաժիշտ:** Ղարաբեկյանի ղեկավարության օրոք նվագախմբի հետ ելույթ են ունեցել Ժան Տեր-Մերկերյանը, Էդուարդ Թադևոսյանը, Սվետլանա Նավասարդյանը, Սերգեյ Խաչատրյանը, իտալացի սաքսաֆոնահար Ֆեդերիկո Մոնդելչին, **բանդոնյոնահար** Մարիո Պիետրդարկին և ուրիշ հայտնի երաժիշտներ (Իրատես, 21.01.2014):

ԲԱՌԱԲՈՑԵԼ, բ. Ուզում է գունավոր–գվվան շա՛տ բառեր ունենալ, հուլունք–հուլունք շարել, շարակնոցել պարանոցը, **բառաբոցել** կուրծքը (Հրաչօ), (ԳԹ, 20.12. 2013):

ԲԱՌԱԳՈՐԾԱԾՈՒՄ, գ. **Բառի գործածություն:** ....Աշխատության հիմնական մասում փաստական առատ նյութի հիման վրա ներկայացվում է հայերենի բառաշինության, տերմինաշինության ու **բառագործածման** զարգացումը սովետական շրջանում (Ռ.Իշխ., էջ 2):

ԲԱՌԱԳՈՒՅՆ, գ. **Բառի գույն:** Բառի, բառաշերտի, **բառագույնի** և բառահամի զարմանալի զգացողություն ունի Շ.Մկրտչյանը բանաստեղծ, թարգմանիչ Գագիկ Դավթյանի բնութագրմամբ (ԳԹ, 23.05.2014):

ԲԱՌԱԴԱՐՁՈՒՄ, գ. ....Առանց պաճուճանքի՝ բառային մորեմորիկ, ժողովրդական բնական խոսվածքի **բառադարձումներով**, շնորհիվ որի մեղմ թախիծը չի վերածվում ողբերգական անհուսության (ԳԹ, 07.03. 2014):

ԲԱՌԱՁԳԱՅ, ած. **Բառի ճիշտ իմաստը ըմբռնող**: Նա ուներ խոսքային առոգանության, շեշտի, կշռույթի անասելի զգացողություն և, իհարկե, բնածին **բառազգաց** բառախույզ էր (ԱՁ, էջ 476):

ԲԱՌԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ, գ. **Անիմաստ բառերի խումբ:** Մի՞թե սա պոեզիա է, ի՞նչ առնչություն ունի այս էժանագին **բառախոսությունը** իսկական բանաստեղծություն հետ (ԼՀ, էջ 95):

ԲԱՌԱԿՈՒՏԱԿՈՒՄ, գ. **Բառերի կուտակում, իրար հետևից ասված՝ շարված բառերի անիմաստ կույտ:** Մնացածը **բառակուտակումներ** են, քաղաքական բլեֆ, հրահանգ, որ կատարվում է փոփոխական հաջողությամբ (Իրատես, 12.12.2014):

ԲԱՌԱՀԱՄ, գ. **Բառի համ**: Տե՛ս ԲԱՌԱԳՈՒՅՆ–ի օրինակը:

ԲԱՌԱՀՆՉՅՈՒՆԱՅԻՆ, ած. Ճակատագրական է դառնում նրանց գործած սխալը, որն արդյունք է առավելապես լեզվական **բառահնչյունային** շփոթի, քան դիտավորության (ՍՀ, էջ 331):

ԲԱՌԱՇԻՆԱՐԱՐ, գ. **Բառաստեղծ, նոր բառեր ստեղծող:** Ինչպես արձակում, չափածոյում էլ Բեգլարյանը **բառաշինարար** է.... (ԳԹ, 04.04.2014):

ԲԱՌԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Բառ ստեղծելը:** ....Տերմինաշինությունը.... **բառաշինության** մի հատվածն է և ամենից առաջ նշանակում է հայերեն գիտական անվանումների հարստացում հայերենի հնարավորություններով.... (Ռ.Իշխ., էջ 7):

ԲԱՌԱՍՅՈՒՔ, Սրանից ի՞նչ «փախած» պատմվածք, սա փինաչու տվայտանքների մի չնչին **բառասյուք** է (ԳԹ, 07.02.2014):

ԲԱՌԱՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆ, գ. **Բառի փոխառություն:** ....Պետք է տարբերել շինությունը (–շինարարությունը) փոխառությունից: Եթե առաջինը հանգում է բառաշինությանը, ապա երկրորդը այլազգի բառերի անփոփոխ գործածությունն է հայերենում, որ հանգում է **բառափոխառության** (Ռ.Իշխ., էջ 8):

ԲԱՌԱՔԱՄ,ած. **Բառ քամող:** Նա ժամից ժամ էր քամում, օրից օր էր քամում և ստեղծում իր՝ լեռնական խիտ, բեղուն, **բառաքամ** ժամանակը (ԳԹ, 05.09.2014):

ԲԱՐԵՀԱՐԴԱՐ, –Շնչող ապրողաց՝ հույժ համբերություն,/ Զի մենակվել են Աստծու ամեն օր,/ Իրարահաղորդ **բարեհարդար** հու՛ն /Եվ հարեհասի հավելաշնորհ.... (ԳԹ, 20.12.2013):

ԲԱՐԻԿԱԴԱՎՈՐՎԵԼ, բ. **Պաշտպանական դիրք գրավել**: ....Ոչ մեկի անձնական փիարը չիրականացնող թերթ ունենալն այսօր ավելորդ շռայլություն է մեր օլիգարխահեն ու բևեռացված, **բարիկադավորված** հասարակության համար (Ազգ, 14.03.2014):

ԲԱՐՁԻԹՈՂՈՒԹՅՈՒՆ, գ. Բայց ի՞նչ **բարձիթողության** մասին է խոսքը, երբ հիվանդությունը գաղտնի է թակարդ լարում, անցավ է զարգանում (ՀՀ, 14.06.2014):

ԲԱՐՁՐԱԽՈՐ, ած. **Բարձր և խորը :** ....Եվ տարիների ընթացքում գումարվում է ոչ պակաս համաժողովրդական պատկառանքը, այդ ջրհորի նման **բարձրախորն** են՝ ամենքիս ակունքներիս հետ կապող (ԳԹ, 04.10.2013):

ԲԱՐՁՐԱՁԱՅՆՈՒՄ, գ. **Բարձրաձայնելը:** ...(Նա) կոչ արեց խորհրդարանում հնարավորինս լայնորեն ապահովել հասարակության այդ հատվածի մտահոգությունների **բարձրաձայնումը** (Իր., 20.10.2014):

ԲԱՐՁՐԱՄԱՔՈՒՐ, ած. **Շատ մաքուր:** Այն թերապևտիկ էֆեկտով օժտված **բարձրամաքուր** ալիֆատիկ ածխաջրածինների խառնուրդ է (TV մոլ, 21.04.2014):

ԲԱՐՁՐԱՐԺԵՔՈՒԹՅՈՒՆ, գ. **Բարձր արժեք ունենալը**: ....Նելլի Շահնազարյանը, գնահատելով Լ.Խեչոյանի արձակի լեզուն, ոճը և գեղարվեստական **բարձրարժեքությունը**, դիմեց գրչընկերներին .... (ԳԹ, 15.11.2013):

ԲԱՐՈՅԱԸՆՏԱՆԵԿԱՆ, ած. **Բարոյական և ընտանեկան:** Բնական, աստվածային, **բարոյաընտանեկան,** սոցիալ-բարոյական կարգի յուրաքանչյուր խախտող, իբրև պատիժ, ենթարկվում է կերպարանափոխման (ՍՀ, էջ 200):

ԲԱՐՈՅԱԻՐԱՎԱԳԻՏԱԿԱՆ, ած. **Բարոյական և իրավագիտական:** Այս ժամանակավոր ու բացառիկ կերպարանափոխումը ունի իր **բարոյաիրավագիտական** պատճառաբանությունը (ՍՀ, էջ 283):

ԲԱՐՈՅԱՀԵՂՁ, ած. Հիմա ասա, ո՞նց դիմանամ//**Բարոյահեղձ** ընթերցողի //հիացքին ու հալածանքին. ....(ԳԹ, 11.10.2013):

ԲԱՐՈՅԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ, ած. **Բարոյական և հոգեբանական:** .... Տեղամասային տեսուչն իր գործունեությամբ պատասխանատու է հանցագործությունների կանխարգելման, համայնքներում **բարոյահոգեբանական** մթնոլորտի համար (ՀՀ, 27.02.2014):

ԲԱՑԱՆԱԼ, բ. **Բաց գույն ստանալ:** Որքան բարձր է պերօքսիդի այդ տոկոսը, այնքան ավելի է **բացանում** մազերի գույնը (Նանե, թ.7.2013):

ԲԱՑԱՏՐԱԽՆԴԻՐ, գ. **Բացատրելու խնդիր, պարզաբանելու խնդիր :** Այդպես է, քանզի նրա գրքի բանաստեղծական կշիռը մեծ է՝ կարիք չունենալով ավելորդ բարյացակամության կամ **բացատրախնդրի** (ԳԹ, 07.02.2014):

ԲԱՑԴՈՒՌ,ած. **Դուռը բաց:** Անունների և հիշողությունների այդ **բացդուռ** թանգարանը կմնա մշտապես խնկելի (ԳԹ, 04.07.2014):

ԲԻԺՈՒ, Բանաստեղծություններ կան, որ նորաձև **բիժու** են՝ բոլորը սիրում են, բոլորը կրում են .... (ԳԹ, 13.09. 2013):

ԲԻՈՎԿԱՅԱԳԻՐ, գ. **Կենսավկայագիր:** Բարձրորակ թեյերի և եթերայուղերի արտադրման համար ձեռնարկությունն արդեն մեկուկես տարուց ավելի է, որ արժանացել է օրգանիկ **բիովկայագրի** (Իր., 13.12.2013):

ԲԼՅՈՒԶԱՊԱՇՏ, ած., **Բլյուզ պաշտող**: ...Երբ Հայաստան է այցելում որևէ հայտնի բլյուզմեն, մի հարկի տակ է հավաքում գրեթե բոլոր **բլյուզապաշտներին** (168 ժ., 11.12.2014):

ԲԼՅՈՒԶՄԵՆ (ԲԼՅՈՒԶՎՈՒՄՆ), գ. **Բլյուզ ստեղծող կամ կատարող:** Եթե սիրում ես բլյուզ, եթե դու իսկապես լավ **բլյուզմեն** ես կամ **բլյուզվումն**, ուրեմն այն քեզ համար է (168 ժ., 11.12.2014):

ԲԼՐԱՆԱԽՇ, ած. **Բլուրներով զարդարված՝ բլրաշատ՝ բլրավետ:** Չքնաղ է Լոռին ու **բլրանախշ**, բայց մորս մահից հետո այն նախկին գեղեցկությունը չունի (ԼՋ, էջ 119):

ԲՄԲԼՈՏՎԵԼ, բ. **Բմբուլով պատվել:** Եվ ցավն էլ այն է, որ **բմբլոտվելուց** հետո ձագերը նրան չեն էլ ճանաչում (ՀԲ, էջ 104):

ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՈՒՄ, գ. Նախարարի առաջին տեղակալը ներկայացրել է բյուջետային քաղաքականությունը, մասնավորապես, ծրագրային **բյուջետավորման** ներդրման ուղղությամբ կատարվող քայլերը (ՀՀ, 03.12.2013):

ԲՆԱԳՐԱՊԱՇՏ, ած. Օրինակելի՛ հայորդի, տաղանդավոր բանաստեղծ ու թարգմանիչ Հրաչյա Բեյլերյա՛ն, քո **բնագրապաշտ** շնչի շնորհիվ մայրենիով շնչավորվեցին Անդրեյ Բելին ու Մաքսիմիլան Վոլոշինը, Մարինա Ցվետաևան ու .... (ԳԹ, 20.12.2013):

ԲՆԱԴՐԱՎԱՅՐ, գ. **Բուն դնելու վայր:** Գարնանը ճայակները վերադառնում են իրենց **բնադրավայրը** և սկսում նորոգել իրենց սարքած հին տները (TV մոլ, 25.10.13):

ԲՆԱԿԱՐԱՆԱՔԱՆԴՈՒՄ, գ. Եվ ընդհանրապես, Երուսաղեմում արաբների **բնակարանաքանդման** բազմաթիվ դեպքեր կան որպես «պատիժ» վերջինների զանազան ընդվզումների…. (Ազգ, 21.11.2014):

ԲՆԱԿԵՐՊ, ած. **Բնության կերպ, ձև ունեցող:** Ամպրոպային երևույթի այդ **բնակերպ,** կենդանակերպ և մարդակերպ պատկերացումները հավասարաձևունակ են և

արտահայտում են մտածողության մշակութատիպաբանական զարգացման տարբեր աստիճաններ (ՍՀ, էջ 84):

ԲՆԱՇՈՒՆՉ, ած. .... Այդ սերնդի պայծառ անունների մեջ առանձնանում էր Համո Սահյանը՝ իր **բնաշունչ** էությամբ, ժողովրդական խոսքի ոսկեղենիկ երակը շարունակելու ջանքով (ԳԹ, 18.04.2013):

ԲՆԱՏԵՍԱՐԱՆԱՅԻՆ, ած. **Բնության տեսարաններին վերաբերող**: Այսպես, տեսնում ենք, որ հայ **բնատեսարանային** առասպելներում անձնավորումը, իբրև առասպելաբանաստեղծական մտածողություն ու արտահայտչաեղանակ, դրսևորվել է միայն Հայկական լեռնաշխարհի նշանավոր լեռնազանգվածների նկատմամբ (ՍՀ, էջ 209):

ԲՆՈՒԹԱԳԾԵԼ, բ. **Գծանկարելու միջոցով բնութագրել:** Ես ձգտում եմ **բնութագծել** իրերը, գտնել նրանց մեջ եղած կապը, ապա տալ նրանց կյանք (ՄՍ, էջ 180):

ԲՈԲՍԼԵՅԻՍՏՈՒՀԻ, գ. **Կին բոբսլեյիստ**: Փրկարար ծառայությունից ահազանգ է ստացվել, որ **բոբսլեյիստուհին** փակված է մնացել հյուրանոցային համարի զուգարանում (Հրապ.,12.02.2014):

ԲՈՄԺԱԽԱՎ, գ. **Բոմժերի խավ:** Ազնվականության շառավիղներ, իհարկե, կան, բայց նրանք վաղուց սովորականից էլ սովորական մահկանացուներ են՝ նույն կարմիր արյունով, ինչպիսին հոսում էր սովետական յուրաքանչյուր բանվորի ու գյուղացու և այսօրվա ցանկացած ընտրյալ պառլամենտականի ու **բոմժախավի** երակներում (Իրատես, 18.03.2014):

ԲՈՍՈՐԱԿՈՒՐԾՔ, ած. **Կարմիր կուրծք ունեցող: Բոսորակուրծք,** ճերմակ դողով// պիտի պառկեմ խորհրդի հետ, որ բժժանքի սիրամրրիկ քեզ հատուցեմ (ԳԹ,16.05.2014):

ԲՈՍՈՐԱՇՂԱՐՇ, ած. **Կարմիր շղարշով: Բոսորաշղարշ** գեղուհին իջել //Ու… պա՜ր է գալիս… //Հորիզոն–բեմը՝ իր տակ մշուշած / լանջերը սարի՛ // Մեկ խոնջանում է ու մե՛կ գալարվում (ԳԹ, 06.03.2015):

ԲՈՑԱԿՈՆ, գ. **Գազերն այրելու կոնաձև սարք:** Այն մթնոլորտ բաց թողնելը լավ չէ բնապահպանության և անվտանգության նկատառումներով, այդ պատճառով էլ գազն այրում են **բոցակոներում** (TV մոլ, 23.03.2015):

է կենտրոնը (Ազգ, 31.10.2014):

ԲՋՋԱԳԵՆԵՏԻԿԱ, գ. **Բջջային գենետիկա**: Գիտնականի աջակցությամբ ԵՊՀ գենետիկայի և բջջաբանության ամբիոնում ներդրվել են մոլեկուլային **բջջագենետիկայի** արդի մեթոդները (Եր.համ., սեպտ., 2014):

ԲՋՋԱՆՔ, գ. Հում մթերքն ավելի շատ **բջջանք** է պարունակում, որը նպաստում է աղիների մաքրությանը (TV մոլ, 23.12.2013):

ԲՌՆԱԴԱՏՎԵԼԻՔ, Կուսակցության 19–րդ համագումարում Միկոյանը Ստալինի ցուցակում հերթական **բռնադատվելիքներ**ի թվում էր (Ազգ, 20.06.2014):

ԲՌՆԱԶԱՏՎԵԼ, բ. Ի՞նչ հուշապատկերներով են երկինք վերացել Ադանայից, Տարոնից, Ուրֆայից, Դեր Զորից՝ **բռնազատված** հոգիները, և Տիրոջ հրեշտակներն ինչպե՞ս են դիմավորել նրանց…. (ԳԹ, 20.03.2015):

ԲՌՆԱԽԵՂՈՒՄ, գ. **Բռնախեղդ անելը**: Քաղաքապետարանի բոսերին էլ մնում է ուրվագծել հերթական մայրաքաղաքային **բռնախեղդումը** (Իրատես, 31.01.2014):

ԲՌՆԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Բռնի սպանություն**: Հրանտ Դինքի **բռնասպանությունից** երկու տարի անց Թուրքիայում տեղաշարժ է սկսվել (Ազգ, 03.10.2014):

ԲՌՆԱՏԵՂԱՀԱՆՈՒՄ, գ. **Բռնի տեղահանելը**: …. Այդ ընթացքում կանխվել է արցախահայության **բռնատեղահանումը** կամ պարզ ոչնչացումը…. (Ազգ, 21.11.2014):

ԲՌՆԱՏԵՂԱՀԱՆՎԵԼ, գ. **Բռնի կերպով տեղահանվել:** Ամենատարբեր աղբյուրներ վկայում են, որ նման քայլի նա դիմել է ԼՂ Մարտունի մերձակա բնակավայրից **բռնատեղահանված** մի խումբ կանանց ճնշման տակ, երբ նրանք վիրավորել են պետքարտուղարի տղամարդկային արժանապատվությունը (Հրապ., 25.11.2014):

ԲՌՆՎԱԾՈՒԹՅՈՒՆ, գ. Պոեզիայի կրքով **բռնվածությունն** է ստիպում աշխատեցնել ենթամիտքը, վերլուծել իրողությունն ու մատուցել հուզականության թևերի վրա (ԳԹ, 19.07.2013):

ԲՐԴԱԳԱՆԳՈՒՐ, ած. **Բրդի նման՝ գանգուր:** Քամին ծածանում էր **բրդագանգուր** մազերը, քաշքշում հագուստի փեշերը՝ տատանելով թիկունքում դրոշը եռագույն (ԼՋ, էջ 135):

ԲՐԵՆԴ, գ. **Ապրանքանիշ**: Արտասահմանյան ավտոմոբիլային հայտնի **բրենդների** երևանյան ավտոսրահներում աշխուժություն է տիրում (Իրավունք, 26.02.2014):

ԲՐԵՆԴԱՅԻՆ, ած. –Ո՞ր **բրենդային** խանութներն եք նախընտրում, հագուստ ընտրելիս հաշվի եք առնում գի՞նը, որա՞կը, թե բրենդը .... (ԳԹ, 22.11.2013):

ԲՐԻՏԱՆԱՀՊԱՏԱԿ, գ. **Մեծ Բրիտանիայի Միացյալ թագավորության հպատակ: Բրիտանահպատակ** 36-ամյա Ալամուդինը ծնվել է Լիբանանում, ավարտել է Օքսֆորդի համալսարանը և Նյու Յորքի իրավաբանական դպրոցը (TV մոլ, 05.05.2014):

ԲՈՒԺԱԳԻՐՔ, գ. Բանաստեղծուհի, համարձակ հրապարակախոս Նանեից բանաստեղծությունների ժողովածու և ...«Առողջության տաճար» **բուժագիրքը** (ԳԹ,13.09. 2013):

ԲՈՒԺԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ, գ. **Բուժական գործողություն**: Աղը նկատելիորեն բարձրացնում է ողջ **բուժգործողության** դրական ազդեցությունը, նյութափոխանակությունն ու արյան շրջանառությունը (TV մոլ, 13. 01.2014):

ԲՈՒԺՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ, գ. **Բուժական հիմնարկ՝ հաստատություն:** Բաց դռների օրը յուրաքանչյուր ոք կարող է անձամբ ծանոթանալ **բուժհաստատության** աշխատանքի կազմակերպմանը (Համացանց, 08.05.2014թ.):

ԲՈՒԺՍԱՐՔԱՎՈՐՈՒՄ, գ. **Բուժական սարքավորում:** Մասնագետների կուտակած փորձը լրացնում են ժամանակակից **բուժսարքավորումները**, որոնցով լիովին հագեցած է կենտրոնը (Ազգ, 31.10.2014):

ԲՈՒՍԱԹԵՅ, գ. **Բույսերից պատրաստվող ըմպելիք:** Կանաչ **բուսաթեյը** հզոր հակաօքսիդանտ է և հանդիսանում է երկարակյացների կերակրացանկի կարևոր մասերից մեկը (Իր., 13.12.2013):

ԲՈՒՍԱԾԱԳՈՒՄ, գ. **Բուսական ծագում ունենալը**: Հատկապես ուշագրավ են **բուսածագման** այն առասպելները, որոնք աղերսվում են մարդկային մարմնի մասերին՝ դարձյալ հավաստելով բույսերի ծագումնաբանական կապը մարդ արարածի հետ (ՍՀ, էջ 261):

ԲՈՒՍԱՄՍԱՅԻՆ, ած. **Բուսային և մսային**: Կուբացի առաջնորդը պարզապես պաշտում է թանձր, շագանակագույն, **բուսամսային** համով հագեցած այդ ուտեստը (TV մոլ, 19.01.2015):

ԲՈՒՍՈՒՏ, գ. **Աճելու վայր:** Խատուտիկը աճում է այգիներում՝…հաճախ տալով մեծ **բուսուտներ** (ՀԴ, թ. 1, 2014):

ԲՈՒՐԺՈՒԱՕԼԻԳԱՐԽԻԱԿԱՆ, ած. Հայաստանում բուրժուադեմակրատական հեղափոխության ֆլագման հռչակված «Բարգավաճ Հայաստանը» ըստ էության **բուրժուաօլիգարխիական** դաշնակցության մեջ էր մտել ՀՀԿ-ի հետ (Հրապ.,30.04.2014):

ԲՈՒՔՄԵՅԿԵՐ, գ. **Բուքմեյկերները**ը հենց Արոնյանին են համարում մրցաշարի գլխավոր ֆավորիտ (ՀՀ, 15.02.2014):

Գ

ԳԱԶԱԼՑԱԿԱՅԱՆ, գ. **Փոխադրամիջոցները գազով լիցքավորելու կայան**: Կառավարության որոշմամբ՝ **գազալցակայանների** տեղական հարկեր սկսել են վճարել 2013 թվականից, իսկ գործում ներառել են նաև 2012 թվականը (Իրավունք, 12.12.2014):

ԳԱԶԱԿԾԿՈՒՄ, գ. **Գազեր առաջանալու պատճառով աղիների կծկում:** Բացի դրանից, գազարն արագացնում է աղիների **գազակծկումները,** արյունաստեղծ հատկություն ունի և նվազեցնում է խոլեստերինի մակարդակը (TV մոլ, 02.03.2015):

ԳԱԶԱԿՈՆԴԵՆՍԱՏԱՅԻՆ, ած. Ադրբեջանական Շահ–Դենիզ **գազակոնդենսատային** հանքավայրից մատակարարումները պետք է սկսվեն 2020 թվականին (Ազգ, 10.10.2014):

ԳԱԶԱՀԱՄԱԿԱՐԳ, գ. **Գազամատակարարման համակարգ:** Այս հարցի պատասխանը փորձեցինք ստանալ ներտնային **գազահամակարգերի** տեխնիկական սպասարկումն իրականացնող .... ընկերության գլխավոր տնօրեն Ա.Հարությունյանից (Իրավունք, 07.03.2014):

ԳԱԶԱՁԵՎԱՎՈՐՈՒՄ, գ. **Աղիներում գազերի առաջանալը**: Մետեորիզմ արձանագրվում է նաև առողջ մարդկանց մոտ շատ ուտելուց հետո, կամ էլ այնպիսի մթերք օգտագործելիս, որոնց մարսողությունը նպաստում է **գազաձևավորմանը** (TV մոլ, 03.02.2014):

ԳԱԶԱՄԱՏԱԿԱՐԱՐ, ած. **Գազ մատակարարող:** Նման հաշվիչների ներդրման դեպքում բաժանորդը կարող է **գազամատակարար** ընկերության հետ պայմանագրում ֆիքսել, թե ինչ ճնշման գազ է իրեն մատակարարվելու (168 ժ., 09.10.2014):

ԳԱԶՈՆԱՊԱՏԵԼ, բ. .... Ջրի առկայությամբ հնարավոր կդառնա նշյալ հատվածում «կենդանացնել» սիզամարգերը, այն է՝ **գազոնապատել** և ծաղկապատել դրանք (ՀՀ, 28.03.2014):

ԳԱԼԱՐԱԹԱՓ, ած. **Գալար-գալար թափվող**: Մտնում և դուրս էինք գալիս**....գալարաթափ** լարերի, մետաղների և տարաբնույթ բուրմունքներ արձակող՝ իրար ետևից ընկնող գյուղերի միջով (ԼԽ, էջ 138):

ԳԱՂԱՓԱՐԱԴԻՐ, ած. ....Նրանց կողքին պտտվող մանր ժուլիկներ, կիսագրագետ պետական չինովնիկներ, ԱԺ–ի՝ **գաղափարադիր** և գիրք գրող պատգամավորներ,....(Ազգ, 31.10.2014):

ԳԱՂԱՓԱՐԱԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ, ած. Այստեղ բացահայտ երևան է գալիս **գաղափարաիմաստասիրական** մի ընդհանուր հակադրություն՝ աստվածային/մարդկային (ՍՀ, էջ 221):

ԳԱՂՏՆԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ, գ. **Գաղտնի գործունեություն**: Որևէ մեկը կարող է ընդվզել՝ ինչու այսքան կոնսպիրոլոգիա՝ **գաղտնագործունեություն** կամ դավադրատեսություն (Ազգ, 05,12.2014):

ԳԱՅԼԱՌՈՒՆՈՑ, գ. **Գայլի ոռնոց**: Հիմա... երկնաքեր բարձրավանդակներում տիեզերադավ է,// շնավայոցներ, **գայլառոնոցներ** .... (ԳԹ, 25.04.2014):

ԳԱՎԱԹԱՁԵՎ, ած. **Գավաթի ձև ունեցող:** Կաղնու պտուղը կաղինն է, ամփոփված **գավաթաձև** պտղակալում (Տն. առ., թ.1, 2014, էջ 6):

ԳԱՐՆԱՆԱՅՆՈՐԵՆ, մկբ. **Գարնան նման**: Մեքենայի պատուհանից աչք էին շոյում **գարնանայնորեն** թարմ, կանաչապատ դաշտերը.... (Իրատես, 21.03.2014):

ԳԵԼԱՓԱԿԱՆ, ած. Կլինեն արտահերթ ընտրություններ, թե չեն լինի 2015-ին, թողնում եմ քաղաքական բախտագուշակներին, **գելափական** սոցիոլոգներին, մենք պիտի պատրաստ լինենք ամեն ինչի (Իրատես, 12.12.2014):

ԳԵՂԱՀԱՐԴԱՐՈՒՄ

ԳԵՂԱՌԼՈՐԱՎԱՅՐԷՋՔ

ԳԵՂԵՑԿԱԽՈՍԵԼ, բ. **Գեղեցիկ ոճով խոսել:** Ես ինքս ինձ հիշում եմ Վահագն Վիշապաքաղի հայտնության պահից: Չեմ կատակում և **գեղեցկախոսում** եմ (ՄՍ, էջ 54):

ԳԵՈՊԱԹՈԳԵՆ, գ. **Գեոպաթոգեն** դաշտերի էներգետիկան մարդկությանը հայտնի էներգիաներից միակ տեսակն է, որին բնորոշ է կուլմինացիոն ազդեցությունը (Տն. առ., թ.16, 2014):

ԳԵՈՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ, ած. Հայաստանը կատարեց **գեոռազմավարական** ընտրություն (Իր., 04.11.2014):

ԳԵՏՆԱՆՑՈՒՄ, գ. **Գետնուղի, գետնի տակով անցնելու ուղի:** Հանկարծ աչքի պոչով անսովոր շարժում զգաց, նայեց **գետնանցումի** կողմը, սիրտը սկսեց արագ խփել (TV ալիք, 25.11.2013):

ԳԵՏՆԱՍՈՒՅԶ ԼԻՆԵԼ, բ. Իսկ Նեմրութն իր նորակերտ ապարանքով լեռան գագաթին **գետնասույզ է լինում**, այդտեղից սկսում է հորդահոս ջուր բխել և անհետ ծածկել անօրենի հիշատակը (ՍՀ, էջ 225):

ԳԵՐԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ, գ. **Չափազանց շատ ազդեցություն**: Լիակատար է դառնում Ռուսաստանի **գերազդեցությունը** (Համացանց, 14.02.2014):

ԳԵՐԱՐԱԳԱՆԱԼ, բ. **Շատ արագանալ, գերարագ ընթանալ**: Իր փոփոխությունների մեջ **գերարագացած** ժամանակն անգամ տարակուսելու ու վերագնահատումի չի մղում (Իրատես, 31.01.2014):

ԳԵՐԲԱԶՄԱԳՈՐԾՈՆ, ած. **Խիստ բազմագործուն**: Հնարավո՞ր է արդյոք Եվրասիայի տարածքում նման բազմանշանակետ և գերբազմագործոն խնդրի իրականացումը (Ազգ, 11.04.2014):

ԳԵՐԴԵՂԱՉԱՓ, գ. **Դեղաչափի խախտում:** Այն ժամանակ թմրանյութի **գերդեղաչափից** մահացավ նրա մտերիմ ընկերը՝ դերասան Ռիվեր Ֆենիքսը (TV մոլ, 09.12.2013):

ԳԵՐԴՈԶԱՎՈՐՈՒՄ, գ. Հիպովիտամինոզից պակաս վտանգավոր չէ վիտամինների **գերդոզավորումը** (ԳԹ, 28.11.2014):

ԳԵՐԶԳՈՒՇԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, գ. **Գերզգուշավոր լինելը**: ....Կանցլեր Մերկելի վերջին օրերի մի շարք ելույթներում զգացվող **գերզգուշավորությունն** ակնհայտ է (Իրավունք, 18.03.2014):

ԳԵՐԹԱՆԿԱՐԺԵՔ, ած. **Արտակարգ թանկ:** Զբոսաշրջության զարգացմանն ուղղված ՀՀ կառավարության քայլերից ամենահիշարժանը **գերթանկարժեք** բիոզուգարանների ներմուծումն էր (Ժող., 26. 11.2013):

ԳԵՐԹԵԹԵՎՔԱՇԱՅԻՆ, ած. (մարզ.) **Գերթեթև քաշ ունեցող**: Ի տարբերություն **գերթեթևքաշային** հոր՝ փոքրիկը բավական խոշոր չափերով է ծնվել՝ 3,6 կգ քաշով և 52 սմ հասակով (TV մոլ, 10.03.2014):

ԳԵՐԻՐԱՊԱՇՏՈՒԹՅՈՒՆ, գ. **Չափազանց իրապաշտ լինելը: Գերիրապաշտությունը** որպես գեղարվեստական մտածողության ձև այսօր էլ դրսևորվում է մեզանում ....(ԳԹ, 25.10.2013):

ԳԵՐՀՐԱԲԽԱՅԻՆ, ած. **Չափազանց հրաբխային**: Քաղաքը գտնվում է **գերհրաբխային** Ֆլեգրեյսկյան դաշտերի միջև և հեռու չէ Վեզուվից (TV մոլ, 16.06.2014):

ԳԵՐՀՐԱՊՈՒՐԻՉ, ած. **Խիստ հրապուրիչ:** Կարծես թե Բաքվում վերակենդանացրել են եվրոպական այդ դեֆիցիտը էներգակիրներով փակելու **գերհրապուրիչ** գաղափարը (Իրավունք, 20.06.2014):

ԳԵՐՄԱՆԱԽՈՍ, գ. **Գերմաներեն խոսող**: Վերջին 150 տարիների ընթացքում ուրիշ ոչ մի կին **գերմանախոս** երկրների վրա այդքան մեծ ազդեցություն չի թողել (Լու Բեգայի մասին է) (TV ալիք, 25.11.2013):

ԳԵՐՄԱՆԱՀԱՅՈՑ, ած. **Գերմանահայերին վերաբերող**: Թե ինչպիսի հետագա զարգացումներ կլինեն **գերմանահայոց** կենտրոնում, ցույց կտա ժամանակը (TV մոլ, 27.10.13):

ԳԵՐՆՊԱՏԱԿ, գ. **Այլ նպատակներին գերազանցող նպատակ:** Երբեք **գերնպատակներ** չեմ ունեցել, սլաքներ չեմ գծել՝ ինչը ոնց պետք է անեմ, Աստված ինձ ուղղորդել է (TV ալիք, 25.11. 2013):

ԳԵՐՈՒՌՃԱՑՈՒՄ, գ.Աշոտ Արզումանյանը ծառայում է գերվաճառատների **գերուռճացմանը** ափաչափ խանութների ոչնչացմամբ (Իրատես, 28.02.2014):

ԳԵՐՈՒՌՃԱՑՎԵԼ, բ. **Խիստ ուռճացվել:** Նա չմատնանշեց մեր տնտեսության առաջ կանգնած հիմնական խնդիրները՝ կոռուպցիա, …արտագաղթ, **գերուռճացված** պետական համակարգ (Հրապ., 29.10.2014):

ԳԵՐՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ, ած. Չկա այնպիսի գերպրոֆեսիոնալ դերասան, ով կասի այդ կերպարի հետ բացարձակ կապ չունեմ (TVալիք, 27.10.2014):

ԳԵՐՍՏԵՐԻԼ, գ. **Խիստ վարակազերծ:** Ընթացող շարժումների մեծ մասը տեխնոլոգիաների արդյունք է, իսկ դրանք Հայաստանում աշխատում են միայն իշխանության օգտին՝ապահովելով **գերստերիլ** քաղաքական դաշտ (Հրապ., 28.10.2013):

ԳԵՐՎԱՃԱՌԱՏՈՒՆ, գ. **Չափազանց մեծ վաճառատուն**: Տե՛ս ԳԵՐՈՒՌՃԱՑՈՒՄ-ի օրինակը:

ԳԵՐՏԱՐԱԾԱԿԱՆ, ած. Ալիսիա Կիրակոսյանը **գերտարածական** կոչվող բանաստեղծական շարժման հիմնադիրն է (ԳԹ, 30.05.2014):

ԳԵՐՖԻԶԻԿԱԿԱՆ, ած. Մեկ տարի է մնացել Հայոց ցեղասպանության 100–ամյակին, և թուրքերը, բնականաբար, պատրաստվում են **գերֆիզիկական** և գերֆինանսական

միջոցներ ներդնել սպասվող բացասական հետևանքները կանխարգելելու համար (ԳԹ, 21.03.2014):

ԳԵՐՖԻՆԱՆՍԱԿԱՆ, ած. Տե՛ս ԳԵՐՖԻԶԻԿԱԿԱՆ-ի օրինակը:

ԳԻՆԵԲՈՑ, գ. **Կրակի բոցին նմանվող գինի:** Քոնն են ոսկեթամբ ձիերն հեքիաթի, և վրնջացող զամբիկներն ազատ: /Այրվում է գինին և գույներն հեռվում, **գինեբոցն** ելել, տարել է նրան (ԳԹ, 21.03.2014):

ԳԻՆԵԳԱՎ, գ. **Գինու գավաթ՝ թաս՝ բաժակ:** Եվ ձեռքն ասպետի երազների մեջ, **/Գինեգավը** լիքը կմեկնի իրեն .... (ԳԹ, 21.03.2014):

ԳԻՆԵԹՈՒՅՐ, ած. **Գինու գույնի :** ....Որ Պարույր Սևակի «ստեղծածը միշտ կապրի, // հեքիաթ կդառնան սեր ու անրջանք, // և գարունները մեր այն ծաղկաբույր,// դու՝ ապրողների ցավ ու ափսոսանք, //դու՝ նրանց կորուստ՝ աղի, **գինեթույր** .... (Ազգ, 24.04.2014):

ԳԻՆԵՀՈՒՆՑ, գ. Եվ ձիեր, և մերձեցում փափուկ, **/գինեհունց** և հինձք, հնձվորներ գինարբ.... (ԳԹ, 21.3.2014):

ԳԻՆԵՇՈՒՐԹ, ած. **Գինիոտ շուրթեր ունեցող:** Գինեքույր, գինե գինաղջիկ գինով, **գինեշուրթ**՝ շրթիդ և շրթիդ ծարավ...//Քոնն են արգելված հնարքներն անձև և արքաների լռությունն անձայն (ԳԹ, 21.03.2014):

ԳԻՆԵՔՈՒՅՐ, գ. **Գինու քույր:** Տե՛ս ԳԻՆԵՇՈՒՐԹ–ի օրինակը:

ԳԻՆԵՔՐՏՆԱՀՈՏ, ած. **Գինու և քրտինքի հոտ տարաածող՝ ունեցող**: **Գինեքրտնահոտ** դահլիճում՝ մթամած ուղեղներով հեղինակային ֆիլմեր, նկարների ցուցահանդեսներ էինք դիտում (ԼԽ,ՍԳԾԲ, էջ 148):

ԳԻՇԵՐԱԿԱՑԱՐԱՆ, գ. **Գիշերելու տեղ՝ վայր՝ կացարան:** …. Դսեղում կան զբոսաշրջային տներ, որոնք ստեղծում են հավելյալ **գիշերակացարաններ**, ինչն էլ հանգեցնում է աշխատատեղերի ստեղծմանը …. (ՀՀ, 01.11.2014):

ԳԻՇԵՐԱՀԱՐ, ած. Եվ՝ էլ ոչինչ... անգամ իգականը՝ **գիշերահար** մեզ չդրդեց տրվել անհոգ զվարճանքի .... (ԳԹ, 22.11.2013):

ԳԻՏԱՊԱՇԱՐ, գ. **Գիտելիքների պաշար:** Նրա **գիտապաշարը,** հղած հեղինակների շրջանակը երբեմն զարգացնում են (ՀՄԵՀ, էջ 382):

ԳԻՏԵԼԻՔԱՀԵՆՔ, ած. **Գիտելիքի վրա հենված:** Նախագահն ու վարչապետը անցած տարիների ընթացքում պարբերաբար խոսում են գիտական ներուժի օգտագործման,

գիտելիքահենք ոլորտի զարգացման, այս ոլորտի առաջնահերթության մասին (Ազգ, 28.03.2014):

ԳԻՐՈՒԳԻՐ, գ. **Գրավոր ժառանգություն**: Երդվում եմ, Ուսուցչապետ, քո անունը կրող դպրության շեմից ներս մտնելուց առաջ ունկնդիր լինել դարերի կանչին, պահապանը դառնալ հայոց **գիրուգրին** (168 ժ., 11.12.2014):

ԳԻՐՔԱՇԱՐ, ած. Ես հեշտությամբ պատկերացնում եմ, թե նա ինչպիսին է եղել դպրոցում, վտիտ **գիրքաշար** երեխա, որը դասերի ձանձրույթը փարատում է անհագուրդ ընթերցանությամբ (Ազգ, 04.04.2014):

ԳԼԽԱԽՈՆԱՐՀ, մկբ. **Գլուխը խոնարհած՝ գլխիկոր:** Ուզում եմ խեղդել հառաչը բոցի աչքերիս խորքի, ուզում եմ խաչել քո ուրվականը, և **գլխախոնարհ,** ծնկաչոք եղած աղերսել քեզնից… մեղքերիդ քավում…. (ԳԹ, 07.11.2014):

ԳԾԱՏԵՐ, գ. **Տրանսպորտային երթուղին սպասարկող փոխադրամիջոցների տերը:** Այսօր Երևանի քաղաքապետարանի դիմաց հավաքվել էին մի խումբ հաստավիզ **գծատերեր** (Ժող., 08.11.2013):

ԳԾԱՏԻՐԱԿԱՆ,ած. **Տրանսպորտային երթուղին սպասարկող փոխադրամիջոցների տերը:** Փոխադրող ընկերությունների միության նախագահը …. հիանալի տիրապետում է **գծատիրական** լացի տեխնոլոգիային (Ժող., 10.12.20130):

ԳՄԲԵԹԱՆԿ, Սյուն ու խոյակի զարդ– համադրությամբ՝ հավատքի տունն է **գմբեթանկ** կանգուն....(ԳԹ, 31.01.2014):

ԳՅՈՒՂԱԲԱՐ, մկբ. **Գյուղին հատուկ ձևով**: Ոչ միայն գյուղի տունն էր պատրաստ, այլև քաղաքի նոր, թեև կենտրոնում գտնվող, բայց **գյուղաբար** անդորրավետ սքանչելի բնակարանը (ԼՀ, էջ 178):

ԳՅՈՒՂԱԲՈՒՅՐ, ած. **Գյուղի բույր ունեցող, գյուղի անդորրը հիշեցնող**: Նրանք **գյուղաբույր** են ու գյուղաշաղախ, սիրո հրաշապատումների անսպասելի ակնկալիքներով լի .... (ԳԹ, 26.09.2014):

ԳՅՈՒՂԱՇԱՂԱԽ, ած. **Գյուղը հիշեցնող**: Տե՛ս ԳՅՈՒՂԱԲՈՒՅՐ–ի օրինակը:

ԳՅՈՒՂԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ, գ. **Գյուղին աջակցելը:** Մկրտիչ Զոհրաբյանը ներկայացնելով ծրագրային ուղղությունները, որոնց մի մասը վերապատրաստում, մյուսը ուսուցում, երրորդը՝ **գյուղաջակցություն** են ենթադրում (Հրապ., 22.04.2014):

ԳՅՈՒՂՄԹԵՐՔ, գ. **Գյուղատնտեսական մթերքներ:** Արտադրված **գյուղմթերքներով** բավարարվել է ոչ միայն մարզի բնակչության պահանջարկը (Ագրոլրատու, 05.02.2015):

ԳՅՈՒՂՈԼՈՐՏ, գ. **Գյուղատնտեսական ոլորտ**: ..... Մեր **գյուղոլորտի** պատասխանատուները տարիներ շարունակ նշում են ՀՀ բնակչության ցորենով ապահովվածության հազիվ 30–40 տոկոսի մասին (Ազգ, 14.03.2014):

ԳՆԱԳՈՅԱՑՈՒՑԻՉ, ած. Իրավիճակը անեկդոտից ավելի լուրջ հարթություն կտեղափոխվեր, եթե Հովիկ Աբրահամյանը իր **գնագոյացուցիչ** շրջայցերը սկսեր իր գազալցակայաններում գազի թանկացումից (Հրապ., 19.12.2014):

ԳՆԱՆԿՈՒՄԱՅԻՆ, ած. Կենտրոնական բանկի խորհրդի անդամի խոսքով՝ տարբեր ապրանքների շուկաներում շարունակվում են **գնանկումային** միտումները (ՀՀ, 26.11.2014):

ԳՆԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ, ած. Բացի այդ,voice- over-ip տեխնոլոգիական քաղաքային հեռախոսակապի ապահովման **գնարդյունավետ** միջոց է (Ազգ, 19.09.2013):

ԳՆԴԱՇԱՐ, ած. Գյուղամիջի ծառի ստվերում իր թզբեհն էր շրխկացնում Սասնա ֆիդային, ու նրա **գնդաշար** հատիկների հանգույցն լույս օրը զարկվում էր մութ օրին, պատումը պատումին և օր առ օր, հատիկ առ հատիկ, բառ առ բառ հյուսվում էր Սասնա «հերոսամարտի» անվախճան առասպելը... (ԼՋ, էջ 5):

ԳՈԼԱԶՈՒՐԿ, ած. **Առանց գոլերի:** .... «Այաքսի» հետ ունեցած **գոլազուրկ** ոչ-ոքին «Միլանին» պահեց նախապես ունեցած երկրորդ հորիզոնականում (Իրատես, 13.12.2013):

ԳՈՀԱՐՎԵԼ, բ. **Ընդգծվել, առանձնանալ, արտահայտվել:** Այս վերջին ասուլիսով հերթական անգամ **գոհարվեց** այն միտքը, որ հայի ազգանուն ունեցող ամեն մեկը չէ, որ հայ է (Իր., 21.11.2014):

ԳՈՂՈՒՏՈՒՐ, ած. **Գողացող և տվող**: Ինքն ապրանքը ծախում էր, բայց չէր առնում. գողանում էր, **գողուտուր** էր, հա-հա, **գողուտուր** (ՀՄ, էջ 44):

ԳՈՄՇԱԳՅՈՒՂ, գ. **Շատ գոմեշներ ունեցող գյուղ**: Մինչև այդ Ծմակուտը գոմշի երես տեսած չկար, Իշխանի տարածով էդ գյուղը գոմշով լցվեց, հիմա **գոմշագյուղ** են ասում.... (ՀՄ, էջ 44):

ԳՈՅԱՆՑՈՒՄ, գ. Մարգարիտներ **գոյանցումների,** //ձյունածեփվածքի ակամա վկա//:
Ուշ եմ ձայնածում Ձեզ՝ Հովիվներիդ, //Որ երկու հազար տարի է՝ չկաք, (ԳԹ, 20.12. 2013):

ԳՈՅԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ, ած. **Գոյությունը պահպանելուն ուղղված:** Հանուն երեխայի կինը դիմում ինքնազոհության՝ **գոյապահպանական** խնդիր է լուծում (Ավ., 12.03.2015):

ԳՈՎԱԶԴԱՔԱՐՏԵԶ, գ. **Քարտեզի միջոցով գովազդ:** Գրքիս լույսընծայումից հինգ տարի անց բոլորովին պատահաբար համացանցում աչքիս ընկավ 1901թ. տպագրված Ֆրեզնոյի մի յուրատեսակ **գովազդաքարտեզ,** որը պարունակում էր քաղաքի հատակագիծ-տեսարանը և առավել աչքի ընկնող հաստատությունները (Իրատես, 28.03.2014):

ԳՈՏԻՆԵՐԸ ՁԳԵԼ, բ. Ուրեմն **գոտիներս ձգենք**, պատրաստվենք, որ մյուս տարի ավելի վատ ենք ապրելու.... (168 ժ., 07.10.2014):

ԳՈՏԿԱՏԵՂԱՅԻՆ, ած. **Գոտկատեղին վերաբերող**: Ցավերն առաջանում են, որպես կանոն, ենթագդալային հատվածում՝ ճառագայթելով կրծքավանդակի ձախ հատված և ձախ թիակ, կամ ողնաշարի **գոտկատեղային** հատված (TV մոլ, 25.07.2014):

ԳՈՐԾԱԿԱՐԳԱՎԱՐԱԿԱՆ, ած. ....Այցի ընթացքում ոլորտ առ ոլորտ ներկայացվեցին իրականացված աշխատանքները, առկա խնդիրները,– երեկվա **գործակարգավարական** խորհրդակցության ժամանակ ասաց Դ.Դումանյանը (ՀՀ, 18.03.2014):

ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. Վլ. Գասպարյանը ոստիկանությանն ընդդիմացող քաղաքական կազմակերպությունների դերի և **գործառնականության** օրինականությունը դնում է կասկածի տակ (Հրապ., 28.11.2013):

ԳՐԱԲԱՐԱԲՈՒՅՐ, ած. **Գրաբարի հատկանիշներ ունեցող՝ տարրեր պարունակող**: Նրանց (Մխիթարյան միաբանության) թարգմանություններն, այսպես ասած, «գրադարանային արժեքներ» էին, քանի որ հիմնականում գրաբար էին կամ **գրաբարաբույր** աշխարհաբար, ուստի մատչելի չէին ընթերցողների լայն զանգվածներին, և չնայած դրան, ամուր հիմք դարձան արևմտահայ լեզվի, գրականության, փիլիսոփայության և անգամ պոլսահայ թատրոնի ձևավորման համար (Իրատես, 28.03.2014):

ԳՐԱԲԱՐԱՀՈՒՆՉ, ած. **Գրաբարով հնչող**: Չգիտես՝ **գրաբարահունչ** երաժշտությունն է զորեղ, թե գրաբարի երաժշտությունն է երաժշտություն (Հրապ., 28.10.2013):

ԳՐԱԲԱՐՈՏ, ած. **Գրաբարին տարրեր պարունակող, գրաբարյան**: Հետդ Երևան բերեցիր քո Կողբի **գրաբարոտ** բարբառը, բերեցիր զարմանալի աշխատասիրություն.... (ԳԹ, 06.09.2013):

ԳՐԱԽՆՁՈՒՅՔ, գ. Լևոն Ջավախյան, քեզ չի՞ հետաքրքրում **գրախնջույքի** շարունակությունը (Հրապ., 29.10.2013):

ԳՐԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ, գ. Ճարտարապետությունը մի ազնիվ, քարագիր **գրակալություն** է (ԳԹ, 18.04.2014):

ԳՐԱՆՏԱԿԵՐ, գ. **Գրանտներ յուրացնողներ:** Չի բացառվում, որ արևմուտքից ֆինանսավորվող ՀԿ-ների ուժերով հակառուսական տրամադրությունների դեմ հրահրվեն, և **գրանտակերների** դեմ արշավը ռազմավարական քայլ լինի (Հրապ., 23.10.2013):

ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆ, գ. **Գրանցումների մատյան:** Նախատեսվում է փաստաբանների պետական **գրանցամատյանը** վարելու նոր ընթացակարգ (Հրապ., 12.10.2014):

ԳՐԱՏԻՐԱԿԱԼ, գ. **Գրերի տիրակալ**: Մեր մեծագույն տիրակալը, ասում ու հավաստացնում ենք ինքներս մեզ, եղել ու, փառք Աստծո, մնում է սուրբ Մեսրոպ Մաշտոցը՝ հայոց հզոր **գրատիրակալը** (ԳԹ, 18.04.2014):

ԳՐԱՐԺԱՆ, ած.. **Գրելու արժանի:** Հարուստ ու փառահեղ իր կյանքից այնպիսի դրվագներ էր մտաբերում, որոնցից յուրաքանչյուրն էր **գրարժան** (ԳԹ, 13.03.2015):

ԳՐՉԱԾԵԾ ԱՆԵԼ, բ. **Քննադատել՝ պախարակել՝ դատափետել**: ....Գրողները, լրագրողները մեծ գործ կարող են կատարել անկախության ճանապարհին, **գրչածեծ անել** գող, օրինազանց իշխանավորներին .... (ԳԹ, 25.10.2013):

ԳՐՉԱՊԱՏԿԵՐ, գ. .... «Մրգահաս» վերնագրով արձակ խոսքաշարում, որոնք նույնպես զուգակցված են խորիմաստ գրչանկարներով, **գրչապատկերներով** ....(ԳԹ, 14.02.2014):

ԳՐՉՔՈՒՅՐ, գ. **Գրականության բնագավառում գործընկերուհի:** ....Սիլվա Կապուտիկյանի և Անահիտ Սահինյանի հիանալի,սքանչացումի աստիճանի գնահատականներն իրենց **գրչքրոջը** …. (Ազգ, 24.10.2014):

ԳՐՔԱՇԱՏ, ած. Երեկ ԱԺ-ն **գրքաշատ** էր, պատգամավորներն ստացել էին նաև բյուջեի նախագիծը, որը հաստ էր ու եռահատոր (Հրապ., 02.12.2014):

ԳՐՔԱՇԱՐ, գ. **Գրքերի շարք:** Կինը, ով գրել է «Հարի Պոտերի» **գրքաշարը**, նույնիսկ ինքնասպանության մասին է մտածել (TV ալիք, 17.11.2014):

ԳՈՒՆԱԲԱԺԱՆՈՒՄ, գ. **Գույների բաժանում:** Ձմռանը արժե հագնվել առավել վառ գույներով և գոնե մի փոքր **գունաբաժանում** կատարել (TV ալիք, 02.12.2013):

ԳՈՒՆԱԲԱՑԵԼ, բ. **Գունաթափվել:** Սկրաբից հետո քսում եմ **գունաբացող**, փափկացնող շիճուկ (ձեռքերին) (TV ալիք, 27.10.2014):

ԳՈՒՆԵՐԱՆԳԵԼ, բ. **Գույներով երանգ ստանալ**: Գիտակ վարսահարդարը մազերը շերտաներկելուց հետո անպայման **գուներանգում** է դրանք (TV մոլ, 25.07.2014):

Դ

ԴԱԼԱՐԱՄԵՋՔ, ած. **Դալար մեջք ունեցող:** Այդ մասին չեն կասկածում ոչ կողքի հասակակից կաղնիները, ոչ մատաղ, **դալարամեջք** ջահելները, ոչ էլ մանավանդ, ծալամահճակալին պառկած տղան (ՀԲ, էջ 5):

ԴԱՂՁԱԽԱՌՆ, ած. Գնացել, հասել են **դաղձախառն** աղբյուրներին, արևից շիկացած քարերից հալվող, կաթկթացող քարաքոսներին և թավալվել եմ ուրցի մեջ (ԼԽ, ՍԳԾԲ, էջ 26):

ԴԱՄԲԱՆԱԽՈՒՄԲ, գ. **Դամբանների՝ գերեզմանների խումբ:** Խորհրդային ժամանակներում **դամբանախմբի** տարածքն օգտագործվել է այգեգործական, հողաշինական՝ ճանապարհի և ջրատարի կառուցման և այլ նպատակներով (ՀՄԵՀ, էջ 222):

ԴԱՄԲԱՆԱՄՈՒՏՔ, գ. **Դամբանի մուտք:** Արևելյան կողմում **դամբանամուտքն** է (ՀՄԵՀ, էջ 222):

ԴԱՄԲԱՆԱՍՐԱՀ, գ. **Դամբանի սրահը: Դամբանասրահը** կազմում է դամբանամուտքի արևմտյան շարունակությունը (ՀՄԵՀ, էջ 222):

ԴԱՇՆԱՄՈՒՐԱՆՎԱԳ, գ. **Դաշնամուրի նվագ**: **Դաշնամուրանվագ** Հայաստանի կանանց պատվին (ՀՀ, 13.03.2015):

ԴԱՇՆԱՅՆԱՑՈՒՄ, գ. «Ուկրաինայում **դաշնայնացման** կողմնակիցների դեմ ուժ , այդ թվում բանակը, կիրառելու որոշումը ծայրահեղ վտանգավոր է» .....(ՀՀ, 15.04.2014):

ԴԱՋՎԱԾԱԴԵՄՔ, գ. **Դաջվածքով պատած դեմք**: Բիրմայի որոշ ցեղախմբերում կարելի է տեսնել **դաջվածադեմքով** կանանց (Համացանց):

ԴԱՍԱԿԱՆԱՊԱՇՏ, գ. **Դասականներին պաշտող**: **Դասականապաշտների** շատ երկեր համարվում էին հունահռոմեական արվեստի մոտիվների կամ պատմիչների հաղորդած որևէ դեպքերի մշակումը... (Էրատու, էջ 167):

ԴԱՍԱՀԱՄԸՆԿՆՈՒՄ, գ. Ծրագրավորողները խոստանում են, որ դասացուցակները նվազագույնի կհասցնեն **դասահամընկնումները** (Ագրոլրատու, 05.02.2015):

ԴԱՍԱՊԱՏԻԺ, գ. Մտածեցինք, որ մեր ընկերն իր հերթական **դասապատիժն** է կրում (ԳԹ, 13.06.2014):

ԴԱՎԱԳՐԳՌԵԼ, բ . Այս իրավիճակում ոչ Էրդողանը, ոչ Իլհամ Ալիևը չեն կարող ակնհայտորեն **դավագրգռել** Ռուսաստանին, որի հետ Ադրբեջանը ցամաքային և ծովային սահման ունի (Ազգ, 11.04.2014):

ԴԱՎԱԴՐԱՊԱՇՏՈՒԹՅՈՒՆ, գ. Տե՛ս ԳԱՂՏՆԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ-ի օրինակը:

ԴԱՎԱԴՐԱՏԵՍՈՒԹՅՈՒՆ, գ. Որևէ մեկը կարող է ընդվզել՝ ինչու այսքան կոնսպիրոլոգիա՝ գաղտնագործունեություն կամ **դավադրատեսություն** (Ազգ, 05.12.2014):

ԴԱՏԱՀՈԳԵԲՈՒԺԱԿԱՆ, ած. **Դատական հոգեբուժությանը վերաբերող:** Պետք է **դատահոգեբուժական** փորձաքննության ենթարկելու համար հոգեբուժարան տանել (Հրապ.,15.11.2013):

ԴԱՏԱՄԱՏՆԱԴՐՈՇՄԱՅԻՆ, ած. Նախաքննության համար կարևոր նշանակություն ունեցող բազմաթիվ հարցերի պարզաբանման նպատակով նշանակվել են .... դատահետքաբանական , դ**ատամատնադրոշմային** համալիր փորձաքննություններ (ՀՀ, 24.06.2014):

ԴԱՏԱՊԱՐՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ, գ. Երեսուն արծաթի կամ պղնձյա փողերի պժգանքը այս օրերի անհուսությանն ու դատապարտվածությանն են մեզ մեխել (ԳԹ, 22.11.2013):

ԴԱՏԱՊՐՈՑԵՍ, գ. **Դատի ընթացքը:** Քոչարյանը իր վերահսկողությունն է հաստատել **դատապրոցեսի** վրա (Ժող., 26.11.2013):

ԴԱՏԱՐԿԱՀՈՒՆՉ, ած. **Իզուր տեղը հնչած:**

ԴԱՐՁԵՐԹ, գ. . ... Ու նավն այն, որ քեզ ճամփա էր հանել, որքան էլ շուքով շրշա ջրերում, դուրս է նետելու պարկուճդ մի օր՝ **դարձերթին** մի սույլ , մի լույս չարձակած .... (ԳԹ, 22.11.2013):

ԴԱՐՉՆԱԳՈՐՇԱԳՈՒՅՆ, ած. **Դարչնագույնի գորշ երանգ ունեցող:** Նռնենու բունը և ճյուղերը **դարչնագորշագույն** են, մատաղ ընձյուղները՝ կանաչամոխրագույն, փշոտ կաշակերպ, ամբողջական (TV մոլ, 21.04.2014):

ԴԵԴԵԿՏՈՐԱՅԻՆ, ած. .... Ռադիո կոչվող սարքից և կամ **դեդեկտորային** հորջորջվող պարզունակ ինքնաշենից , ինչն ավելի շատ ճռճռում էր, քան հոդաբաշխ հնչյուններ արտաբերում (ԳԹ, 20.12.2013):

ԴԵԻՆԴՈՒՍՏՐԻԱԼԻԶԱՑԻԱ, գ. **Ապաարդյունաբերացում**: Հայաստանը Ռուսաստանից կտրված լինելու, պատերազմի, ազատական բարեփոխումների արդյունքում ենթարկվեց **դեիինդուստրիալիզացիայի** (Ազգ, 13.06.2014):

ԴԵԻՆՏԵԼԵԿՏՈՒԱԼԱՑՈՒՄ, գ. **Ապամտավորականացում:** Այսօր Հայաստանի լավագույն ուղեղները մտահոգված են մի հարցով՝ երկրում **դեինտելեկտուալացում** է տեղի ունենում, վերջին 20 տարվա փոփոխություններով բարդ աշխատանքին փոխարինել է պարզ աշխատանքը (Իր., 24.10.2014):

ԴԵԿՈՐԱՏԻՎԻԶՄ, գ. Նրա (Սարյան) արվեստի ոճային թեթևությունը, որը քննադատները հաճախ որոշարկում են որպես մանկական հայացք, պրիվիտիվիզմ կամ **դեկորատիվիզմ,** հիրավի ելնում է միջնադարյան հայ արվեստին բնորոշ մտածողությունից (ԳԹ, 07.03.2014):

ԴԵՂԱՊԱՀՈՎՈՒՄ, գ. **Դեղորայքով ապահովումը**:

ԴԵՂԱՊԱՏ, գ. **Դեղով պատած**: .... Ամեն օր ՀՀ ԱՆ աշխատակազմի պետական առողջապահական գործակալություն տեղեկատվություն է հաղորդվում բժշկական համապատասխան ցուցումների առկայությամբ կյանք փրկող ոչ **դեղապատ** ստենտ տեղադրելու յուրաքանչյուր դեպքի վերաբերյայ (ՀՀ, 11.02.2015):

ԴԵՂԱՐՏԱԴՐՈՂ, գ. **Դեղեր արտադրող գործարանում աշխատող անձ:** արտադրող: Հիշեցնենք նաև, որ Հայաստանի **դեղարտադրողների** և ներմուծողների միությունը նամակ է հղել ՀՀ վարչապետին՝«Առևտրի և ծառայությունների մասին» օրենքում կատարված փոփոխությունների առնչությամբ (Իր., 04.11.204):

ԴԵՂՆԱՀՈՒՐ, ած. Այս արևային երկրում, այս **դեղնահուր** ու ծաղկաշղարշ տարածքում, որտե՞ղ այսքան սև գույն տեսան այդ քոչվորները (ԳԹ, 15.11.2013):

ԴԵՂՆԱՎԱԶԵ, ած. **Դեղին ավազով ծածկված**: Դրա վրայի նկարում պատկերված կապտափիրուզե ծովը աչք էր շոյում, **դեղնավազե** ափը դեպի իրեն էր կանչում.... (ԳԹ, 02.05.2014):

ԴԵՂՆՈՒՑՈՏ, ած. **Դեղնուցով պատած**: Մարիամ Աստվածածինը **դեղնուցոտ** ձեռներով անմիջապես դուրս է վազում՝ տեսնելու Հիսուսի վիճակը (ՍՀ, էջ 263):

ԴԵՂՆՕՐՈՐ, ած. **Դեղնահեր ոսկե աշնան օրեր էին:** Աշնան **դեղնօրոր** խոնջ գրկում էինք, // Եվ համբույրները մեր ոսկուն էին// (ԳԹ, 12.12.2014):

ԴԵՂՊԱՏՐԱՍՏՈՒԿ, գ. **Դեղերով պատրաստված լուծույթ**: Իսկ եթե ցավն ուժեղ է և չի անցնում սրտային **դեղպատրաստուկներից**, այն կարող է ինֆարկտի ախտանշան լինել (TV մոլ, 09.12.2013):

ԴԵՄՈՆՏԱԺԵԼ, բ. **Ապամոնտաժել՝ ապասարել:** Էյֆելյան աշտարակը սարսափելի վիճակում է, և քաղաքական իշխանությունները քննարկում են այն **դեմոնտաժելու** հարցը (TVալիք, 17.03.2014):

ԴԵՊՈՆԱՑՈՒՄ , /իրվբ./

ԴԵՊՈՐՏԱՑՈՒՄ, գ. Հինգ տարով մուտքը փակվում է այն քաղաքացիների համար, ովքեր արտաքսվել կամ **դեպորտացման** են ենթարկվել (ՀՀ, 15.02.2014):

ԴԵՊՔԱՇԱՏ, ած. ….Թաղի կյանքն այնքան **դեպքաշատ** ու տագնապաշատ դարձավ, որ ո՛չ Վանիկ էին հիշում, ո՛չ նրա՝ տասն էլ վրան դրած ու զավեշտի վերածած սերերի պատմությունները (ԳԹ, 14.11.2014):

ԴԵՌԱՀԱՍՈՒԹՅՈՒՆ, գ. **Դեռահասության** տարիքում ես զգացի, որ դուր եմ գալիս մարդկանց (TVալիք, 17.03.2014):

ԴԵՌԱՀԱՍՈՒՆԱՑՈՒՄ, գ. **Դեռահասունացման** տարիքում հորմոնները գտնվում են կազմավորման շրջանում (TV ալիք, 23.01.2014):

ԴԵՍՊԱՆԱՆԱԼ, բ. .... Մեր շատ ու շատ դիվանագետներ ոչ թե անգրագետ են, այլ անգետ են: Նրանցը ավելի շատ բիզնեսն է իրենց բաժին ընկած **դեսպանացած** երկրում (ԳԹ, 13.09.2013):

ԴԵՍՊԱՆԵԼ, բ. **Որպես դեսպան աշխատել:** ....Մեր երկրի դեսպանները Սումգայիթի, Բաքվի ջարդերի, հայ գենոցիդի թեմայով երբևէ հոդվածներով հանդես եկել են իրենց **դեսպանած** երկրներում, թե ոչ (Իր., 21.01.2014):

ԴԵՍՏՐՈՒԿՏԻՎ, ած. **Ապակառուցողական:** Ներքաղաքական երկու բևեռներից մեկը հսկայական **դեստրուկտիվ** դեր է կատարել (Ժամ., 19.11.2014) :

ԴԵՐԱԿԵՐՏՈՒՄ, գ. **Դերեր կերտելը**: Նրա խաղն առանձնանում էր իրեն բնորոշ **դերակերտման** վարպետությամբ (TV մոլ, 06.10.2014):

ԴԵՐԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ, գ. **Դեր ընտրելը**: Հատկանշական է, որ դերասանն արդեն **դերընտրության** մասնակցել էր, և դա հաջող էր անցել (TV մոլ, 17.02.2014):

ԴԻԱԿԱԹԱՓՎԵԼ, բ. ....**Դիակաթափված,** // Հորիզոնահար հայացքո՛վ վճիտ/ /Ես հանձն եմ առնում, //Որ անանձնական ճակատագրիս //Ողորմած ձեռքն// Եղել եմ միայն, //Գողտրիկ հույզերից //Սիրով շաղախված / /Մի պարզ խաղալիք (ԳԹ, 13.09.2013):

ԴԻԱՊՂԾԵԼ, բ. **Դին պղծելը**: Մարդը մոտենում է **դիապղծողին,** մի կողմ քաշում, գլուխը կտրում, որ արյունը գերեզմանը չլցվի, կնոջ դին էլ նորից թաղում և շարունակում է իր ճամփան (ՍՀ, էջ 270):

ԴԻՄԱԽԵՂՎԵԼ, բ. Տե՛ս ԲԱԶՄԱԷԹՆԻԿ-ի օրինակը:

ԴԻՄԱԿԱԺՊԻՏ, գ. **Կեղծ ժպիտ:** Մի տեսակ անբնական կատարյալ էր ամեն ինչ՝ գեղեցիկ խոսքեր, փոխանակումներ, դիմակապարեր, **դիմակաժպիտներ** (TV ալիք, 17.11.2014):

ԴԻՄԱԿԱՊԱՐ, գ. Տե՛ս ԴԻՄԱԿԱԺՊԻՏ-ի օրինակը:

ԴԻՄԱՀԱՅԵԼԻ, գ. **Մեքենայի դիմապակու մոտի հայելին:** Մնացին ինքն ու դեմքն ապակուն կպած տղամարդը: Նայեց **դիմահայելուն** (Իրատես, 28.03.2014):

ԴԻՄԱՀԱՐԴԱՐԱՆՔ, գ. **Դեմքի շպար:** Եթե դուք պարբերաբար քնում եք առանց **դիմահարդարանքը** մաքրելու…. (Համացանց, 06.03.2014):

ԴԻՄԱՓԱՅԼ, գ. **Դիմահարդարման համար նախատեսված՝ փայլ ունեցող շպար:** Տոնական դիմահարդարման համար բավական կլինեն ձեռքի տակ եղած միջոցները, պետք է ավելացնել միայն որևէ տոնական **դիմափայլ** արծաթե- ոսկե երանգով (Տն. Առ., թ. 20, 2014թ):

ԴԻՄԵՐԵՍ, գ. (Համացանց, 11.04.2015):

ԴԻՄՈՒՄՆԱՅԻՆ, ած. Բանաստեղծությունը լինում է առավելապես **դիմումնային՝** ինչ–որ մի համակիր կամ հարազատ հոգի բանաստեղծի կողքին է, որին նա դիմում է՝ Տե՛ր, Աստվա՛ծ ….(ԳԹ, 31.10.2014):

ԴԻՊԱՇԱՐԱՅԻՆ, ած..... Ամեն մեկն ունի յուրովի ընկալման առանձնահատկություն, որ դրանք փոխկապակցված չեն **դիպաշարային** ընդհանրությամբ ....(ԳԹ, 14.05.2014):

ԴԻՊՎԱԾԱՇԱՐ, գ. Վարդումյանի վիպական սյուժեն հյուսվում է արցախյան պատերազմին հաջորդած խառնակ ժամանակների դիպվածաշարում (Իրատես, 06.03.2014):

ԴԻՎԱՄԱՐՏԻԿ, գ. **Դևի կերպ ունեցող մարտիկ**: Ժողովրդական ուշ ավանդության տվյալներով, հենց սկզբից ս. Կարապետը հանդես է գալիս իբրև **դիվամարտիկ** (ՍՀ, էջ 139):

ԴԻՏԱՀԱՐԹԱԿ, գ. **Շրջապատը դիտելու համար կառուցված բարձրադիր հարթակ (կտուրին, բլրի վրա, որևէ բարձր տարածքում):** Առաջիկա ամիսներին շենքի կտուրի վրա կբացվեն այցելուների սրահ և **դիտահարթակ** (Ազգ, 07.11.2014):

ԴԻՏԱՆՈՂՈՒԹՅՈՒՆ, գ. .... Կամ Մարո Մարգարյանի **դիտանողությամբ** զգալ այս բանաստեղծի խոսքի ու զգացմունքի զուլալությունը (ԳԹ,19.07.2013):

ԴԻՏԱՐԺԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Դիտարժան լինելը: Դիտարժանությամբ** երկրորդն ավստրիացի Կոնչիտա Վուրստի կատարումն է (TV մոլ, 05.05.2014):

ԴԻՑԱՑԱՆԿ, գ. **Դիերի՝ աստվածների ցանկ, ցուցակ:** Արդեն Միերի դռան **դիցացանկում** նկատվում է Խալդի աստծո գերազանցությունը մնացյալ աստվածների նկատմամբ (ՀՄԵՀ, էջ 181):

ԴՅՈՒՐԱԲԵԿՈՒՄ, գ. Շամպունները….գլխի մաշկի վրայից լվանում են յուղային շերտը, ինչը հանգեցնում է մազերի **դյուրաբեկման** (Համացանց, 01.03.2015):

ԴՅՈՒՐԻՆԱՑՈՒՄ, գ. **Դյուրին՝ հեշտ դարձնելը:** ..... Պետության աջակցությամբ մշակվել են երկրի մուտքի **դյուրինացման** հետ կապված խնդիրները (ՀՀ, 13.02.2014):

ԴՅՈՒՅԱԶՆԱԼԵՌ, գ. .... Դահլիճը լցրել էր Հայկական լեռնաշխարհի «զրնգուն հովերով, ձյունավետ ամպերով ամրոց–տաճար գագաթներով, Ջոջանց տան **դյուցազնալեռներով**, ծաղկանիստ մեղվաերգերով .... (ԳԹ, 21.03.2014):

ԴՈԼԱՐԱՅՆԱՑՈՒՄ, գ. **Դոլարայնացումը** գնում է դեպի նվազում, բայց դեռևս մնում է բարձր (Ազգ, 26.09.2014):

ԴՈԼԱՐԱՑՎԵԼ, բ. **Դոլարի վերածվել:** Բանկերում արդեն իսկ մեծ ակտիվներն ու պարտավորությունները **դոլարացված** են, և բանկերն իրենք ունեն շատ մեծ դոլարային իրացվելիություն՝ և կանխիկ, և անկանխիկ (Իրավունք, 05.12.2014):

ԴՈԼԱՐԻԶԱՑԻԱ, գ. Այս դեպքում **դոլարիզացիայի** ընթացքը զորանալու կամ շարունակվելու է: ....Երկրում, որտեղ 63 տոկոս վարկերի **դոլարիզացիա** կա.... (168 ժ., 04.12.2014):

ԴՈՊԻՆԳ–ԶՆՆՈՒՄ, Հայաստանի հավաքականի կազմում խաղերին մասնակցելու բոլոր 5 թեկնածուները ենթարկվել են հատուկ **դոպինգ–զննման** (ՀՀ, 17.01.2014):

ԴՈՊԻՆԳ–ԹԵՍՏ, **Դոպինգ– թեստերը** հունվարի 16–ին արդեն ուղարկվել են Ավստրիայում գտնվող դոպինգ–լաբորատորիա՝ դրանց ուսումնասիրության և պատասխանի համար (ՀՀ, 17.01.2014):

ԴՈՊԻՆԳ-ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ, Դոպինգ թեստերը հունվարի 16-ին արդեն ուղարկվել են Ավստրիայում գտնվող **դոպինգ-լաբորատորիա**՝ դրանց ուսումնասիրության և պատասխանի համար (ՀՀ,17.01.2014):

ԴՌՆԵՐԱԿԱՅԻՆ, ած. Ավիցեննան բուսահյութը նշանակել է **դռներակային** կանգի, ջրագողության և կարիճի խայթոցի ժամանակ, կաթնահյութը՝ակնահատը բուժելու նպատակով (ՀԴ, թիվ 1, 2014):

ԴՐԱԽՏԱԴՈՒՌ, գ. **Դրախտի դուռ:** Լուռ աղոթքներ, ապա հայոց գրաբարի անուշածոր երգ ու հորդոր, աղերսների փնջավոր տաղ, **դրախտադուռը** բացելու հաղորդության հոգեարար.... (ԳԹ,11.10.2013):

ԴՐԱՄԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆ, գ. **Որևէ ազգօգուտ գործի համար դրամ տրամադրելը**: ԱՄՆ քաղաքացիներ Ջորջ և Քերոլայն Նազարյանները Մարտակերտի շրջանում կատարել են մի շարք մարդասիրական **դրամաբաշխություններ** (Լրատու, էջ 139):

ԴՐԱՄԱՀԱՎԱՔՈՒԹՅՈՒՆ, գ. **Դրամ հավաքելը::** Աշոտյանը դեռ շարունակում է բարբառել դպրոցներում **դրամահավաքության** դեմ (Համացանց, 09.04.2014):

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ, ած. ....Էներգատեղակայանքների, շենքերի և կառուցվածքների էներգետիկ փորձաքննությունը կարող է իրականացվել լիազորված մարմնի նախաձեռնությամբ, ոչ բյուջետային **դրամաշնորհային** միջոցների հաշվին (ՀՀ, 05.03.2014):

ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ, ած. ….ՀԲ–ն սովորաբար **դրամավարկային** քաղաքականության վերաբերյալ դիտարկումներ չի ներկայացնում …. (168 ժ., 21–23.02.2015):

ԴՐՈՇՄԱԿՆՔՎԵԼ, բ. **Դրոշմով կնքվել:** ....Դժվար է կանխատեսել, թե որ ապրանքը պետք է դրոշմակնքվի, որը՝ ոչ (Իրավունք, 31.01.2014):

ԴՐՈՇՄԱՊԻՏԱԿ, գ. .... Քննարկվեց ՀՀ կառավարության ներկայացրած «Հսկիչ նշանների /**դրոշմապիտակների**/ միջոցով մագնիսական, օպտիկական, և ցանկացած այլ տիպի էլեկտրոնային կտրիչների պարտադիր դրոշմավորման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրինագիծը (ՀՀ, 01.02.2014):

ԴՐՈՇՄԱՊԻՏԱԿԱՎՈՐԵԼ, բ. **Դրոշմապիտակով նշել:** Որպես տեղական արտադրող՝ ես, փաստորեն, պետք է **դրոշմապիտակավորեմ** միայն ՀՀ-ում սպառվող իմ դեղերը (168 ժ., 09.10.2014):

ԴՐՈՇՄԱՊԻՏԱԿԱՎՈՐՈՒՄ, գ. **Դրոշմապիտակավորելը: Դրոշմապիտակավորումների** ցանկի ավելացումը կրճատել է ստվերը (Արմնյուզ):

Ե

ԵԶԱԿԵՐՊ, ած. **Եզան եզակի կերպ ունեցող:** Եզնիկի խոսքը վերաբերում է վիշապը վեր բարձրացնող ամպրոպային աստծո **եզակերպ** հնամենի պատկերացմանը (ՍՀ, էջ 89):

ԵԶԴԻԱԲՆԱԿ, ած. **Եզդիներով բնակեցված:** Այսօր էլ, սկսած օգոստոսի 2-ից, եզդի ժողովուրդն Իրաքի **եզդիաբնակ** Շանգալ մարզում ենթարկվում է ցեղասպանության (Իր., 28.10.2014):

ԵԶՐԱԳՈՐԾԱԾՈՒՄ, գ. **Եզրի՝ տերմինի գործածում:** Դրանց բոլորի օգտագործումը տերմինաօգտագործումն է (եզրագործածումը) կամ բառագործածումը.... (Ռ.Իշխ., էջ 8):

ԵԶՐԱԹԵԼ, գ. Փարիզը, ջանալով որսալ պատմության **եզրաթելերը** և հասարակության էության ու փոխակերպումի մարդկային ընկալման իմաստը, հետզհետե վերածվում էր աբսուրդի համաշխարհային թատրոնի հարթակի (Իրատես, 24.12.2013):

ԵԶՐԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Եզրեր, տերմիններ ստեղծելը:** Հայերենում գործածական են և' տերմինաշինություն, և' տերմինաշինարարություն, ինչպես և **եզրաշինություն** ու եզրաշինարարություն (Ռ.Իշխ., էջ 7):

ԵԿԵՂԵՑԱՄԵՐՁ, գ. **Եկեղեցուն մոտ**: Հրապարակում **եկեղեցամերձ** // Ես լսում էի ֆլամանդերեն, //….(ԳԹ, 12.12.2014):

ԵԿԵՂԵՑԱՆՎԵՐ,ած. **Եկեղեցուն նվիրված:** Նորին սրբությունն այս առիթով իր օրհնությունն ու գնահատանքը բերեց ՀԲԸՄ նախագահին և ՀԲԸՄ անդամներին՝ նրանց **եկեղեցանվեր** ոգու և ՀԲԸՄ կողմից Հայ եկեղեցուն ու Մայր Աթոռ Ս.Էջմիածնին ցուցաբերվող մշտական զորակցության....համար (ՀՀ, 29.01.2014):

ԵՂԱՆԱԿԱԶԳԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Եղանակի փոփոխության նկատմամբ զգայուն լինելը:** Եթե այս ամենին ավելացնենք **եղանակազգայունությունը** և հարմարվողականության հետ կապված խնդիրները, ապա ավելի պարզ կլինի, որ հիպոտոնիկների «կյանքն էլ մի բան չի» (TV մոլ, 03.11.2014):

ԵՂԱՆԱԿԱԿԱԽՅԱԼ, ած. **Եղանակից կախված:** Այն կարգավորում է զարկերակային արյան ճնշումը, որը շատ կարևոր է **եղանակակախյալ** մարդկանց համար (TV մոլ, 02.03.2015):

ԵՂԵՌՆԱԶԱՐԿ ԼԻՆԵԼ, բ. Արամ Հայկազը եղեռնազարկ եղած գրողներից է, ով մինչ կյանքի վերջ յուրաքանչյուր ակնթարթի մեռնում էր իր հոգին ծվատող հիշողություններում (ԳԹ, 07.03.2014):

ԵՂԵՌՆԱԶԱՐԿՎԵԼ, բ. **Եղեռնի ենթարկվել, եղեռնազարկ լինել:** Քաղաքակրթության իր բաժինն արարող, ազնիվ աշխատանքով հող ու աշխարհ շենացնող հայ ժողովուրդը, անցնելով հազարամյակների, պատերազմների, հաղթանակների ու պարտությունների միջով, քսաներորդ լուսավորյալ դարում **եղեռնազարկվեց** իր իսկ պատմական բնօրրանում (ՀՄԵՀ, էջ 469):

ԵՂԵՐԱԺԱՌԱՆԳ, գ. **Եղեռնի ժառանգ: Եղերաժառանգ**՝ գրասեր իմ ա՛զգ, այլևս չչարաշահելով համբերանքի հերթական հորդորն իմ, նվիրական այս տարեմուտին զուտ պատմական Բարեմաղթություն եմ մաղթում ամենքիս՝….(ԳԹ, 26.12.2014):

ԵՂՆԱՉՅԱ, ած. **Եղնիկի աչքեր ունեցող:** Մեր մեջ լուռ թախծող էլ կար. Գաղթական Սեթոյի թոռնուհին՝ մի քիչ չաղլիկ, ցորնագույն ու **եղնաչյա** Զեփյուռը, քայլում էր կողքիկողքի՝ միշտ աջ կողմի վրա թեքված .... (ԳԹ, 13.06.2014):

ԵՂՋՐԱՀԱՏՈՒՄ, գ. **Եղջյուրը հատելը:** Գագիկ թագավորի հրամանով օձի **եղջրահատումը,** կարծում ենք, խորհրդանշում է օձի գլխատում, սպանություն կամ, առնվազն, նրան արքայության նշաններից ու իրավունքներից զրկում (ՍՀ, էջ 274):

ԵՆԹԱԲՆԱԶԴԱՅԻՆ,ած. **Ենթաբնազդային** ինչ-ինչ զգացողությամբ Պարույրի խոսքը եղել է ոչ միայն շնորհակալությամբ, այլև հրաժեշտի (ԱԶ, էջ 534):

ԵՆԹԱԳԴԱԼԱՅԻՆ, ած. Ցավերն առաջանում են, որպես կանոն, **ենթագդալային** հատվածում՝ ճառագայթելով կրծքավանդակի ձախ հատված և ձախ թիակ, կամ ողնաշարի գոտկատեղային հատված (TV մոլ, 25.07.2014):

ԵՆԹԱԳԵՆ, գ. Ես քեզ ազատել եմ ամբողջ կյանքում ինձ տանջող ամոթի **ենթագենից,** բայց երևում է՝ շատ եմ ջանացել (ՀԲ, էջ 59):

ԵՆԹԱԿԱՅՔ/ՊՈՐՏԱԼ, գ. Նորաստեղծ **պորտալում** ընդգրկված են 47 կայք ու ենթակայք (Եր., համ., թ. 11.12.2013):

ԵՆԹԱՄԻՏՔ, գ. Պոեզիայի կրքով բռնվածությունն է ստիպում աշխատեցնել **ենթամիտքը**, վերլուծելու իրողությունն ու մատուցել հուզականության թևերի վրա (ԳԹ,19.07.2013):

ԵՆԹԱՄՇԱԿՈՒՅԹ, գ. Անշուշտ տարբեր **ենթամշակույթներում** արականության և իգականության ընկալումը տարբեր է, բայց միևնույն ժամանակ գոյություն ունեն այնպիսի հիմնատիպային հատկանիշներ, որոնք թույլ են տալիս վեր հանել հայերենում և անգլերենում կնոջ և տղամարդու կերպարների ընդհանուր գծերը (Լրատու, էջ 139):

ԵՆԹԱՊԱՏՈՒՄ, գ. Արևելահայ ուղեգրության **ենթապատումներում** ցայտուն երևում են արևմտահայերենի դիպուկ և ճշգրիտ ներթափանցումներ (ՀՀՋՀ, էջ 25):

ԵՆԹԱՏԵՆԴԱՅԻՆ, ած. Առաջին տեսակի շաղկապենաբորբի համար բնորոշ են գլխացավը, **ենթատենդային** ջերմությունը /37-37,5 աստիճան/, հարբուխը, կոկորդում ցավը (TV մոլ, 02.03.2015):

ԵՌԱԿԵՆԱՑ, ած. **Երեք կենաց՝ մաղթանք պարունակող**: Երեք խնձորի խորհրդով վերին/ /Մի **եռակենաց** ասելիք ունեմ,//Որ անցավորաց և ապրողներին,//Եվ, անտարակույս, քե՛զ պիտի ձոնեմ // (ԳԹ, 20.12.2013):

ԵՌԱՄԱԿԱՐԴԱԿ, ած., Այնուամենայնիվ, մեծ ութնյակը մեծ յոթնյակ դարձնելու, Սոչիի փոխարեն Լոնդոնում միմյանց՝ առանց Ռուսաստանի հանդիպելու, եռամակարդակ պատժամիջոցներ կիրառելու, սառը պատերազմին վերադառնալու, Ռուսաստանի միջազգային մեկուսացման նախազգուշացում-սպառնալիքները չազդեցին.... (Իրատես, 18.03.2014):

ԵՌԱՆԱԽԱԳԱՀԵԼ, բ. **նախագահել**: Հայաստանը բոլոր հարցերն առաջ է քաշել, որը ողջունել են **եռանախագահող** երկրները (Իր., 31.10.2014):

ԵՌԱՌԱՐԿԱ, ած. Վիշապների գործառույթն այս երեք եռառարկա համալիրներում նույնն է՝ կլանող, ծածկող, թաքցնող (ՍՀ, էջ 173):

ԵՌԱՍԿԻԶԲ, ած. **Երեք սկիզբ ունեցող**: «Միերի դռան գիրքը», հեղինակի բնորոշմամբ՝ ազգային վեպը **եռասկիզբ** վեպ է // (ԳԹ, 06.06.2014):

ԵՌԱՏՈՆ, գ. **Եռակի տոն:** Կրկին մեր **եռատոնի** մայիսն է, մեր հաղթությունների ամիսը (Համացանց, 09.05.2014):

ԵՌԱՓԵՂԿՈՒՄ, գ. **Երեք մասի բաժանելը:** Եգիպտական ծանոթ մոտիվն է, որն ավելի ու ավելի է մոտեցնում Ուկրանիայի երկփեղկման (որոշ գնահատումներով՝ **եռափեղկման**) ցավալի օրը (Իրատես, 31.01.2014):

ԵՌԸՆՏՐԱՆՔ, գ. **Երեք բանից մեկը ընտրելը**: Միջին հային հրամցված ցանկացած երկընտրանք, **եռընտրանք,** այլընտրանք շինծու է, օգտաբեր դրանք հորինողներին, բայց ոչ հային (Իրատես, 07.02.2014**):**

ԵՌՅԱԿԻՍՏ, գ. Եկեք շատ էլ խիստ չլինենք **եռյակիստների** նկատմամբ (Հրապ., 26.12.2014):

ԵՍԱԶՐԿՈՒՄ, գ. **Եսից զրկելը:** ....Ջեֆի նման ուսյալ երիտասարդները տեղ չունեն հասարակության մեջ, նրանք ստիպված են ամեն քայլի գնալ դեպի ինքնաոչնչացում**, եսազրկում** (Ազգ, 16.05.2014):

ԵՍԱՄԵԾԱՐ, ած. **Եսը մեծարող:** Անտրտունջ քայլել հոգսի հակն առած /Եվ թոթափել այն պտույտին հաջորդ.../ Այս **եսամեծար** ստահակն , ու սա՝ /Սեփական երկրում՝ հեն ու նվաճող (ԳԹ, 15.11.2013):

ԵՎՐԱԱՍՈՑԱՑՈՒՄ, գ. Ադրբեջանը փորձում է ամեն չնչին իրեն դուր եկած երևույթին արձագանքել ու կոշտ հայտարարություններ անել՝ հիշեցնելով Ադրբեջանի հայտարարությանը **եվրաասոցացման** տեքստի վերաբերյալ (Ժամ., 06.05.2014):

ԵՎՐԱԲԱՐԵՓՈԽՈՒՄ

ԵՎՐԱԲԱՐԻԿԱԴԱՎՈՐՎԵԼ, բ. Եվրամայդանը վերածվել է **եվրաբարիկադավորված** Կիևի, որտեղ միմյանց դեմ պատերազմում են Արևմուտքն ու Ռուսաստանը (Իրատես, 13.12.2013):

ԵՎՐԱԳՈՏԻ, **գ. Եվրամիության մեջ ընդգրկված երկրները:** :.... Նշված ժամանակահատվածում **եվրագոտու** երկրները պարբերաբար ցնցող ճգնաժամային գործոնները, անշուշտ, իրենց տեսանելի ազդեցությունն ունեցան նաև հումքի մի շարք տեսակների, այդ թվում՝ մետաղների գների անկման վրա (Իրավունք, 31.01.2014):

ԵՎՐԱԹԵՐԱՀԱՎԱՏ, ած. **Եվրամիության կենսունակության և ապագայի հարցերում թերահավատ:** Ապա և Միացյալ Թագավորության արտգործնախարարի պաշտոնում աննկուն **եվրաթերահավատ** Ֆիլիպ Համոնդի նշանակումը թույլ է տալիս որոշակի եզրահանգումներ անել.... (Իր., 28.11.2014):

ԵՎՐԱԺՊԻՏ, գ. **Եվրոպական արտաքուստ բարյացկամ վարվելակարգ:** Ինչ է թաքցված **եվրաժպիտների** տակ (Իրավունք, 11.10.2013):

ԵՎՐԱԻՆՏԵԳՐՈՒՄ, գ. **Եվրոպային ինտեգրվելը**: Այստեղ (Մոլդովայում) **եվրաինտեգրմանը** դեմ են կոմունիստները (ԳԹ, 06.12.2013):

ԵՎՐԱՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ, գ. **Եվրոպական ուղղություն**: ....Վրաստանի **եվրաուղղությունը** վտանգի տակ է(Իրավունք, 07.11.2014):

ԵՎՐԱՉԱՓՈՐՈՇԻՉ, գ. **Եվրոպական չափորոշիչ: Եվրաչափորոշիչներին** համապատասխան իրականացվող աշխատանքների համար կենտրոնը վերջերս պարգևատրվեց որակի ամենաբարձր՝ միջազգային «ISO» արտոնագրով (Իր., 28.10.2014):

ԵՎՐԱՉԻՆՈՎՆԻԿ, գ. Իսկ **եվրաչինովնիկների** մոտ դեպի տիեզերք է դուրս թռել ուղեղը, ու շատ վաղուց (Իրավունք, 11.10.2013):

ԵՎՐԱՊԱՐՏԱՏՈՄՍ, գ. **Եվրոպական պարտատոմս**: Որն է տնտեսական տրամաբանությունը, որով առաջնորդվում են Հայաստանի իշխանությունները, երբ **եվրապարտատոմսերից** ստացված գումարի մեծ մասն ուղղում են ռուսական պարտքը մարելու համար՝ այն էլ՝ մարման ժամկետից շուտ (168 ժ., 10.10. 2013):

ԵՎՐԱՍԻԱԿԱՆԱՑՈՒՄ, գ. **Եվրոպականացում և ասիականացում:** Մեծ է վտանգը, որ ռուս ադրբեջանական գործարքը, Ադրբեջանի հնարավոր **եվրասիականացման** գինը լինելու է սակարկությունը Հայաստանի ու Ղարաբաղի հաշվին (Իրատես, 14.10.2014):

ԵՎՐԱՍԻԱՄԵՏ, ած. **Եվրասիային միտված:** ....Հենց այդ էլեկտրոնային ԶԼՄ-ների, մասնավորապես՝ Lragir am -ի էջում է տպագրվել նրանց բնորոշմամբ ռուսամետ, ասել է թե՝ **եվրասիամետ** քաղաքական գործիչների ցուցակը .... (Իրավունք, 11.11.2014):

ԵՎՐԱՏԵՍԻԼՅԱՆ, ած. **Եվրատեսիլին ներկայացվող**: -Ինչպես եք պատկերացնում Ձեր **եվրատեսիլյան** երգը (TV մոլ, 03.02.2014):

ԵՎՐՈԱՍՈՑԱՑՆԵԼ, գ. Ոչ ոք չի հասկանում, թե ինչպես կարելի է **եվրոասոցացնել** ամբողջ մաքսային միությունը՝ հանուն Հայաստանի եվրոասոցացման (Հրապ., 12.02.2014):

ԵՎՐՈԿԱՌՈՒՅՑ, գ. **Եվրոպական կառույց** : ....Ե՛վ իշխանությունը, և՛ քաղաքական դաշտը, և՛ **եվրոկառույցները** արեցին հնարավորինը՝ հայ հասարակությանը զերծ պահելու մայդանացավից (ԳԹ, 29.11.2013):

ԵՎՐՈԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄ, գ. **Եվրոպական կողմնորոշում**: Ռուս թղթակիցը կասկած է հայտնում, թե **եվրոկողմնորոշումը** կարող է օգտակար լինել Վրաստանին նրա ինքնատիպության պահպանման գործում (Ազգ, 16.05.2014):

ԵՎՐՈՄԱՅԴԱՆ, գ. ....Հայաստանում ինչ-որ ուժեր փորձում են նոր **Եվրոմայդան** ստեղծել կամ արաբական ինչ-որ սցենար իրականացնել (168 ժ., 11.12.2014):

ԵՎՐՈՊԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, գ. **Գիտություն Եվրոպայի մասին**: Երևանի պետական լեզվաբանական համալսարանը ՅՈՒՆԵՍԿՕ-ի ժողովրդավարության մարդու իրավունքների և **եվրոպագիտության** ամբիոնի շրջանակներում իրականացվում է գիտակրթական ծրագիր, որի նպատակն է 5-6 տարվա ընթացքում Հայաստանում ապահովել արևմտյան լավագույն համալսարաններում քաղաքագիտական ոլորտում առաջարկվող կրթական ծրագրեր և միջազգային մակարդակի գիտական արդյունք.... (Իր., 06.12. 2013):

ԵՎՐՈՊԱՍԵՐ, ած. **Եվրոպան սիրող**: ....Եվրոպան մեզ պարտադրող իրավիճակ է, որովհետև մենք **եվրոպասեր,** եվրոպամետ ժողովուրդ ենք.... (168 ժ., 20.11.2014):

ԵՎՐՈՊԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ, գ. **Եվրոպան և եվրոպականը սիրելը**: Իսկ թե իր **եվրոպասիրությամբ** հանդերձ, ասենք, միասեռ ամուսնությունների օրինականացումը ինչ փաստի առաջ է կանգնեցնում ավանդական վրացուն, թերևս դժվար է ենթադրել (Իրավունք, 14.01.2014):

ԵՎՐՈՊԱՖԻԼ, գ. **Եվրոպային հարող:** Կարծում եմ, սխալ է այդ բաժանումը՝ ռուսոֆիլ, **եվրոպաֆիլ** (Հրապ., 27.11.2014):

ԵՏԾՆՆԴԱԲԵՐԱԿԱՆ, ած. **Ծննդաբերությանը հաջորդող:** ,,Օսկարի,, և ,,Ոսկե գլոբուսի,, արժանացած դերասանուհին խոստովանել է, որ տառապել է **ետծննդաբերական** դեպրեսիայով (TVալիք, 17.11.2014):

ԵՏՀԱՄԱԳՈՒՄԱՐՅԱՆ, ած. **Համագումարից հետո**: Ամիրյան փողոցում բաժանվեցինք՝ նույն երեկոյան 21-ին **ետհամագումարյան** բանկետին հանդիպելու խոստումով (ԼՀ, էջ 179):

ԵՏՆԱԳՐՊԱՆ, գ. **Հետևի գրպան:** ....Եվրոն շալվարի **ետնագրպանում էր** (ԼՋ, էջ 98):

ԵՏՑՆՑՈՒՄ, գ. Ամեն **ետցնցումից** ուշաթափվում էի, անմարդկային ձևով գոռում (Համացանց, 08.08.2014):

ԵՐԱԶԱԳՈՒՇԱԿՈՒՄ, գ. **Երազի միջոցով գուշակելը**: Տիր աստծո մեհյանը ըստ Ագաթանգեղոսի կառուցված է եղել Երազամոյն (=երազաշատ, երազառատ) կոչված տեղում, ուր նրա պաշտամունքը կապվել է **երազագուշակման,** երազների մեկնության, երազահանության հետ (ՍՀ, էջ 405):

ԵՐԱԶԱՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ, գ. Տոնի նախորդող գիշերը երիտասարդները աղի բլիթ են ուտում՝ կապելով դա իրենց ապագա փեսացուի կամ հարսնացուի **երազահայտնության** հետ (Համացանց, 13.02.2014):

ԵՐԱԶԱՀԱՍ, ած. **Երազներին հասնող:** Եվ դու քեզ **երազահաս** հեծյալ ես զգում նոր ժամանակների այս թոհուբոհի, արագությունների ու արագացումների նյութականացված աշխարհում (ԳԹ, 14.11.2014):

ԵՐԱԶԱՄԻՏ, ած. **Երազկոտ, երազող**: Օ՜, Ադամի քրքումներ// ծաղիկներ իմ նվիրումի,// մանուշականեր ու **երազամիտ** .... (ԳԹ, 25.04.2014):

ԵՐԱԶԱՅՆՈՐԵՆ, մկբ.**Երազային կերպով՝ հատկությամբ:** Առաջարկեց դիտել «Քաղաքի ծաղիկներ» շարքը. նյութական հողից **երազայնորեն** երկինք ձգվող, երկինք վերացող մեղմերանգ ծաղիկներ, որոնք հայ ժողովրդի համար մնում են Գողթն աշխարհի վերջին հեքիաթները (ԱԶ, էջ 416):

ԵՐԱԺՇՏԱԼԵԳԵՆԴ, գ. **Երաժշտական լեգենդ:** Կամերային թատերասրահի ճնշող խավարն անմիջապես զվարթանում է, երբ հայտնվում է անցյալ դարասկզբի **երաժշտալեգենդ** ….զտարյուն ամերիկացի դարձած Ռոբերտ Հակոբյան- տրապիզոնցի հայը (Ավ., 12.01.2014)**:**

ԵՐԱԽՏԱԶՐԿՎԱԾ, ած. Ես կապրեմ **երախտազրկված** (TV ալիք, 13.01.2014):

ԵՐԱՆԳԱԿՐԵՄ, գ. Երանգ տվող կրեմ: Կայու՞ն, անփա՞յլ, թե բոլորը միանգամից ….ինքներդ ընտրեք ձեր **երանգակրեմի** հատկությունները (Համացանց, 11.01.2015):

ԵՐԳԱՍՏԵՂԾՈՒՄ, գ. **Երգեր ստեղծելը:** Ավանդական **երգաստեղծման** մեջ մեծ ներդրում ունի հասարակ գյուղացին (Համացանց):

ԵՐԳԻՉ–ԵՐԱԺԻՇՏ, գ. **Երգիչ և երաժիշտ, երգիչ-նվագածու**: ՀՀ վաստակավոր արտիստ, կոմպոզիտոր Արա Գևորգյանը և ամերիկացի երգիչ–երաժիշտ Դանիել Դեքերը հանդես են գալիս Հայոց ցեղասպանության 100–ամյակին նվիրված նոր «Սև ապրիլ» խորագիրը կրող նախագծով (ՀՀ, 21.04.2015/)

ԵՐԵԽԱՅԱՊԱՇՏ, ած, **Երեխա պաշտող**: Պատկերացնու՞մ եք, այսօր Հայաստանում կան որբ երեխաներ, որոնցից շատերի ծնողները ողջ են, խաղաղ Հայաստանում, **երեխայապաշտ** հայերի հայրենիքում .... (ԳԹ, 07.10.2013):

ԵՐԵՍՊԱՐԶ, ած. Ոմն հրեա Պիատրովսկի պեղեց, // Որ գեթ **երեսպարզ** մի բան թողեց՝/ /գտա՛վ նա խեցին// հայոց հավերժության .... (ԳԹ, 11.10.2013):

ԵՐԻԿԱՄԱՔԱՐԱՅԻՆ, ած. Մասուրի պտուղները եփուկի, թեյի և կիսելի ձևով տալիս են….թոքային պալարախտի, լյարդի, երիկամաքարային հիվանդությունների դեպքում (ՀԴ, թ. 1, 2014):

ԵՐԻՑՈՒԿԱՀՅՈՒՍ, ած. **Երիցուկի ձևով հյուսված:** Մի կերպ, զոռով խոսում եմ. «Վարդագույն, իսկ թեզանիքի և վզի շուրջը **երիցուկահյուս** ժանյակներ կային» (ԼԽ,ՍԳԾԲ, էջ 52):

ԵՐԿԱԿՈՒՆՔ, ած. **Երկու ակունք ունեցող**: Անդրադառնալով «Հուդայի արձակուրդը» ժողովածուի պատկերներին, նա նշում է, որ բանաստեղծ Ա.Հարությունյանի ցավը **երկակունք** է՝ Հայաստանն է և Արցախը (ԳԹ, 19.12.2014):

ԵՐԿԱՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ, գ. **Երկու մասի բաժանված լինելը**: Այսօր կքննարկենք փաստաթղթի **երկատվածության**՝ գործադիր իշխանությանը վերաբերող պնդումը, որը սահմանադրականության համատեքստում լիովին արդիական է (Ժող., 17. 12.2015):

ԵՐԿԱՐԱՇՂԹԱ, ած. **երկար շղթա:** Կաթի ճարպը պարունակում է **երկարաշղթա** հագեցած ճարպաթթուներ (TV ալիք, 31.03.2014):

ԵՐԿԲՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Երկու բնույթ ունենալը:** Վերջին դեպքի օրինակ է արևմտաաֆրիկյան Ֆարո աստվածությունը, որ հատկանշվում է երկսեռությամբ և **երկբնությամբ,** մարդակերպ ձկան տեսքով (ՍՀ, էջ 182):

ԵՐԿԻՐԱՍՊԱՆ, ած**. Երկիր սպանող:** Ու դեռ հարցնում եմ՝ ու՞մ է ձեռնտու այս **երկիրասպան** անտարբերությունը .... (ԳԹ,13.09.2013):

ԵՐԿԽՈՌՈՉԱՆԻ, ած. **Երկու խոռոչ ունեցող**: Քաղաքացու մարմնում պետք է տեղադրվեր…. **երկխոռոչանի** խթանիչ, որը աշխատելու էր 10 տարի (Առավոտ, 25.04.2014):

ԵՐԿԿԵՆՑԱՂՈՒԹՅՈՒՆ, գ. **Երկու կենցաղ ունենալը:** Տիմիկը .... կրքոտ վիճելով՝ փորձում էր ապացուցել, որ «Երկկենցաղ մարդը» գրքի հերոսը՝ Իխտիանդրը, իրական մարդ է եղել, և որ **երկկենցաղությունը** մարդկանց էլ է հատուկ (ԳԹ, 13.06.2014):

ԵՐԿՀԱԿԱԴԻՐ, ած. **Միմյանց հակադիր եղող:** Առասպելական զույգերի **երկհակադիր** բնույթը ....կազմում է նաև ամպրոպային առասպելների սյուժետային հիմքը (ՍՀ, էջ 206):

ԵՐԿՀԱԿԱԴՐՈՒԹՅՈՒՆ, գ. **Միմյանց նկատմամբ հակադիր լինելը:** Բերված առասպելական 10 զրույցներից 8-ը՝ անկախ միմյանց նկատմամբ տարբերակներ լինելուց, կառուցված են **երկհակադրության** սկզբունքով (ՍՀ, էջ 71):

ԵՐԿՆԱԴԱԼՈՒԿ, ած. **Գունատ:** Օ՜, լուսին.... արծաթափայլ, **երկնադալուկ** և դժխեմ (ԼՋ, էջ 54):

ԵՐԿՆԱԴԱՐՉՆԱԳՈՒՅՆ, ած. **Երկնքի և դարչինի գույն**: Բայց քանի որ երկրի եռագույն տառապանքը պարբերաբար փոխարկվում է **երկնադարչնագույն** մղձավանջի, սպասելի են մրցակցային հավասար միջավայրում ահեղ մարտեր վասն տնտեսության բնականոն զարգացման (Իրատես, 14.03.2014):

ԵՐԿՆԱՀԱՍՈՒԹՅՈՒՆ, գ. **Երկնահաս՝ բարձր լինելը:** Յուրաքանչյուր լեռ-բարձունք բաղկացած միմյանց բյուրավոր, գուցե և աննշան քարերից, իսկ գագաթ- բարձրակետի **երկնահասությունը** կախված է ստորոտում իրար փարված քարերի ամրությունից (Հրապ.,15.03.2014):

ԵՐԿՆԱՃԱՄՓՈՐԴ, գ. **Երկնքի ճամփորդ՝ մահկանացու**: ....Հրաժեշտի թախծոտ արար՝ աշնանալաց մի բուռ աշուն՝ **երկնաճամփորդ** Լևոնի վաստակած ու վիավոր լուռ սրտում (ԳԹ, 11.10.2013):

ԵՐԿՆԱՍՏԵՂԱՅԻՆ, ած. **Երկնքի աստղերին վերաբերող**: Հանելուկների **երկնաստեղային** պատկերացումները իրենց միավորող առասպելների բնույթով բաժանվում են երեք հիմնական խմբի (ՍՀ, էջ 65):

ԵՐԿՍԻՍՏԵՄ, ած. **Երկու համակարգ ունեցող:**: Բոլոր տվյալները վկայում են, որ հնում ձկնարձանները կանգնած են եղել պոչերի վրա՝ ուղղաձիգ դիրքով, մարմնավորել են տիեզերքի կառուցվածքի **երկսիստեմ** մոդելը (ՍՀ, էջ 32):

ԵՐԿՍԻՐՈՒԹՅՈՒՆ, գ. **Երկու անձի միաժամանակ սիրելը**: Անշուշտ, նվերը ինչ- որ տեղ խորհրդանշական էր, գալիս էր շարունակելու մեր խոսակցություններն ու տարակարծությունները նրա **երկսիրության** շուրջը (ԱՋ, էջ 454):

ԵՐԿՎՈՐՅԱԿԱՅԻՆ, ած. **Նմանատիպ՝ միանման:** Արևի և լուսնի **երկվորյակային** հատկանիշները ևս վաղնջական են և գալիս են ապացուցելու նրանց երկվորյակությունը, որ բնորոշ է նաև այլ ավանդույթների (ՍՀ, էջ 53):

ԵՐԿՐԱԲԱՆԱՀԱՆՔԱԲԱՆԱԿԱՆ, ած. **Երկրաբանական և հանքաբանական:** ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտի գլխավոր մասնագետն է, **երկրաբանահանքաբանակ**ան գիտությունների դոկտոր է (ԳԹ, 24.10.2014):

ԵՐԿՐԱՁԵՎԱԲԱՆ, գ. **Երկրաձևաբանության մասնագետ:** Պատասխանների մի մասը կարող է տալ ձորակի ստորգետնյա շերտերի ուսումնասիրությունը, որին լծված է արշավախմբի **երկրաձևաբան** հնագետը (ՀՄԵՀ, էջ 233):

ԵՐԿՐԱՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. Ուսումնասիրությունն ունի միջմասնագիտական ուղղվածություն և միտված է համընդգրկող ու շրջապատային հնագիտությանը ծառայելու: Ուստի այն ընթանում է միաժամանակ մի քանի ուղղություններով՝ համադրելով մասնավորապես դասական հնագիտություն, հնագիտական մարդաբանության «կառուցվածքների հնագիտություն», հայկական բանասիրություն, արվեստի և ճարտարապետության պատմություն և **երկրաձևաբանություն** (ՀՄԵՀ, էջ 229):

ԵՐԿՐԱՆԱՎ, գ. **Երկրագունդ**: Մեկը, մյուսը, երրորդը,// բոլորն իրար հետ,// քնած լինեն թե արթուն, //նավարկում են դեպի լուսաբաց // մեր **երկրանավին** բարձած՝ //փառքի լեռները …. (ԳԹ, 19.12.2014):

ԵՐԿՐԱՍԻՐՏ, գ. **Երկրի սիրտը**: Իսկական քաղաքացին նա է, ով ասֆալտի տակ անգամ զգում է **երկրասրտի** թրթռուն բաբախը, բնության կանչը, կյանքի ընթացքը.... (ԼՋ, էջ 141):

ԵՐԿՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ, գ. **Երկու երկրի քաղաքացի լինելը:** Ի տարբերություն Ռուսաստանի …. սահմանում է **երկքաղաքացիություն** (Ժամ., 08.05.2014):

ԵՐՋԱՆԿԱԽՈՍՏՈՒՄ, ած. **Երջանկության խոստում պարունակող**: . ...Մեփական անձիդ ու մերձավորիդ ինքնության խորխորատներում անթեղված **երջանկախոստում** ամբողջականության ինքնագիտակցությունը (ԳԹ, 21.02.2014):

ԵՐՓՆԱԾԻԾԱՂ, ած. **Գունեղ:** Օրերի մեջ այս կապրի՝ ինչպես թիթեռ,//տեսնես ո՞վ է ընկել նրա ետև....//, կթևածի **երփնածիծաղ** հեռուներում եզերքների, //կմիանա՞ նենգ ու դավին, թե՞ կշողա դրոշներին հաղթանակի .... (ԳԹ, 31.01.2014):

Զ

ԶԱԶԱՅԱԳԻՏԱԿԱՆ, ած. **Զազայագիտությանը վերաբերող**: Հայաստանում հոկտեմբերի 27-30-ը տեղի ունեցավ **զազայագիտական** միջազգային երկրորդ գիտաժողովը, որին մասնակցում էին մի շարք գիտնականներ Ավստրիայից, Գերմանիայից, Թուրքիայից (168 ժ., 06.11.2014):

ԶԱԶԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, գ. **Զազաների և զազայերենի մասին գիտություն**:

ԶԱՆԱԶԱՆԵՑՈՒՄ, գ. **Տարբերելը, զանազանելը:** Սա արտահանման խնդիր է և, ընդհանրապես, միջազգային կապերի **զանազանեցման** (Հրապ., 12.11.2014):

ԶԱՆԱԶԱՆԵՑՎԵԼ, բ. **Տարբերակվել:** Որքան մենք կարողանանք և՝ մեր արտահանման շուկաները, և՝ մեր ներմուծման շուկաները **զանազանեցված** լինեն և որոշակի առումով ճկունություն ունենանք, այդքան այդ բացասական ազդեցությունները պակաս կլինեն (Հրապ., 12.11.2014):

ԶԱՌԱՆՑԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. Տե՛ս ԱՊՈՒՇԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ օրինակը:

ԶԱՌԱՆՑԱԽՏ, գ. **Զառանցելու հիվանդություն** :....Հավատում եմ, որ ինքն իր մեջ ընկղմված անհատը արդեն հասնում է խելագարության, որովհետև ոչինչ չի կանխում անհատական **զառանցախտի** ի հայտ գալը (ԳԹ, 06.12.2013):

ԶԱՌԱՆՑԱՆՔԱՅԻՆ, ած. **Զառանցանքին հատուկ:** Եթե անձը տառապում է **զառանցանքային** խանդով, ապա որպես կանոն նա ընդունակ չէ օբյեկտիվ գնահատել իրավիճակը (TV ալիք, 17.03.2014):

ԶԱՎԵՇՏԱՊԱՏԿԵՐ,գ. **Զավեշտական պատկեր**: 5.000 դրամով կարող էին ավելի լավ «քյաբաբանոց» գնալ, մտածում էին հյուրերը, իսկ մեր հանդիսատեսը կարծես ոչինչ չեղած՝ ներս էր մտնում նայելու երկրորդ գործողության **զավեշտապատկերը** (Ազգ, 04.04.2014) :

ԶԱՐԴԱՀՈՐԻՆՎԱԾՔ, գ. **Զարդի հորինվածք:** Այդպիսի ցանկացած իր կամ առարկա ընկալվում է որպես մի ամբողջական գեղարվեստական ստեղծագործություն, որն ունի իր բնորոշ արտահայտման ձևը, կառուցվածքը, նախշերի ու **զարդահորինվածքի** հստակ ուրվագծերը (ՀՄԵՀ, էջ 178):

ԶԱՐԴԱՇԱՐԱՆ, գ. **Ուլունք:** .... Երկայն ու ընդարձակ մորթյա զգեստը նույնպես գունագեղ էր, պարանոցից կախ՝ տարագույն ներկած ոսկորներից ու հղկաքարերից **զարդաշարան** կար (ԳԹ, 07.11.2014):

ԶԱՐԴԱՏԱՐՐ, գ. **Զարդի տարր:** Շենքի այս ճակատը.... զարդարված է ութաձև աստղերի քանդակներով՝ հայկական շատ գավիթների շքամուտքերի ձևավորման մեջ լայնորեն կիրառվող **զարդատարրով** (ՀՄԵՀ, էջ 397):

ԶԲՈՍԱՎԱՐ, գ. **Էքսկուրսավար:** Զբոսաշրջային օպերատորները և **զբոսավարները** ևս ներկայացրել են մի շարք առաջարկություններ ....(ՀՀ, 13.03.2015):

ԶԳԱՅԱՀՈՍՔ, գ. **Զգացմունքների հոսք**: Սա փոքր ծավալի երկ է, բայց լայն ու ասես անվերջանալի է նրա զուգահեռափունջ **զգայահոսքը** (ԳԹ, 14.11.2014):

ԶԳԱՅՄՈՒՆՔԱՌԱՏ, ած. **Զգացմունքներով լի: Զգացմունքառատ**, բայց ուժեղ մարդու տրամաբանությամբ բեմականացնելով Սյուրմելյանի կորսված մանկության ու մեր ազգային ամենամեծ ողբերգության պատմությունը Ռոբերտ Հակոբյանն արևմտահայության անհետացած կյանքի իր մեկնաբանությամբ զգաստացնում է՝ մերօրյա հետագայում քանիցս կրկնված ու անպատիժ մնացած կարմիր ու սպիտակ ջարդերի մասին հիշեցնելով (Ավ.,12.02.2015):

ԶԵՓՅՈՒՌԱՀԱՐԵԼ, բ. **Քամահարել՝ սյուքահարել:** Դու դրել ես կուտակային կրակին թշթշացնում ես, ժարիտ ես անում ու հետն էլ **զեփյուռահարում**՝ մենք հո ժողովրդի թշնամին չե՞նք (Հրապ., 26.04.2014):

ԶԻՆՀԱՇՄԱՆԴԱՄ, գ. **Հաշմանդամ զինվորական**: …. Մրցաշարի ընթացքում **զինհաշմանդամները** 5 օր շարունակ մրցել են շախմատի, շաշկիի, նարդիի, բազկամարտի, լողի մրցաձևերում (ՀՀ, 04.12.2014):

ԶՈՀԱՍՅՈՒՆ, գ. **Սյուն, որի վրա զոհեր են մատուցվել:** Ծառն ու ճյուղը այս համադրության մեջ խորհրդանշում են նաև հին **զոհասյան** գաղափարը (ՍՀ, էջ 27):

ԶՍՊԱՄԱՏ, գ. **Լռեցնելու՝ զսպելու՝ սաստելու նպատակով շուրթերին մոտեցվող ցուցամատ:** ....Նույն պահին ևեթ ամուսինը **զսպամատը** դնում է շուրթին... (ԼՋ, էջ 57):

ԶՎԱՐԹԱՆՔ, գ. **Զվարթություն:** Ինչպիսի՜ սեր խորքերում ծաղկած **զվարթանքի** պատկերներով .... (ԳԹ,11.10.2013):

ԶՎԱՐՃԱԳՆԱՑՔ, գ. **Զվարճանքների գնացք**: Աբու Դաբիում բացվել է ամենամեծ ռեստորանը, որտեղ ուտելիքը մատուցվում է **զվարճագնացքով** (Համացանց):

ԶՐԱՀԱՀԱՏ, ած. **Զրահը հատող**: **Զրահահատ** գնդակն անցնում է ծոծրակի միջով (ԼԽ,ՍԳԾԲ, էջ 160):

ԶՐՈՅԱՑՆԵԼ, բ. **Զրոյի վերածել:** Մի պահ թվում է, թե երազանքն արդեն Հմայակի ձեռքում է, կուտակած գումարն էլ վերջնագծին է հասել, բայց մի ակնթարթում տեղի ունեցած փորձանքը նորից **զրոյացնում** է նրա խնայողություններն ու հույսերը (Հրապ., 26.12.2014):

ԶՐՈՅԱՑՎԵԼ, բ. **Զրոյի վերածվել:** Բայց այդ կարգավիճակն արդեն վաղուց **զրոյացված** է (Ազգ, 07.11.2014):

ԶՐՊԱՐՏԱՆՔԱՇԱՂԱԽ, ած. **Զրպարտանքով շաղախված**: ....Եվ հանիրավի մեղադրանքների տեսքով սկսեց **զրպարտանքաշաղախ** խառնակչություններ տեղալ մեր, ամենայն առումով, անմեղ գլխներին (ԳԹ, 11.02.2014):

ԶՐՈՒՑԱՏԱՂԱՎԱՐ, գ. **Տաղավար զրույցի համար:** Այստեղ նախատեսված է ստեղծել ժամանակակից զբոսայգի՝ իր բոլոր տարրերով,....նստարաններ են տեղադրվելու, երեք **զրուցատաղավար** է կառուցվելու .... (ՀՀ, 28.03.2014):

ԶՈՒԳԱՀԵՌԱՓՈՒՆՋ, ած. Սա փոքր ծավալի երկ է, բայց լայն ու ասես անվերջանալի է նրա **զուգահեռափունջ** զգայահոսքը (ԳԹ, 14.11.2014):

Է

ԷԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ, գ. **Էությունը՝ բնույթը փոխելը**: «**Էափոխություն** առանց հայելիների» բանաստեղծության անցումներ են նույն մարմնի մեջ կատարվող կերպարանափոխության և էափոխության (ԳԹ, 14.11.2014):

ԷԹՆԻԿԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ած. **Էթնոսի մշակույթին վերաբերող:** Հին հայոց մեջ ամպրոպային առասպելները կապված են եղել տարբեր դիցանունների, որոնք արդյունք են պատմական, **էթնիկամշակութային** ու ժամանակաբանական տարբեր շերտավորումների (ՍՀ, էջ 111):

ԷԹՆՈԱՎԱԶԱՆ, գ. Արևելքը չի որոնել Արևմուտքում, այլ Արևելքում է Արևելքը ներառել՝ լինելով այդ **էթնոավազանի** ծնունդ (ԳԹ, 14.11.2014):

ԷԹՆՈԳԵՆԵՏԻԿ, **Էթնոսի ծագմանը վերաբերող:** ....**էթնոգենետիկ** կոդը թաքուն քրոմոսոմներ ունի պահ տված, որոնք պատեհ մի ժամի թափ են տալիս իրենց Սասունցի Դավթի նման՝ փրկված վերջին մաքրամաքուր բջիջը նետելով պայքարի (ԳԹ, 21.03.2014):

ԷԹՆՈԳԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆ, գ. **Էթնոսի՝ժողովրդի գիտակցություն**: Հերմետիկ պատնեշով դրսից մեկուսացողները արևածին ու արևապաշտ էին ի բնե՝ Վահագնով ու Միհրով իրենց **էթնոգիտակցությունն** ու արյան կազմը բաղադրած ....(ԳԹ, 21.03.2014):

ԷԹՆՈՄՇԱԿՈՒՅԹ, գ. **Ժողովրդի մշակույթ**: Այսպես՝ «Նոր տարի» պատմվածքի տղայի պատանեկան հոգեկառույցը բարձրանում է ես–ընտանիք–գյուղի հանրույթ

պարտադրանքների, չգրված, բայց **էթնոմշակույթով** հաստատված բարոյական նորմեր .... (ԳԹ, 21.03.2014):

ԷԹՆՈՊԱՐԱԳԵՏ, գ. **Էթնիկական պարերի մասնագետ**: Հայաստան այցելելու դրդապատճառներից մեկն էլ մեր ականավոր հայրենակցուհու՝ **էթնոպարագետ,** պարադիր և ռիթմոպլաստիկայի մանկավարժ Սրբուհի Լիսիցյանի ստեղծագործության հանդեպ՝Իրինայի մասնագիտական հետաքրքրությունն էր (Ազգ, 21.11.2014):

ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ, ած. **Էլեկտրաէներգետիկային վերաբերող:** Խախտումները պայմանավորված են եղել **Էլեկտրաէներգետիկական** համակարգի հաշվարկի հիմքում սակագնի….հաշվարկի և պարտավորությունները կատարելու անհնարինության հանգամանքով (Ժող., 15.02.2015):

ԷԿՈԱՆՁՆԱԳԻՐ, գ. /Բաժնի պետը/ եզրակացություն է ներկայացնում.... սահմանային թույլատրելի արտանետումների, **էկոանձնագրերի** և հողհատկացման նախագծերի վերաբերյալ (Հ.ծառ., 11.12.2013):

ԷԿՈԳՅՈՒՂ, գ.

ԷԿՐԱՆ–ՊԱՍՏԱՌ, գ. **Որպես էկրան ծառայող պաստառ**: …. Ահեղ Դատաստանի օրը երկնքի **էկրան–պաստառը** դիմանալո՞ւ է այդ տեսարանների դատական ցուցադրությանը… . (ԳԹ, 20.03.2015):

ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ, ած. **Էլեկտրաէներգիայի ծախսման տեսակետից արդյունավետ:** ՀՀ շենքերը, պարզվում է, կառուցվելու են ոչ **Էլեկտրաարդյունավետ** նախագծերով, առանց պատշաճ մեկուսացման (Ժամ.,11.04.2014):

ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ, գ. Էներգախնայողության և **էներգաարդյունավե-տության** ուսումնասիրությանը նվիրված ծրագիրն իրականացնելու են հայ և գերմանացի մասնագետները (Եր. համ., թ. 9, 2014):

ԷՆԵՐԳԱԲԼՈԿ, գ. Հրազդան ՋԷԿ–ի 5–րդ **էներգաբլոկի** տարածքում շրջագայելուց հետո Ա.Միլլերը շնորհավորեց կայանի աշխատակիցներին .... (ՀՀ, 03.12.2013):

ԷՆԵՐԳԱԽՆԱՅԵԼ, բ. **Էներգիան խնայելը:** Հայաստանում ԱՄՆ միջազգային զարգացման գործակալությունը ուսումնասիրություններ է կատարել՝ պարզելու համար ինչ հնարավորություններ ունենք առավել **էներգախնայող** դառնալու առումով (Ժամ.,11.04.2014):

ԷՆԵՐԳԱԽՆԱՅՈՒՄ, գ. **Էներգիայի խնայում**: **Էներգախնայման** բարելավված համակարգը խելացի սնուցման ռեժիմի շնորհիվ մարտկոցի լիցքի ցածր մակարդակի ժամանակ ավտոմատ կկանգնեցնի բոլոր հավելվածները՝ թողնելով միայն հեռախոսի հիմնական ֆունկցիաների հասանելիությունը (168 ժ., 09.10,2014):

ԷՋԱՌՈՒ, գ., «Իրատես de facto» թերթի մարզական **էջառու** Մարտին Հուրիխանյանը, նաև ընթերցողները թող ներողամիտ լինեն, որ չկարողացա Նորայր Մուշեղյանին վայել, պայծառ դիմանկար ստեղծել (Իրատես, 28.03.2014):

ԷՍԵՊՏՈՖՈԲԻԱ, գ. **վախ հայելուց:**

ԷՐԶՐՈՒՄԱՀԱՅՈՒԹՅՈՒՆ, գ. **Էրզրումում ապրող հայություն: Էրզրումահայության** սպանդի եղերական պատմությունն ընթերցողի սեղանին է՝ ֆրանսերեն և հայերեն (ՀՀ, 24.03.2015):

ԷՈՒԹԵՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. Բայց ի՞նչ է էականը առանց **էութենականության**, ասել է թե՝ մարմինն առանց հոգու, որը բանաստեղծության լեզուն է և որն էլ պայմանավորում է այդ էությունը՝ այն վերածելով արվեստի (ԳԹ, 06.12. 2013):

Ը

ԸՂՁԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ, գ. Դա ժողովրդի գեղարվեստական **ըղձախոսությունն** է, ապագայի հանդեպ նրա պայծառ հավատը (ԳԹ, 22.11.2013):

ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ, գ. **Ընդերքի օգտագործումը:** ….«Ախթալայի ԼՀԿ» ում….ստուգման արդյունքում արձանագրվել են **ընդերքօգտագործման** ոլորտի և պայմանագրային պարտավորությունների որոշ խախտումներ (Ժող., 14.03.2015):

ԸՆԿԱԼՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ, գ. **Ընկալելու ունակությունը:** Հիվանդության **ընկալունակությունը** շատ բարձր է (Համացանց, 12.10.2014):

ԸՆՏՐԱԳՈՐԾԻՔ, գ. Ժողովուրդը այդ ծրագրերում ունի նույն դերը՝ **ընտրագործիքի,** ուրեմն ինչ տարբերություն իշխանության ու ոչիշխանության միջև Հայաստանում (Իրատես, 14.03.2014):

ԸՆՏՐԱԹԵՐԹԻԿ, գ. **Քվեաթերթիկ:** Ինքս եմ իմ **ընտրաթերթիկը** սահեցրել քվեատուփի մեջ և առանց ընտրակեղծիքի ընտրել եմ ընկերոջս՝ Էդվարդ Միլիտոնյանին (ԳԹ, 06.06.2012):

ԸՆՏՐԱԿՈՄԵԴԻԱ, գ. Տեղի ունեցավ հերթական **ընտրակոմեդիան** (Հրապ., 20.10.2013):

ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ, ած. **Ընտրության՝ քվեարկության համար նախատեսված տարածք**: Կոտայքի մարզի թիվ 26 **ընտրատարածքային** ընտրական հանձնաժողովի կազմում առաջացել է մեկ թափուր տեղ (ՀՀ, 14.10.2014):

Թ

ԹԱԽԾԱԳՈՐՈՎ, ած. **Թախծոտ և գորովալից:** Նրա **թախծագորով** պոեզիան քիչ բանով է տարբերվում վայրենի կաղկանձից (ԼՋ, էջ 29):

ԹԱԽԾԱՕՐՈՐ, մկբ. Իրիկունը սգաբարուր, իրիկունը **թախծաօրոր** փաթաթվել էր եկեղեցու գմբեթներին .... (ԳԹ, 11.10.2013):

ԹԱՂԿԱՑՅԱԼ, Մեխանիզմը խժռում, ծվատում է առօրյա վազվզուքին անձնատուր ծակոտկեն ու **թաղկացյալ** հոգիները .... (ԳԹ, 21.2. 2014):

ԹԱՆՁՐԱՀՅՈՒԹ, գ. **Թանձր հյութ**: Այն քերիչով անցկացնում են և ավելացնում աղցանների, մսային ուտեստների, **թանձրահյութերի** ու ձվածեղի մեջ (TV մոլ, 28.11.2013):

ԹԱՎՇԱԹԱՎԻՇ, **Թավշի նման փափուկ:** –Կեցցե՛ս,–ասաց կինս անթաքույց ուրախությամբ և զգուշորեն շոյեց աղվեսի **թավշաթավիշ** ագին ....(ԳԹ, 12.09.2014):

ԹԱՏՐՈՆԱՊԱՇՏ, ած. **Թատրոնը պաշտող** : Լոռվա աշխարհը միշտ էլ ունեցել է **թատրոնապաշտ** բնակիչներ, հյուրասեր ու պարզ մարդիկ ....(ԳԹ, 22.11.2013):

ԹԱՐԱԽԱԲՈՐԲ, գ. **Թարախային բորբոքում:** Խատուտիկի հյութը տրվել է ըմպելու ստամոքսի սուր բորբոքումների, իսկ չորացած տերևը՝ստամոքսի **թարախաբորբի** ժամանակ (ՀԴ, թ.1,2014):

ԹԱՓԱԾԱԿՈՒՄ, գ. **Ճողվածք**: Ստամոքսի կամ 12-մատնյա աղու **թափածակման** դեպքում ցավն անտանելի է, կտրող (TV մոլ, 25.07.2014):

ԹԱՓՔԱՎՈՐ, ած. **Թափք ունեցող**: Բլուրների ետևում երևալով ու անհետանալով գնում է մեր **թափքավոր** «Ուազ» մեքենան (ԼԽ, ՍԳԾԲ, էջ 170):

ԹԵԹԵՎԱՎԱՐՔ, ած.**Թեթև վարքի տեր, անբարոյական**: Մեկին տեսել եմ... ի՞նչ լավն ա...– ասաց ու ժպտուն աչքերով, ասես մտովի ըմբոշխնեց հերթական **թեթևավարք** օտարուհուն (ԳԹ, 13.12.2013):

ԹԵԼԵՏՈՆ, գ. Ես անձամբ մասնակցել եմ **թելետոնին** մեկ անգամ՝ 1993 թվականին, որից հետո էլ չեմ մասնակցել (Հրապ., 29.11.2014):

ԹԵՅԱՀԱԲ, գ. **Թեյի խոտից պատրաստված հաբ**: Շատ չնչին տոկոս են կազմում նաև կրծքի քաղցկեղով հիվանդները՝ շնորհիվ օրական ընդունված 12-13 գրամ թեյի կամ 5-7 հատ խտացրած **թեյահաբերի** (Իր., 13.12.2013):

ԹԵՅԱՀՈՒՄՔ, գ. **Թեյի հումք**: Տոնակատարությունները.... նշում են **թեյահումքի** վերամշակման ու արտադրության մեջ մասնագիտացված և առաջատար երկրները (Իր., 13.12.2013):

ԹԵՎԱԲԱԽՅՈՒՆ, գ. **Հավքի թևերի բախյունը:** Մինչև վերջ բացվող դուռը ակնթարթորեն ծծում է հավքի **թևաբախյունով** դեպի իրեն թռչող պատուհանների բոլոր վարագույրները (ԼԽ, էջ 16):

ԹԵՐԱՀԱՇՎԱՐԿ, գ. **Թերի հաշվարկ:** Սա որպես սուբյեկտիվ **թերահաշվարկի** օրինակ (ԳԹ,14.2.2014):

ԹԵՐԹԱԶԱՏԵԼ, բ. **Թերթիկները առանձնացնել**: Նրանք կարողանում են 2-3 րոպեում **թերթազատել** շատ ծաղիկներ (Համացանց):

ԹԵՐԹԱՍԵՐ, գ. **Թերթ սիրող:** Որպես չգրված օրենք **թերթասեր** հասարակությունը թերթ գնում է առավոտյան (Հրապ., 06.11.2013):

ԹԵՐՀԱՎԱՔԱԳՐՈՒՄ, գ. **Թերի հավաքագրելը**: ....Հաջորդ տարի սպասվող ավելի ցածր տնտեսական աճի պայմաններում եկամուտների **թերհավաքագրման** վտանգ կա (168 ժ., 14.10.2014):

ԹԵՐՍՆՎԱԾՈՒԹՅՈՒՆ, գ. **Թերի սնվելը**: .... 52 մլն երեխա տառապում էր սուր **թերսնվածությամբ**, իսկ 43 մլն երեխա ուներ քաշի ավելցուկ կամ ճարպակալում (ՀՀ, 26.11.2014):

ԹԵՐՖՈՒՆԿՑԻԱ, գ. **Թերի ֆունկցիա:** Հիպոթիրեոզը վահանագեղձի **թերֆունկցիան** է (TV մոլ, 13.12.2013):

ԹԵՓՈՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ, գ. **Թեփոտված լինելը**: Զգայուն մաշկի դեպքում ռետինոլ պարունակող քսուքը կարող է կարմրություն, գրգռվածություն ու **թեփոտվածություն** առաջացնել (TV մոլ, 03.02.2014):

ԹԵՔԱՀԱՐԹԱԿ, գ. **Թեք հարթակ:** Օրերս ավարտվեց Անջելինա Ջոլի և Բրեդ Փիթ զույգի առանձնատան շինարարությունը, պարզվեց բազմաթիվ թեքահարթակներից կառուցվածը՝ սքեյբորդի համար նախատեսված մարզադաշտ է (TV ալիք, 30.06.2014):

ԹԹՎԱԾՆԱՔԱՂՑ, գ. **Թթվածնային քաղց:** Իմ սեփական մտքերը առաջացնում են **թթվածնաքաղց** (TVալիք, 20.10.2014):

ԹԹՎԱԿԱԹՆԱՅԻՆ, ած. Դրանք են «ԼԱ–2» ժանգի և «Չորթան» հայկական **թթվակաթնային** սննդանյութի ոչ սպիտակուցային ամինաթթուների փոքրածավալ արտադրությունները (Ազգ, 28.03.2014):

ԹԻՐԱԽԱՅԻՆ, ած. Բժշկական հսկողություն է սահմանվել **թիրախային** համայնքների ողջ բնակչության շրջանում .... (ՀՀ, 05.06.2014):

ԹԻՐԱԽԱՎՈՐԵԼ, բ. Կառավարությունը և որոշ ՀՀԿ-ականներ՝ Հովիկ Աբրահամյանի գլխավորությամբ… միացել էին կառավարությանը մասնավորապես Տիգրան Սարգսյանի **թիրախավորելուն** (Ժամ., 06.03.2014):

ԹԽԱՍՊԻՏԱԿ, ած. **Թուխ և սպիտակ**: Երեխաները գեղեցիկ էին, հազվագյուտ մոխրագույն աչքերով, շագանակավուն մազերով և **թխասպիտակ** մաշկով (ՀՄ, էջ 91):

ԹԽՎԱԾՔԱՃԱՇ, գ. **Խմորից պատրաստված ճաշ, ճաշատեսակ**: Լիկոպենի պարունակությունը մթերքի մեջ ավելանում է, եթե դրանք ենթարկվում են ջերմամշակման, այդ պատճառով էլ կարելի է վստահաբար պատրաստել բանջարեղենով ուտեստներ՝ ապուր, **թխվածքաճաշ** և ամեն օր մեկ բաժին ուտել (TV մոլ, 02.03.2015):

ԹՂԹՅԱԼ, Ո՞ւր է Սուրբ Աստվածածինն իր գրչագիր ու **թղթյա**լ ավետարաններով ....(ԳԹ, 6.9.2013):

ԹՄՐԱԿԱԽՎԱԾՈՒԹՅՈՒՆ, գ. **Թմրանյութից կախված լինելը**: Անցյալում նա բուժվել է **թմրակախվածությունից** (TV մոլ, 16.02.2014):

ԹՄՐԱՄՈԼՈՒՀԻ, գ. **Կին թմրամոլ:** 1994 թ …. սկսնակ ռեժիսոր Քվենտինը դերասանուհի էր որոնում **թմրամոլուհի** Միայի դերի համար (TV ալիք, 20.10.2014):

ԹՄՐԱՔՈՒՆ, գ. **Նինջ:** Առայսօր քաղաքական դաշտում լեթարգիական լռություն է՝ խոր **թմրաքուն**, որի մեջ հայտնվել են քաղաքական ու ապաքաղաքական տարրերը... (Իր., 07.11.2014):

ԹՄՐԱՖԱՍՏՖՈՒԴ, գ. Այնտեղ ոստիկանությունը ձերբակալել է 15 մարդու՝ **թմրաֆաստֆուդի** շրջիկ առևտրի համար (TV մոլ, 24.11.2014):

ԹՈՎՈՒՆ, ած. **Թովիչ:** Այդ բուն երգն է, տխրությամբ ու նաիրյան վշտով **թովուն** մի երգ, որը սակայն վերջանում է զվարթ առնական, շենշող մեր մեծ ներկայի և ապագայի նման (Հրապ., 29,11.2014):

ԹՌՉՆԱԲՈՒՅԼ, գ. **Թռչունների բազմություն**: Օ, արշալույս...// Օ, տարանուն **թռչնաբույլ,** //Ծլվլոցով՝ բռնած // և՛ դուռ, և՛ կտուր.... (ԳԹ, 22.11.2013):

ԹՌՉՆԱՊԱՐ, գ. **Թռչունների ճախր:** Նախ գեղեցիկ եղավ արշալույս, // Եվ երկինքը **թռչնապարով** կենդանացավ.... (ԳԹ, 20.09.2013):

ԹՌՉՆԱՑԵՂ, գ. **Թռչունների ցեղ**: Հայաստանում ունենք ընտանի թռչունների և **թռչնացեղերի** բուծարան (Իրատես, 07.03.2014):

ԹՐՔԱՇԵՐՏ, գ. **Թրիքի շերտ:** ....Որոնք տարանջատված են միմյանցից թափվածքներով ու **թրքաշերտերով** (ՀՄԵՀ, էջ 185):

ԹՈՒՅԼԱՏՐՈՂԱԿԱՆ, ած. **Թույլատրական, թույլտվություն պարունակող՝ արտահայտող:** Կարծում եմ՝ ԿԲ-ն ավելի **թույլատրողական** քաղաքականություն է վարում (168 ժ., 02.12.2014):

ԹՈՒՆԱԲԱԺԻՆ, գ. **Թույնի բաժին:** Արդեն հոգնել ենք ԶԼՄ–ներից և առօրյայից ամեն օր մեզ մատուցվող աղետների և մղձավանջների **թունաբաժնից** .... (ԳԹ, 20.06.2014):

ԹՈՒՆԱՀԱՐՈՒՅՑ, ած. Եկել և քամելու են քո երկիրը, ոսկին տանելու են, մեզ են թողնելու պոչամբարներում կուտակված մահաբեր թույնը՝ ծանր մետաղներն ու **թունահարույց** տարրերը՝ ուրանով հանդերձ (ԳԹ, 24.10.2014):

ԹՈՒՆԱՏԱՄ, գ. **Թունավոր ատամ**: Կենտրոնական Ամերիկայում ապրում են անսովոր մողեսներ՝ **թունատամներ** (TV մոլ, 03.02.2014):

ԹՈՒՐՔԱԱՐԱԲԱԿԱՆ, ած. Բոլորս գիտենք **թուրքաարաբական** կոչվող չարիքի մասին, որ եկել լցվել է հեռուստատեսություն (Ժող., 14.04.2015):

ԹՈՒՐՔԱԲԱՐՈ, ած. Ճիշտ է, չի մտել, բայց թշնամական, հենց **թուրքաբարո** գործեր միշտ են արվել (ԳԹ, 13.09.2013):

ԹՈՒՐՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. Մայրն իր համար միշտ Գյոզալ է եղել և թրքուհի, շրջապատում **թուրքականությունն** է եղել իշխողը (ԳԹ, 18.07.2014):

ԺԱՄԱՃԱՆԱՉՈՂՈՒԹՅՈՒՆ, գ. **Ժամանակի ճանաչողություն**: Նրանց ետևից կրնկակոխ, սատանայի իմաստուն **ժամաճանաչողությամբ,** մաքրասեր կարգապահություն սերտած շնագայլերն են գալիս (ԼԽ, ՍԳԾԲ, էջ 98):

ԺԱՄԱՆԱԿԱԲԱԺԱՆՈՒՄ, գ. **Ժամանակի բաժանելը**: Այս **ժամանակաբաժանումը,** հարկավ, արդյունք է առավելապես մեր պատմական մոտեցման (ՍՀ, էջ 314):

ԺԱՄԱՆԱԿԱԴԻՐ, գ. Հիմա բռնավոր են պահը, պահվածքը,//**ժամանակադիրը,** ժամապահը....(ԳԹ, 25.04.2014):

ԺԱՄԱՆԱԿԱԶԳԱՑՈՂՈՒԹՅՈՒՆ, գ. Ըստ գրականագետ Հասմիկ Հակոբյանի՝ անկախության սերնդի համար ժամանակակից գրականության ամենաբնորոշ գիծը հստակ **ժամանակազգացողությունն է**, ժամանակափնտրտուքը, մենության ձգտումը, անձնականացումը (ԳԹ, 13.06.2014):

ԺԱՄԱՆԱԿԱՓՆՏՐՏՈՒՔ, Տես՝ ԺԱՄԱՆԱԿԱԶԳԱՑՈՂՈՒԹՅՈՒՆ –ի օրինակը:

ԺԱՆՐԱԿԱԶՄ, ած. **Ժանր կազմող:** Հայագիտության մեջ խոսք է եղել պատմական արձակի **ժանրակազմ** առանձնահատկությունների քննության մասին (ՀՄԵՀ, էջ 336):

ԺԱՆՐԱՁԵՎ, գ. **Ժանրի տեսակը՝ ձևը:** Բայց **ժանրաձևը** չէ էականը, այլ ժանրը, որը բանաստեղծությունն է, որի գլխավոր հատկանիշը, էությունը բանաստեղծականությունն է…. (ԳԹ, 31.10.2014):

ԺԱՆՐԱՍՏԵՂԾ, ած. **Ժանր ստեղծող:** ....Ցույց է տրվում, որ բանաստեղծի հետաքրքրությունը դրանով գրչի քմահաճ վարժանք կամ խաղ չէ, այլ կապվում է նրա հայտնի **ժանրաստեղծ** ծրագրերի հետ՝....(ԳԹ, 21.03.2014):

ԺԱՌԱՆԳՈՐԴԱՅԻՆ, ած. **Ժառանգորդին վերաբերող**: Ս.Կարապետի այս դաժան ու արյունարբու գիծը առավել հեթանոսական է, քան քրիստոնեական և վկայում է նրա **ժառանգորդային** սերտ կապը նախկին աստվածների հետ (ՍՀ, էջ 142):

ԺՈՂՊԱՏԳԱՄԱՎՈՐ, գ. **Ժողովրդական պատգամավոր:** Առանձնապես մեծ ջանքերի հետ էին կապված **ժողպատգամավորների** արտահերթ նստաշրջանի հրավիրման նպատակով նախապատրաստական աշխատանքները .... (ԳԹ,21.05.2014):

ԺՊՏԵՐԵՍԻԿ, գ. Մենք բոլորս մի քիչ տանը մնացած աղջիկ ենք, արյունլվիկ ու անատամ, փարթամ ծծերով ու **ժպտերեսիկ**, ճաշակի հարց է (Հրապ., 06.11.2013):

ԻԳԱԿԱՆՉ, գ. Եվ՝ էլ ոչինչ...անգամ **իգականչը**՝ գիշերահար, // մեզ չդրդեց տրվել անհոգ զվարճանքի .... (ԳԹ, 22.11.2013):

ԻՄԻՋԱՎՈՐՈՒՄ, գ. Բանախոսը, ըստ **իմիջավորման** օբյեկտի ներկայացնելով իմիջի տեսակները, փաստեց, որ դրանք լինում են երեք տեսակ՝ կորպորատիվ, առարկայական ու անհատական (Եր. համ. սեպտ., 2014):

ԻՆԺԵՆԵՐԱՍԱԿՐԱՎՈՐԱԿԱՆ, ած. Տե՛ս ԱՐԳԵԼՈՑ- ԹԱՆԳԱՐԱՆ-ի օրինակը:

ԻՆՈՎԱՑԻՈՆ, ած.Նա գիտեր, թե որտեղ է հասել ժամանակակից արվեստը ու հասկանում էր՝ ուր որ է **ինովացիոն** հեղաշրջում է լինելու (TV ալիք, 05.05.2014):

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼԱՑՎԵԼ, բ. Լիսկան հայաստանյան իշխանական համակարգի առանցքային ֆիգուրներից մեկն է, և երբ ավելի քան մեկուկես տասնամյակ **ինստիտուցիոնալացված** այս համակարգը երկրորդ շնչառությամբ փորձում է բյուրեղանալ, Լիսկան չի կարող այս օղակից դուրս մնալ (Ժամ., 26.09.2014):

ԻՆՏԵՐՏԵՔՍՏՈՒԱԼՈՒԹՅՈՒՆ, գ. ….Յու Քրիստևան «Բախտինը, բառը,դիալոգը և վեպը » աշխատանքում զարգացնելով որպես **ինտերտեքստուալության** գաղափար, հիմնվելով նաև Ռ.Բարտի տեքստի վրա, Բախտինի բազմաձայնության գաղափարը ընկալում է իբրև «տարբեր տեքստերի ներգրավվածության գաղափարը մեկ տեքստում» (ԳԹ, 28.11.2014):

ԻՆՔՆԱԱԶԱՏԱԳՐՎԵԼ, գ. **Ինքն իրեն ազատագրել:** Սերժ Սարգսյանն այլևս **ինքնաազատագրվել** է (Ժող., 21.03.2015):

ԻՆՔՆԱԱՆԴՐԱԴԱՐՁ, գ. **Ինքն իրեն անդրադառնալ:** ....Քրիստոնյա ժամանակի ակնթարթների մեջ մի պահ կանգ է առնում, փորձում **ինքնաանդրադարձ** կատարել իր հոգևոր կյանքին... (Իրատես, 14.03.2014):

ԻՆՔՆԱՐՏԱՀԱՅՏՈՒՄ, գ. **Ինքն իրեն արտահայտելը:** Կինը մինչ այդ ներդաշնակության հասնելը ստիպված մի քանի փուլեր հաղթահարել՝ ինքնահաստատաման, **ինքնաարտահայտման** համար (Ժամ., 07.03.2015):

ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏԱԿԱՆ, գ. Արդյո՞ք սեքսը… բարձրացնում է **ինքնագնահատականը** (Տն. առ., թ. 6, 2014):

ԻՆՔՆԱԳՈՎԵՍՏ, գ. Հրաշալի ներկայացում է, թող **ինքնագովեստի** պես չինչի, դա մեր երեքի աշխատանքն է (TV ալիք, 26.05.2014):

ԻՆՔՆԱԳՐԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ, գ. Դա բերեց լուրջ **ինքնագրաքննության** .... (ՀՀ, 13.02.2014):

ԻՆՔՆԱԴՐՍԵՎՈՐՈՒՄ, գ. .... Հայ կանայք, լինելով կրթված, խորաթափանց, հեռատես, պետք է ավելի համարձակ գտնվեն և ընտանեկան, կենցաղային հոգսերը չգերադասեն **ինքնադրսևորման,** ինքնաիրացման հնարավորությունից (ՀՀ, 18.01.2014):

ԻՆՔՆԱԴՐՍԵՎՈՐՎԵԼ, բ. Սա այն է, ինչը, թվում է,թե ներդրված է մեր մեջ որպես կյանքում ինքնադրսևորվելու, ասել է թե՝ սեփական անձը դեպի դուրս ուղղորդելու, շրջապատին **ինքնապարտադրվելու** նախաստեղծ խթան (ԳԹ, 14.02.2014):

ԻՆՔՆԱԹԵՍՏԱՎՈՐՈՒՄ, գ. Բայց նախապես տանն էլ կարելի է **ինքնաթեստավորում** կատարել (TV մոլ, 26.01.2015):

ԻՆՔՆԱԼԻՔՎԵԼ, բ. Ամեն այցի, բակի դարպասների մոտ կանգնած՝ աչքերիդ մեջ՝ կարոտի **ինքնալիքվող** հանդարտությունը կփնտրեմ (ԳԹ,19.07.2013):

ԻՆՔՆԱԼՈՒԾԱՐՎԵԼ, բ. **Կառույցի լուծարվելը:** ....Եթե հիմնադիրն է որոշում, ապա ցանկացած իրեն հարգող կառույց պետք է **ինքնալուծարվի** (Իրավունք, 21.03.2014):

ԻՆՔՆԱԽՈՍՏՈՒՄ, –Այս հիանալի աշխարհը պետք է լրջորեն ուսումնասիրել,– **ինքնախոստումի** նման հնչում է հնագետի արձագանքը (ԳԹ, 06.09.2013):

ԻՆՔՆԱԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾՈՒԹՅՈՒՆ, գ. .... Հայ իրականության մեջ արձագանքվեց քաղաքական **ինքնակազմակերպվածությամբ՝** ի տես ազգային կուսակցությունների..../ԳԹ, 22.11.2014/:

ԻՆՔՆԱԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՎԵԼ, բ. .... Անչափ անհրաժեշտ նախապայման է կոլեկտիվից չհեռանալու, մշտապես **ինքնակատարելագործվելու** և նորանոր նվաճումներ ապահովելու համար (Ազգ, 24.10.2014):

ԻՆՔՆԱՀԱՍՏԱՏՎԵԼ, բ. Ոչ բոլոր տղանարդկանց մոտ է այդպես, ավելի շատ այն տղամարդկանց են նյարդայնացնում նմանատիպ հարցերը, ովքեր դեռ չեն **ինքնահաստատվել** (TV ալիք, 23.12.2013):

ԻՆՔՆԱՀԱՍՑԵ, Հայ մարդու **ինքնահասցեն** հայ արվեստագետի կերպարի մեջ է (ԳԹ, 04.10.2013):

ԻՆՔՆԱՀԱՐԳԱՆՔ, գ. Լավ սեքսը միշտ առաջացնում էր **ինքնահարգանքի** զգացում (Տն.առ., թ. 1, 2014):

ԻՆՔՆԱՀԵԳՆԱՆՔ, Հավանաբար դա հեղինակի **ինքնահեգնանքն** է. Տղամարդ մյուս կերպարների ֆոնին գուցե դեռ իր չկայացած լինելը (ԳԹ, 01.11.2013):

ԻՆՔՆԱՀՅՈՒՐԱՍԻՐՈՒՄ, գ. **Ինքն իրեն հյուրասիրելը**: Եթե նա կարողանար, ի վիճակի լիներ օգտվել այդ **ինքնահյուրասիրումից**...., ապա Պարույրը այլևս Պարույր չէր լինի (ԼՀ, էջ 112):

ԻՆՔՆԱՀՐԿԻԶՎԵԼ, բ. **Ինքն իրեն այրել:** Ես այն տեսակից չեմ, որ **ինքնահրկիզվեմ** նման անհաջողություններից (Հրապ., 08.04.2014):

ԻՆՔՆԱՄԱՏՈՒՑՎԵԼ, բ. **Ինքն իրեն մատուցել:** Ցանկացած «ԿԳԲ շնիկ» ինքնամատուցվող հրեշ է (Համացանց, 12.02.2014):

ԻՆՔՆԱՆՄԱՆԱԿ, գ. **Ինքն իրեն նման**: Եվ մերթ ցերեկը, մերթ գիշերը տաք ու պաղ ժայռերին գնդվեց, դարձավ երկնքի լուսատուների՝ արևի և լուսնի **ինքնանմանակը** (ԼԽ, ՍԳԾԲ, էջ 181):

ԻՆՔՆԱՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՈՒՄ, գ. «Իսպանիայում նույնպես դասավանդում են եկեղեցու պատմություն առարկան, Իսրայելում կա **ինքնանույնականացման** առարկա ....(ՀՀ, 14.06.2014):

ԻՆՔՆԱՈՉՆՉԱՑՆԵԼ, բ. Բարոյականության շերտերի **ինքնաոչնչացնող** իրականության մեջ Հայաստանը կանգնել է հայաթափության տագնապալի փաստի առաջ (ԳԹ, 07.02. 2014):

ԻՆՔՆԱՊԱՀՊԱՆՈՒՄ, գ..... **Ինքնապահպանման** և վերարտադրման բնազդով թելադրված՝ իշխանությունը միշտ պահպանողական է.... (ԳԹ, 14.03.2014):

ԻՆՔՆԱՊԱՏԱՍԽԱՆԻՉ

ԻՆՔՆԱՊԱՐՏԱԴՐՎԵԼ, բ. Սա այն է, ինչը, ... ասել է թե՝ սեփական անձը դեպի դուրս ուղղորդելու, շրջապատին **ինքնապարտադրվելու** նախաստեղծ խթան (ԳԹ, 14.02. 2014):

ԻՆՔՆԱՍՈՒՅԹ, գ. Սա ո՞վ է ասել, ոչ ոք, ինքն էր իր համար հորինել և հաճախ համոզվել՝ ճիշտ էր **ինքնասույթը** (ԳԹ, 07.02.2014):

ԻՆՔՆԱՍՐՏԱՊՆԴՈՒՄ,գ.

ԻՆՔՆԱՎԹԱՐ, գ. Երևանում վթարների 80-90 տոկոսը կազմում են **ինքնավթարները** (Հայլուր, 30.01.2014):

ԻՆՔՆԱՎՆԱՍՈՒՄ, գ. **Ինքն իրեն վնասելը:** Հիվանդանոցում տուժողը բացատրություն է գրել այն մասին, որ մարմնական վնասվածքը **ինքնավնասման** հետևանքով է (Հրապ., 28.01.2014):

ԻՆՔՆԱՓԻԱՌ, Գ. **Ինքն իրեն ներկայացնելը:** Կամֆուլյաժե բիկինիով պատանյակներն առայսօր մեր անվտանգության հաշվին **ինքնափիառ** են անում (Հրապ.,14.11.2014):

ԻՆՔՆԱՓԼՈՒԶՈՒՄ,գ. Հանրակացարանային շենքի **ինքնափլուզումը** հսկողության տակ էր.... (ՀՀ, 13.02.2014):

ԻՆՖԱՐԿՏԱԶԱՐԿ, գ. Շտապ օգնության սպիտակավոր աշխատակիցները դեպի մեքենայի բաց դուռն են տանում պատգարակի վրա խոտի պես պառկած **ինֆարկտազարկին** (ԼԽ, էջ 20):

ԻՇԽԱՆԱԿԵՆՏՐՈՆ, գ. Հանձնաժողովի նախագահը բացատրեց՝ երկրների սահմանադրություններն ունեն հիմնական 2 ուղղություն՝ կամ լինում են **իշխանակենտրոն**, կամ մարդակենտրոն .... (ՀՀ,08.07.2014):

ԻՇԽԱՆԱՇՈՒՆՉ, գ. Որոշել եմ նորանկախ Հայաստանի Հանրապետության մասին **իշխանաշունչ** գրել (Հրապ., 24.04.2014):

ԻՇԽԱՆԱՎԱՐՈՒՄ, գ. **Իշխանությունը վարելը:** Արկադի Ղուկասյանը .... Սահմանադրության ընդունումից հետո ոչ միայն չերկարաձգեց իր **իշխանավարման** ժամկետը, այլև հայտարարեց, որ երկու անգամից ավելի նախագահ չի լինի (Իրատես, 29.04.2014):

ԻՇԽԱՆԱՏԵՆՉՈՒԹՅՈՒՆ, գ. **Իշխանության ձգտելը:** Բարձրագույն կրթությունը կամ գիտական աստիճանը դեռևս երաշխիք չեն **իշխանատենչության** համար (Համացանց, 12.03.2014):

ԻՇԽԱՆԱՏՈՒՐ, ած. **Իշխանի տված՝ արձակած:** Բնականաբար, բոլոր պատմիչները հնազանդ կատարել են արքայատուր կամ **իշխանատուր** հրամանները.... (ՀՄԵՀ, էջ 338):

ԻՍԱՀԱԿՅԱՆԱՊԱՏՈՒՄ, գ. Դ.Ղազարյանի երգարվեստի գողտրիկ էջն են կազմում երաժշտական **իսահակյանապատումը** հարստացրած երգ-ռոմանսները, որոնք դարձան կոմպոզիտորի այցեքարտերը (ՀՄԵՀ, էջ 380):

ԻՍԼԱՄԱԴԱՎԱՆ, ած. **Իսլամ դավանող**: Բոլորովին վերջերս Եգիպտոսի բարձրաստիճան պաշտոնյաների հետ հանդիպման ժամանակ մի կոնդակ

հրապարակեցինք, որով փաստեցինք, որ հայերի դեմ գործած հանցագործությունը **իսլամադավան** թուրքերը չեն իրականացրել (Իրատես, 07.03.2014):

ԻՍՐԱՅԵԼԱԲՆԱԿ, ած. **Իսրայելում բնակվող: Իսրայելաբնակ** կոմպոզիտոր Նուբար Ասլանյանի «Մենք» կոնցերտը տրոմբոնի և նվագախմբի համար արժանացավ հանդիսատեսի ջերմ ընդունելությանը (Իր., 04.11.2014):

ԻՍՐԱՅԵԼՑԻ, գ. **Իսրայելի քաղաքացի:** Մենակատարը **իսրայելցի** Դենիս Վուլն է (Իր., 04.11.2014):

ԻՐԱԴԱՐՁԱՅԻՆ , ած. .... Բայց որ այցը իրադարձային չէր և այդպես էլ **իրադարձային** չդարձավ, ակնհայտ է (ԳԹ, 20.12.2013):

ԻՐԱԶԵԿՎԱԾՈՒԹՅՈՒՆ, գ. **Տեղեկացվածություն:** Հեղինակը բացարձակապես **իրազեկվածությունից** անդին հարթությունից է (Հրապ., 02.12.2014):

ԻՐԱՎԱԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ, գ. **Իրավական կարգավորում:** Ընդ որում, ժողովուրդների ինքնորոշման իրավունքը, համաձայն միջազգային **իրավակարգավորման**, չի կարող ստորադասվել երկրների տարածքային ամբողջականությանը (Ազգ, 11.04.2014):

ԻՐԱՎԱԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ, գ. Նախագծով առաջարկվում է ներդնել ևս մեկ **իրավակարգավորում**, որ նորամուծություն է, բայց տարբեր երկրներում կիրառվում է (Ժամ., 08.04.2014):

ԻՐԱՎԱՏԻՐՈՒԹՅՈՒՆ, գ. Իսկ,օրինակ, Ռաֆֆի Հովհաննիսյանը.... կշարունակի՝ երդմանը հավատարիմ պաշտպանել Հայաստանի քաղաքացու **իրավատիրությունը**.... (Ազգ, 31.10.2014):

ԻՐԱՎԱՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ....Նախ՝ այդ համակարգի ներդրման մեխանիզմները կմշակվեն և ապա՝ երաշխավորված գների կիրառման **իրավաօրենսդրական** հիմքերը կընդունվեն (ՀՀ, 12.04.2014):

ԻՐԱՐԱՀԱՂՈՐԴ –Շնչող ապրողաց՝ հույժ համբերությու՛ն, //Զի մենակվում են Աստծո ամեն օր.// **Իրարահաղորդ** բարեհարդար հու՛ն// Եվ հարեհասի հավելաշնորհ.... (ԳԹ, 20.12.2013):

ԻՐԱՑՎԵԼԻՈՒԹՅՈՒՆ, գ.Անհրաժեշտության դեպքում ԿԲ-ն կարող է տրամադրել պահանջվող ծավալի **իրացվելիություն** (Հրապ., 18.12.2014):

ԻՐԱՔԱՀԱՅ, գ. **Իրաքում ապրող հայ:** Վերջին շրջանում **իրաքահայերի** մեծ տեղաշարժեր են եղել... (168 ժ., 14.10.2014):

ԻՐԱՔԱՀԱՅՈՒԹՅՈՒՆ, գ. **Իրաքում ապրող հայություն:** ... Ինչ տրամադրություն է տիրում **իրաքահայության** շրջանում.... (168 ժ., 14.10.2014):

Լ

ԼԱԽՏԱԽԱՂԱՑ, գ.**Լախտ խաղացող:** Գոտի խլելը հակառակորդից, ըստ **լախտախաղացի** տրամաբանության, նշանակում է նրանց ուժից ու կռվի հնարավորությունից զրկել, հետևաբար և անխուսափելի պարտության մատնել (ՍՀ, էջ 212):

ԼԱՎԱՇԱԲՈՒՅՐ, գ. **Լավաշի բույրը, հոտը**: ....Նրխշուն մաման թոնրատանը լավաշները թխի–վերջացնի, հատիկ–հատիկ շարի իրար վրա և **լավաշաբույրը** տարածվի թաղով մեկ .... (ԳԹ, 04.10.2013):

ԼԱՐԱԿԱՊ , գ. ....Վարորդներն այստեղ են հագուրդ տալիս իրենց «կայֆերին», ինչպես շամպայնի շշի՝ **լարակապերից** ազատված խցանը.... (ՀՀ, 28.06.2014):

ԼԱՓԱՍԵՂԱՆ, գ. Անհնար է առանց զզվանքի վերաբերվել նրանց, ովքեր **լափասեղանների** առջև նրբախորտիկներ են խփշտում ու «հայրենասիրական» կոչ հղում՝ մի արտագաղթեք (Իրատես, 07.02.2014):

ԼԵԳԻՆՍ, գ. **Տրիկոտ:** 20-ից 50 % զեղչ զուգագուլպաների, կիսագուլպաների և **լեգինսների** ողջ տեսականու համար (Համացանց, 09.12.2014):

ԼԵԶՎԱԴԱՐԱՇՐՋԱՆ, գ. Հենց այս Ատրպատականն է, որ ենթարկվելով բնականոն հնչյունական զարգացումների, արդեն միջինից նոր իրանական **լեզվադարաշրջանին** սկսում է հնչել Abazbajan և հետագայում փոխառնվելով արաբերենում դ հնչյունի բացակայության և j-ի առկայության պայմաններում, դառնում է Adarbayjan (Համացանց, 06.02.2014):

ԼԵԶՎԱԴԱՐՁՎԱԾԱՅԻՆ, ած. Հայ բանավոր ավանդության մեջ, մասնավորապես **լեզվադարձվածային** պատկերավոր բանաձևերում, զգալի տեղ են բռնում մահվան անձնավորված պատկերացումները (ՍՀ, էջ 390):

ԼԵԶՎԱԿԱԶՄԻԿ, ած. Այդ գիտակցությունը ձգվել է մինչև Ստեփանոս Սյունեցու «Արեոպագիտների» **լեզվակազմիկ** թարգմանությունը, մինչև Մխիթարյանների՝

առանձնապես արևմտահայ մեր բանաստեղծության լեզվի դոնոր մոնումենտալ ընկալումը ….(ԳԹ, 12.12.2014):

ԼԵԶՎԱԿԵՐՊ, գ. Պատճառը ոչ միայն նրա անծանոթ **լեզվակերպն** էր, բառի անսովոր ընկալումը,կոտրտված, կարծես անավարտ նախադասությունները …. (ԳԹ, 19.09.2014):

ԼԵԶՎԱՀԱՎԱՏ, գ. ....Բայց Հարությունի գիրքը մի ուրիշ սար է նկարում, մի ուրիշ Հայաստան է նկարում հենց Սահյանի լեզվահողի ու **լեզվահավատի** շերտերի վրա (ԳԹ,18.04.2014):

ԼԵԶՎԱՀՈՂ, գ. Հիմա կարող եմ ասել. «Փառք քո **լեզվահողին** գրող և զինվոր Լևոն, ամեն ինչով սիրելի, որոնված կերպար (ԳԹ, 21.02.2014):

ԼԵԶՎԱՄԱՅՐ, գ. Սակայն չէ՞ որ հունդերը քո, հնագույնդ **լեզվամայր,/** ծնունդ տվին ու փայլեցրին թոթովանքը բյուր ազգաց (ԳԹ, 31.01.2014):

ԼԵԶՎԱՊԱՇՏ, ած. **Լեզուն պաշտող**: Սեյրան Գրիգորյանն այս ուղղությունը բնորոշում է նաև **լեզվապաշտ** եզրույթով (ԳԹ, 28.11.2014):

ԼԵԶՎԱՊԱՏԿԵՐ, գ. **Լեզվական պատկերներ**: ....Ի՞նչ **լեզվապատկերներ** և ոճաբանություն են օգտագործում գրողները հեռավոր և օտար այդ երկրում (ԳԹ, 26.07. 2013):

ԼԵԶՎԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ, գ. **Լեզվի վարժություններ**: Եվ ահա այստեղ, եթե տողեր էին առկայծում, **լեզվավարժություն** կար, եթե մի բան էր սովորեցնում, առաջին հերթին Համո Սահյանի բանաստեղծությունն էր (ԳԹ, 18.04.2014):

ԼԵՂԱԳՈՅԱՑՈՒՄ, գ. **Լեղու գոյացումը:** Ժամանակի ժողովրդական…բժշկությունը թրթնջուկի արմատներից և տերևներից պատրաստված դեղամիջոցներ է կիրառում ….**լեղագոյացման** խթանման համար (Տն. առ., թ. 8, 2014):

ԼԵՂԱԹԹՈՒ, գ. Կարտոֆիլի օսլան, ընդհակառակը, նպաստում է մարսողությանը, որի ազդեցությամբ ակտիվանում է **լեղաթթվի** փոխանակությունը (TV մոլ, 21.07.2014):

ԼԵՌՆԱԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՒՄ, գ. Առաջարկում ենք վերանայել **լեռնաարդյունահանման** ոլորտում նախատեսվող դրույքաչափերի կիրառումը (Ժող., 31.01.2015):

ԼԵՌՆԱԲՈՒԽ, ած. **Լեռներից բխող**: Այդ երգի կենանար, **լեռնաբուխ** «պաղ ու անուշիկ» ջրի նման, մայր գրականության փոքրիկ զավակը՝ հայ մանկագրությունն էլ , սնվելով բանահյուսական ակունքներից և քայլ առ քայլ զորանալով, անցել է դարավոր ճանապարհ .... (ԳԹ, 16.05.2014):

ԼԵՌՆԱԴԱՀՈՒԿՈՒՂԻ, գ. **Լեռներում գտնվող դահուկուղիներ**: Կորեական թերակղզին չունի նաև մանրավազ լողափեր և ալպյան **լեռնադահուկուղիներ** (Ազգ, 14.03.2014):

ԼԵՌՆԱՊԵՏ, գ. **Լեռների պետ**: Իմ Ջիլո լեռ, քաջ **լեռնապետ** // Կորդվաց կապույտ լեռների, //Դու էլ զորեղ լեռնայուն ես // Իմ Հայասա աշխարհի (ԳԹ, 12.12.2014):

ԼԵՌՆԱՍՅՈՒՆ, գ. **Լեռների սյուն**: Տե՛ս ԼԵՌՆԱՊԵՏ-ի օրինակը:

ԼԻԱՆԻՍՏ, գ. **Լիագումար նիստ**: Նոյեմբերին կկայանա պոեզիային նվիրված **լիանիստ** ժողով (ԳԹ, 19.09.2014):

ԼԻԱՐԺԵՔԱՎՈՐՎԵԼ, բ. Թալանում էր նրա վճռականությունը. ոչ հավատը, ոչ էլ վստահությունն էր **լիարժեքավորվում** ապագայի նկատմամբ (ԼԽ, ՍԳԾԲ, էջ 34):

ԼԻՑՔԱՎՈՐԻՉ, գ. Եվրախորհրդարանը հավանություն է տվել ստանդարտացված **լիցքավորիչներ** կիրառելու մասին նախագծին (ՀՀ, 15.03.2014):

ԼՈԳԱԽՑԻԿ, գ.

ԼՈԳԱԿՈՆՔ, գ. **Լողարան:** Տաք ջրով լի փոքրիկ **լոգակոնքի** մեջ սև թեյի թունդ եփուկ լցրեք, այս լոգանքը հոտազերծում և փափկեցնում է ոտնաթաթի մաշկը (TV մոլ, 21.07.2014):

ԼՈԳԱՐԱՆԱԿՈՆՔ, գ. **Լողարան:** Ճիշտ է, նա հենց անարատ կաթ էր լցնում **լոգարանակոնքի** մեջ, ոչ թե այն ջրով էր բացում (TV մոլ, 22.09.2014):

ԼՈՏՈՍԱՅԻՆ, ած. **Ճկուն՝ լոտոսի դիրք ընդունելու ընդունակ:**: Փոխարենը **լոտոսային** ոտքերի տիրուհիների բարեհաջող ամուսնության հավանականությունն ավելի մեծ էր (TV մոլ, 21.04.2014):

ԼՍԱՏԵՍՈՂԱԿԱՆ, ած. **Լսողությանը և տեսողությանը վերաբերող**: Նյու Ջերսիի Թեքեյան մշակութային կենտրոնում վերջերս կայացել է թավջութակահարուհի Էլիզաբեթ Գալֆայանի **լսատեսողական** դասախոսությունն ու համերգը …. (Ազգ, 07.11.2014):

ԼՐԱԳՐՈՂՈՒՀԻ, գ. **Կին լրագրող:** Խեղճ **լրագրողուհին**՝ Լենա Ռոմանովան, ինչ իմանար, որ Ծառուկյանն ինքը մաս է կազմել այն իշխանությանը, որին այդպես դատափետում է (Իր., 14.10.2014):

ԼՐԱԶԱՄԲՅՈՒՂ, գ. **Լուրերի ամբողջությունը**: Մեր լրազամբյուղն սպառվեց (Հայլուր, Աբրահամ Գասպարյան):

ԼՐԱԿԱՀԱՎՈՐՎԵԼ, բ. **Կահավորումը լրացնել:** Պաշտպանության գոտին ամբողջությամբ **լրակահավորվել** է ինժեներական առումով, հենակետերում երկու ճաշարան ենք կառուցել, դիտակետ-կրակակետեր (ՀՁ, 19.02.2015):

ԼՐԱԿԱՌՈՒՑՎԵԼ, բ. **Լրակառուցվում** է Երևանը, վերացվում են թերությունները (ՀՀ, 27.08.2014):

ԼՐԱՂԲՅՈՒՐ,գ. **Լրատվական աղբյուր**: ....Լրատվամիջոցները .... մի այնպիսի պայքար են սկսել հրապարակ նետված վարչապետական թեկնածուների դեմ կամ կողմ, որ սրտխառնուքով այլընտրանքային **լրաղբյուր** ես փնտրում արժանահավատ տեղեկատվություն ստանալու համար և չես գտնում (Ազգ, 14.03.2014):

ԼՐԱՏՎԱԴԱՇՏ, գ. Այն, ինչ մակերեսում է, **լրատվադաշտի** մշտական քննարկումների առարկա է.... (Իրավունք, 21.03.2014):

ԼՐԱՏՎԱՀԱՎԱՔ, գ. ....Դժգոհություն է հայտնվում տեղեկատվական դաշտում զայրույթի և վրեժի ծարավի տրամադրություններ արտահայտող **լրատվահավաքների** կապակցությամբ (Իրավունք, 14.11.2014):

ԼՐԱՏՎԱՇԽԱՐՀ, գ. Ահա և հայոց **լրատվաշխարհում** մի նոր ակնառու հայ է հայտնվել.... (Իրատես, 07.02.2014):

ԼՈՒՍԱԳՈՒՅՆ, գ. **Լույսի գույնը**: Եվ կգա երազի օրը, /Երբ լույսը կունենա ութերորդ գույնը՝ //Այն **լուսագույնը**, որի փայլի տակ/ /Ճշմարտությունը հեքիաթ չի թվա....(ԳԹ, 04.04.2014):

ԼՈՒՍԱԴԻՈԴ, գ. Իսկ հեռակառավարման վահանակը հեռուստացույցին ազդանշաններ է ուղարկում ինֆրակարմիր **լուսադիոդի** օգնությամբ (TV մոլ, 03.03.2014):

ԼՈՒՍԱԸՆԿԱԼԻՉ, գ. Ծխող մարդիկ երկու անգամ ավելի շատ են հիվանդանում. ծխախոտի ծուխը ավելացնում է վնասակար, ազատ ռադիկալների քանակը, որոնք վնասում են **լուսաընկալիչները** (TV մոլ, 17.11.2014):

ԼՈՒՍԱԾՐԱՅԻՆ, ած. Վիրավորներով լցված ուղղաթիռն արդեն երկնքում էր, բաճկոնները հանեցինք, թափահարում ենք, ազդանշան՝ **լուսածրային** գնդակներ ենք արձակում. նկատեց, իջավ (ԼԽ, ՍԳԾԲ, էջ 51):

ԼՈՒՍԱԿԱՐԾՐԱՆԱԼ, բ. Ասենք՝ ատամի կարիեսի կամ դրա բարդությունների բուժումը, այդ թվում՝ պլոմբավորումը **լուսակարծրացող** ստանդարտ պլոմբանյութով, ատամաքարերի մաքրումը…. (ՀՀ, 19.02.2015):

ԼՈՒՍԱՃԵՄՈՒԹՅՈՒՆ, գ. –Անցավորներին՝ հիշատակի դուռ, //**Լուսաճեմության** անսպառ եռանդ ....//Շա՝տ էինք ուզում ապրել անմրմուռ, //Բայց ամեն լավի մահվան հետ մեռանք (ԳԹ, 20.12.2013):

ԼՈՒՍԱՆՑՔԱՅԻՆ, ած. **Երկրորդական, ոչ գլխավոր, ոչ հիմնական:** Նոր արժեքները կարող են իրենց տեղը գտնել ժամանակի ընթացքում, բայց ունենան **լուսանցքային** դրսևորում (Իրավունք, 18.03.2014):

ԼՈՒՍԱՆՑՔԱՅՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Երկրորդական՝ ոչ հիմնական բնույթ:** Կոնգրեսի համար Ծառուկյանի հանձնարարականների բնույթը անընդունելի է , հղի է եռյակի ֆորմատում կոնգրեսի **լուսանցքայնությամբ** (Ժամ., 11.11.2014):

ԼՈՒՍԱՊԱՏՃԵՆԱՅԻՆ, ած. Առանձնահատուկ ուշադրություն ենք դարձնում **լուսապատճենային** եղանակով հրատարակվող գրքերին…. (Ազգ, 21.11.2014):

ԼՈՒՍԱՊԱՏՆԵՇ, գ. Արևի լույսովը ընթացքդ կյանքն էր այս էթնոսի իրական զգացողությունների ատաղձը և ոչ լուսնահարների ու **լուսնապատնեշների** մթամոլ կեցության մրուրը (ԳԹ, 21.03.2014):

ԼՈՒՍԱՑՈՒՅՑԱՅԻՆ, ած. Դրանից ազատվելու լավագույն միջոցը երթևեկը կարգավորելու «չեզոք»՝ **լուսացույցային** համակարգ տեղադրելն է (ՀՀ,18.11.2014):

ԼՈՒՍԱՓՈՐԱԳՐԻՉ, գ. Քաջազը սկսեց աշխատել Երևանի տպարաններից մեկում՝ որպես **լուսափորագրիչ** (Ազգ, 03.10.2014):

ԼՈՒՍՆԱՑՈԼՔ, գ. **Լուսնի ցոլք**: Աստղասերմերը թափվում են // գիշերվա հերկերի մեջ, // իրերի հետ ներքաշվում են // ակոսների խորքերը, //բեղմնավորված պառկում են **//** **լուսնացոլքերի** կողքին // (ԳԹ, 19.12.2014):

Խ

ԽԱԹՎԱԾՔ, Ասում են՝ մահարարի խավարից սուրացող **խաթվածքը** նախ գտնում, խոցում է իր ընտրյալին ճանաչող բոլոր բանաստեղծների սրտերը .... (ԳԹ, 28.02.2014):

ԽԱՂԱԳԻՐՔ, գ. **Գիրքընկալում խաղի միջոցով:** Մաթեմատիկայի….և լեզվի նկատմամբ իմ «սերերի» համակցությունը մի շատ հետաքրքիր երևույթ ստեղծեց իմ **խաղագրքերը** (TV ալիք, 13.04.2015):

ԽԱՂԱԴՐՈՒՅՔ, գ. **Խաղի համար դրված գումար**: Բացառված է **խաղադրույքներ** անելու հնարավորությունը՝ մինչև սահմանված ժամանակը չանցնի (Ժամ., 08.04.2014):

ԽԱՂԱԺԱՄԱՆԱԿ, գ. ....Որոշ դեպքերում ֆուտբոլիստները նախընտրում են տեղափոխվել այլ ակումբ՝ միայն ավելի շատ **խաղաժամանակ** ստանալու համար.... (Իր., 14.01.2014):

ԽԱՂԱՂԱՇԻՆԱԿԱՆ, ած. ....Ամեն ինչ այնքան գեղեցիկ ու լավ էր, որ խաղաղասիրական ու խաղաղաշինական առաջին հիմնարար քայլերը կարելի էր արված համարել .... (Ազգ, 16.05.2014):

ԽԱՂԱՂՕՎԿԻԱՆՈՍՅԱՆ, ած. Նավարկության նախնական նպատակը Իսպանական Ամերիկայի **խաղաղօվկիանոսյան** ափերի վրա հարձակումն էր (TV մոլ, 13.12.2013):

ԽԱՂԱՊԱՅՔԱՐ, գ. Սակայն նա ուշք չի դարձրել, որ **խաղապայքարի** ամբողջ նպատակը գոտիների պաշտպանության և հափշտակման խնդրի մեջ է, որն ունի, իրոք, ծիսապաշտամունքային խոր ենթաշերտեր (ՍՀ, էջ 212):

ԽԱՂԸՆԿԵՐՈՒՀԻ, գ. **Խաղի ընկերուհի:** Ինչ վերաբերում է Դավթի անվան շուրջ պտտվող բամբասանքներին, նրան և սերիալային **խաղընկերուհիներին** վերագրելուն զույգն արդեն իմունիտետ է ձեռք բերել (Համացանց, 31.01.2015):

ԽԱՂ–ՄՐՑՈՒՅԹ, Կոտայքի մարզկենտրոն Հրազդանում տեղի է ունեցել երիտասարդական ինտելեկտուալ **խաղ–մրցույթ**, որին մասնակցել են մարզի տարբեր տարածաշրջանների երիտասարդական թիմերը …. (ՀՀ, 04.11.2014):

ԽԱՂՈՂՈՒՏ, գ. **Որտեղ շատ խաղող է աճում:** ....Ինչպես որ թռչուններն ու կենդանիներն են վայելում **խաղողուտը,** այնպես էլ արդար հավատացյալներն են վայելելու Քրիստոսի խաչելության հետևանքով սպասվելիք երկնային դրախտը (Հ.Պետրոսյան, էջ 62):

ԽԱՅԾԱԿՈՒԼ, ած. **Խայծ կուլ տվող**: **Խայծակուլ** է ու հեշտությամբ ուղղորդվող (Իրատես, 07.02.2014):

ԽԱՆԱԺԱՌԱՆԳ, գ. **Խանի ժառանգ:** ....(ա) ադրբեջանական **խանաժառանգի** մտավոր և բարոյական խեղվածության օրինաչափ հետևանքն է (Իրատես, 07.02.2014):

ԽԱՆՈՒԹ- ՍՐԱՀ, գ. «Ին Սթայլ Մամ.» **խանութ- սրահը** իր բնույթով առաջինն է մեր երկրում (Բ մ,ամս., թ. 5, 2014):

ԽԱՉԱԴԱՇՏ, գ. Նախ աչքի է ընկնում սալի վերնամասի կատարյալ կամարաձևությունը, իսկ **խաչադաշտն** արդեն իրենից ներկայացնում է հենց իրական-ծավալային կամարի

արտապատկերում՝ կազմված երկու սյուներից, երկու խոյակներից և բուն կամարից (ՀՊ, էջ 101):

ԽԱՉՔԱՐԱԳԵՏ

ԽԱՉՔԱՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, գ.

ԽԱՉՔԱՐԱԽՈՒՄԲ, գ. **Խաչքարերի խումբ**: Ռ.Իսրայելյանը **խաչքարախումբը** կառուցել է 1965թ.-ին (Հայլուր, 13.04.2015):

ԽԱՉՔԱՐԱԿԵՐՏՈՒՄ, գ. **Խաչքար կերտելը:** Զգված համամասնություններով տափակ սալը, փաստորեն, ոչ թե տրված էր ի սկզբանե, այլ մշակվեց **խաչքարակերտման** ընթացքում.... (ՀՊ, էջ 88):

ԽԱՉՔԱՐԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Խաչքար շինելը:** Իսկ հեղինակի դրույթն այն մասին, թե երբ 8-րդ դարի առաջին քառորդում արաբները արգելեցին մարդկային պատկերներ քանդակելը, **խաչքարաշինությունը** արգելքի չհանդիպեց, ուղղակի պատմական փաստերի անտեսում է (ՀՊ, էջ 88):

ԽԱՉՔԱՐԱՍԱԼ, գ. **Սալ, որը քանդակազարդելով վերածում են խաչքարի:** ....Հիմնավորապես փոխված են **խաչքարասալի** համամասնությունները. երկարությունը գերազանցում է լայնությանը երեքից չորս անգամ (ՀՊ, էջ 222):

ԽԱՎԻԱՐԱՅԻՆ, ած. Ես չէի ուզենա ամեն ինչ վերագրել **խավիարային** դիվանագիտությանը (Հրապ., 08.11.2014):

ԽԱՐՍԽԱԿԵՏ, գ. Բանաստեղծի գեղարվեստական աշխարհը՝ իբրև բացառիկ միասնական համակարգ ու կառույց, ունի իր հաստատուն **խարսխակետերը՝** իրենց գործող խորհրդանշաններով՝ խավար ու լույս, սև ու սպիտակ, վերև ու ներքև, բարձր ու ցածր, անանց ու անցավոր, պահ ու հավերժություն և այլն (ՀՄԵՀ, էջ 351):

ԽԱՓԱՆԱՐԱՐԱԿԱՆ, ած. Հասան Ջալալը ներկայանում է Փարիզ և Փարիզի հայկական համայնքի որոշ շրջանակների աջակցությամբ նույն օրը, նույն ժամին կազմակերպում է գրքի շնորհանդես: Դա կոչվում է **խափանարարական** աշխատանք (Հրապ., 26.12.2014):

ԽԵՂՃԱՑՎԱԾՈՒԹՅՈՒՆ, գ. Մենք պետք է խեղճացվածությունից դուրս գանք նաև գրականության միջոցով (Հրապ., 12.10.2013):

ԽՄԲԱԳՐԱՍԵՆՅԱԿ, գ. **Խմբագրի սենյակ:** ....**Խմբագրասենյակիս** պատուհանից երևում է Բաղրամյանով վեր ու վար սլացող մեքենաների անվերջ շարանը.... (ԳԹ, 12.12.2014):

ԽՄԲԱԿՑԱԿԻՑ, գ. **Նույն խմբի՝ թիմի անդամ, մասնակից:** Նրա **խմբակցակից** Հրանտ Բագրատյանը, եթե չալարի, մեկ անգամ էլ կարող է թեկնածություն դնել .... (Ազգ, 11.07.2014):

ԽՄՈՒԹՅՈՒՆ, գ. **Խմելը /գինարբուք/:** .... Ինչպե՞ս գրեմ 60–ականների մասին, երբ միասին Ազնավուր ու Ջոնի Հոլիդեյ էինք լսում, Ժակ Բրել ու Ժորժ Բրասանս և անքուն խմությունների գիշերներ լուսացնում.... (ԳԹ, 03.10.2014):

ԽՆԴՐԱՀԱՐՈՒՅՑ, ած. **Խնդրահարույց** հատվածին դնել թարմ, անալի խոզաճարպի շերտեր (Տն.Առ., թ. 7, 2014):

ԽՆԿԱԶՈՒՐԿ, ած. **Առանց խունկի**: Եկեղեցին մոմազուրկ, **խնկազուրկ** և նամազազուրկ եղած որտեղից պիտի ճանաչեր Մուշեղի թոռ Գուվարենց Ավոյին (ՀԲ, էջ 109):

ԽՆՋՈՒՅՔԱՇԱՐ, գ. **Խնջույքների շարք**: Սակայն մինչ այդ «**խնջույքաշարը**» Լուսինեն մեզ պատմեց իր վերջին նորությունների մասին (TV մոլ, 03.02.2014):

ԽՈԶԱԳԱՅԼ, գ. **Խոզագայլի** դոկտրինն աշխարհում հաղթում է (Հրապ., 21.11.2014):

ԽՈՀԱԲՈՒՐԵԼ, բ. **Խոհերով բուրել:** . ... Ու շարունակում է **խոհաբուրել** որպես լեռնակողին բացված ծաղիկ, որը խոստովանանք՝ աղոթք է՝ ինքն իրեն մաքրող.... (ԳԹ, 22.11.2013):

ԽՈՀԱԳԱԼԱՐ,գ. **Խոհերի գալար:** Եվ վերլուծվող մտքի **խոհագալարը** շիկացել է՝ ինչպե՞ս եղավ,այդ ի՞նչ պատահեց, որ թացն ու չորը էսպես հեշտ խառնվեցին իրար.... (ԳԹ, 30.05.2014):

ԽՈՍԵԼԱԺԱՄԱՆԱԿ, գ. **Խոսելու ժամանակը:** Հատուկ փաթեթն ընդամենը 2500 դրամ ամսավճարի դիմաց տրամադրում է 1500 րոպե ներառված ներցանցային **խոսելաժամանակ** դեպի ՀՀ բջջային ցանցեր (Հրապ., 10.12.2014):

ԽՈՍՄՈՒՆՔ, գ. **Խոսքը:** Ասացմունքը /–**խոսմունքը**/ դառնում է տիեզերական, բայց և պարփակվում մարդու մեջ (ԳԹ, 25.10.2013):

ԽՈՐԱՉԱՓՈՒՄ, գ. Եվ ընդդիմություն թե իշխանություն այդ պատկերի **խորաչափումով** պետք է առաջնորդվեն մեկը խոստումներ շռայլելիս, մյուսը՝ խոստումները կատարելիս կամ չկատարելիս (Ազգ, 31.10.2014):

ԽՈՐՔԱՅՆՈՐԵՆ, ած. Խորքային ձևով: Մի վկայություն, ահավասիկ ևս՝ համոզվելու համար, թե իրավամբ որքան է **խորքայնորեն** ասելիքի և պոետական տրամադրության հետ փոխկապակցված Ռուզանի հոգեբանությունը (Հրապ., 21.05.2014):

ԽՍՏԱԽՈՐՀՈՒՐԴ, ած. **Խիստ խորհուրդ ունեցող։** Զարմանալի դեմք էր՝ անընդհատ հոսող ժամանակի մեջ ավելի ու ավելի մոտենալով հայկական **խստախորհուրդ** բնապատկերներին, մեր հողի կնճիռներին. ... (ԳԹ, 04.10.2013)։

ԽՏԱՆՅՈՒԹ, գ. Անհրաժեշտ է Հայաստանում կառուցել ուրանի **խտանյութի** մշակման գործարան (Ազգ, 21.11.2014)։

ԽՏԱՍԱԼԻԿ, գ. Գրքի վերջում **խտասալիկ** կա, որտեղ ձայնագրված է Կարա Մուրզայի քառաձայն պատարագը Քահանայի և սարկավագի բաժիններով.... (Ազգ, 28.03.2014)։

ԽՐԹԻՆԱՊԱՏՈՒՄ, գ. Այս պարագայում վերծանել՝ չի նշանակում **խրթինապատումը** պարզել (ԳԹ,16.05.2014)։

ԽՑԱՓԱԿՎԵԼ, բ. **Խցափակվել** և շահագործումից հանվել է Մամիկոնյանց 35-ից 41 հասցեների միջև ընկած թուջե ջրագիծը (Հրապ., 21.05.2015)։

ԽՈՒԽԱՄՈՒՂ, գ. Խատուտիկի բուսահյութը… ունի **խուխամուղ**, մարսողությունը կանոնավորող, դեղնուկը կարգավորող հատկություն (ՀԴ, թ.1, 2014)։

Ծ

ԾԱԽՍԱՏԱՐ, ած. **Շատ ծախս պահանջող։** Երբ հիվանդությունն արդեն խորացած է լինում, բուժումն ավելի **ծախսատար** է լինում (ՀՀ, 14.06.2014)։

ԾԱԽՍԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ, ած. …. Անհրաժեշտ է առկա ֆինանսական միջոցներն օգտագործել առավել արդյունավետ և **ծախսարդյունավետ** կերպով …. (ՀՀ, 04.11.2014)։

ԾԱԾԿԱԹԱՓՔ, գ. Ահագին ժամանակ հետո, երբ բոլոր **ծածկաթափքերով** մեքենաները անցել էին կամուրջը և շատ էին հեռու, հանկարծ թանձր խավարի միջից լսվեց մորս աղաղակն ու հեծկլտոցը (ԼԽ, ՍԳԾԲ, էջ 189)։

ԾԱԾԿԱԼԻՔ, գ. Մացակը բաց՝ առանց **ծածկալիքի** դուրս եկավ եթեր՝ միկրոֆոնի մեջ գոռաց. «Բոլորին.... բոլորին... բոլորին, ով կա եթերում» (ԼԽ, ՍԳԾԲ, էջ 48)։

ԾԱՂԿԱԽՈՒՐՁ, գ. ... Երբ դերասանի անշնորհք խաղը հարդասենյակում փառաբանում է **ծաղկախուրձը** գրկին հանդիսատեսը՝ դա է անծաղիկ օրվա պատկերը, դա է կյանքը .... (ԳԹ, 22.11.2013)։

ԾԱՂԿԱԾՈՑԻԿ, ած. Երգի նման մի օր քաղաք էր եկել Կողբից, իր հետ սարի բույր էր բերել, **ծաղկածոցիկ** հովեր, անտառների իմաստավոր շռինդ, քարափների օրոր (ԳԹ, 11.10.2013):

ԾԱՂԿԱՄԻՏ, ...Արևալո՛ւյս, հրա՛շ երկնահաս,// ծորա՛, ծորա՛ ու տաքացրու հողը,// մորս կարոտալույս երազները հին՝// հին **ծաղկամիտների,//** ծորա՛ –ծորա՛ ու դարձիր ծորացող երազ.... (ԳԹ, 25.04.2014):

ԾԱՂԿԱՇՂԱՐՇ, ած. Այս արևային երկրում, այս դեղնահուր ու **ծաղկաշղարշ** տարածքում, որտե՞ղ այսքան սև գույն տեսան այդ քոչվորները (ԳԹ, 15.11.2013):

ԾԱՂԿԱՉՈՐ ԼԻՆԵԼ, բ. Երկու ամիս անց եկավ՝ ցմքած, գարնան գլխին՝ միանգամից **ծաղկաչոր եղած** ծառի նման (ՀԲ, էջ 136):

ԾԱՂԿԱՍԱՅԼ, գ. **Ծաղիկներով զարդարված սայլ:** Ավելի քան մեկ տարի առաջ մի խումբ հայ երիտասարդներ ստեղծեցին Ամերիկայի ծաղկասայլի հայկական ընկերակցությունը և առաջին անգամ հայկական **ծաղկասայլով** մասնակցեցին աշխարհահռչակ Վարդերի շքերթին

ԾԱՂԿԵԴՐՈՒՄ, գ. **Ծաղիկ դնելը:** Ս. Սարգսյանը ողջունեց բոլորին, զրուցեց Ստեփանակերտցիների հետ,որից հետո շարժվեցին մասնակցելու **ծաղկեդրման** արարողությանը (Համացանց, 09.05.2014):

ԾԱՂՐԱՆՄԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ, գ. Քվենտին Տարանտինոյի ֆիլմերը վերաիմաստավորեցին հայտնի ժանրերի հիմքերը՝ կարծրատիպերն անբռնազբոս կերպով վերածելով իրենց իսկ **ծաղրանմանակության** (TV մոլ, 02.06.2014):

ԾԱՆԾԱՂԱՇԱՐԺ, ած. ....Բայց երի՛ցս անգալիք է երկիրը, որի// տղամարդը տարվա մեջ մի օր// բարձրանում է Ծիծեռնակաբերդ–// ծիծաղելով ու ծամոն ծամելով, և ծաղկեփունջը **ծանծաղաշարժ** ու ծույլ// ծածանելլով.... (Ազգ, 24.04.2014):

ԾԱՆԾԱՂՈՒՏԱՅԻՆ, ած. **Ծանծաղուտին վերաբերող**: Շատ ձկներ կարող են քայլել հատակին. ծովաքլորները, **ծանծաղուտային** կարթաձկները կրծքային լողակներ ունեն, որոնք նման են մատներով թաթերի (TV մոլ, 13.10.2014):

ԾԱՆՐԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ, գ. Տոհմի տղամարդիկ ու կանայք հանգստությամբ և **ծանրամարտությամբ** հենց եզներ էին, որ կային (ՀՄ, էջ 40):

ԾԱՆՐՈՐԴՈՒՀԻ, գ. **Կին ծանրորդ:** Օրեր առաջ կայացավ Հայաստանի ծանրամարտի կանանց առաջնությունը, 7 քաշային կարգերում առաջնությանը մասնակցեց 30 **ծանրորդուհի** (Իրավունք, 26.02.2014):

ԾԱՌԱՄԱՆ, գ. **Ման ծառի համար**: Մեկ ամսվա ընթացքում կներկվեն հատուկ լուսատուները, որոնք երկկողմանի կտեղադրվեն **ծառամանների** և ծաղկամանների վրա (168 ժ., 28.10.2014):

ԾԱՌՈՒԹՅՈՒՆ, գ. Չի կարողանում ի վերուստ տված **ծառության** պատճառով, թե ուրիշ մի այլ բանի, գլխի չի ընկնում (ՀԲ, էջ 3):

ԾԱՓԱՀԱՐՈՒՍՏ, ած.**Ծափերով հարուստ:** Խոստովանեմ, որ խորհրդային կոմունիստական վարչաձևի վերացումից հետո այդպիսի **ծափահարուստ** ելույթի ներկա չէի եղել (Ազգ, 26.09.2014):

ԾԻԱԾԱՆԱՓԱՅԼ, ած. **Ծիածանի նման փայլ ունեցող:** Մարդիկ որ արտասվում են, թախծոտ են դառնում, սակայն երբ հոգին «արևոտ», է և արցունքներն էլ զուտ ուրախության արցունքներ են, մեր դեմքին ժպիտ է գալիս **ծիածանափայլ** (TV ալիք, 11.11.2013):

ԾԻԾԱՂԱԹԵՐԱՊԵՎՏ, գ. **Ծիծաղի միջոցով բուժող բժիշկ**: **Ծիծաղաթերապևտներն** օգնում են հաղթահարել անձնական խնդիրները (TV մոլ, 02.06.2014):

ԾԻԾԱՂԱԹԵՐԱՊԻԱ, գ. **Ծիծաղաբուժում**: Դրա ուսումնասիրությամբ զբաղվում են ականավոր գիտնականներ, նույնիսկ **ծիծաղաթերապիա** կոչվող բուժման եղանակ գոյություն ունի (TV մոլ., 02.06.2014):

ԾԻՍԱԱՌԱՍՊԵԼԱԿԱՆ, ած. **Ծիսական առասպելին վերաբերող**: Նա այդ **ծիսաառասպելական** իրականությունները բաժանում է երկու շարքի (ՍՀ, էջ 189):

ԾԻՍԱԳՈՐԾՈՒՄ, գ. Վարդավառի օրը միմյանց վրա ջուր ցողելու համաժողովրդական սովորույթը, ահա, մեր կարծիքով վիշապին սպանելուց հետո երկրի վրա առատ ջուր տեղալու առասպելույթի **ծիսագործումն** է (ՀԲ, էջ 166):

ԾԻՍԱԽՈՐՀՐԴԱՆՇԱԿԱՆ, ած. Այնուհետև հիշատակվում է առարկայական հասկացությունների մի շարք, որ իմաստաբանորեն **ծիսախորհրդանշական** մեկ ամբողջություն է կազմում (ՍՀ, էջ 263):

ԾԻՍԱՀԱՎԱՏԱԼԻՔԱՅԻՆ, ած. Նույնքան ուշագրավ է առասպելի ներքին շարժման **ծիսահավատալիքային** խորքը (ՍՀ, էջ 210):

ԾԻՍԱՅՆԱՑՎԵԼ, բ. Տեսանք նաև, որ այդ առասպելը ոչ միայն ավանդվել է վիպական մակարդակով, այլև հնուց ի վեր **ծիսայնացվել** ու խաղարկվել է իբրև սրբազան արարողություն (ՍՀ, էջ 193):

ԾԻՍԱՊԱՇՏԱՄՈՒՆՔԱՅԻՆ, ած. Պատկերի այս նոր բաղադրիչներն արդյունք են քրիստոնեական ըմբռնումների, կապվում են եկեղեցու և եկեղեցական **ծիսապաշտամունքային** սրբությունների հետ (ՍՀ, էջ 25):

ԾԻՍԱՏՈՆԱԿԱՆ, ած. Այսպես, ուրեմն, Վարդավառի **ծիսատոնական** արարողությունները բաղկացած են չորս հիմնական բաղադրիչներից.... (ՀԲ, էջ 160):

ԾԻՍԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ, գ. Հիշյալ տեղանունները վկայում են Տարոնում օձի կամ վիշապի երբեմնի պաշտամունքի և համապատասխան **ծիսարարողությունների** գոյության մասին (ՍՀ, էջ 118):

ԾԻՍԱՐԱՐՔ, գ. Սա վկայում է, որ խոսքը վերաբերում է ոչ թե սովորական, այլ ծիսական հացին, որի ճաշակումը **ծիսարարքին** ենթակա հավատացյալի համար իրոք ունի կարևոր հոգևոր փրկության արժեք (ՀԲ, էջ 359):

ԾԻՐԱՆԱԲՈՒՅՐ, գ. **Ծիրանի բույր ունեցող:** ....Դուդուկի **ծիրանաբույր** ոգին քրքրում–քանդում էր դարդ ու թախծի ջլերը ....(ԳԹ, 30.05.2014):

ԾԻՐԱՆԱՏՈՆ, Յոթ մուսաների տոն, յոթ մրգատոն. մայիսին՝ կեռասի օր, հունիսին՝ թթի օր, հուլիսի մեկին՝ արդեն ամրագրված **ծիրանատոն**, օգոստոսին՝ դեղձի օր, սեպտեմբերին՝ խաղողի, հոկտեմբերին՝ խնձորի, իսկ ձմեռնամուտին՝ ընկույզի օր (ԳԹ, 24.07.2015):

ԾԽԱԽՈՏԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ, գ. **Ծխախոտի արդյունաբերություն:** ....Էապես նվազեցված են ծխելու հետևանքով առաջացող....հիվանդությունների ռիսկերը՝ սկիզբ դնելով համաշխարհային **ծխախոտարդյունաբերության** նոր դարաշրջանի (168 ժ., 11.12.2014):

ԾԽԱԽՈՏԱՓՈՒՆՋ, գ. **Ծխախոտի փունջ**: ....Առանցքային են մաքրազտված **ծխախոտափունջը** ... և եռաշերտ ֆիլտր-ծխափողը (68 ժ., 11.12.2014):

ԾԾԱԿԱԳՈՂ, գ. **Ծծակ գողացողներ:** Վտանգ կա, որ այսօրվա ծծակագողերը վաղն արդեն կարող են հիանալի գործիք դառնալ քիդնեփինգի երեխաներ առևանգող հանցախմբերի ձեռքին (Չ Ի, 28.11.2013):

ԾՈՎԱԽԵՑԳԵՏՆԱՏԻՊ, ած. Մի քանի տարի անց երկրայինների համար այն վերջնականապես վերածվելու է **ծովախեցգետնատիպ** միգամածության (Գիտ. աշխ., թ. 4, էջ 20):

ԾՈՎԱՔԼՈՐ, գ. Շատ ձկներ կարող են քայլել հատակին. **ծովաքլորները,** ծանծաղուտային կարթաձկները կրծքային լողակներ ունեն, որոնք նման են մատներով թաթերի (TV մոլ, 13.10.2014):

ԾՌՎԱԾՈՒԹՅՈՒՆ, գ. **Ծուռ լինելը:** Հիվանդության պատճառն է քթի միջնապատի **ծռվածությունը** (TV ալիք, 03.02.2014):

ԾՐԱԳՐԱՎՈՐՈՂ, գ. **Համակարգչային ծրագրեր ստեղծող:** Նրա շնորհիվ իմ տղան **ծրագրավորող** է (Համացանց, 19.03.2014):

ԾՐԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆ, գ. Արդի արվեստագիտությունն ու թատերագիտությունը կարծես տակավին մնում են կապանքների և **ծրարվածության** շրջագծերում....(ԳԹ, 02.05.2014):

ԾՓԱԼԱՐ, Ու ինձ թվում էր՝//Սև պուտիկներով // Քո կարմիր շորն էր // Արտի **ծփալար**// Պարանին փռած (ԳԹ, 12.12.2014):

Կ

ԿԱԶԻՆՈՅԱՏԵՐ, գ. **Խաղատան տեր:** Դուք իբրև երդվյալ ,, խաղամոլ,,-ի հեղինակ չեք համեմատվի մեր օրերի **կազինոյատեր** իշխանավորների հետ (Հրապ., 06.11.2013):

ԿԱԶՄԱՆԿԱՐ, գ. **Կազմի վրայի նկարը: Կազմանկարում** Սարյանը պատկերել է մի հայ գեղջկուհու՝ կանգնած բարձունքի վրա, իլիկը ձեռքին (ՀՄԵՀ, էջ 423):

ԿԱԶՄԱՔԱՆԴԵԼ, բ. ….Հ.Էդոյանը, Արտեմ Հարությունյանը, Դավիթ Հովհաննեսը, փորձելով **կազմաքանդե**լ գրականության կարծրացած ավանդական կաղապարները և միտվելով նորարարությանը, հայացքներն ուղղեցին դեպի այլ մշակույթ (ԳԹ, 28.11.2014):

ԿԱԶՄԱՔԱՆԴՎԵԼ , բ. **Կազմալուծվել, դադարել գոյություն ունենալուց**: Չնայած Արևմուտք–Ռուսաստան լարվածությանը՝ ԵԱՀԿ Մինսկի խումբը չի **կազմաքանդվում** և շարունակվում է դարաբաղյան հակամարտության կարգավորման շրջանակներում իր խաղաղարար գործունեությունը (ՀՀ, 31.07.2014):

ԿԱԹՆԱՄՈՄԱՅԻՆ, ած. ….Աճեցնում են 1,5 մլն տոննա ցորեն և զուգահեռաբար մոտ 2 մլն տոննա եգիպտացորենի հատիկ ու 4մլն տոննա **կաթնամոմային կանաչ** զանգված (Ազգ, 31.10.2014):

ԿԱԼԱՆԱԴՐՎԵԼ, բ. **Կալանքի տակ դրվել, արգելափակել բանկային բոլոր գործողությունները:** Շվեյցարիայում **կալանադրվել** են Բերեզովսկու հաշիվները (Համացանց):

ԿԱԼԱՆԴԱԿԱՊԵԼ, բ. **Կալանդակապողն** եմ և՛ բանտարկյալների, և՛ բանտապետերի .... (ԳԹ, 04.07.2014):

ԿԱԽԻԿԱՁԵՎ, ած. **Կախիկի ձև ունեցող:** Հայտնաբերվել է նաև ուղղանկյունաձև սարդիոնե **կախիկաձև** ուլունք.... (ՀՄԵՀ, էջ 224):

ԿԱԽԼԵԶՈՒ, ած. …. Մռութներն ավելի կարճ էին, բայց՝ հաստ, արագ վազքին՝ հինգ շիթ գոլորշի էր պարբերաբար արտամղվում նրանց **կախլեզու** երախներից…. (ԳԹ, 07.11.2014):

ԿԱՄԱՐԱՆՑՈՒՄ, գ. **Դալան:** Երևանի քաղաքապետ Տ.Մարգարյանի հրավերով մայրաքաղաքի **կամարանցումների** և բակային տարածքների նկարազարդման 2013 թ. Ծրագրին մասնակցած նկարիչներն, ուսանողներն ու աշակերտները հյուրընկալվել էին քաղաքապետարանում .... (ՀՀ, 21.12.2013):

ԿԱՄԱՐՏԱՀԱՅՏՈՒՄ, գ. **Կամք արտահայտելը**: ....Որևէ երկրում ազատ **կամարտահայտում** լինել չի կարող, երբ ուրիշ երկրի զորք է կանգնած (Իրատես, 14.03.2014):

ԿԱՄՈՒՖՈՒԼՅԱԺԱՅԻՆ, ած. **Ձևական:** Որքանո՞վ էր տեղին զինվորական հագուստով դասալիքների այդ **կամուֆլյաժային** հանդեսը (Ժող., 17. 10.2013):

ԿԱՅԱՆԱՏԵՂԻ, գ.**Կանգառ:** Քաղաքային տրանսպորտի **կայանատեղիները** հնարավոր չէ անել այնքան, որքան պետք է (Ժամ., 06.11.2013):

ԿԱՅԱՐԱՆԱՅԱՆՑ, գ. **Կայարանների ցանց:** Մետրոպոլիտենը միայն առկա **կայարանացանցի** շահագործումը չէ, պիտի կայարանային ցանցն ընդլայնվի (Հրապ., 24.12.2014):

ԿԱՅԱՑԱԾՈՒԹՅՈՒՆ, գ. **Կայանալը:** Վերջերս շատ ենք հպարտանում մեր բանակի **կայացածությամբ** (ՀՁ, 06.02.2015):

ԿԱՅԱՑՎԱԾՈՒԹՅՈՒՆ, գ. **Կայացված լինելը**։

....Այժմ հասարակական քննարկումներում բյուջեն վաղուց արդեն պարզապես դուրս է մնացել, ինչը համակարգի **կայացվածության** մասին է վկայում (ՀՀ, 03.12.2013)։

ԿԱՅՍԵՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, գ. Ճակատագիրը նրա հանդեպ անողոք գտնվեց, և Ռուբեն Սարգսյանը անցավ **կայսերապետության** ստալինյան ռեժիմի ահասարսուռ բոլոր սանդղակներով.... (ԳԹ,25.10.2013)։

ԿԱՅՔԷՋ, գ. ...Թերթերը գրում են՝ վա՛տ է, հեռուստաէկրանից, **կայքէջերից** գուժում են՝ վա՛տ է, ժողովուրդը դժգոհում է՝ վա՛տ է (ԳԹ, 06.09.2013)։

ԿԱՆԱՉԱՄՈՒԽՐԱԳՈՒՅՆ, ած. **Մոխրագույնի և կանաչի խառնուրդ։** Նռնենու բունը և ճյուղերը դարչնագորշագույն են, մատաղ ընձյուղները՝ **կանաչամոխրագույն,** փշոտ (TV մոլ, 21.04.2014)։

ԿԱՆԱՉՈՏՎԵԼ, բ. **Կանաչով պատվել**։Կրկված, բանջարից **կանաչոտված** ու սևոտված մատներով ծերացած ձեռքը գոգնոցի մի ծայրով սրբում է ու աչքերին հովանի անում .... (ԳԹ, 14.11.2014)։

ԿԱՆԳԱՌԱԳՈՏԻ, գ. Տե՛ս ԳԾԱՆՇՈՒՄ-ի օրինակը։

ԿԱՆԳԱՌԱՆՇԱՆ , գ. **Կանգառի համար արված նշաններ**; Ոչ ավտոմեքենայի ուրվագծով **կանգառանշանները**, ոչ էլ կանգառները սահմանազատող ռետինե բարձիկները այնքան ազդեցիկ չեն, որքան գծանշումները (ՀՀ, 18.11.2014)։

ԿԱՆԳԱՌԱՏԱՐԱԾՔ, գ . **Կանգառի համար հատկացված տարածք**։ Խոսքը **կանգառատարածքի** սահմանների խախտման մասին է (ՀՀ, 18.11.2014)։

ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ, ած, **Կանխարգելող։** ....«Եթե համապատասխան **կանխարգելիչ** միջոցառումներ չձեռնարկվեն, պրիոնային հիվանդությունները կդառնան ամենատարածված վարակը աշխարհում (ՀՀ, 17.01.2013)։

ԿԱՆԽԻԿԱՑՆԵԼ, բ. **Դրամը կանխիկացնելը**։ ՄոբիԴրամի հաճախորդները հնարավորություն ունեն նաև **կանխիկացնելու** իրենց հաշվին եղած կամ փոխանցված գումարը (Ազգ, 27.06.2014)։

ԿԱՆՉԱԽԱՂ, գ. Նա իր ածուն է, իր սարերի **կանչախաղը** (ԳԹ, 18.04.2014)։

ԿԱՇԱԿԵՐՊ, ած. Տե՛ս ԿԱՆԱՉԱՄՈՒԽՐԱԳՈՒՅՆ-ի օրինակը։

ԿԱՇԵԹԵԼ, ած. **Կաշվի թելերից պատրաստված**: Գալիս եմ ոտաբոբիկ, անձրևաշիթի խշշոցը ծակ տրեխներիս **կաշեթել** հանգույցներում, գլխաբաց, չձևավորված դիմագծերով, խակ, ինչպես հուլիսի մասուրը (ԳԹ, 06.09.2013):

ԿԱՊՏԱՁՄՈՒՌՍ, ած. **Կապույտ զմուռսով պատած,կապույտ զմուռսի գույն ունեցող**: Ձույլ որմերի **/կապտազմուռս** խորշերից// ցած են սահում/ շողյակները խավարի.... (ԳԹ, 22.11.2013):

ԿԱՊՏԱԹԵՎ, ած. **Կապույտ թևեր ունեցող**: Նրանք ծարավից խելակորույս, **կապտաթև** ճանճերի պարսից հալածված՝ մեզ էին նայում և վրնջում (ԼԽ, ՍԳԾԲ, էջ 146):

ԿԱՊՏԱԿՈՂ, ած. **Կապույտ կող ունեցող**: Հայաստան,// լեռների ամուր կապուկը ձեռքիդ,// ցրտից **կապտակող** օդի մեջ համառ// շարժվում ես առաջ, (ԳԹ, 05.09.2014):

ԿԱՊՏԱՆՌՆԱԳՈՒՅՆ, ած. Իրենց անմեղությունն ապացուցելու համար **կապտանռնագույնները** պատրաստ են հետաքննող մարմնին տրամադրելու անհրաժեշտ բոլոր ֆինանսական փաստաթղթերը.... (Իրատես, 28.03.2014):

ԿԱՊՏԵՐԿԻՆՔ, ած. **Կապույտ երկինք ունեցող**: Ծագող արևի ճառագայթները ընկել էին **կապտերկինք** բնության բարձունքներին, որպես ոսկերանգ բծեր, իսկ թարմ ու զովաշունչ առավոտը իր գորշ-կանաչ մշուշն էր փռել հովտում (ՄՍ, էջ 173):

ԿԱՌՈՒՑԱՇԱՐ, գ. **Կառույցների շարք**: ....Արվեստի հետ կապը խզված է, չնայած **կառուցաշարի** հակառակ երեսի՝ պողոտայի կողմից չերևացող մի հատված վերածված է ցուցասրահի .... (Ազգ, 20.06.2014):

ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅՆԱՑՎԵԼ, բ. Բուրկհալթերը տարածարջան էր այցելել ղարաբաղյան խնդրի համատեքստում «կառուցվածքային**/ կառուցվածքայնացված** բանակցությունների նոր փուլի» առաջարկով (Ազգ, 06.06.2014):

ԿԱՏԱՐԱԾԱԲԱՆԱԿԱՆ, ած. Հայ **կատարածաբանական** առասպելների հնագույն նմուշները կապված են նոր տարվա ծիսական արարողություններին և դրանց միջոցով աշխարհի կարգուկանոնի ապահովմանը (ՍՀ, էջ 447):

ԿԱՐԱՍԱՅԻՆ, ած. **Կարասի մեջ**: Դամբարաններից մեկում **կարասային** թաղում է՝ շան կմախքով, երկուսում՝ մարդու կողքին թաղված է մեկ կամ երկու շուն, իսկ մեկում՝ - մարդու գլխի տակ թաղված է շան գլուխ (ՍՀ, էջ 424):

ԿԱՐԳԱՎԻՃԱԿԱՅԻՆ, ած. Միայն շատ միամիտ մարդիկ կարող էին մտածել, որ ես ոսկե կոճակներով ւինսը լուրջ **կարգավիճակային** խորհրդանիշ եմ համարում (TV ալիք, 29..09.2014):

ԿԱՐԳՈՒՕՐԵՆՔ, գ. **Կարգ և օրենք**: Արկածախնդրությունը մի կողմ, բայց ընտանեկան դրվածքի **կարգուօրենքով** մեծացավ. ինքն էլ, քույրերն էլ տատից կարել, գործել սովորեցին (TV մոլ, 15.09.2014):

ԿԱՐԴԻՈՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ, գ. Տարատեսակ **կարդիովարժություններից** գերադասում եմ ծանրությունը (TV մոլ, 19.05.2014):

ԿԱՐՃԱԹԵՎՈՒԹՅՈՒՆ, գ. **Կարճաթև լինելը**: Մի քանի բան՝ գիշերանոցի **կարճաթևությունից** դուրս մնացած ուսերը, ստինքների կլորը, մարմնից եկող անկողնու բուրմունքը միանգամից, միաժամանակ հասու դարձան ինձ (ԼԽ, ՍԳԾԲ, էջ 9):

ԿԱՐՃԱԺԱՄ, ած. **Կարճատև:** Հասարակական ցանկացած՝ երկարատև կամ **կարճաժամ** թմբիրից, քնից, անտարբերությունից կամ փակուղի մտնելուց հետո մենք նորից վերադառնում ենք առասպելին .... (ԳԹ,12.09.2014):

ԿԱՐՃԱՌԱՋ, մկբ. Եվ ոտքով, քարերի մեջ խճճված արահետով, **կարճառաջ** բարձրանում էր Քարի գլուխը (ՄՍ, էջ 65):

ԿԱՐՄՐԱՄԵԽԱԿԱՎՈՒՆ, ած. **Կարմրավուն**: **Կարմրամեխակավուն** քարից կերտված երկու զինվորները և քայլող բրոնզե ձիերը տաճարի մուտքի գլխին են դրված (ՄՍ, էջ 174):

ԿԱՐՄՐԱՇԵՋ, ած. **Կարմրած:** Բայց հիմա Քոթոն չորեքթաթ նստած, գլուխն առջևի թաթերին հենած իր **կարմրաշեջ** աչքերով անքթիթ նայում է երեխային (ԳԹ,04.10.2013):

ԿԱՐՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. Արգամը… Գինեսի գրքում է հայտնվել համաժամանակյա երկու բուհերում ստացիոնար սովորելու յուր ինտելեկտուալ **կարողականության** շնորհիվ (Հրապ., 06.11.201):

ԿԱՐՈՂՈՒՆԱԿ, ած. **Կայացած:** ....Արդեն **կարողունակ** թուրքական բիզնեսը լայնորեն թափանցեց սնանկացած ու անմրցունակ Աջարիա (Ազգ, 16.05.2014):

ԿԱՐՈՏԱԼՈՒՅՍ, ած.**Կարոտալի և լուսավոր**: ....Արևալո՛ւյս, հրա՛շք երկնահաս,// ծորա՛, ծորա՛ ու տաքացրու հողը, //մորս **կարոտալույս** երազները հին՝ //հին ծաղկամիտների,// ծորա՛–ծորա՛ ու դարձիր ծորացող երազ....(ԳԹ, 25.04.2014):

ԿԱՐՈՏԱՏԱՐԱՓ, գ. **Կարոտի տարափ**: Նամակ չէր, իսկական **կարոտատարափ՝** հասցեագրված Հայաստանին, Երևանին, սիրելիներին (ԱԶ, էջ 461):

ԿԱՑՆԱԾԻՆ, ած. **Ի ծնե մարդասպան**: Ավաղ, այս ճշմարտությունն առայժմ անհամատեղելի է **կացնածինների** կազմախոսությանը (ԳԹ, 12.09.2014):

ԿԱՑՆԱԿԵՐՊ, ած. **Սպանող՝ կատարող՝ ոչնչացնող**: Քանի դեռ շարունակվում է պետությունների անտարբերությունը փոքր ժողովուրդների ողբերգությունների հանդեպ, երկրագնդի ցանկացած կետում կարող է բարձրանալ ցեղասպանության **կացնակերպ** դեմքը (ԳԹ, 05.09.2014):

ԿԱՑՈՒԹԱՁԵՎԱՅԻՆ, ած. ....Բոլոր սոցիալ–քաղաքական ցնցումները տեղային կղզիացած շարժեր չեն, այլ՝ հասարակակարգային, **կացութաձևային** զարգացումների անդրադարձներ (ԳԹ, 21.03.2014):

ԿԱՔԱՎԱՆԻՇ, գ. Գրառված պարերի նիշերը կոչվում են **կաքավանիշեր** (Ազգ, 06.06.2014):

ԿԵՂԵՎԱՊԱՏՅԱՆ, գ. **Կեղևի պատյանը:** Չիակասկի սերմերը հավաքելուց հետո ազատում են **կեղևապատյանից**, որից հետո 5 սմ շերտով փռում են հարթակների վրա (Տն առ., թ. 18.2014):

ԿԵՂԾԱՐՎԵՍՏ, գ.**Կեղծ արվեստ:** Էսօրվա Հայաստանում **կեղծարվեստից** բացի ոչինչ չի ստեղծվի (Հրապ., 06.11.2013):

ԿԵՂՏԱՀԵՏՔ, գ. **Կեղտի հետք:** Թունելի շինարարության ընթացքում յուղոտ արձանն իր վրա կրեց փոշին ու կիզիչ արևի տակ վերածվեց խոշոր **կեղտահետքերի** տեսքով կեղևի (Հրապ., 04.11.2014) :

ԿԵՆԱՑԱԽԵՂԴ ԱՆԵԼ, բ. **Շատ կենացներով ծանրաբեռնել:** Որո՞նք են հիմնական բաժակաճառերը, որ պարտադիր ներկայացնում եք, կա՞ն առիթներ, երբ ձեզ ստիպում են **կենացախեղդ** անել հյուրերին (TV ալիք, 01.12.2014):

ԿԵՆԳՈՒՐՈՒ -ՊԱՅՈՒՍԱԿ, Տե՛ս ՉՈՉԱՇՈՐ-ի օրինակը:

ԿԵՆԴԱՆԱՍԵՐ, գ. Տե՛ս ԱՐՀԵՍՏԱԾԻՆ-ի օրինակը:

ԿԵՆՍԱԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ, գ. **Կյանքի անվտանգություն**:.... ԵՎ «Գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների գործածության մասին», **կենսաանվտանգություն** .... օրինագծերի փաթեթը, որոնք ստացան դրական եզրակացություն (ՀՀ, 01.02.2014):

ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Կյանքի բազմազանություն:**Շրջակա միջավայրի պահպանության առումով մարդկության առաջ ծառացած գլոբալ խնդիրներից են կլիմայի փոփոխությունները**, կենսաբազմազանության** կորուստը և հողերի դեգրադացումը (ՀՀ, 05.06.2014):

ԿԵՆՍԱԳԻԾ, գ. **Ապրելու ուղեգիծ**: Տոհմի հիշողությունը,թեկուզ ենթագիտակցության մակարդակում, երբեմն դառնում է որոշիչ **կենսագիծ** (ԳԹ, 07.03.2014):

ԿԵՆՍԱԴՐՈՒՅԹ, գ. **Կենսական դրույթ:** Ունեմ մի **կենսադրույթ**, որին հավատարիմ եմ մնացել միշտ. ազգային շահն ավելի վեր է, քան անձնականն ու կուսակցականը (ՍՍ, էջ 39):

ԿԵՆՍԱԵԹԵՐ, գ. **Աուրա:** Իր կենսաեթերն ունի Սուրեն Սարգսյանը, այսպես կոչված՝աուրան (ՍՍ, էջ 5):

ԿԵՆՍԱԼՈԿԱՑԻԱ, գ. Մեր զրուցակիցն է **կենսալոկացիայի** օպերատորների ասոցիացիայի ղեկավար …Ա. Մկրտչյանը (Տն. Առ., թ.16, 2014):

ԿԵՆՍԱԿԵՆՏՐՈՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Կյանքի կենտրոն լինելը**: Տիեզերքի **կենսակենտրոնության** կրողը Միերն է, ու նա անմահ է, որովհետև վախճան չունի ո՛չ տիեզերական, ո՛չ մարդկային սկիզբը (ԳԹ, 06.06.2014):

ԿԵՆՍԱԿՏԻՎ, ած. **Կենսունակ**: Արմեն Մուրադյանը և Վերոնիկա Սկվորցովան ստորագրեցին դեղերի շրջանառության, բժշկական սարքավորումների և **կենսակտիվ** հավելումների շարունակական բժշկական զարգացման, ինչպես նաև առողջապահական համակարգերի միջև տեղեկատվության ապահովման, էլեկտրոնային առողջապահության և հեռաբժշկության ոլորտներում փոխըմբռնման 3 հուշագիր (Հրապ, 06.11.2014):

ԿԵՆՍԱՀԱՂՈՐԴԻՉ /էքստրասենս/

ԿԵՆՍԱՀԱՄԱՐԺԵՔՈՒԹՅՈՒՆ, գ. Ուշադրության արժանացավ հատկապես դեղերի **կենսահամարժեքության** հետազոտությունների իրականացման հայտը (ՀՀ, 19.02.2015):

ԿԵՆՍԱՀԱՅԵՑՈՂՈՒԹՅՈՒՆ, գ. **Կենսաբնկալում, հայացքը կյանքի նկատմամբ:** Թումանյանի բանաստեղծական **կենսահայեցողությունն** անդադար անցումների մեջ է՝ բացարձակից դեպի մասնավորությունները, մասնավորություններից դեպի բացարձակը (ՀՄԵՀ, էջ 351):

ԿԵՆՍԱՌՃ, գ. **Կյանքի, ապրելու ոճը:** Սակայն իրենք չինացիները շատ հաճախ տեսնում են մի շարք խնդիրներ՝ կապված երկրում օտարերկրացիների ներկայության հետ: Դա գլխավորապես **կենսառճն** է (Իրատես, 12.12.2014):

ԿԵՆՍԱՉԱՓԱԿԱՆ, գ. Տ. Սարգսյանը առաջին այցելուներից է եղել և տեղում ստացել է **կենսաչափական** անձնագիր ու նույնականացման քար (Ժամ., 08.04.2014):

ԿԵՆՍԱՊԱՏՐԱՍՏՈՒԿ, գ. ...Վերոնշյալ կառույցների արտադրության **կենսապատրաստուկները** գրանցվում են գյուղատնտեսության նախարարության հաստատած ցուցակում .... (Իրատես, 07.02.2014):

ԿԵՆՍԱՌԵԶՈՆԱՆՍԱՅԻՆ, ած. Տարեցտարի ավելանում է այն մարդկանց թիվը, ովքեր անցնում են **կենսառեզոնանսային** ախտորոշում (Տն Առ., թ.16, 2014):

ԿԵՆՍԱՌԻԹՄ, գ. **Կյանքի ռիթմը:** Լ.Անթառանյանի **կենսառիթմը** ժամանակի դավով օրորվող անմեղության պերճ օրորոցն է՝ թռչունների կտուցներից կախված.... (ԳԹ, 22.11.2013):

ԿԵՆՍՈԼՈՐՏ, գ. **Կենսական նշանակություն ունեցող ոլորտ**: .... Այն մշակութային, զրնգուն գրական **կենսոլորտն** էին ստեղծում, որի օդը շնչելով էլ ձևավորվում էինք մենք՝ մեր ազգային և ստեղծագործական դիմագիծը, մեր մարդկային տեսակը (ԳԹ, 18.04.2014):

ԿԵՆՑԱՂԱՎԱՐՈՒՄ, գ. **Կենցաղ վարելը:** Հիշում էր նաև, թե քանի–քանի անգամ էր Անուշի հետ այդ զուլալ ջրով ցորեն ու բուրդ լվացել և ամեն անգամ **կենցաղավարման** մի նորություն հայտնագործել… . (ԳԹ, 07.11.2014):

ԿԵՍԱՄՍՅԱ, ած. Ես 15 օրը մեկ գնում եմ բժշկի նշանակած երկու տեսակի դեղահաբերի **կեսամսյա** պարտադիր պաշարը (168 ժ., 11.12.2014):

ԿԵՍՀԵԿՏԱՐԱՆՈՑ, ած. Սքառլեթի երկհարկանի նոր տունը գտնվում է կեսհեկտարանոց հողամասում (TV մոլ, 19.05.2014):

ԿԵՏԱԶԱՐԴՈՒՄ, գ. **Կետերով արված զարդարանքով զարդարումը:** Վզիկի հիմքում վեց շարք հորիզոնական, փորագիծ գոտիներ են, որոնց ներքո **կետազարդարման,** փորագրման և փայլեցման տեխնիկայով պատկերված են... եռանկյունիներ... (ՀՄԵՀ, էջ 225):

ԿԵՐԱԿՐԱՏԱՇՏ, գ. Համոզված ենք, որ համակարգային փոփոխությունների համար պայքարը չի վերածվի **կերակրատաշտի** մոտ նոր պաշտոն ստանալու պայքարի (Ժամ., 08.04.2014):

ԿԵՐԱԿՐԱՏԱՇՏԱԿ, գ. **Կերակրի տաշտակ:** Եվ անտեր մնացածները, գլուխները մի պահ կտրելով **կերակրատաշտակից,** ասում են՝ Ամերիկան միանգամից չի կառուցվել (ԳԹ, 13.09.2013):

ԿԵՐՊԱՐԱՍՏԵՂԾՈՒՄ, գ. **Կերպար ստեղծելը:** Առաջին հայացքից երկու տարբեր մասնագիտությունները շատ ընդհանրություններ ունեն, և դրանցից ամենակարևորը, կարծում եմ, **կերպարաստեղծումն** է (TV ալիք, 29.09.2014):

ԿԻԲԵՌԳՐՈՀ, Իսրայելն աշխարհում ամենից շատ է ենթարկվում **կիբեռգրոհների՝** տարեկան մոտ 100 հազար գրոհ (Ազգ, 16.05.2014):

ԿԻԲԵՌՊԱՇՏՊԱՆՎԱԾՈՒԹՅՈՒՆ, գ. .... Երկրների **կիբեռպաշտպանվածության** աստիճանը նշող....կազմակերպությունը առավել պաշտպանված երկրներ է համարում Իսրայելը, Շվեդիան և Լեհաստանը (Ազգ, 16.05.2014):

ԿԻԲԵՌՊԱՏԵՐԱԶՄ,գ. **Կիբեռպատերազմը** արդեն իսկ դարձել է պատերազմների բաղկացուցիչ մասը (Ազգ, 16.05.2014):

ԿԻԲԵՐԱՀԱԲԵԿԻՉ, գ. Այդ նույն ժամանակ **կիբերահաբեկիչը** ճապոնական լրատվամիջոցներին հաղորդագրություններ էր ուղարկել, որոնցում նրանց առաջարկել էր իր հետ խաղ խաղալ (TV մոլ, 16.02.2015):

ԿԻԲԵՐՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ/ՀԱՔԵՐՈՒԹՅՈՒՆ, գ. Քրեական օրենսգրքով արդեն իսկ սահմանված է արտահոսքի հետ կապված պատասխանատվություն **կիբերհանցագործությունների** դեպքում, եթե դա եղել է հաքերության հետևանքով (168 ժ., 20.11.2014):

ԿԻԲՈՒՑ, Բանակը թող իր գործն անի, բայց պետք է ստեղծվեն **կիբուցներ,** որոնք պետության հովանավորությամբ շատ ավելի համարձակ քայլերի կգնան (ՀՀ, 31.07.2014):

ԿԻԶԱԿԵՏՎԵԼ, բ. Այդպիսի աչքերում հեռավոր առարկաների պատկերները **կիզակետվում են** ոչ թե ցանցաթաղանթի վրա, այլ նրա առջևում (Տն. առ., թ. 6, 2014):

ԿԻՆԵՏՈԳՐԱՖԻԱ (շարժում,գրաֆիկա՝ գրառում), **գ. Պարանմուշների գրառում**: .... Վահագն Պողոսյանը, որ պատրաստել է «Կարին», «Հայրիկ Մուրադյան » կայքերը,

հանձն է առնում **կինետոգրաֆիայի**՝ պարանմուշների գրառման կայքը նույնպես պատրաստել (Ազգ , 06.06.2014):

ԿԻՆՈԱԿԱԴԵՄԻԱ, գ. **Կինոյի ակադեմիա:** Ամերիկյան **կինոակադեմիայի** մրցանակին նա առաջադրվել է երկու անգամ (TV մոլ, 09.03.2015):

ԿԻՆՈԱԿԱԴԵՄԻԿՈՍ, գ. Մեծն Կատրին Դենյովին **կինոակադեմիկոսները** նկատել են ընդամենը մեկ անգամ՝ 1992-ին, երբ նա ներկայացրեց «Հնդկաչին» ֆիլմը (TV մոլ, 09.03.2015):

ԿԻՆՈԱՅՑԵՔԱՐՏ, գ. Նրա կերպարում առեղծված չկա, իսկ զինաթափ անող ժպիտը հասցրել է տարիների ընթացքում նրա **կինոայցեքարտը** դառնալ (TV մոլ, 23.12.2013):

ԿԻՆՈԱՆՈՒՆ, գ. Բեկնազարյանի, Փելեշյանի ու Փարաջանովի նման **կինոանուններ** տված ազգի սերունդները այսօր օբյեկտիվ, երբեմն էլ չարդարացված պատճառներով դժվարանում են լավ կինո էկրան բարձրացնել, բայց ամեն տարի փառատոնային այս շքերթի նկատմամբ իրենց բացառիկ հետաքրքրությամբ փաստում են, որ գործ ունենք ոչ թե փոշիացած գենետիկ հիշողության, այլ հստակ կինոզգացողության հետ (Երևան 06.2012):

ԿԻՆՈԱՇԽԱՏԱՆՔ, գ. **Կինոյին վերաբերող աշխատանք:** Օսկարի արարողության նախօրեին Հոլիվուդում հայտարարվեցին Ոսկե մորի մրցանակի դափնեկիրներին՝ ամենաանհաջող **կինոաշխատանքների** համար (TVալիք, 10.03.2014):

ԿԻՆՈԱՍՏՎԱԾՈՒՀԻ, գ. **Մեծ սեր վայելող կինոդերասանուհի**: Ժողովրդի ծոցից դուրս եկած հասարակ կնոջ կերպարները Սոֆի Լորենին դարձրին համաշխարհային մասշտաբի **կինոաստվածուհի** (TV մոլ, 06.10.2014):

ԿԻՆՈԱՐՏԱԴՐԱՆՔ, գ. ....Միշտ էլ **կինոարտադրանքում** կան ամենատարբեր մակարդակի գործեր (Իր., 28.10.2014):

ԿԻՆՈԴԵԲՅՈՒՏ, գ. **Առաջնախաղ կինոյում**: Տղան նկարահանվելու փորձ դեռ չունի և, հաշվի առնելով, որ նրա դերը միակ խաղային դերն է, Սեթիին պատասխանատու և մեծ **կինոդեբյուտ** է սպասում (TV մոլ, 25.07.2014):

ԿԻՆՈԴՊՐՈՑ, գ. **Կինոնկարահանման ավանդույթներ ստեղծած հաստատություն**: Ըստ էության՝ լեհական **կինոդպրոցի** հասկացություն կա: Վայդան դեռևս նախորդ դարի կեսերին դարձավ լեհական կինոյի նշանավոր անունը (ՀՀ, 05.06.2014):

ԿԻՆՈԴՐՈՇՄ, գ. Շատերի համար Հոլիվուդը եղել և մնում է կախարդական երկիր, որտեղ անհնարինը թվում է հնարավոր, **կինոդրոշմները՝** իրականության շարունակություն, իսկ հանցագործությունները՝ այուժեի գրավիչ շրջադարձ (TV մոլ, 02.06.2014):

ԿԻՆՈԵՂԵՌՆԱՊԱՏՈՒՄ, գ. **Եղեռնի մասին պատմող ֆիլմ**:: Հայ կինոն ստեղծեց իր **կինոեղեռնապատումը** (Հեռուստ., 24.04.2015):

ԿԻՆՈԵՐԿԻՐ, գ. **Կինո նկարահանելու համար հարմար՝ նպաստավոր երկիր:** Հայաստանը **կինոերկիր** է, անապատ, սար, ծով 100 կմ վրա է.... (Իրատես, 28.11.2014):

ԿԻՆՈԶԳԱՅՈՂՈՒԹՅՈՒՆ, գ. Տե՛ս ԿԻՆՈԱՆՈՒՆ-ի օրինակը:

ԿԻՆՈԹՈՇԱԿ, գ. Ես **կինոթոշակի** անցնելու մասին չեմ մտածել և չեմ էլ մտածում (TV մոլ, 27.10.2014):

ԿԻՆՈԼՐԱԳՐՈՂ, գ. **Լրագրող, որը զբաղվում է կինոաշխարհի իրադարձությունների և խնդիրների լուսաբանմամբ**: ....Եվրոպայի խոշորագույն գերմանալեզու պարբերականը՝ «Բիլդը», գրել է. «Մարկ Հայրապետյանը Գերմանիայի լավագույն **կինոլրագրողն** է» (Ազգ, 05.12.2104):

ԿԻՆՈԿԱՐԻԵՐԻԱ, գ. Տե՛ս ԿԻՆՈՃԱԿԱՏԱԳԻՐ-ի օրինակը:

ԿԻՆՈԿԵՐՏՈՒՄ, գ. ....Սուրեն Բաբայանի «Արարման ութերորդ օրը» կինոնկարում.... կարելի է տեսնել ֆանտաստիկ, այլաշխարհային տարածության **կինոկերտման** հետաքրքրիր մի եղանակ.... (Իրատես, 12.12.2014):

ԿԻՆՈԿՈՄՊՈԶԻՏՈՐ, գ. **Ֆիլմի համար երաժշտություն գրող երգահան**: Նրա հայրը Մորիս Ժարրն է, **կինոկոմպոզիտոր**, որ երաժշտություն է գրել ավելի քան 150 ֆիլմի համար (TV մոլ, 07.05.2014):

ԿԻՆՈԿՈՒՌՔ, գ. **Կինոյի ասպարեզում պաշտամունքի հասնող սեր վայելող գործիչ**: Մյուս բոլոր հարցերում իրենց 80-ամյա հոբելյանը նշող **կինոկուռքերի** և կենսական, և ստեղծագործական ճանապարհները տարբերվում են գիշեր ու ցերեկի պես (TV մոլ, 06.10.2014):

ԿԻՆՈԿՏԱՎ, գ. **Կինոնկար**: Ռեժիսոր Անդրեյ Զվյագինցևի մռայլ **կինոկտավը** պատմում է հասարակ մարդու դժբախտության մասին, ով կորցնում է ամեն ինչ՝.... (ՀՀ, 24.02.2015):

ԿԻՆՈԿՐԹՈՒԹՅՈՒՆ, գ. **Կինոյի բնագավառի աշխատողներ պատրաստող կրթություն**: «Հանուն պատվի ու .արժանապատվության» մրցանակ է շնորհվել Վլադիմիր Զելդինին **կինոկրթության** ոլորտում ....ներդրած ավանդի համար (Ազգ, 07.03.2014):

ԿԻՆՈՀԱՄԱՏԵՔՍ, գ. ....Այս իմաստով «Փարաջանով» ֆիլմը ընդունելի է ու տեղավորվում է ժամանակակից **կինոհամատեքստի** մեջ և կարող է գտնել իր հասցեատերերին՝ ամենատարբեր երկրներում (Իրավունք, 28.03.2014):

ԿԻՆՈՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Կինոյի բնագավառում հայտնություն**: Ես մտահոգ էի՝ ինչպես **կինոհայտնությունս** կընկալվի հասարակության կողմից (TV մոլ, 23.03.2015):

ԿԻՆՈՀԱՐԹԱԿ, գ. **Կինոյի բնագավառ, ասպարեզ:** Կինոն միթե չի հնանում, մանավանդ, եթե խոսքը համաշխարհային **կինոհարթակում** ներկայացնելու մասին է (Իրատես, 02.12.2014):

ԿԻՆՈՃԱԿԱՏԱԳԻՐ, գ. **Կինոյի ասպարեզում դրսևորվող գործողությունների ընթացք**: Զրուցեցինք Մահիկյանի հետագա **կինոճակատագրի,** դերասանի մոսկովյան կյանքի և ռուսաստանյան կինոկարիերայի մասին (TV մոլ, 16.06.2014):

ԿԻՆՈՄԹՆՈԼՈՐՏ, գ. **Կինոնկարահանման, ցուցադրության ընթացք**: ....Ռեժիսորը, անդրադառնալով **կինոմթնոլորտ** ձևավորող բազմապիսի կինոփառատոներին, մասնավորապես «Ոսկե ծիրանին», նշեց, որ դրանց շնորհիվ մարդիկ գոնե մի քանի օր դիտում են ֆիլմեր, որոնք նման չեն ամերիկացիների բերած ֆիլմերին (Իր., 31.10.2014):

ԿԻՆՈՆԱԽԱԳԻԾ, գ. **Նախագիծ կինոյի համար**: Կինոնախագիծը կիսատ է մնում: Վերադառնալով Հայաստան Թամար Հովհաննիսյանը վճռել է ֆիլմն ավարտին հասցնել (Ազգ, 04.04.2014):

ԿԻՆՈՇԵՖ, գ.**Կինոյի ղեկավար:** Նա չէր համաձայնել քնել խորհրդային **կինոշեֆերից** մեկի հետ (TV ալիք, 23.12.2013):

ԿԻՆՈՈՒՂԻ, գ. **Կինոյի բնագավառում անցած ուղի:** Մեր հարցին՝ կշարունակի արդյոք իր **կինոուղին,** երգիչը վարանեց հստակ պատասխանել (TV մոլ, 23.03.2015):

ԿԻՆՈՊՈՒՐԱԿ , գ. Տղաները տեղյակ չէին, որ մի ժամանակ Կոմայգու ամֆիթատրոնում ֆիլմեր են ցուցադրվել, բայց Պետրոսը վաղուց էր երազում Երևանում ստեղծել բացօթյա **կինոպուրակ** (Երևան, 06.2012):

ԿԻՆՈՍԱԳԱ, գ. Հայտնի «Ռոկկի» **կինոսագայի** առաջին ֆիլմը մի քանի «Օսկար»-ի արժանացավ (TV մոլ, 24.04.2014):

ԿԻՆՈՍՏՈՒԳԱՏԵՍ, գ. **Կինոֆիլմերի ստուգատես**: **Կինոստուգատեսի** գեղարվեստական տնօրեն Թիերի Ֆրեմոն «Ֆիգարո» թերթին տված հարցազրույցում ասել է, որ այս տարվա մրցութային ծրագիրն անչափ հարուստ է....(Ազգ, 16.05.2014):

ԿԻՆՈՎԱՐԶՈՒՅԹ, գ. «Կառնավալային գրշեր» ֆիլմը ռեկորդ սահմանեց կինովարձույթում (TVալիք , 23.12.2013):

ԿԻՆՈՏԱՐԲԵՐԱԿ, գ. **Ֆիլմի նկարահանման այլ տարբերակ**: Ի դեպ, Թրուայայի գործը նաև ամերիկյան **կինոտարբերակ** ունի (Իր., 28.10.2014):

ԿԻՆՈՏԱՐՐ, գ. **Կինոյի տարր:** Հարություն Խաչատրյանն իրեն հատուկ **կինոտարրերի** իրական զգացումով և դրանց գիտակից ու զգուշավոր կիրառությամբ հանդիսականին պատումի հոսքի և կենդանագրված իրականության ֆիզիկական մասնակիցը դառնալու հնարավորություն է ընձեռում (Իրատես, 12.12.2014):

ԿԻՆՈՏԵՍՈՒԹՅՈՒՆ, գ. **Կինոյի տեսություն:** Սուրեն Հասմիկյանը **կինոտեսության** գուրու է, ես կասեի՝ կենդանի դասական: Բայց ինքն իրեն այդպիսին չի զգում (ԳԹ, 20.03.2015):

ԿԻՆՈՑՈՒՑԱԴՐՈՒԹՅՈՒՆ, գ. **Կինո ցուցադրելը**: Ուրախ եմ, որ Վայդային նվիրված **կինոցուցադրություն** է նախաձեռնվել ....(ՀՀ, 05.06.2014):

ԿԻՍԱԴԱՏԱՐԿ, ած. **Կիսով չափ դատարկ**: Երբ դահլիճում գտնվում են մի քանի կոմպոզիտորներ, երաժշտագետ, դահլիճն էլ **կիսադատարկ** է, դա հակապրոպանդա է (Հրապ, 17.11.2013):

ԿԻՍԱԸՆՏԱՆԻ, ած. **Կիսով չափ ընտանի**: Հնդկաստանում այժմ էլ են սիրամարգերին պահում իբրև **կիսաընտանի** թռչուններ (TV մոլ, 02.02.2015):

ԿԻՍԱԼՔՎԱԾ, ած. **Կիսով չափ լքված:** Սկզբում իմանալով նրա արկածների մասին՝ ես ջարդում էի ամեն ինչ, գոռում էի աննորմալի նման, լրագրողներին պատմել է **կիսալքված** կինը (TV ալիք, 06.10.2014):

ԿԻՍԱԿՐԻՄԻՆԱԼ, գ. **Կիսով չափ կրիմինալ, կիսահանցագործ:** Կառավարման խորհրդարանական համակարգին անցում կատարելու դեպքում Ս. Սարգսյանը „**կիսակրիմինալ** ուժերի,, ՀԿԿ-ի և ԲՀԿ-ի հետ դասական ձևով կեղծելով 2017 թ. ընտրությունները՝ կդառնա վարչապետ (Հրապ., 11.04.2014):

ԿԻՍԱՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ, գ. **Պետության կառավարման ձևերից մեկը: Կիսանախագահական** գործող մոդելի պարագայում առաջարկվում է գոնե նախագահի և ԱԺ ընտրությունների միաժամանակյա անցկացում (Հրապ., 11.04.2014):

ԿԻՍԱՇԱՐԵԼ, բ. **Կիսատ շարած**: Բենոն կանգնել էր աղյուսե **կիսաշարել** պատի մոտ, ոտքի մեկը դրել էր գետնին թափված աղյուսների վրա ու էլի ձեռ էր առնում Թաթուլին (ՀԲ, էջ 74):

ԿԻՍԱՊԱՏՐԱՍՏՎԱԾՔ, գ. **Կիսատ պատրաստված**: Արտադրվում են նաև բազմաթիվ սննդային **կիսապատրաստվածքներ**, որոնցով լի են այժմյան խանութների վաճառասեղանները (TV մոլ, 17.02.2014):

ԿԻՍԱՎԱՐԴՅԱԿ, գ. **Վարդյակի կեսը:** Զուտ խաչային հորինվածքն էլ ունի մի բնութագրական առանձնահատկություն. նրա ստորին մասում ամբողջական վարդյակների փոխարեն պատկերվում են **կիսավարդյակներ** (ՀՊ, էջ 135):

ԿԼԻՄԱՅԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ, գ, **Կլիմայի փոփոխություն**: Հեղինակները նաև գրում են, որ մարդկությունը ստիպված կլինի հարմարվել **կլիմայափոխությանը** (Ազգ, 11.04.2014):

ԿԼԻՄԱՅԱՓՈԽՈՒՄ, գ. **Կլիմայի փոփոխություն**: **Կլիմայափոխման** հետևանքները հավանաբար կլինեն «լուրջ, համատարած և անդառնալի» (Ազգ, 11.04.2014):

ԿՅԱՆՔԱԽԻՆԴ, ած. **Կենսախինդ:** Դրանք (առակները) **կյանքախինդ**, իմաստնացող , ասես անմոռաց պատկերազարդ նովելներ լինեն (ԳԹ, 18.07.2014):

ԿՆԱԿՈՐՈՒՅՍ, ած. **Կնոջը կորցրած**: Հայաստանում այրի և **կնակորույս** բնակչությունը վերջին մարդահամարի տվյալներով կազմում է ողջ հասարակության 8.9 տոկոսը (ՀՀ, 19.06.2014):

ԿՆԻՔԱԴՐՈՇՄ, գ. Մեջբերվածն Ադրբեջանի նախագահին կից Անվտանգության խորհրդի… արձանագրությունից է, առկա է նախագահի **կնիքադրոշմը** (Հրապ., 21.11.2014):

ԿՆՔԱՐԱՆ, գ. **Մկրտվելու վայր:** Նրա տուն–արվեստանոցը ոչ թե հանդիպավայր, այլ **կնքարան** էր, եթե կուզեք՝ յուրօրինակ մի սալոն, ուր մարդիկ գնում էին կնքվելու՝ արվեստով, գեղեցիկով.... (Ազգ, 07.03.2014):

ԿՈՂԱԳՐՊԱՆ, գ. **Կողքի գրպան:** ...Սովորական **կողագրպանում** էլ դրամն էր... (ԼՋ, էջ 98):

ԿՈՂԱՊԱԿԻ, գ. **Կողքի ապակի:** Երկու բաց **կողապակիներից** փոշու հետ միջանցիկ քամին էր խփում (ԼԽ, էջ 12):

ԿՈՂԱՍԱՀՔ, գ. Նախաքննական մարմինը չի արձանագրել Վարդան Պետրոսյանի վարած BMV մեքենայի **կողասահքի** ժամանակ առաջացած հետքերը (Համացանց, 26.03.2014):

ԿՈՂՄՆՈՐՈՇՎԱԾՈՒԹՅՈՒՆ, գ. Սխալ **կողմնորոշվածությունն** ու անորոշությունը սպառում են ձեր եռանդն ու պահուստային ուժերը (Համացանց, 19.03.2014):

ԿՈՄԻՏԱՍԱՊԱՇՏ, ած. **Կոմիտասին պաշտող**: Սևակ բանաստեղծը համակ **կոմիտասապաշտ** էր (ԱԶ, էջ 525):

ԿՈՄԻՏԱՍԱՊԱՇՏՈՒԹՅՈՒՆ, գ. **Կոմիտասի ստեղծագործությունը պաշտելը**: «Իմ Կոմիտասը» գալիս էր լրացնելու-բացելու նրա **կոմիտասապաշտության** ծալքերը և խորքերը (ԱԶ, էջ 525):

ԿՈՅՈՒՂԱՏԱՐ, գ. **Կոյուղաջրերը տանող խողովակ**:Նախօրեին մայրաքաղաքի Հերացու փողոցի 2ա շենքի հարևանությամբ գրանցվել էր **կոյուղատար** համակարգի խոշոր վթար.....(ՀՀ, 17.09.2014):

ԿՈՆՏՐԱՌԱՋԱՐԿ, գ. **Հակաառաջարկ, եղած առաջարկին հակադրվող առաջարկ**: Սա փաստորեն ՀՀՇ-ի **կոնտրառաջարկն** է այդ խմբակցությունների համանման առաջարկին (Ժամ., 18.02.2014):

ԿՈՆՖԼԻԿՏԱԲԱՆ, գ.Արսեն Խառատյանը **կոնֆլիկտաբան** է (Ժող., 10.12.2013):

ԿՈՆՖԼԻԿՏԱՅՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Կոնֆլիկտային լինելը**: Պիեսում թումանյանական հերոսների կողքին են հայտնվել ևս մի քանիսը, ինչն էլ միտված է դրամատուրգիական անցքերի ու բեմական գործողությունների ընդլայնմանը, **կոնֆլիկտայնության** ընդգծմանը (ԳԹ, 13.12.2013):

ԿՈՊԱԽԱՂ, գ. **Կոպերի խաղ**: Ձեռ էր առնում Արտաշին, որովհետև շատ էին հնաոճ նրա և գլխարկը, և քառանկյունի բեղերը, և **կոպախաղը**.... (ՀՄ, էջ 96):

ԿՈՎԱԿԵՐՊ, ած. **Կովի կերպ ունեցող**: Առավել տարածվածը, սակայն, որոտացող ամպի, ավելի ճիշտ՝ ամպրոպային ամպի **կովակերպ** պատկերացումն է (ՍՀ, էջ 79):

ԿՈՐԶԱԹԱՓՈՆ, գ., Որտեղ են կուտակվելու ոսկու կորզումից հետո մնացած՝ փշրված ու մանրացված, ավելի քան 122մլն տ **կորզաթափոնները** (Իր., 07.10.2014):

ԿՈՐԻԶԱԶՈՒՐԿ, գ. **Կորիզից զուրկ:** Թրոմբոցիտները կամ արյան թիթեղիկները **կորիզազուրկ** գոյացություններ են (Տն. առ, թ. 8, 2014):

ԿՊՉԱԺԱՊԱՎԵՆ, գ. Դրամը **կպչաժապավենով** կպցրել էին գունավոր թղթին, թուղթն էլ՝ նամակին (TV մոլ, 03.01.2014):

ԿՌՃԻԿԱՓՈՂ, գ. Հիմա Սուլթանը հաշտություն էր աղերսում, հարեմը թողնում է Մացակին, ննջարանի սահմաններում **կռճիկափող** չի փչում, դառնում էր Վասալ-արքա (ՀՄ, էջ 7):

ԿՌՓԱՋԵՆՔ, գ.Վանեսյանը Լալայանի հետ վիճաբանության ժամանակ **կռփազենքով** հարվածներ է հասցրել Լալայանի գլխին (Ժամ., 24.04.2014):

ԿՏՐՈՂ–ԱՆՑՆՈՂ ,բ. Փողոցը հետիոտն **կտրող–անցնող** մարդիկ լարվում են, քանի որ հայտնվում են մեքենաների առջև և չգիտեն՝ արդյոք վրաերթի չե՞ն ենթարկվի…. (ՀՀ, 18.11.2014):

ԿՏՐՎԱԾՈՒԹՅՈՒՆ, գ. **Կտրված լինելը:** ….Հաշվի առնելով միջազգային ասպարեզում գործընթացների արագությունը, մի տեսակ **կտրվածության** զգացում է առաջանում, խորանում է իշխանություններից դժգոհությունը (Ավ., 12.03.2015):

ԿՐԱԿԱՐՁԱԿՈՒՄ, գ. Շենքի մուտքում ներսից կանգնած է Սևակը, ծխում էր, բայց մի տեսակ ռիթմիկ **կրակարձակումներով** (ԱՋ, էջ 449):

ԿՐԵԱՏԻՎՈՒԹՅՈՒՆ, գ. **Կրեատիվությունը** եկամուտ է բերում (168 ժ., 12.12.2013):

ԿՐԹԱԲՈՒԺԱԿԱՆ, ած. **Կրթական և բուժական :** Կենտրոնը **կրթաբուժական** ծառայություններ է մատուցում աուտիզմ և ընդհանուր զարգացման այլ խանգարումներ ունեցող երեխաներին (Ազգ, 04.04.2014):

ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ած. **Կրթական և մշակութային**: Ընդ որում, ստեղծված քանդակները կմնան բերդաքաղաքում .... քաղաքի կենտրոնական հրապարակին և **կրթամշակութային** օջախներին հարող տարածքներում (ՀՀ,16.07.2014):

ԿՐԹԱՇՏԿՈՂԱԿԱՆ, ած. **Կրթությամբ շտկող** : Աուտիզմով երեխաների **կրթաշտկողական** աշխատանքը շատ դժվարին և մեծ ներդրումներ պահանջող գործընթաց է ....(Ազգ, 04.04.2014):

ԿՐԹԱՍՐԱՀ, գ. **Կրթության սրահ**: Ստեղծագործարանը, գրադարանն ու ռեսուրս կենտրոնը միավորող այս **կրթասրահը**, օգնելու է ոչ միայն ուսումնատենչ աշակերտներին այլև բոլոր ուսուցիչներին .... (Ազգ, 20.06.2014):

ԿՐԹԱՎԱՐՁ, գ. **Ուսման վարձ, կրթավճար:** Վճարում ենք զգալի թվով ուսանողների **կրթավարձը** (Իր., 14.10.2014):

ԿՐԻՈՍԱՌՆԱՊԱՀՊԱՆՈՒՄ, գ. (բժշկ.) **Տղամարդու սառեցված սերմնահեղուկի պահպանում:** Այս տարվա հոկտեմբեր ամսին կլինիկայի լաբորատորիայում կատարվել է բեղմնավորումը, ստացվել է 8 առողջ սաղմ, որոնք Արմինեի համաձայնությամբ հանձնվել են **կրիոսառնապահպանման** (Ժամ., 20.12.2014):

ԿՐԾՔԱՓԱԿ, ած. **Կուրծքը փակ :** «Վերջին ժպիտ» գիրքը հայ ավանդախոհ, **կրծքափակ** շորերով կնոջ լիաբաց սրտի տրոփյունի արձագանքից ծնված ժպիտ է .... (ԳԹ, 22.11.2013):

ԿՐԿՆԱՆԵՐԿՐՈՒՄ, գ. **Կրկին ներկրելը:** Արտաքին պարտքի աճն այս տարվա ընթացքում նշյալ կազմակերպությունների **կրկնաներկրումների** շնորհիվ է (Հրապ.,13.11.2013):

ԿՐԿՆԱՊԱՏՈՒՄ, գ. **1. Կրկնվող պատմություն: 2.Կրկին պատմելը:** Սանասարի և Դավթի ամուսնության պատմությունները փաստորեն միևնույն սյուժեի տարբերակներն են կամ **կրկնապատումներ**, որոնց նմանակները վեպի մի քանի պատումներում առկա են նաև Փոքր Մհերի ամուսնության միջադեպերում (ՍՀ, էջ 189):

ԿՐԿՆԱՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ, գ. **Կրկին ստորագրելը:** Հատկանշական է, որ **կրկնաստորագրության** ինստիտուտի կիրառմամբ յուրաքանչյուր սխալի պատասխանատուն համապատասխան պաշտոնյան է (Ժող., 17.12.2015):

ԿՐՈՆԱԱՌԱՍՊԵԼԱԲԱՆԱԿԱՆ, ած. **Կրոնական և առասպելաբանական**: Դրախտի և Դժոխքի պատկերացումը, անշուշտ, ավելի ուշ ժամանակաշրջանի **կրոնաառասպելաբանական** մտահայեցությունների արդյունք է (ՍՀ, էջ 17):

ԿՐՊԱԿԱՎԱՐՈՒՀԻ, գ. **Կին կրպակավար**: Հենց իտալական ռեժիսուրայի վարպետի ֆիլմում նա խաղաց իր նշանավոր դերերի մեծ մասը՝ սկսած «Նեապոլի ոսկին» (1954) ֆիլմի եռանդուն **կրպակավարուհուց** (TV մոլ, 06.10.2014):

ԿՈՒՍԱԿՑԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, գ. «Հայաստանի ներկայիս ղեկավարման ձևը՝ ինքնակալությունը և **կուսակցապետությունն** ունի լուրջ մրցակից՝ դա ինքնակալ, կուսակցապետ նախագահի ինստիտուտի վերացումն է ....(ՀՀ,17.09.2014):

Հ

ՀԱԳԱԳԱՀՈՒՆՉ, ած. .... Երբ հայոց բարձրավանդակի գնալով անգոսնացող երկնակամարում կծածանվի հայի դատարկահունչ, **հագագահունչ** խրտվիլակը՝ սնամեջ ու բարձիթողի (ԳԹ, 21.02.2014):

ՀԱԳԱԾԿԱՊԱԾՈՒԹՅՈՒՆ, գ. **Հագած-կապած լինելը:** Արտաշն իր **հագածկապածությամբ** և հանդիսավոր դանդաղ շարժուձևով Փարիզից կամուրջն ու վանքերը տեսնելու եկած պրոֆեսոր չէր (ՀՄ, էջ 92):

ՀԱԳՈՒԿԱՊ, գ. **Հագուստները:** Նիկոլը հիշվում է ոչ միայն վառ կերպարով, այլև յուրօրինակ **հագուկապով** (TV ալիք, 02.12.2013) :

ՀԱԽՃԱՊԱԿԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ, գ. **Հախճապակու մշակմամբ զբաղվելը:** Աշխատությունը ներկայացնում է Քյոթահիայի **հախճապակեգործությունն** ու արվեստը (168 ժ., 06.12.2014):

ՀԱԿԱԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ, ած. **Ադրբեջերենին հակառակ:** Ազիմովի պնդմամբ՝ Ուորլիքի որոշ հայտարարություններ ակնհայտ **հակաադրբեջանական** ու սադրիչ բնույթ են կրում (Ժամ., 06.05.2014):

ՀԱԿԱԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ, ած. **Բարեգործությանը հակառակ**: ԱՄՆ-ի գործարարները նույնիսկ **հակաբարեգործական** ցույց անցկացրին՝ ոչ մի դրամ խուսնտային կոչերով (Հրապ., 29.11.2014):

ՀԱԿԱԳԵՆԴԵՐԱՅԻՆ, ած. **Գենդերային նորմերին հակառակ**: **Հակագենդերային** երթին կմասնակցեն նաև հոգևորականները (Իրավունք, 11.10.2013):

ՀԱԿԱԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ, ած. **Դիվանագիտությանը հակառակ**:Այստեղ դիվանագիտությունը գիտակցաբար թե ենթագիտակցորեն ստեղծված **հակադիվանագիտական** տեքստն է՝ պարզ, անմիջական, անկեղծ .... (ԳԹ, 08.11.2013):

ՀԱԿԱԶԱՎԹՈՂԱԿԱՆ, ած. Գուցե սա էլ իր համանմանն ունի, հաշվի առնելով **հակազավթողական** տրամադրությունների հզոր աճը հասարակ ամերիկացիների շրջանում (TV մոլ, 05.01.2014):

ՀԱԿԱԶԱՐԳԱՑՈՒՄ, գ. **Զարգացման ուղղությանը հակառակ փոփոխություն:** ՀՀԿ-ԲՀԿ-ն նոր **հակազարգացումներ են նշում** (Համացանց, 01.02.2014):

ՀԱԿԱԺՈՂՈՎ, գ. **Ժողովին հակառակ հավաք:** Մյուսները հարկադրված են թիվ մեկ դիվանագետի համաժողովներում ու **հակաժողովներում** կրկնել ու նրա պես ժպտալ (Իրատես, 27.03.2015):

ՀԱԿԱԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ, ած. **Ժողովրդավարությանը դեմ, հակառակ**: ....Երկրում տիրող հակաժողովրդավարական միջավայրը, մեծացնում է քաղաքացիների հակումը ծայրահեղականության նկատմամբ (ՀՀ, 12.02.2014):

ՀԱԿԱԼՆԴԱԽՏԱՅԻՆ,ած. **Լնդախտի դեմ:** Թրթնջուկը կիրառում են հիմնականում որպես **հակալնդախտային** միջոց (Տն. առ. թ. 8, 2014):

ՀԱԿԱԽՈՒՄՀԱՐԱՅԻՆ, ած. **Խումհարը վերացնող: Հակախումհարային** կոկտեյլը …հեշտացնում է ալկոհոլի յուրացումը օրգանիզմում և դրա հեռացումը առանց օրգանիզմը վնասելու (TV ալիք, 29. 12. 2014):

ՀԱԿԱԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ, ած. **Կանոնադրության հակառակ**: Կարևոր խնդիրը, որի շուրջ երկար բանավեճ ծավալվեց, մոտ 100 սփյուռքահայ գրողների քվեարկության հարցն էր, որը որակվեց **հակականոնադրական** (Հրապ., 22.10.2014):

ՀԱԿԱԿԱՐԾՐԱԽՏԱՅԻՆ, ած. **Կարծրախտի զարգացմանը խոչընդոտող:** Ծովախեցգետնի միսը **հակակարծրախտային** հատկություն ունի (TV մոլ, 21.04.2014):

ՀԱԿԱԿԾԿԱՆՔԱՅԻՆ, ած. **Կծկանքը վերացնող:** Անհրաժեշտության դեպքում բժիշկները նշանակում են դեղորայքային բուժում՝ հակամիկրոբային, հակաբորբոքային կամ **հակակծքանքային** (TV ալիք, 16.02.2015):

ՀԱԿԱԿԾԿՈՂԱԿԱՆ, ած. **Կծկողականությունը խոչընդոտող:** Սամիթի թուրմն ունի միզամուղ, հակաբորբոքային և **հակակծկողական** հատկություն (TVալիք, 04.11.2013):

ՀԱԿԱԿՇՌՈՒՅԹ, գ .**Հակառակ կարծիքներ:** Օրերս պարզվեց, որ **հակակշռույթներ** կան նաև Միկոյանի արձանը Երևանում տեղադրելու հարցի շուրջ (Հրապ., 07.05.2014):

ՀԱԿԱՃԻՃՎԱՅԻՆ, ած. **Ճիճվակրության դեմ:** Հայտնի է, որ ճիճվամուղ դեղամիջոցներն օժտված են բարձր **հակաճիճվային** արդյունավետությամբ (Ագրոլրատու, 17. 06.2015):

ՀԱԿԱՄԱԿԱՐԴՈՒԿ, գ. C վիտամինը լայնորեն կիրառվում է լնդախտի…ճառագայթային հիվանդությանն **հակամակարդուկներով** թունավորման ժամանակ (ՀԴ, 01.20.2014):

ՀԱԿԱՄԱՆՐԷԱՅԻՆ, ած. **Մանրէների դեմ: Հակամանրէային** դեղամիջոցների մի քանի խումբ գոյություն ունի, որոնք ընդունում են շնչառական օրգանների հիվանդությունների դեպքում (TV մոլ, 17.02.2014):

ՀԱԿԱՄԻԱՍԵՌԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Միասեռականությանը հակառակ:** Բայց ո՞ւմ երեխաներին և ի՞նչ երեխաների են որդեգրելու, եթե **հակամիասեռականության** քարոզը

որակավորվում է որպես այլատյացություն և անհանդուրժողականություն։ (ԳԹ,15.11.2013)։

ՀԱԿԱՄԻԳՐԱՆՏԱԿԱՆ, ած. **Միգրանտների և միգրացիայի դեմ ուղղված։** Մոսկվայի ընտրություններին ընդառաջ ևս **հակամիգրանտական** քարոզարշավ իրականացրին (Ժամ., 18.04.2014)։

ՀԱԿԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ած. **Մշակույթին դեմ՝ հակառակ։** Եթե ի սկզբանե պարզ էր, որ Օպերային թատրոնը գլորվում է դեպի **հակամշակութային** դաշտ, էլ ինչու են ձևացնում , թե իբր փրկության մեխանիզմներ են փնտրում (Ազգ, 04.04.2014)։

ՀԱԿԱՄՐՑԱՆԱԿ, գ. **Հակառակ մրցանակ։** Ուիլիսը չորս անգամ առաջադրվել է Ոսկե մորի **հակամրցանակին** (TV ալիք, 13.04.2015)։

ՀԱԿԱՊՈՒՏԻՆՅԱՆ, ած. **Պուտինի դեմ ուղղված։** ....Անցյալ տարի **հակապուտինյան** ակցիաների ժամանակ □Հայազնի□ ներկայացուցիչները ընդհարում էին ունեցել ծիրանագույն համասեռամոլական դրոշը փողոց հանած «ակտիվիստների» հետ (Իրավունք, 12.12.2014)։

ՀԱԿԱՋՂԱԿԾԿՈՒՄԱՅԻՆ, գ. **Ջղակծկումները վերացնող։** Քաղցի ուժեղ զգացում է առաջանում, օրինակ, **հակաջղակծկումային** պատրաստուկներից, որոնք նշանակվում են էպիլեպսիայի դեպքում (TV մոլ, 10.02.2014)։

ՀԱԿԱՌԵՏՐՈՎԻՐՈՒՍԱՅԻՆ /բժշկ./,ած. Աշխատաժողովի 5 օրվա ընթացքում կքննարկվեն ՄԻԱՎ/ՁԻԱՀ–ին հակազդման ազգային ռազմավարությունների թիրախները և դրանց հասնելու համար անհրաժեշտ ծախսերը, կանդրադառնան նաև ներդրումներին, **հակառետրովիրուսային** բուժման տարբեր ուղեցույցների օգտագործման ազդեցություններին (ՀՀ, 04.11.2014)։

ՀԱԿԱՌՈՒՍԱՍՏԱՆՅԱՆ, ած. .... Փարիզում հասկանում են, թե Ֆրանսիայի արտաքին քաղաքականության ու տնտեսության համար ինչ բացասական հետևանքներ կարող են ունենալ **հակառուսաստանյան** գործողությունները.... (Իր., 21.11.2014)։

ՀԱԿԱՍԱՌԵՑՈՒՑԻՉ, գ. **Սառեցում թույլ չտվող հեղուկ։** Նկարահանումների կազմակերպիչները զգուշացրել էին, որ գիշերը ջուրը թրեյլերներում կարող է սառչել և դրան **հակասառեցուցիչ** էին ավելացրել (TV մոլ, 24.11.2014)։

ՀԱԿԱՍԹՐԵՍ, գ. **Սթրեսին հակառակ։** Շատ կանանց համար շոփինգն իսկական հակասթրես է, լավ տրամադրության երաշխիք (Տն. առ., թ. 8, 2014)։

ՀԱԿԱՓՍԽՈՒՄԱՅԻՆ, ած. Նվազագույնը պետք է հակահիստամինային և **հակափսխումային** պատրաստուկներ նշանակել (TV մոլ, 01.12.2014):

ՀԱԿԱՕԲԱՄԱՅԱԿԱՆ, ած. **Օբամայի քաղաքականության դեմ:** Ըստ այդ լուրերի՝ սևամորթների այս հուզումները, որոնք արդեն ստանում են նաև **հակաօբամայական** բնույթ, մեծ չափով նպաստել են նաև ԱՄՆ ներքաղաքական ինտրիգներում և անգամ նախագահական ընտրությունների վրա միշտ էլ հսկայական ազդեցություն ունեցող նավթարդյունաբերողները (Իր., 28.11.2014):

ՀԱԿԱՕՔՍԻԴԱՆՏԱՅԻՆ, ած. Խաղողի կորիզների մզվածքում առկա պոլիֆենոլները **հակաօքսիդանտային** հատկություն ունեն (TV մոլ, 25.11.2013):

ՀԱՂԹԱՀԵՐՈՍ, գ. Սակայն հանդիսության իսկական **հաղթահերոս** դարձավ մավրիտանացի ռեժիսոր Աբդերահման Սիսակոն իր «Տիմբուկտու» ֆիլմով (TV մոլ, 02.03.2015):

ՀԱՂՈՐԴԱԿՑԱՅԻՆ, ած.... Որպես արդյունք՝ լեզուն սկսում է կրել ոչ միայն **հաղորդակցային**, այլև բովանդակային գործառույթ (ԳԹ,13.09.2013):

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՂԻ, գ. Պատճառը երկու պետությունների բացահայտ անհավասար քաղաքական, տնտեսական, ժողովրդագրական, տարածքային, էներգակիրների ու բնական պաշարների, **հաղորդակցուղիների** վիճակագրությունն է (Իր. 06.2013):

ՀԱՂՈՐԴԱՄԻՋՈՑ, գ. **Հաղորդակցման միջոց**: ....Մասնակիցները միասնաբար ջանքեր պիտի գործադրեն Հայ կաթողիկե **հաղորդամիջոցների** գործակցության զարգացման ուղղությամբ (ՀՀ, 16.07.2014):

ՀԱՄԱԱՐԱԲԱԿԱՆ, ած. ....Ինչպես մարտի 6-ին հաղորդել է **համաարաբական** Al Arabia հեռուստաալիքը.... (Իրատես, 14.03.2014):

ՀԱՄԱԲՆԱԳԻՐ, գ. Գրականագիտությունը մեթոդաբանորեն ինքնորոշված չէր և հանդես էր գալիս այլ գիտությունների, հատկապես պատմագիտության **համաբնագրում** (ՀՄԵՀ, էջ 367):

ՀԱՄԱԴՐՈՂ, գ. **Թանգարանի՝ ցուցահանդեսի կազմակերպիչ՝ ձևավորող՝ համակարգող:** ....Ի սկզբանե ճարտարապետներին զուգահեռ սկսում են աշխատել նաև ապագա թանգարանի կոնցեպտները ձևավորող **համադրողները** (կուրատորները) (Ազգ, 31.10.2014):

ՀԱՄԱԽՆԴԻՐ, գ. Մեզ համար միշտ էլ լինել-չլինելու **համախնդիրը** կա և կլինի (TV ալիք, 28.04.2014):

ՀԱՄԱԾԱՌԱՅԱԿԻՑ, գ. **Միասին ծառայող անձինք:** Ավելի ուշ 4 կուրսանտի մեղադրանք է առաջադրվել **համածառայակցին** սպանելու համար (ՀՁ, 06.02.2015):

ՀԱՄԱԿԱՐԳԱՍՏԵՂԾ, ած. **Համակարգ ստեղծող:** Ներկայումս ազգային անվտանգության ապահովման ժամանակակից համակարգի ձևավորման կարիք է զգացվում, որի առանցքային ու **համակարգաստեղծ** բաղադրիչներից մեկը պետք է լինի քաղաքական-իրավականը (Լրատու, էջ 143):

ՀԱՄԱԿԱՐԳՈՂ, գ. ....(Ռապիլ Ժոշիբաևը) Աստանայում կայանալիք «Ապագայի էներգիան» խորագրով ԷՔՊՈ-2017 միջազգային ցուցահանդեսի ազգային **համակարգողն** է (Իր., 07.10.2014):

ՀԱՄԱՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ, գ. Սրանք (խաչքարերը) ոչ միայն գեղարվեստորեն հարստացնում էին շինության համայնապատկերը, լրացուցիչ «սրբություն» հաղորդում տարածքին, այլև ընդգծում էին միջնադարյան հայ հասարակության առանձնահատուկ վերաբերմունքը դեպի հանգուցյալները, երբ հասարակությունն ընկալվում էր որպես ողջերի ու մեռածների **համահասարակություն** (Հ.Պետրոսյան, էջ 328):

ՀԱՄԱՀԵՂԻՆԱԿՈՒԹՅՈՒՆ, գ. **Հեղինակակից:** Ստեղծվեց հանրակրթական դպրոցի տարրական դասարանների համար մայրենիի և մաթեմատիկայի 10 դասագիրք նաև **համահեղինակությամբ** (TV ալիք, 13.04.2015):

ՀԱՄԱՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ, ած. Լուսինը, ինչպես տեսանք, հայ առասպելաբանության մեջ ունի կայուն արական անձնավորում, դրսևորվում է մանկան կամ պատանու կերպարանքով և ունի **համահնդեվրոպական** բնույթ (ՍՀ, էջ 61):

ՀԱՄԱՅՆՔԱԹԵՐԹ, գ. **Համայնքի հրատարակած թերթ:** Մեր **համայնքաթերթի** խմբագրությունը խնդրել է պատասխանել սահմանադրական փոփոխության անհրաժեշտության մասին հարցին (ԳԹ, 03.10.2014):

ՀԱՄԱՆԱԽԱԳԱՀԵԼ, բ. **Միասին նախագահել:** ԱԳ նախարարը նկատեց, դուք կարծում եք, թե օդի՞ց է, որ **համանախագահող** երկրները նախագահների մասնակցությամբ հանդիպումներ կազմակերպեցին (Ժող., 27.01.2015):

ՀԱՄԱՆԵՐՎԵԼ, բ. **Համաներման ենթարկվել**: Մարգար Օհանյանը կալանավորվեց, պատիժ կրեց և **համաներվեց** (Ժամ., 08.04.2014):

ՀԱՄԱՇԱՐ, գ. **Համատեքստ:** Ուկրաինական զարգացումների **համաշարում** ղրիմյան հարցի շուրջ ընթացող թեժ, բայց և «լուռ» պայքարը կարծեք թե հաստատելու է գալիս վերոնշյալ ձևակերպումը (ՀՀ, 06.03.2014):

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅՆԱԿԱՆ, ած. …. **Համաշխարհայնակաները** մեծ հաջողությամբ կարողանում են միանգամից մի քանի ճակատներով «գրոհել» (ԳԹ, 28.11.2014):

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ, գ. **Համապատասխան լինելը**: …. Ստեղծվում են գոմեշի մսի ներմուծման գործունեությամբ զբաղվող իրավաբանական անձանց՝ համապատասխան չափանիշներին **համապատասխանելիության** ստուգման պատշաճ մեխանիզմներ (Ազգ, 31.10.2014):

ՀԱՄԱՊԻՏԱՆԻ, ած. **Տարբեր դեպքերի համար պիտանի:** Գիտնականների կանխատեսումների համաձայն կստեղծվի **համապիտանի** պատվաստանյութ, որը կօգնի հաղթահարել ցանկացած վիրուս (Համացանց, 04.03.2014):

ՀԱՄԱՍԵՌԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. Ավելի քան 76 պետություններ շարունակում են քրեականացնել **համասեռականությունը** (Հրապ., 31.10.2014):

ՀԱՄԱՎՃԱՐ, գ. ....Անվճար կամ **համավճարով** բուժօգնություն է տրամադրվում բոլոր այն քաղաքացիներին, ովքեր հիվանդացել են հատուկ, հանրային կարևորություն ունեցող հիվանդություններով (168 ժ., 19.12.2013):

ՀԱՄԱՎՃԱՐԵԼ, բ. …. Քիչ է լուսաբանվում այն փաստը, որ այժմ պետությունը **համավճարում** է նաև մինչև 50 տարեկան համակարգին կամավոր միացողների համար …. (Ազգ, 31.10.2014):

ՀԱՄԱՑԱՆՑ, գ. Երբ պատրաստվում էի գիրքս հրատարակել, ինձ խորհուրդ տվեցին հատվածներ դնել **համացանցում** (TV ալիք, 13.01.2014):

ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ, գ. Իհարկե, ինչ-որ չափով կարող է մասնակցել **համաֆինանսավորմանը**, ընդհանուր փաթեթի մշակմանը, սակայն կան նաև այլ հարցեր.... (Իրատես, 07.03.2014):

ՀԱՄԲԵՐԱՀԱՏ, ած. Մի արյամբ լցված **համբերահատ** արցունքդ սրբելով՝ փորձում ես լույսի շողեր տեսնել …. Մյուս աչքդ անհագեցումի արյամբ լցված՝ կուրացել է արդեն (Ավ., 12.02.2015):

ՀԱՄԵՄՎԱԾՈՒԹՅՈՒՆ, գ. Հնարավոր է, «չինական երազանքում» կպահպանվի որոշակի համամասնությամբ ներքին և արտաքին արժեքների ինչ-որ հավաքանի՝ առանց ծայրահեղությունների ու ծայրահեղականության ազգայնականության «առողջ չափաբաժնի» **համեմվածությամբ** (Իրատես, 07.03.2014):

ՀԱՄԵՐԱՇԽՎԵԼ, բ. **Միանալ:** Եգիպտոսի ջիհադիստները **համերաշխվեցին** «Իսլամական պետության» հետ (Ազգ, 07.112014):

ՀԱՄԸՆԴՀԱՏԱԿԱՆ, ած. ....Պատեպատ ենք խփվում, ձգտելով մեզ ցմրուր իրացնել մեզ հատկացված երկրային ժամանակի **համընդհատական** տիրույթում . ... (Ազգ, 14.02.2014):

ՀԱՄՇԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, գ. ....Եթե որևէ մեկն ուզենա **համշենագիտությամբ** զբաղվել, թերթում հարուստ նյութ կգտնի, նաև թուրքերենից թարգմանված (Իր., 24.10.2014):

ՀԱՄՏԵՍ–ՎԱՃԱՌՔ, գ.**Վաճառք, որի ժամանակ նաև համտեսում են:** Կկազմակերպվի թթի օղու, թթի դոշաբի, Սյունյաց աշխարհին հատուկ կերակրատեսակների և ուտեստների **համտես–վաճառք** (ՀՀ, 28.06.2014):

ՀԱՅԱԳԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆ, գ. **Հայագիտակցության** խնդիր ունենք (Իր., 17.10, 2014):

ՀԱՅԱԴԱՐԱՆ, գ. **Համահայկական նախագծի անվանում**: Ընթերցողը Հայաստանում կգտնի հայ ժողովրդի երեք, բայց միասնական հատվածների պատմությունը .... ԼՂՀ շրջաններին, Սփյուռքի գաղթօջախներին վերաբերող հետաքրքիր և հարուստ տեղեկություններ.... (Համ. գ.-ուղ.):

ՀԱՅԱՋԵՐԾԵԼ, բ. **Հայերից մաքրել**: Մեկ դար է արդեն՝ Թուրքիան **հայազերծված** հայկական տարածքներից շարունակաբար մաքրում է հայկական հիշողությունը ....(ԳԹ, 25.04.2014);

ՀԱՅԱՀԵՌԱՑՈՒՄ, գ.**Հայերին հեռացնելը**: Սփյուռքում ապրող բանաստեղծի համար ցավ է պանդխտության և տարագրության թեման, ուծացումը, **հայահեռացումը** ....(ԳԹ, 13.12.2013):

ՀԱՅԱՃԱՆԱՉՈՒԹՅՈՒՆ, գ. **Հայերին ճանաչելը:** Համաշխարհային հայկական կոնգրեսը մեծապես կարևորելով մատաղ սերնդի հայեցի կրթությունն ու դաստիարակությունը **, հայաճանաչությունն** ու նրա մեջ հայրենասիրական զգաստարների սերմանումն ու ամրապնդումը, ստանձնել է «Հայ ասպետ» իմացաբանական հեռուստամրցույթի հովանավորությունը (Ազգ, 13.06.2014):

ՀԱՅԱՏԱՐԱԶ, ած. **Հայկական տարազ կրող:** …. Նյույորքյան արծաթավուն տոնածառը զարդարվում է հայկական խորհրդանիշ- խաղալիքներով՝ նուռ, շվի, Կոմիտասի երգի կոտրված ձայնապնակ, հայատարազ տիկնիկ…(Ավ., 12.02.2015):

ՀԱՅԱՅՔԱՉԱՓ, ած. **Հայացքի չափ ունեցող**: Մի **հայացքաչա**փ// հավիտենություն փաթաթվել// է անվարժ ու պաղ դիրքին// մանեկենի (ԳԹ, 11.10.2013):

ՀԱՅԵԼԱՆԱԼ, բ. **Հայելու նման դառնալ, արտացոլվել**: ....Իբրև տարագիր մի էություն, մշտապես թափառելու է երկրային տիրույթներում՝ դառնալով ասք մարդու մասին, որ **հայելացել** է բնության խորքերում ....(ԳԹ, 07.03.2014):

ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԵԼ, բ. **Ցույց տալ:** Սամվել Գզրարյանը…Իռլանդիայից Հայաստան է ներմուծել 492 շիշ գինի, որը, սակայն, չի **հայտարարագրել** (Համացանց, 07.12.2013):

ՀԱՅՏԱՐԱՐԱՏՈՒ, գ, **Հայտարարություն տվող անձ**:Մինչ հայտարարագրման գործընթացում բրոքերներին ակտիվորեն ներգրավելը՝ **հայտարարատուներն** այդ գործառույթը իրականացնում էին դժվարությամբ…. (ՀՀ, 23.12.2014):

ՀԱՅՏՆԵԼԻՔ, ած. **Հայտնելը**:…. Նա ձգտում է տեսանելի և լսելի լինել, քանի որ պատգամ ունի **հայտնելիք** իր ժողովրդին, իր երկրին, աշխարհին ու մոլորակին …. (ԳԹ, 19.09.2014):

ՀԱՅՐԵՆԱԶՐԿՈՒՄ, գ, **Հայրենիքից զրկելը**: .... Ըստ քաղաքագետ Լևոն Շիրինյանի. «Ռուսաստանն իր այդ քայլով փրկեց օս ժողովրդին ոչ միայն **հայրենազրկումից**, այլ նաև գենոցիդից» (ԳԹ,13.09.2013):

ՀԱՅՐԵՆԱՀՈՂ, գ. **Հայրենի հող**: .... Նա իր հաստ արմատով խորը խրվել է հայրենահողի մեջ... .(ԳԹ, 21.03.2014):

ՀԱՅՐԵՆԱՊԱՐՏ,գ. **Հայրենիքին պարտական:** Այսպես անսպասելի ու ողբերգական ավարտվեց դեռ չափահաս չդարձած մեծ **հայրենապարտի** կյանքը (ԳԹ, 18.07.2014):

ՀԱՅՐԵՆԱՏԻՐՈՒԹՅՈՒՆ, գ. **Հայրենիքին տեր կանգնելը**: Ինձ, ի՞նչ ասեմ. ես միշտ եղել և մնալու եմ **հայրենատիրության** առաջին գծի հոգևոր զինվորներից մեկը և մարելու եմ շարք կանգնած հրապարակագրությունների անհայտ պարտքերը (ԳԹ, 26.12.2014):

ՀԱՅՐԵՆԵՐԳՈՒԹՅՈՒՆ, գ. **Հայրենիքին նվիրված երգեր գրելը:** Ուսումնասիրության հետագա շարադրանքում Ս.Մուրադյանը անդրադարձել է նաև բանաստեղծի **հայրեներգությանը,** բացատրել–բացահայտել Մասիսի հանդեպ բանաստեղծի անսահման սերը (ԳԹ, 24.10.2014):

ՀԱՅՐԵՐԳՈՒԹՅՈՒՆ, գ. **Երգեր նվիրված հորը**։Հենց Գյումրվա գործոնով է բացատրում գրականագետը Շիրազի մայրերգության ու **հայրերգության** առանձնակիությունները, գեղարվեստական արժեքը (ԳԹ, 24.10.2014)։

ՀԱՆԳԱԲՈՒՅՐ, ած. **Գարնան հանգով բուրող, գարնանաբույր**։ Գարունքվա **հանգաբու՛յր** լորենի,// Օրհնությո՛ւն քո նեկտար–ավիշին (ԳԹ, 07.11.2014)։

ՀԱՆԳԱՊԱՏՈՒՄ, գ. **Հանգով գրված, չափածո:** Որքան տարբեր և որքան փոխլրացնող են գրքում ստեղծագործական երկու ոճերը՝ հերոսական **հանգապատումն** ու հանդարտ-մտերմիկ արձակը (Իրատես, 06.03.2015)։

ՀԱՆԳՈՒՑԱԼՈՒԾՎԵԼ, բ. **Ավարտվել:** Ռեստորանի մոտ ծագած վեճը **հանգուցալուծվել** էր գարեջրի շշի հարվածով (Համացանց, 17.05.2014)։

ՀԱՆԳՐՎԱՆԱՅԻՆ, ած. **Վերջնական :** .... Եվ գրեթե բոլորը տեղյակ են՝շատ նորմալ է, **հանգրվանային** որոշում է....(ՀՀ, 03.12.2013)։

ՀԱՆԴԲՈԼԻՍՏ, գ. **Զեռնագնդորդ:** Մրցաշարի հաղթող է ճանաչվել Վրաստանի հավաքականը, որը եզրափակիչում հաղթանակ է տարել ռուսաստանցի երիտասարդ **հանդբոլիստների** նկատմամբ (ՀՀ, 03.12.2013)։

ՀԱՆԴԻՍԱՎԱՐ, գ. **Հանդիսությունը վարող:** Սգո **հանդիսավարը** խոսքն առաջինը փոխանցում է պատմական գիտությունների դոկտոր պրոֆեսոր Աշոտ Ներսիսյանին (Հրապ., 21.11.2014)։

ՀԱՆԿԱՐԾԱԶԱՐԿ, ած. **Հանկարծակի՝ անսպասելի՝ անակնկալ :** Նրա **հանկարծազարկ** ցնցումները պաստառների կցոնների, ճյուղավորումների վրա և տարաբնույթ կանգառները տեսնելը, աղմուկի լսելը,... վեր են ածվել թմրության պատրանքի (ԳԹ,13.12.2013)։

ՀԱՆՁՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ, գ. Խորհրդային Հայաստանին փաստորեն ներկայացվել էր բացառապես անվերապահ **հանձնատվության** (կապիտուլյացիոն) կարգավիճակ (Իրատես, 21.03.2014)։

ՀԱՆՐԱԼՍԱՐԱՆ

ՀԱՆՐԱՃԱՆԱՉՈՒԹՅՈՒՆ, գ. Ամենայն հավականությամբ, որդիները չեն դիմանում այն ծանր պատասխանատվությանը, որ առաջանում է հայրերի հեղինակության և **հանրաճանաչության** արդյունքում (Ժամ., 23.10.2013)։

ՀԱՆՐՈՒՅԹ, գ.Մենք քաղաքակիրթ **հանրույթ** կոչվելու իրավունք չունենք (Համացանց, 27.04.2014):

ՀԱՆՑԱՊԱՏԺՈՒՄ, գ. **Հանցանքների համար պատժելը**: ….Առասպելատիպ հերոսի մղած բոլոր մարտերն ու հեղափոխական գործունեության մանրամասները, բանտարգելություններն ու փախուստները, մասնակցությունը ցեղասպանության ոճրագործների **հանցապատժմանը….** (Ազգ, 12.09.2014):

ՀԱՆՔԱՀԱՐՍՏԱՀԱՆՈՒՄ, գ. Երկիրն ու սիրելն անհնար առաջադրանք են մեզ համար, փախուստը՝դեպի օտար միջավայր, կամ մեր միջավայրին օտարանալով՝ խորթացումը, ատելությունը և, ի վերջո ոչնչացումը՝ **հանքահարստահանումից** ու անտառաջարդից մինչև գետերի չորացում (Հրապ., 04.11.2014):

ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՒՄ, գ. Կարեն Ճշմարիտյանը ընդհանրապես դեմ է հանդես գալիս **հանքարդյունահանման** հետևանքով առաջացած թափոնների հարկման նախաձեռնությանը (Ժող., 31.01.2015):

ՀԱՇԻՇԱԾՈՐ, ած. Հաշիշ ծորացող: Շփացած ու տարված հաշիշածոր քնով, //Մրափում եմ կիտած ոսկու շեկ շեղջերին (ԳԹ, 15.11.2013):

ՀԱՇՎԱԿԱՐԳ, գ, 1944 թ. ստեղծվեց Բեթոն–Վուդի համակարգը, որը սկզբնավորեց փոխարժեքների **հաշվակարգը** (Ազգ, 07.11.2014):

ՀԱՇՎԵԳՈՒՄԱՐ,գ. **Հաշիվների գումար**: Դե, նրանց թվերն ուրի՞շ են, և հիմքում իրենց գրպանների **հաշվեգումարն** է, մնացյալը պտտվում է այդ առանցքի շուրջ (ԳԹ, 19.07.2013):

ՀԱՍԱՐԱԿԱԿԵՆՏՐՈՆ, ած. ....Աստիճանաբար անցում ենք կատարում **հասարակակենտրոն** հասարակության... (Իրատես, 12.12.2014):

ՀԱՍԱՐԱԿԱՅՆԱՑՈՒՄ, գ. **Հասարակությանը տեղյակ պահելը:** Հնդկաստանի մարդկային ռեսուրսների զարգացման նախարարի կինը մահացած է հայտնաբերվել՝ սիրուհու հետ ենթադրյալ նամակագրության **հասարակայնացումից** մեկ օր առաջ (Հրապ., 19.01.2013):

ՀԱՍՏԱՌՏ, գ. **Հաստ՝ գեր ոտքեր ունեցող**: **Հաստառոտ** կնոջ կարմիր շուրթերը ժպտացին Պեպենոտ Կարճահասակին (ԳԹ,14.03.2014):

ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ, գ. **Հաստիքների՝ աշխատատեղերի ցուցակ:** Խնդիրը կառավարման ուռճացված **հաստիքացուցակը** կրճատելն է (Հրապ., 12.11.2014):

ՀԱՎԱՍԱՐԱՁԵՎՈՒՆԱԿ, ած. Մարդն իբրև ծառ և սյուն իր տարբեր մասերով, վաղնջական է, **հավասարաձևունակ** Տիեզերական ծառին կամ սյանը (ՍՀ, էջ 21):

ՀԱՎԱՍՏԱՆՇԵԼ, բ. ....Արցախի ՊԲ առաջապահ ստորաբաժանումները, **հավաստանշելով** ադրբեջանական դիվերսիոն խմբերի գործողությունները, երկու ուղղություններում էլ անցան կազմակերպված պաշտպանության (Իրատես, 07.03.2014):

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԱՅԻՆ, ած. Նախագահ Սերժ Սարգսյանը երեկ ընդունել է հայկական երկաթուղու **հավատարմագրային** կառավարումն ստանձնած «Ռուսական երկաթուղիներ» ԲԲԸ նախագահ Յակունինին (ՀՀ, 19.06.2014):

ՀԱՎԱՏԱՓՐԿԻՉ, գ.Պայծառ, պայծառ մարդ էր Կարենը, Մակարա **հավարափրկիչն** էր Կարենը, Պայտաթափ լեռան արծիվն էր Կարենը (TVալիք, 02.02.2015):

ՀԱՎԵՐԺԱՄՈՒԽ, ած. **Հավերժի մեջ մխրճվող**: Այսպես մենք աստիճանաբար կորցնում ենք մեր առինքնումի **հավերժամուխ** հոգեկերտվածքը.....(ԳԹ, 21.02.2014):

ՀԱՏԻԿԸՆԴԵՂԵՆ, գ. Շիրակի մարզում, որը հացահատիկ և **հատիկընդեղեն** արտադրող հիմնական տարածաշրջաններից է, գրանցվել է արտադրության 7.1 տոկոսի նվազում …. (ՀՀ, 05.02.2015):

ՀԱՐԳՈՐՈՇՎԵԼ, բ. **Հարգը, տեսակը որոշել**: Թանկարժեք մետաղների ու բյուրեղապակու պահոցները մետաղական պահարաններ են, որտեղ պահված իրերը **հարգորոշված** են, կշռված....(ՀՀ, 29.01.2014):

ՀԱՐԴԱՐԱՏԱՐՐ, գ. **Հարդարանքի տարր:** Միանգամայն այլ է, երբ խաչքարը հանդես է գալիս որպես վանքի և տաճարի գեղարվեստական **հարդարատարր** (ՀՊ, էջ 325):

ՀԱՐԵՐԿՐԱՅԻՆ, ած. **Հարերկրային** ուղեծրում այդ գծերն ուղղված են գրեթե այնպես, ինչպես Երկրի մակերևույթին (TV մոլ, 12.05.2014):

ՀԱՐԸՆԿԼՈՒԶՎԵԼ ,բ. **Ներսուզվելը:** .... Բարձրյալի հրահանգով՝ թողնելով այս մեղսավոր աշխարհը, առանց հանրահռչակման մոլուցքին տրվելու, տիեզերական ամբողջի մեջ են **հարընկլուզվում** (ԳԹ,14.02.2014):

ՀԱՐԿԱՁԵՐԾ, ած, **Հարկերից ազատված, չհարկվող**: Միաժամանակ նա (Պուտինը) Վլադիվոստոկը հայտարարել է **հարկազերծ** տարածք, իսկ մանր ու միջին բիզնեսի համար նպաստավոր պայմաններ առաջադրել (Ազգ, 05.12.2014):

ՀԱՐՅՈՒՐՏՈԿՈՍԱՆՈՑ, ած. Նախապայման եմ համարում համամասնականին անցնելը, որովհետև անհրաժեշտ եմ համարում **հարյուրտոկոսանոց** համակարգ ունենալ (Ժող., 21.11.2014):

ՀԱՐՊՏՂԱՋՐԱՅԻՆ, ած. Ծննդկանի մահվան պատճառը **հարպտղաջրային** էմբոլիան է եղել (Համացանց, 29.05.2014):

ՀԱՐՄՆԱԿՈՏՈՐ

ՀԱՐՅԱՀՈՒՆՉ, ած. .... Հարություն Հովնաթանը.... հարուստ գիրք է գրել՝ նվիրված Սահյանին, ավելի ճիշտ՝ նորոգել , հարստացրել է իր հարցահունձ գիրքը՝ վայել բանաստեղծի մեծությանը (ԳԹ,18.04.2014):

ՀԱՐՅԱՑԱՆԿ, գ. Այս հարցերն էլ խիստ «վտանգավոր» են վարձավճարված քաղաքական դաշտի համար, որտեղ արտոնված է մտածել ու տեսակետ արտահայտել հաստատված **հարցացանկի** վերաբերյալ (Իրատես, 21.01.2014):

ՀԱՑԱՀԱՏԻԿԱՑԱՆ, ած. **Հացահատիկ ցանող:** .... Հանրապետության հիմնական հացահատիկացան տարածաշրջաններում աշնանացան ցորենի ցանքերը չեն տուժել.... (ՀՀ, 13.02.2014):

ՀԱՔԵՐԱՅԻՆ, ած. **Համակարգչային նշոցները կոտրող:** Այն կայքերը, որոնք հրապարակել էին Վոլոդյա Հովհաննիսյանի հոդվածը, ենթարկվել էին **հաքերային** հարձակման (Ժամ., 21.05.2014):

ՀԵԳՆԱՀՈՒՆՉ, ած. **Հեգնաբար հնչող**: Էքսպոզիցիան ծայր է առնում հսկիչի «Ձեր տոմսակը, խնդրեմ» չափազանց քաղաքավարի ու **հեգնահունչ** բառերով ....(Ազգ, 14.03.2014):

ՀԵԹԱՆՈՍՈՒՀԻ, գ. **Հեթանոս կին:** Շատերս ենք լսել հին հեթանոսական տաճարներում տեղի ունեցած սեռական սանձարձակությունների մասին, երբ նույնիսկ հայ **հեթանոսուհի** մայրիկներն էին իրենց կույս ու դեռատի աղջնակներին տանում տաճարական առնականների, այսպես կոչված, սուրբ ցուլերի հետ զուգավորելու, որպեսզի իրենց սերունդը «սրբանա» չաստվածների միջամտությամբ (Իր., 07.10.2014):

ՀԵԼՈՒՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ, գ.**Հելունով գործելը**: .... Տիկնիկները գործելիս օգտվում ենք ազգագրագետ Պատրիկի գրքից, և ունենք «Թալինի տիկնիկներ» ծրագրի ղեկավար, որը լավ մասնագիտացված **է հելունագործության** մեջ և սովորեցնում է մյուս կանանց (Ազգ, 04.04.2014):

ՀԵՆԱՀՐԱՊԱՐԱԿ, գ. Այն նույն 2002-09թթ., գուցե և այդ տարիներից հետո էլ, ամերիկացիներն անգլիացիների, իսրայելցիների և Թուրքիայի հետ ամեն ինչ անում էին, որ Ադրբեջանը դարձնեն իրական ռազմական **հենահրապարակ** (Իր., 07.11.2014):

ՀԵՆԱՇԱՐԺՈՂԱԿԱՆ, ած. **.... Հենաշարժողական** խնդիրներ ունեցող անձանց նկատմամբ ուշադրությունը քաղաքապետարանի կողմից մշտական է.... (ՀՀ, 21.12.2013):

ՀԵՇՏԱՄԱՐՍ , ած. **Հեշտ մարսվող, դյուրամարս**: Որքան հասկացա, պատվարժան ուտեստներից էր տապակած «սուլթան Իբրահիմ» ձկնատեսակը, որն իսկապես շատ համեղ էր ու **հեշտամարս** (Ազգ, 04.04.2014):

ՀԵՇՏԱՎԱՐՔ, ած. – //Գինովի նման երեր է քայլքս // Եվ ընկած խելքին **հեշտավարք** / սրտիս // Այնտեղ եմ, ուր որ //Բոսորաշղարշ գեղուհին իջել //Ու … պա՛ր է գալիս… (ԳԹ, 06.03.2015):

ՀԵՌԱԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ, գ. Տե՛ս ԿԵՆՍԱԿՏԻՎ-ի օրինակը:

ՀԵՌԱԳՐԱՎԱՐ, գ. **Փոստատան աշխատակից, որը հեռագրեր է ստանում և ուղարկում**: Նրանք կաշառում էին **հեռագրավարներին** և Փարիզի բորսայի կուրսի տատանումների մասին բոլորից շուտ էին իմանում (TV մոլ, 30.01.2014):

ՀԵՌԱԶԱՆԳ, գ. **Հեռախոսով զանգելու ծառայություն:** «Բարբառ» սակագնային պլանի բաժանորդները կարող են **«Հեռազանգ»** ծառայության միջոցով զանգահարել Ռուսաստանի… բաժանորդներին /Հրապ., 31.10.2013 /:

ՀԵՌԱԹԱՓԱՆՑՈՂԱԿԱՆ, ած. Պարզվում է, կանխագուշակ գալիքն ու ապագան տեսանող ոգով լցված գուշակ Զրադաշտը **հեռաթափանցողական** իր տեսիլքում շրջում է երկու ծովերի միջև գտնվող բարձր լեռների թմբին (Գարուն, էջ 105):

ՀԵՌԱԽՈՍԱՄԱՐԱԹՈՆ, գ. Նոյեմբերի 21-24-ին տեղի է ունեցել «Հայաստան» համահայկական հիմնադրամի համաեվրոպական **հեռախոսամարաթոնը,** որը հավաքագրել է 1.460.000 եվրոյի նվիրատվություն և նվիրատվության խոստում (TV մոլ, 27.10.13):

ՀԵՌԱԽՈՍԱՏԵՐ, գ. **Հեռախոսի տեր:** Պարույրը կնոջ ձեռքից վերցրել է հեռախոսը, վերադարձրել **հեռախոսատիրոջը** (Ժամ., 30.04.2014):

ՀԵՌԱԿԱՊ, գ. Նիստին **հեռակապով** մասնակցում էին Արցախի ժուռնալիստների միության նախագահ Կիմ Գաբրիելյանը, Իրանից՝ «Ալիք» օրաթերթի գլխավոր խմբագիր Դերենիկ Մելիքյանը .... (ՀՀ, 21.05.2014):

ՀԵՌԱՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄ, գ. Այն մարզային միկրովերահաղորդիչ կայաններում տեղադրելու համար ձեռք է բերվել 95 նոր աշտարակ և 150 **հեռահաղորդակցման** խցիկ (TV մոլ, 27.10.2014):

ՀԵՌԱՀԱՇՎԱՐԿ, գ. .... **Հեռահաշվարկի** համար վերլուծական կարողությունները կաղում են, ուժավեկտորային սանդղակն էլ հեղհեղուկ է.... (ԳԹ, 14.02.2014):

ՀԵՌԱՀՄԱ, ած.**Հեռվից հմայող:** Տարիների երամները որքան էլ փորձ արին հեռու պահել նրան **հեռահմա** թախիծներից անքուն, մայրաբույր հուշը՝ իբրև դարձի օրոր՝ կամուրջի պես կապեց նրա օրը դարին.... (ԳԹ,11.10.2013):

ՀԵՌԱՈՒՍՈՒՑՈՒՄ, գ. **Ուսուցում, որը կատարվում է հեռուստացույցի միջոցով: Հեռաուսուցումը** ենթադրում է ուսուցում ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ (ՀՀ, 05.03.2014):

ՀԵՌԱՊԱՏՃԵՆ, գ. **Ֆաքս:** .... Լրատվական գործունեություն իրականացնողի և լրագրողի էլեկտրոնային փոստի հասցեն, հեռուստահամարներն ու **հեռապատճենների** համարները (ՀՀ, 17.01.2014):

ՀԵՌԱՏԵՍԱԿԱՆ, ած. **Հեռուն տեսնող**: **Այդ առումով չափազանց հեռատեսական** ծրագիր էր «Թումո» կենտրոնի հիմնադրումը Երևանում…. (Ազգ, 31.10.2014):

ՀԵՌՈՒՍՏԱԱՍՊԱՐԵԶ, գ. Ինձ հաճախ են հարցնում, թե ինչո՞ւ **հեռուստաասպարեզ** չեմ մտնում (TV մոլ, 27.10.2014):

ՀԵՌՈՒՍՏԱԳՈՐԾ, գ. Այս **հեռուստագործի** գլուխ կանգնած է «Երե1»-ի ստեղծագործական կազմը (TV մոլ, 06.10.2014):

ՀԵՌՈՒՍՏԱԴԱՇՏ, գ. Համաձայնեցի ոչ թե նրա համար, որ անգործ էի, այլ հասկացա, որ պետք է վերադառնալ **հեռուստադաշտ** (TV մոլ, 27.10.2014):

ՀԵՌՈՒՍՏԱԶԱՆԳՎԱԾ, գ. **Հեռուստադիտողների խումբ:** Մի ստվար **հեռուստազանգված** սիրեց ֆիլմը (TV մոլ, 16.06.2014):

ՀԵՌՈՒՍՏԱԷԶ, գ. **Հեռուստատեսային հաղորդման մաս:** Եթերում «Գորդյան հանգույց» **հեռուստաէջի** հերթական թողարկումն է (Հեռ., «Զինուժ», 06.12.2014):

ՀԵՌՈՒՍՏԱԺԱՄ,գ. **Հեռուստատեսային հաղորդման վերնագիր:**: Նախապես ձեռք բերված պայմանավորվածությամբ ինձ հետ հարցազրույց վարեց Հայկական **հեռուստաժամի** աշխատակիցը ....(Ազգ, 04.04.2014):

ՀԵՌՈՒՍՏԱԺԱՄԱՆՑ

ՀԵՌՈՒՍՏԱԺՈՂՈՎՈՒՐԴ, գ. Ի վերջո, հենց այդ համադրումների մեջ է ձևավորվում այն եզակի հանրությունը, որ կոչվում է **հեռուստաժողովուրդ,** և պատիվ ու պատասխանատվություն ունի հասարակությանը ներկայացնել, ոչ միայն օրվա լուրերն ու տեղեկությունը, այլև ձևավորել մտախոհություն, ընկալում, տեսակետ (Իրատես, 18.03.2014):

ՀԵՌՈՒՍՏԱԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ, գ. Մարտի 14-ին մանկավարժական համալսարանում բացվեց Արմեն Հովհաննիսյանի անվան ուսումնական ստուդիա և Ստեփան Պողոսյանի անվան **հեռուստալրագրության** լսարան (Իրատես, 18.03.2014):

ՀԵՌՈՒՍՏԱԽՈՐՀՈՒՐԴ, գ. **Հեռուստախորհուրդի** հեռուստաելույթը ենթադրում է ոչ սովորական մի իրավիճակ (Ժամանակ, 11.01.2014):

ՀԵՌՈՒՍՏԱԾԱԾԿՈՒՅԹ, գ. Հայաստանում ամբողջական **հեռուստածածկույթ** ապահովելու նպատակով ավելի քան 90 նոր հեռուստակայան կստեղծվի (TV մոլ, 27.10.2014):

ՀԵՌՈՒՍՏԱՀԱՂՈՐԴԱՎԱՐ, գ.

ՀԵՌՈՒՍՏԱՀԱՂՈՐԴԱՎԱՐՈՒՀԻ, գ. Պատճառաբանությունը մեկն է՝ քրիստոնեության այդ խորհրդանիշը ցուցադրելով՝ **հեռուստահաղորդավարուհին** վիրավորում է հազարավոր այլադավանների կրոնական զգացմունքները (Իր., 07.10.2014):

ՀԵՌՈՒՍՏԱՃԱՄՓԱ, գ. Ահա վերջերս երկար **հեռուստաճամփա** բռնած «Բախտաբեր» սերիալում նրա ազնիվ ու պատվախնդիր հերոսի ներկայությունը, համոզված ենք, կրկին բազում «սիրունների» հոգիներ է փոթորկելու (TV մոլ., 23.03.2015):

ՀԵՌՈՒՍՏԱՄԱԳՆԱՏ, գ. Եվ **հետուստամագնատների** մեծ մասը գիտակցեց, որ եթե իրենք ցանկանում են ապրել մի երկրում, որտեղ երեխաները կարող են հանգիստ զբոսնել, իսկ ծնողներն էլ չտագնապեն նրանց կյանքի համար, ապա հարկ է չափավորել ախորժակը (TV մոլ, 27.01.2014):

ՀԵՌՈՒՍՏԱՄՇԱԿՈՒՅԹ, գ. Մյուս փառավոր անունը Արմեն Հովհաննիսյան է, մարդ, որ հեղաշրջեց **հեռուստամշակույթը** իր հանրահայտ «22.30» հաղորդումով, որի թիկունքում մի ամբողջ աշխարհ էր, մի քանի սերնդի աշխարհաճանաչում (Իրատես, 18.03.2014):

ՀԵՌՈՒՍՏԱՆԱԽԱԳԻԾ, գ. Հարություն Խաչատրյանը պատրաստում է այս ֆիլմաշարը՝ նպատակ ունենալով այն վերածել **հեռուստանախագծի,** որպեսզի առավել լայն լսարան

հավաքի այդ ֆիլմերում արծարծվող՝ իրեն ու բոլորիս հուզող անհանգստությունների շուրջ (Իրատես, 12.12.2014):

ՀԵՌՈՒՍՏԱՇՈՒԿԱ

ՀԵՌՈՒՍՏԱՈՒՂԵՐՁ, գ. **Ուղերձ՝ հեռուստացույցով**: Մաղթում եմ Հայաստանի ամեն մի ընտանիք նոր՝ 2014 թվականին կարողանա կյանքի կոչել իր երազանքները՝ (Ս. Սարգսյանի **հեռուստաուղերձը)** (Համացանց, 18.01.2014):

ՀԵՌՈՒՍՏԱՊԱՐԱՊՈՒՐԴ, գ. Իսկ թե ի՞նչ հասկացնել տվեց իրեն **հեռուստապարապուրդը,** ինչպես ընտելացավ Կարինային և ի՞նչ անելիքներ է ծրագրել՝ այդ ամենի մասին զրուցեցինք հաղորդավարի հետ (TV մոլ, 27.10.2014):

ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ, գ. Հայաստանի կառավարությունը …. որոշում է կայացրել ազատել հանրային **հեռուստառադիոընկերությանը** ….շահութահարկից (Ժամ., 11.01.2014):

ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ, գ. Կուլտուրայի ֆակուլտետի **հեռուստառադիոլրագրության** ամբիոնի վարիչ, դոցենտ Լևոն Գալստյանը հանգամանալից բացատրեց.... (Իրատես, 18.03.2014):

ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԽՈՐՀՈՒՐԴ, գ. **Հեռուստատեսության և ռադիոյի խորհուրդ :** Հեռուստառադիոխորհրդի նախկին նախագահ Ալիկ Հարությունյանը նշանակվելու է ՀՀ արտաքին գործերի նախարարի խորհրդական (Հրապ., 12.02.2014):

ՀԵՌՈՒՍՏԱՏԱՐԱԾՔ, գ. Միևնույն ժամանակ նույն արևմտյան հեռուստալիքները, սկսած **հեռուստատարածքից** վռնդված CNN -ից և իր ռուսերեն հաղորդումները անսպասելի վերսկսած «Euronews»-ից, ամեն օր հեռարձակում էին կադրեր, որոնք վկայում էին.... (Իր., 21.11.2014):

ՀԵՏԱԶՈՏԱՆԱԽԱԳԾԱՅԻՆ, ած. Ոչ ոք գյուղնախարարության ձեռքը չէր բռնելու, եթե կառավարության պահուստային ֆոնդից պահանջեր 350մլն դրամ **հետազոտանախագծային** աշխատանքների նպատակով (Հրապ., 12.02.2014):

ՀԵՏԱԽՈՒԶԱԴԻՎԵՐՍԻՈՆ, ած.**Հետախուզախափանարարական:** ....ԼՂՀ և ՀՀ պետական սահմանահատվածում՝ Քարվաճառի ուղղություն, հակառակորդը ձեռնարկել է հերթական **հետախուզադիվերսիոն** ներթափանցման փորձը (Ազգ, 11.07.2014):

ՀԵՏԱՆԿԱԽԱԿԱՆ, ած . **Անկախացմանը հաջորդող**: Կյանքն ընդհատումներ չունի, **հետանկախականը** շարունակում է «ստրկականին», և գրականության հերոսը անարգելք անցնում է սահմանը....(ԳԹ, 22.11.2013):

ՀԵՏԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆ, գ. **Հետանկախության** շրջանում հայկական կինոյի համար նոր փուլ է սկսվում (Իրատես, 25.11.2014):

Հետաքրքիր է, վարչապետն այդ դեպքում է՞լ ՍԴՀԿ-ն կգրանցի օֆշորային գոտում / Ժողովուրդ ,28.11.2014 /:

ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ, ած. Դրանք պայմանավորված էին «Բարձրագույն և **հետբուհական** մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքում հունիս ամսին կատարված փոփոխություններով (Եր. համ., սեպտ., 2014):

ՀԵՏԵՂԵՌՆՅԱ, ած. **Եղեռնից հետո**: «Հայացք Արարատից. Հայերը և թուրքերը» ժողովածուն անդրադարձ է հայ ժողովրդի պատմության **հետեղեռնյա** ընթացքին ….(Ազգ, 31.10.2014):

ՀԵՏԶԱՆԳ, գ. **Հետադարձ զանգ:** Այսուհետ Հայաստանի քաղաքացիները.... կարող են համապատասխան տեղեկատվություն գտնել նշված վեբ կայքում և իրենց հարցերն ուղղել՝ առցանց, զանգահարելով թեժ գծին կամ կայքից **հետզանգ** պատվիրելով (Ազգ, 14.03.2014):

ՀԵՏԸՆԴՈՒՆՈՒՄ, գ. ԱԺ-ն քննարկեց 2013 թվականի ապրիլի 19-ին Բրյուսելում ստորագրված ՀՀ և Եվրոպական միության միջև առանց թույլատվության բնակվող անձանց **հետընդունման**՝ ռեադմիսիայի մասին համաձայնագիրը (Ժամ., 28.10.2013):

ՀԵՏԼԻՑՔ, գ. **Վերականգնել, կրկին լցնելը**: ....Որ «Երևան ջուր» ընկերությունն առաջիկա երկու օրվա ընթացքում կավարտի կոյուղատարի վերանորոգումը, որից հետո կկատարվի ճանապարհի **հետլիցք** (ՀՀ, 17.09.2014):

ՀԵՏԾՆՆԴՅԱՆ, ած, **Ծննդաբերությանը հաջորդող**: Կանանց տրվող նախածննդյան և **հետծննդյան** նպաստների միջոցով պետական բյուջեի միջոցների յուրացման մեխանիզմը շատ պարզ է (Ազգ, 07.11.2014):

ՀԵՏԿԱՆՉՎԵԼ, բ. **Հետ կանչվելը :** .... **Հետկանչված** խաղալիքների բողոքների գրանցամատյան է վարվում ....(ՀՀ, 07.03.2014):

ՀԵՏՀԱՆՐԱՀԱՎԱՔԱՅԻՆ, ած. Ինչ է լինելու հոկտեմբերի 24-ին՝ հոկտեմբերի 10-ի **հետհանրահավաքային** իրադարձությունների համապատկերում (Իր., 21.10.2014):

ՀԵՏՀԱՇՎԱՐԿ, գ. ԵՏՄ անդամակցության վերջնահաշվարկ, հետհաշվարկ՝ օր 3 (Հրապ., 16.12.2014):

ՀԵՏՀԱՇՎԱՐԿՎԵԼ,բ. Հայաստանի **հետհաշվարկված** դիրքը սահմանային միավորի առնչությամբ 2014–ին կազմում էր 69,3 միավոր (Ազգ, 31.10.2014):

ՀԵՏՃԱՇԻԿ, գ. **Հետճաշիկի** համար ավելի լավ է եգիպտացորեն ընտրել, քան բանան (TV մոլ, 18.08.2014):

ՀԵՏՄԵՆԱՄԱՐՏԱՅԻՆ, ած. Նախ, աշխարհի չեմպիոնուհուն շնորհավորելով վերջին հաղթանակի առիթով, հետաքրքրվեցինք նրա **հետմենամարտային** տրամադրությամբ (TV մոլ, 16.12.2013):

ՀԵՏՍԱՌԸՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ, ած. Զորօրինակ, ըստ էության ուկրաինական ճգնաժամի դրսևորմամբ ավարտվում է **հետսառըպատերազմյան** էպոխան.... (168 ժ., 20.11.2014):

ՀԵՏՎԹԱՐԱՅԻՆ, ած. **Վթարին հաջորդող**: Այդ ավտովթարից հետո մոտ չորս ամիս ղեկին չեմ կպել, մոտ երկու ամիս պահանջվեց, որպեսզի ազատվեմ **հետվթարային** բարդույթից (TV մոլ, 25.11.2013):

ՀԵՏՎՃԱՐԱՅԻՆ, ած. **Հետո վճարվող:** Ծառայություններից օգտվելու համար անհրաժեշտ է ակտիվացնել ռոումինգը՝ հավաքելով «500» հրահանգը՝ **հետվճարային** համակարգի բաժանորդների համար (Ժող., 14.03.2015):

ՀԵՏՎՆԱՍՎԱԾՔԱՅԻՆ, ած. «Անահիտ» քսուքը նպաստում է **հետվնասվածքային տրավմաների բուժմանը** (Տն. առ., թ. 6, 2014):

ՀԵՏՔԱԲԱՆԱԿԱՆ, ած. Քննիչը պարտավոր էր առգրավել և զննության ենթարկելու նպատակով նշանակել **հետքաբանական** փորձաքննություն (Ժամ., 22.10.2013):

ՀԵՏՔԱՅԼ, գ. ԲՀԿ ղեկավարը մեկ անգամ ևս արձանագրել է, որ իր արժանապատվության և կուսակցության հեղինակության հաշվին որևէ զիջում և **հետքայլ** բացառված է /Հրապ., 06.05. 2014 /:

ՀԵՐԱԴՈՒԼ,ած, **Անխնամ մազերով** : Երբ **հերադուլ** կանայք գնան, հեռանան, //Սրտանոցներն ամրացնելով քայլ առ քայլ // Ես կնայեմ երինջների աչքերին, // Եվ աչքերից արյան ծովեր կժպտան (ԳԹ, 20.09.2013):

ՀԵՔՍԱԳՐԱՄԱ, գ. Չկա անհատի կյանքի ոչ մի ելևէջ, որ 64 **հեքսագրամաներից** մեկով նկարագրված չլինի (Հրապ., 26.12.2014):

ՀԻԴՐՈԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ, ած. **Ջրաերկրաբանական։Հիդրոերկրաբանական** մշտադիտարկումները ցույց են տվել, որ դեկտեմբեր ամսվա ընթացքում …. Արևաբույր գյուղի դիտակետերում մակարդակների բարձրացում է նկատվել 4–12 սմ–ով…. (ՀՀ, 23.12.2014)։

ՀԻՄՆԱԹԵՄԱ, գ. **Հիմնական՝ գլխավոր թեմա։** Տարվա **հիմնաթեման** համարում եմ ԵԱՏՄ-ին Հայաստանի անդամակցության նախապատրաստությունը, հասարակական քննարկումներն ու բանավեճերը (Իրատես, 02.12.2014)։

ՀԻՄՆԱԿԱՏԱՐԵԼ, բ. **Հիմնովին կատարել։** Ձեր խոնարհ ծառան (Տ. Ուրիխանյանը) **հիմնակատարեց** իր պարտքը կուսակցության թիմին (Ժամ., 07.03.2015)։

ՀԻՄՆԱՁԵՎՈՒՄ, գ. Երկու **հիմնաձևումն** էլ դրսևորվել է առասպելաբանական այն նախնական աշխարհընկալումը, ըստ որի մարդը ծագումնաբանական սերտ կապի մեջ է գտնվում բուսական աշխարհի հետ, և վերջինիս նախանյութը մարդկային է (ՍՀ, էջ 278)։

ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄ, գ. **Հիմնովին նորոգելը**։ Նա Հայաստանում Հաղարծին վանքային համալիրի **հիմնանորոգման** ֆինանսավորողն է (TV ալիք, 17.11.2014)։

ՀԻՄՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆ, գ. **Հիմնավորված լինելը։** Հայերիս ավանդական արտաքին քաղաքականությունը.... ոչ առանց **հիմնավորվածության** համեմատել ենք կաթսայից թղթե շերեփով հարիսա քաշելու փորձի հետ .... (ԳԹ, 08.11.2013)։

ՀԻՆԱՐԵՎԵԼՅԱՆ, ած. Սյուժետային այս նույն ուրվագիծն է գրեթե ընկած **հինարևելյան** ու փոքրասիական մայր աստվածությունների և նրանց երիտասարդ սիրահարների մահվան ու հարության առասպելների հիմքում (ՍՀ, էջ 367)։

ՀԻՆԳՀԱՏՈՐՅԱԿ, գ. Այս տարի լույս տեսավ նաև հայ գրատպություն 500 և ԵՊՀ ՈՒԳԸ հիմնադրման 65-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութերի **հինգհատորյակը** (Եր.համ., թիվ. 11, 12.2013)։

ՀԻՆՁՔ, գ. Եվ ձիեր, և մերձ, մերձեցում փափուկ,// գինեհունց և **հինձք,** հնձվորներ գինարբ,// Հնձվորներ և հունձ, և հնձան մարմին, //մարմնի շուրջ՝ և նուրբ, և կապույտ թավիշ (ԳԹ, 21.03.2014)։

ՀԻՇԱՏԵՆԴ, գ. Հո մարդ չէ, որ անպատեհ մի պահի բռնվի **հիշատենդով** և բան ու գործ թողած՝ ուշքը անցած-գնացած բաներին տա (ՀԲ, էջ 135)։

ՀԻՊԵՐՌԵԱԼԻՍՏԱԿԱՆ, գ. **Խիստ ռեալիստական:** Զրային թարմություն. 20 **հիպեռեալիստական** կտավ Էրիկ Զեներից: Ինքնուս նկարչի ստեղծագործության թեման ջուրն է (Համացանց, 21.03.2014):

ՀԻՊՈԹԵԿ, գ. Այվազյանը «Նորվիկ» վարկային կազմակերպությունից հիպոթեկով բնակարան էր ձեռք բերել (Հրապ., 12.10.2013):

ՀԻՎԱՆԴԱՑՈՒԹՅՈՒՆ, գ. **Հիվանդանալու դեպքերը**: …. Ծրագրի պատասխանատուներն ակնկալում են ծրագրի միջոցով կրճատել արգանդի պարանոցի քաղցկեղի և ՈՎՀ **հիվանդացության** ու մահվան ցուցանիշները (ՀՀ, 01.11.2014):

ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ, ած. 2013թ. հանրապետությունում իրականացվել է **հիփոթեքային** գրավադրման 1895 գործարք .... (ՀՀ, 01.02.2014):

ՀՄԱՅԱԽՈՍԱԿԱՆ, ած. Այսինքն՝ հակասության և կռվի խոսքային-հոգեբանական բնույթը միանգամայն համասեռ է ու համախոս դրան հետևող պատժի **հմայախոսական** բնույթին (ՍՀ, էջ 198):

ՀՅՈՒԹԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ, գ. **Բուժում հյութերի միջոցով**: Փայծաղի ֆունկցիան լավացնելու համար ցանկալի է տարեկան 2-3 անգամ անցկացնել **հյութաբուժության** թերապիա (TVալիք, 20.01.2014):

ՀՅՈՒՍՔԱՆԱԽՇ, գ. Եթե նշվում է, որ պետք է հավաքել 24 հատ, ապա դրանից միայն 22-ն է կազմում **հյուսքանախշը** (Զեռ., էջ 8):

ՀՅՈՒՐԱՏՆԱՅԻՆ, ած. **Հյուրանոցային**: **Հյուրատնային** սեզոնը Դսեղում սովորաբար սկսվում էր հունիսից (ՀՀ, 01.11.2014):

ՀՆԱՀՈՏ, գ. **Հնության հոտ**: ....Փորձ արվեց վերականգնելու «արքա», «թագավոր», «իշխան» անվանումները, որոնք առանձնապես շատ չտարածվեցին, կամ մենահնոտի մնացին, կամ էլ արդիական ու հնչեղ չէին. երևի **հնահոտ** է փչում: Փոխարենը շրջանառվեցին նույն իմաստ արտահայտող օտարազգի անվանումները (Իրատես, 18.03.2014):

ՀՆԷԱՑՆԵԼ, բ. Անուններս դրել ենք հին ժողովուրդ, շատ հին ժողովուրդների ճանապարհի մեջտեղում ենք թողել ու հիմա ոչ թե հին ենք, այլ հնացած, գոնե **հնէացրած** լինեինք (ԳԹ, 13.09.2013):

ՀՆՉԱԳԻՐ, գ. Տե՛ս ՀԱՄԱՀԵՂԻՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ-ի օրինակը:

ՀՆՉՅՈՒՆԱԾԱՂԻԿ, գ., Նա իր «աշխարհ տեսած» մատներով կոմիտասյան այս **հնչյունածաղիկներից** խնամքով ու գորովանքով հյուսում էր, փնջում էր իր «իկեբանան» (Իր., 31.10.2014):

ՀՆՉՅՈՒՆԱԾԱՎԱԼ, գ. Եվ «արթնացնելով» հնչեցնելով չորս ոլորտի բաժանած դաշնամուրի **հնչյունածավալը,** Լյուբիմովը վերստեղծում էր կոմիտասյան «ձայնանկարները»... (Իր., 31.10.2014):

ՀՈԳԵԱՌՈՒԹՅՈՒՆ, գ. **Հոգին առնելը, մահացնելը:** Հայոց ուշ ավանդության մեջ Գրողի ամենատարածված ու ընդհանրական գործառույթն է դառնում **հոգեառությունը** (ՍՀ, էջ 394):

ՀՈԳԵԱՐԱՐ,գ. **Հոգի արարող:** Լուռ աղոթքներ, ապա հայոց գրաբարի անուշածոր երգ ու հորդոր, աղերսների փնջավոր տաղ, դրախտադուռը բացելու հաջողության **հոգեարար** .... (ԳԹ, 11.10.2013):

ՀՈԳԵԴՐՍԵՎՈՐՈՒՄ, գ. **Հոգեկանի՝ աշխարհապատկերման՝ աշխարհընկալման դրսևորում**: Ամեն ազգ իր ձևով, ոճով, իր կերպով **հոգեդրսևորում** ունի, մարմնացում՝ իր ապրումների ու մտածումների, իր տեսիլների և իրեն հատուկ աշխարհապատկերման (ՄՍ, էջ 182):

ՀՈԳԵՁԳԱՅԱԿԱՆ, ած. Նա ներկայացրել է այն փորձված բաղադրատոմսերը, որոնք անպայման օգնում են ցանկացած բարդ **հոգեզգայական** իրավիճակում (TV մոլ, 06.10.2014):

ՀՈԳԵԼԼԿՈՒՄ,գ. **Հոգին տանջելը:** Եվ սեփական ժողովրդի հետ խաղալ անհուսությունն ու **հոգելլկումը** դարձնելով նույն այդ ժողովրդի կեցության հենարանները... . (ԳԹ,13.09.2013):

ՀՈԳԵԿԱՌՈՒՅՑ, գ. **Հոգեկան կառուցվածք:** Այսպես՝ , «Նոր տարի» պատմվածքի տղայի պատանեկան **հոգեկառույցը** բարձրանում է ես–ընտանիք–գյուղի հանրույթ պարտադրանքների, չգրված, բայց էթնոմշակույթով հաստատված բարոյական նորմերի վրա....(ԳԹ, 21.03.2014):

ՀՈԳԵԿՐԹԻՉ, ած. **Հոգին կրթող, դաստիարակող**: ....Պարույրսևակյան իմաստալից հանքաշերտերը**.... հոգեկրթիչ** դասեր կարող են պարգևել հատկապես բարձր դասարանների աշակերտներին, ուսանողներին, մտավորականության լայն շերտերին (Ազգ, 24.04.2014):

ՀՈԳԵԿՐԹՈՒՄ,գ. **Հոգին կրթելը: Հոգեկրթման** այս ձևը միշտ կանաչ օազիս էր և ընդունելի, ինչո՞ւ չէ, նաև պարտադիր (ԳԹ, 07.11.2014):

ՀՈԳԵՆԵՐԳՈՐԾԵԼ , բ. **Հոգու վրա ներգործել**: Գործնականում այս կազմակերպությունը կարելի է համեմատել զանգվածային ոչնչացման զենքի հետ **հոգեներգործող** միջոցների զինանոցից…. (Ազգ, 07.11.2014):

ՀՈԳԵՎԵՐԼՈՒԾԱԲԱՆ, գ. **Հոգեվերլուծության մեթոդով բուժող հոգեբույժ:** Դժվար է պատկերացնել, թե ապագա հայ պատմաբաններից, հասարակագետներից, **հոգեվերլուծաբաններից** ինչպիսի ջանքեր կպահանջվեն հասկանալու և իրենց ժամանակակիցներին բացատրելու համար….(Ազգ, 07.11.2014):

ՀՈԳԵՏԱՐ, գ. Հոգեառի կամ **հոգետարի** հին պատկերացումներից մեկը եղել է շնակերպ.... (ՍՀ, էջ 431):

ՀՈԳՆԱՅԱՋՈՒՐ, գ. Ճարներս ինչ, արդեն խմել-վերջացրել էինք այդ **հոգնայաջուրը**, ուստի մեզ միայն ծիծաղել էր մնում (TV մոլ, 15.09.2014):

ՀՈԳՍԱՅԱՎ, ած. **Հոգսն ու ցավը:** Աչքերդ դեռ չբացած՝ հոգուդ խորթ մի զգայարան մատնում է, որ **հոգսացավը** քեզ քրքրող սևակնած միտքը սողոսկում են երակներիդ մեջ, պատրաստ են ցատկելու, բկխեղդելու .... (ԳԹ,13.09.2013):

ՀՈԴԱՋԼԱՅԻՆ, ած. **Հողերի և ջլերի:** Այն կանխարգելում և նպաստում է **հոդաջլային** հատվածի սպորտային վնասվածքների արագ ապաքինմանը (TV մոլ, 27.01.2014):

ՀՈՂԱՋԵՆ, ած. **Հողով զինված:** Մարգո Ղուկասյանին՝ մեր հողապաշտին ո՞վ չի սիրել, բայց Կլարա Թերզյանի սերը քեզ ավելի է սիրել տալիս նշանավոր հրապարակախոսին, **հողազեն** գրողին… .(Ազգ, 24.10.2014):

ՀՈՂԱԾԱՐԱՎ, ած. **Հողի ծարավ ունեցող**: Այս անձրևը հաստատ կին է // Հե – զա– նազ//կին, //Անփորձ**, հողածարավ** (ԳԹ, 04.10.2013):

ՀՈՂԱՏԱՐՈՒՄ, գ. Մասնագետը վարելահողերի պահպանման ու բերրիության բարձրացման, **հողատարման** կանխման նպատակով մշակել է ագրոմիջոցառումների մի ամբողջ համակարգ …. (ՀՀ, 01.22.2015):

ՀՈՂԱՓՈԽՈՒՄ, գ. **Հողը փոխելը:** Առանց **հողափոխման** մենք ոչ մի արդյունք չենք ստանա (ՀՀ, 28.03.2014):

ՀՈՂՄԱԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ, ած. **Քամու միջոցով ստացված էներգիային հատուկ**: 1999–2000–ին մեկնարկեցին **հողմաէներգետիկական** մոնիթորինգի երկու ծրագրեր (Ազգ, 21.03.2014):

ՀՈՂՄԱՄՈՆԻՏՈՐԻՆԳ, գ. Այս լեռնանցքում 2006 թ. հուլիսից մինչև 2007 թ. հուլիսը **հողմամոնիտորինգ** է արվել (ՀՀ, 18.11.2014):

ՀՈՅԱՐԱՐՔ, գ. Նպատակը մեկն էր՝ համանման կռիվներով, մենամարտերով, մրցություններով ծիսականորեն վերարտադրել ու սրբագործել վիշապամարտիկ աստծո կամ հերոսի աշխարհակործան հրեշի նկատմամբ տարած հաղթանակի **հոյարարքը** (ՍՀ, էջ 167):

ՀՈՍԱՏԱՐՔԱՅԻՆ, ած. (Անգլ.drift) լեզուն ենթարկվում է **հոսատարքային** չափություններին (Հրապ., 30.01.2014): (Սերգո Երիցյանի օգտագործած բառն է):

ՀՈՎԱՆՈՑԱՅԻՆ ԳՈՎԱԶԴ, գ. Նույն օրենքում «**հովանոցային գովազդ**» հասկացությունը ներառվել է 2007 թվականին (168 ժ., 11.12.2014):

ՀՈՏԱԶԵՐԾԵԼ, բ. **Տհաճ հոտերը չեզոքացնել՝ վերացնել**: Տաք ջրով լի փոքրիկ լոգակոնքի մեջ սև թեյի թունդ եփուկ լցրեք. այս լոգանքը **հոտազերծում** և փափկեցնում է ոտնաթաթի մաշկը (TV մոլ, 21.07.2014):

ՀՍԿԻՉ–ԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ՄԵՔԵՆԱ, գ. **Դրամարկղային գործողությունները հսկող մեքենա:** Կառավարությունը երեկ հավանություն տվեց «**Հսկիչ –դրամարկղային մեքենաների** կիրառման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին օրենքի նախագծին …. (Ազգ, 05.12.2014):

ՀՍՏԱԿԵՑՈՒՄ, գ. Տնտեսագետ Մ. Մելիքյանը մինչև պաշտոնական տեսակետի վերջնական **հստակեցումը**…. ասաց իր կարծիքը (Հրապ., 06.11.2013):

ՀՐԱՃԱՐԱԿՎԵԼ, բ. **Հրո ճարակ դառնալ, հրդեհվել**: Ես կգրեին ամայացած եզերքի մասին….// Տների մասին **հրաճարակված**// Եվ ժամանակի, որ ստիպում է ապրել կուչ եկած (ԳԹ, 10.10.2014):

ՀՐԱՄԱՆԱՏԱՐԱՇՏԱԲԱՅԻՆ, ած. Նախարարը հանդիպել է **հրամանատարաշտաբային** դասընթացների մասնակիցների հետ (ՀՀ, 13.02.2014):

ՀՐԱՄԱՆԱՏԱՐԱՍՊԱՆ, ած. **Հրամանատարին սպանած**:.... Ու ևս մի «կեցցե», որ կարողացաք ձեր **հրամանատարասպան** զավակին առանց միջնորդության ու դատական քաշքշուկների ազատություն պարգևել.... (ԳԹ, 13.09.2013):

ՀՐԱՄԵՋՔ, ած.Մյուսը կենդանակերպ է՝ արտահայտված **հրամեջք** այծի և մեծղի եղջյուրներով, Կաթնաղբյուրի ջրից խմող ու հղիացած, Արյունածովից բառաչող կովի կերպարանքով (ՍՀ, էջ 83):

ՀՐԱՇԱԳՈՐԳ, գ. **Հրաշքներ գործող գորգ** Ապագայի պայծառ տեսլականով է Լ.Անանյանը իր կյանքի նահատակությամբ հյուսեց հայ ժողովրդի հոգեմտավոր **հրաշագորգը** ....(ԳԹ, 01.11.2013):

ՀՐԱՏԵԽՆԻԿԱ, գ. Կարելի է հիշել **հրատեխիկայի** գերմանացի մասնագետ Գարրի Բուրկհարդին. 2011-ին նա հատուկ եկավ Հոլիվուդ, որպեսզի հրկիզի ավտոմեքենաները (TV մոլ, 02.06.2014):

ՀՐԴԵՀԱՋԵՐԾԵԼ, բ. Ինչքան ջուր է պետք Թոխմախի Մհերից մինչև Շմայս ընկած տարածությունը **հրդեհազերծելու** համար (Համացանց, 24.02.2014):

ՀՐԴԵՀԱՇԻՋՈՒՄ, գ. **Հրդեհը մարելը**: Մեզ մոտ էլ են որոշել ինքնաթիռներն ու ուղղաթիռները օգտագործել **հրդեհաշիջման** աշխատանքներում....հրդեհները մարելու նպատակով (ՀՀ, 21.05.2014):

ՀՐԵՇԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ, գ. ....Որ այլևս երբեք չկրկնվի նման **հրեշագործություն** (Ավ., 12.02.2015):

ՀՐԵՇԱՊԱՏՈՒՄ, գ. **Հրեշավոր պատմություններ**: Անզեն աչքով էլ նկատելի է. սիրիական հակամարտությունը, իսլամական պետության **հրեշապատումները**, ահաբեկչությունների չկտրվող շղթան….(ԳԹ, 26.12.2014):

ՀՐԵՇՏԱԿԱՄԱՐՏԻԿ, գ. **Հրեշտակների կողմից կռվող մարտիկ:** Վեպի մի քանի պատումներում Մհերը հանդես է գալիս իբրև **հրեշտակամարտիկ** (ՍՀ, էջ 415):

ՀՐԹԻՌԱՀԱՄԱԿԱՐԳ, գ. **Հրթիռային համակարգ**: Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը Ֆրանսիայի հետ քննարկում է մեծ հեռահարության պաշտպանական հրթիռահամակարգի ձեռքբերման հարցը (Ազգ, 12.09.2014):

ՀՐՈՎԱՐՏԱԿՈՒՄ, գ. (հեգն.) **Հայտարարություն:** Հ.Աբրահամյանի ջերմուկյան **հրովարտակումը,** թե կառավարության վերաձևավորման արդյունքում առաջիկայում կստեղծվի նաև ՆԳ նախարարություն.... բանալի դարձավ հասկանալու, որ համաժողովրդական շարժման «փարդի քամակում» ոչ այնքան Քոչարյանը, որքան Հովիկ Աբրահամյան-Գագիկ Ծառուկյան «ծպտյալ» զույգն է (Իրատես, 12.12.2014):

ՀՈՒԶԱԶԳԱՅՄՈՒՆՔԱՅԻՆ, ա. **Հուզական և զգացմունքային**: Անհրաժեշտ է հրաժարվել գրական երկերին տրվող **հուզազգացմունքային** գնահատականներից, որը մղում է դեպի մակերեսային ընկալումներ (ԳԹ, 20.06.2014):

ՀՈՒԶԱԶԵԽՈՒԹՅՈՒՆ, գ. Հավերժական այդ «խենթն» է նրա հերոսը, ասքն է կենսապատումի նրա ձևը, որ ընթանում է մերթ խորքային բխումներով՝ իբրև **հուզազեխության** պահեր, մերթ էլեգիկ հոսքերով (ԼԽ, էջ 7):

ՀՈՒՇԱԶԱՐԴԵԼ, բ. **Հուշերով զարդարել**: Մի հատիկաչափ, առավել նվազ,// բջիջն այն ունակ , **հուշազարդելով**// պահը շուրջանակ,// Անհայտի լիցքով // շրշաց թև առած, ցնծաց ղողանջեց .... (ԳԹ, 31.01.2014):

ՀՈՒՇԱԿԱՆԳԱՌ, գ. Մեր հաջորդ **հուշականգառը** վթարի վայրը մատնանշող կոթողն է (Իրատես, 31.01.2014):

ՀՈՒՇԱՅԻՆ, ած. Այդ սովորությունը ես ընդօրինակեցի և ցավում եմ, որ իմ օրագրման գրառումները պետք եկան Պ.Սևակի մասին **հուշային** վերապրումներ ունենալուն (ԼՀ, էջ 6):

ՀՈՒՇԱՆՎԵՐԱՅԻՆ, ած. **Որպես հուշանվեր տպագրված**: ….Ընթերցողին քաջ ծանոթ է քարե կազմով **հուշանվերային** գրքերի մատենաշարը, որը գրքի յուրահատուկ ֆետիշ է, պաշտամունք (Ազգ, 21.11.2014):

ՀՈՒՇԱՐՁԱՆԱԳԵՏ, գ. **Հուշարձանների մասնագետ**: Կարծում եմ՝ պետք է ձևավորենք մեր հստակ պահանջագիրը, որը մինչ այդ կանցնի.... փորձագիտություն՝ իրավաբանների, պատմաբանների, **հուշարձանագետների,** միջազգայնագետների կողմից.... (Իր., 07.10.2014):

ՀՈՒՇԱՐՁԱՆԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Հուշարձանի կառուցելը:** Բայց սրան զուգահեռ խաչքարը ներառվեց նաև հենց այդ տարիներին լայն ծավալ ստացած **հուշարձանաշինության** մեջ (ՀՊ, էջ 373):

ՀՈՒՇԱՐՁԱՆԱՍՏԵՂԾՈՒՄ, գ. **Հուշարձանի ստեղծելը:** Ճարտարապետական փոքր ձևերի դասական օրինակներին.... դիմելու անհրաժեշտություն և հնարավորություն էր ստեղծում հատկապես Հայրենական պատերազմի զոհերին նվիրված **հուշարձանաստեղծման** ալիքը.... (ՀՊ, էջ 374):

Ձ

ՁԱՅՆԱԱԶԴԱՆՇԱՆԱՅԻՆ, ած. Եթե այս **ձայնաազդանշանային** սարքերը տեղակայված են, ուրեմն էլ ինչ ավելորդ անհրաժեշտություն կա նման անցքեր բացելու համար (Իրավունք, 07.03.2014):

ՁԱՅՆԱԶԳԱՑ, ած. Ձայնային ալիքները փոխանցվում են ներքին ականջի հեղուկով լցված խխունջին, որտեղ ձայնային լսողական նյարդով բաղկացած **ձայնազգաց** բջիջների ելուստներից հաղորդվում են գլխուղեղի կեղև (TV ալիք, 27.01.2014):

ՁԱՅՆԱՀԵՆԱՅԻՆ կայք

ՁԱՅՆԱՆԿԱՐ, Տե՛ս ՀՆՉՅՈՒՆԱԾԱՎԱԼ-ի օրինակը:

ՁԱՅՆԱՍՐԱՀ, գ. .... Լևոն Խեչոյանը գար մեր **ձայնասրահ** և խոսեր պետության բարոյականության մասին .... (ԳԹ, 21.02.2014):

ՁԵՌՆԱԾԱՆՐՈՑ, գ. Ամեն անգամ արտասահման գործուղում գնալիս նրանք իրենց հետ տանում են սիրուհիներին որպես **ձեռնածանրոց** (TV մոլ, 02.10.2013):

ՁԵՎԱՔԱՆԱԿԱՅԻՆ, ած. Երկուսն էլ (Երկինք-Գետինք) **ձևաքանակային** առումով ունեն սիմետրիկ կառուցվածք (ՍՀ, էջ 17):

ՁԻԱՂԲ, գ. Փողոցում ձյունը դեղնավուն գույն էր ստացել՝ կեղտոտվելով **ձիաղբից,** ավազից ու մոխրից (ՄՍ, էջ 42):

ՁԻԵՐԵՆ, ած. Ձին վաղուց մոռացել էր **ձիերենը** և մտածում էր մարդու լեզվով (ՀԲ, էջ 9):

ՁԿՆԱՊԱՇԱՐ, գ. **Ձկան պաշար:** Օրենքի նախագծի ընդունման և կիրառման արդյունքում տեղի կունենա ձկների բնականոն վերարտադրություն և **ձկնապաշարների** ավելացում (Ժող., 26.11.2013):

ՁԿՆԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ, գ. **Ձկան արտադրություն**: Վերջին տարիներին **ձկնարտադրությունը** թեպետ դարձել է արդյունավետ և շահավետ բիզնես, սակայն ձկնաբուծարանների քանակի աճին զուգահեռ գյուղերը զրկվում են ոռոգման ջրից և անապատացվում (Ազգ, 11.04.2014):

ՁՅՈՒՆԱԾԵՓՎԱԾՔ, գ. **Ձյան ծեփվածք**: Մարգագետիններ գոյանցումների, // **/ձյունածեփվածքի** ակամա վկա/, //Ուշ եմ ձայնածում Ձեզ՝ Հովիվներիդ,// Որ երկու հազար տարի՝ չկաք .... (ԳԹ, 20.12.2013):

ՁՅՈՒՆԱՄԱՇԿ, ած, **Ձյան նման սպիտակ մաշկ ունեցող**: Ինչո՞ւ դարձար: Երևի՝ **ձյունամաշկ** Աստղիկի պատճառով, որին խենթի պես սիրահարված էիր (ԳԹ, 01.11.2013/:

ՁՆԱՄԱԾ, ած. **Ձյունածածկ:** ....Բուքը ձյան սպիտակ լեզվակներով շոշափում էր արծաթեղենս...., իջնում գետինն ի վար՝ լիզելով սառած սալաքարերն ու **ձնամած** ծառուղիները (ԼՋ,Վ, էջ 55):

ՁՎԱԿԵՆԴԱՆԱԾԻՆ, ած. Դրա համար էլ նրանց անվանում են **ձվակենդանածին** մողեսներ (TV մոլ, 27.01.2014):

Ղ

ՂԵԿՈՒՂԻ, Խոսքն, օրինակ, Ա և Բ ղեկուղիների միջև վազքուղու ու հակառակ շրջադարձի հատվածի մասին է (ՀՀ, 15.02.2014):

ՂՐԻՄԱԲՆԱԿ, գ. **Ղրիմում բնակվող: Ղրիմաբնակ** բոլոր ակտիվիստներին, որ կողմ են Կիևում կատարված փոփոխություններին, կամ ձերբակալում են, կամ հեռացնում են Ղրիմից (Իրատես, 14.03.2014):

Ճ

ՃԱԿԱՏԱԳԻՐ- ԽԵԼՔԱԳԻՐ, գ. .... Ա՛խ այս **ճակատագիր- խելքագիրը** (Իրատես, 27.03.2015):

ՃԱԿԱՏԱՔՈՒՆՔԱՅԻՆ, ած. Հունիսի 17-ին **ճակատաքունքային** շրջանների հեմատոմաներ ախտորոշմամբ Արմավիր ԲԿ է տեղափոխվել 2009 թ. մարտի 13 –ին ծնված Հովհաննեսը (Ժամ.,15.03.2014):

ՃԱՀՃԱԽԵՂԴ ԱՐՎԵԼ, բ. **Ճահճում խեղդել**: Զինվորների մի մասն էլ Վահանի կողմից ճահճուտներում **ճահճախեղդ է արվում** (ՍՀ, էջ 120):

ՃԱՂԱՎԱՆԴԱԿԱՊԱՏՈՒՄ, գ. **Ճաղավանդակների կառուցում:** Ժամանակն է, որ իրականացվի այս պարզ կանխարգելիչ գործողությունը, առավել ևս, որ երկու կամուրջների **ճաղավանդակապատումն** առանձնապես մեծ միջոցների հետ կապված չէ, ընդամենը ցանկության հարց է (Ժամ., 30.01.2015):

ՃԱՂԱՎԱՆԴԱԿԱՊԱՏՎԵԼ, բ. **Ճաղավանդակներով պատվելը:** Ինքնասպանությունների գերակշիռ մասը կատարվում է հենց կամուրջից նետվելու միջոցով, հետևաբար չափազանց կարևոր է, որ այս երկու կամուրջները **ճաղավանդակապատվեն** (Ժող., 30.01.2015):

ՃԱՄՊՐՈՒԿԱՅԻՆ, ած. **Ժամանակավոր:** Վերահսկիչ պալատը լուրջ կառույց է, ինչպես կարող է լինել **ճամպրուկային** (Ժող., 17.10.2013):

ՃԱՆԱՉՎԱԾՈՒԹՅՈՒՆ, գ. **Ճանաչված լինելը:** Տեխնիկապես մեծ ձեռքբերում եմ ունեցել, ինչու չէ նաև **ճանաչվածություն** (TV ալիք, 11.11.2013):

ՃԱՆԱՊԱՐՀԱՀԱՐԹԱԿ , գ. **Ճանապարհի համար նախատեսված հարթակ**: Կառամատույցի որոշ հատվածներում անհրաժեշտ է ավելացնել **ճանապարհահարթակի** կարողունակությունը ....(ՀՀ, 15.02.2014):

ՃԱՆԱՊԱՐՀԱՊԱՐԵԿԱՅԻՆ, ած. ....Քաղաքացու դիմումի կապակցությամբ նույն տեսուչների նկատմամբ ստուգում է իրականացվում նաև ճանապարհային ոստիկանության **ճանապարհապարեկային** ծառայության բաժնում (ՀՀ, 18.02.2014):

ՃԱՆԱՊԱՐՀԱՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ, ած. Հովիկ Աբրահամյանը սովորում էր **ճանապարհատրանսպորտային** տեխնիկումում (Հրապ., 11.04.2014):

Ճանապարհներին **մշտնջենության**…(ԼՄ, ԵՀ, էջ 47, 2013):

ՃԱՆՇԻՆ, գ. Ըստ Ժողովուրդի տեղեկությունների՝ Հայաստանյան **ճանշինների** մեծ մասը վնասով է աշխատում (Ժող., 10.12.2013):

ՃԱՌԱԳԱՅԹԱՊԱՏՃԵՆՈՒՄ,գ. **Ճառագայթների միջոցով պատճենելը:** Հրանտի սևեռուն նայվածքն ասես ճառագայթապատճենում էր աղջկա ներաշխարհը (ԳԹ, 31.10.2014):

ՃԱՐՄԱՆԴԱԶԱՐԴ, ած. **Ճարմանդներով զարդարված:** Այդ պատճառով էլ այժմ մարզաշապիկների և ջինսերի փոխարեն որոշել է վայելչագեղ կոստյումներ հագնել, որոնց հետ համադրում է **ճարմանդազարդ** դասական վերնաշապիկներ (TV մոլ, 07.05.2014):

ՃԱՔԱԼՅՈՒՄ, գ. Տե՛ս ԱՆՁՐԵՎՈՐՍԻՉ-ի օրինակը:

ՃԱՔՃՔՎԱԾՔ, գ.Մասուրի յուղը օգտագործվում է կանանց պտուկների քերծվածքների, **ճաքճքվածքների** դեպքում (ՀԴ, թ.1, 2014):

ՃԵՊԱԶՐՈՒՅԵԼ, բ. **Ճեպազրուցեց** Կարեն Դավթյանը (Իրատես, 28.03.2014):

ՃԵՊԱԺՈՂՈՎ

ՃԻՃՎԱԹԱՓՈՒԹՅՈՒՆ, գ. Ժամանակին և ճիշտ կատարված **ճիճվաթափությունը** թույլ կտա կանխարգելու մեր հանրապետությունում որոճողների շրջանում մեծ տարածում ունեցող ճիճվային հիվանդությունները (Ագրոլրատու, 17.06.2015):

ՃՆՃՂԱԽՈՐՀՈՒՐԴ, գ . ....Ծլվլոցով՝ բռնած// և՛ դուռ//, և՛ կտուր// ասքն է հյուսում ճնճղախորհուրդ/ /օրվա նոր .... (ԳԹ, 22.11.2013):

ՃԻՃՎԱՄՈՒՂ, ած. Մասրենու արմատները համարվում են ախորժակը լավացնող և **ճիճվամուղ** միջոց (ՀԴ., թ.1, 2014):

ՃՇՄԱՐՏԱՄԵՐԺ, գ. **Ճշմարտությունը մերժող** : ....Քաղաքակիրթ խաբկանքների, ասել է թե՝ կեղծը, անբնականն ու **ճշմարտամերժը** քաղաքակրթության քողով ծածկելու սարսափազդու, ապխտած ախտի հետ պայքարն սկսված է .... (ԳԹ,13.09.2013):

Մ

ՄԱԳՆԻՍԱՌԵԶՈՆԱՆՍԱՅԻՆ, ած. Դրանք կարող են լինել խոշոր անոթների ՈՒՁՀ, էլեկտրասրտագրություն, արյան մանրամասն հետազոտություններ, համակարգչային և **մագնիսառեզոնանսային** տոմոգրաֆիաներ (TV մոլ, 10.02.2014):

ՄԱԳՆԻՏԱՄԵՏՐ, գ. Միայն զգայունակ **մագնիտամետրը** կարող է միջմոլորակային տարածությունում հայտնաբերել Արևի թույլ մագնիսական դաշտը (TV մոլ, 12.05.2014):

ՄԱԶԱԾԱՅՐ, գ. Չիչխանի յուղը…. օգնում է վերականգնել վնասված մազերը, հարթեցնել ճյուղավորված **մազածայրերը** և վերականգնել խամրած գույնը (Համացանց, 04.02.2015):

ՄԱԶԻԿԱԾԱԾԿ, ած. Ջրասարդի փորիկը նույնպես **մազիկածածկ** է և պատված մոմանման նյութով (TV մոլ, 13.10.2014):

ՄԱԶՈՒԹԱԳՐՈՒՄ, Տե՛ս ԱՐՁԱՆԱԳՐԵԼԻ-ի օրինակը:

ՄԱԿՆԻՇԱՎՈՐՈՒՄ, գ. Ցուցադրված ցեմենտի պարկերը, որոնց տակ էին դարսված այդ հրթիռները, իրոք, կրում են իրանյան արտադրողի **մակնիշավորումը** (Իրատես, 21.03.2014):

ՄԱԿՆՇՎԵԼ, բ. Սննդամթերքի ծառայության չորսօրյա դիտարկումների արդյունքում հայտնաբերվել է 4860 հատ ժամկետանց և թերի **մակնշված** հավկիթ (Ժամ., 08.04.2014):

ՄԱՀԱՏԱՐԱԺԱՄ, գ. Հիմա ... տարաժամ է, **մահատարաժա՛մ** է, // մարդկային դժխեմ ցուցափակերում .... (ԳԹ, 25.04.2014):

ՄԱՂԱՔԱՄԵԼ, բ. **Մաղով քամել:** .... Ժամանակի գերխիտ սահմանների մեջ սեղմելով, ճզմելով, **մաղաքամելով** մարդկային ուժատ մարմինները (ԳԹ, 21.02.2014):

ՄԱՄՌԱԳԱՆԳՈՒՐ, ած. **Մամռագանգուր** քո մազերից/ Անձրևի հետ թելիկ–մելիկ, / Քո զղջումն է ծորում հիմա...(ԳԹ, 04.04.2014/):

ՄԱՅԴԱՆԱԿԱՆ, ած. Երեկ համարյա ինքնամոռացության գրկից հանկարծ օդի մեջ հրավառվում է **մայդանական** ընդվզման քառալիքը (Հրապ., 21.01.2014):

ՄԱՅԴԱՆԱՑԱՎ, գ. .... Եվ՛ իշխանությունը, և՛ քաղաքական դաշտը, և եվրոկառույցները արեցին հնարավորինը՝ հայ հասարակությանը զերծ պահելու **«մայդանացավից»** (ԳԹ, 29.11.2013):

ՄԱՅԴԱՆԱՔՈՒՆ, գ. Մայդանացավը ու **մայդանաքունը** գիշերվա կեսին ցցվում են, լայն բացում երախներն ու լցվում Ազատության հրապարակ (Հրապ., 21.01.2014):

ՄԱՅԹԱՀԱՇԻՎ

ՄԱՅՐԱԱՂՈԹՔ, գ. **Մոր աղոթք**: Հին տան ծոցում, **մայրաաղոթքի** օրորոցին քարացել էր երգի մի տող (ԳԹ, 11.10.2013):

ՄԱՅՐԱԿԱՆՉ, գ. **Մայրական կանչ, մոր կանչերը**: Սա լուսավոր խոնարհումի անմնացորդ պանծացում է՝ իմաստաբառ խորքերով ծաղկած **մայրականչերին** .... (ԳԹ, 11.10.2013):

ՄԱՅՐԱՇՇՈՒԿ, ած. .... Նրա խուփ աչքերում ծննդավայրի աղբյուր–լանջերի մորմոքն էր և սգացող աշնան **մայրաշշուկ** արցունքներ (ԳԹ,11.10.2013):

ՄԱՅՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ, գ. Իր գթությամբ և ներողամտությամբ Արևամայրը մերձենում է նաև Տիրամորը՝ Հին **մայրաստվածության** քրիստոնեական կերպավորմանը, որից հավատացյալներն ավելի շատ էին գթություն հայցում, քան նրա միածին որդուց՝ արևային Հիսուսից (ՍՀ, էջ 48):

ՄԱՅՐՈՒՂԱՄԵՐՁ, ած. **Մայրուղուն մոտիկ:** ....Արտաշատին անմիջապես կից Մրգավան գյուղի **մայրուղամերձ** հատվածում գիշերային ակումբն է (Իր., 07.10.2014):

ՄԱՆԻՊՈՒԼԱՑՆԵԼ, բ. Նման հայտարարությունը հասարակական կարծիքը **մանիպուլացնելու** փորձ է... (Իր., 18.11.2014):

ՄԱՆԿԱԲՈԶ, գ. **Մանկահասակ բ.:** Կարճ շրջազգեստով էր, կլոր, ժիր աչքերով, գլխին մազերը երկու պոչուկ հյուսած....Վզին պիոներական փողկապն էր պակաս: Մի խոսքով, մի կատարյալ **մանկաբոզ** (ԼՋ, էջ 85):

ՄԱՆԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ, գ. **Գրականություն երեխաների համար:** Միայն թե այդ մոլորակի անունը **«մանկագրություն»** է, ...(ԳԹ, 26.09.2014):

ՄԱՆԿԱՄՏՈՐԵՆ, մկբ. Թուրքական պահանջը **մանկամտորեն** վերծանելի էր, որպեսզի ընթացք ստանար (ԳԹ, 31.10.2014):

ՄԱՆՏԻԱ, գ.Վազգեն Ռշտունին կրկին վերադառնում է «ընտանիք» ընդ որում, ավելի բարձր ատյան՝ վերաքննիչ դատարան, կարծես թե դատավորի **մանտիա** հագնել-հանելը խաղուպար է մեզանում (Հրապ., 16.12.2014):

ՄԱՆՐԱՆԿԱՏ, ած. Երկյուղ չկրելով **մանրանկատ** լինելուց, հիշում եմ, որ Պարույրին սաստիկ դուր էր գալիս իմ մի սովորույթը ևս (ԼՀ, էջ 24):

ՄԱՆՐԱՆԿԱՐԱԶԱՐԴ, ած. **Մանրանկարներով զարդարված:** Թեհրանի շուկայում ծանոթացա մի հնավաճառի հետ, որի մոտ **մանրանկարազարդ** պարսկերեն բազմաթիվ գրքեր կային (ՄՍ, էջ 136):

ՄԱՆՐԱՌԻԼՈՒՆՔ, գ. **Մանր ուլունք:** Դամբարանից հայտնաբերվել են սարդիոնե, ապակե և հախճապակե երկնագույն, կաթնագույն, կարմրավուն տասնյակ ուլունքներ և **մանրաուլունքներ** (ՀՄԵՀ, էջ 224):

ՄԱՆՐԱՏԵՐՄԻՆԱՀԱՄԱԿԱՐԳ, գ. **Որևէ տերմինահամակարգի մեջ մտնող առավել փոքր, սահմանափակ ընդգրկում ունեցող համակարգ:** Տերմինահամակարգի և մանրահամակարգերի տարբերակումը անհրաժեշտ է երկու պատճառով. 1)**մանրատերմինահամակարգերը** բոլորը միասին ստորակարգվում են տվյալ բնագավառի տերմինահամակարգին, իսկ **մանրատերմինահամակարգերի** մեջ էլ առավել նեղ ընդգրկում ունեցող մանրահամակարգերը՝ ավելի մեծ ընդգրկումով մանրահամակարգերին, ուստի այստեղ էլ ստորակարգություն կա տերմինաբանական համակարգերի միջև...(ԷԱ, էջ 332):

ՄԱՆՐԷԱՅԻՆ, ած. **Մանրէների միջոցով տարածվող:** Կարծիք կա, թե բրոնխիտը **մանրէային** ինֆեկցիայի հետևանքով է առաջանում (TV մոլ, 17.02.2014):

ՄԱՆՐԷԱՍՊԱՆ, ած. **Մանրէներին ոչնչացնող**: Շաքարի ավելցուկն արյան մեջ փոխում է լեղու հատկությունները, ընդ որում՝ կորցնում է իր **մանրէասպան** ազդեցությունը (TV ալիք,13.01.2014):

ՄԱՇԿԱՅՈՒՂ, գ. Սա կապված է ոչ բավարար քանակությամբ **մաշկայուղ** արտադրվելու հետ (TV մոլ, 17.02.2014):

ՄԱՇԿԱՓՈԽՎԵԼ, բ. Օձերը սովորաբար **մաշկափոխվում** են միայն երկու կամ երեք ամիսը մեկ (Դիտարան, ամս., 01.05.2014):

ՄԱՇՎԵԼԻՈՒԹՅՈՒՆ, գ.**Մաշված լինելու ժամանակը, չափը**: **Մաշվելիության**, ինչպես նաև լուծելիության սարքերի միջոցով տեղում ստուգվեցին որոշ դեղերի որակական հատկանիշները (ՀՀ, 24.12.2014):

ՄԱՏԱՇԻՎ, գ. Ծովաբողկը աճում է մատաշիվերով (Ագրոլրատու, 05. 02.2015):

ՄԱՏԻՏԱՆՇՈՒՄ ԱՆԵԼ, բ. Գրքերը կարդում եմ **մատիտանշումներ անելով**, ընդգծելով, սրբագրելով…. (ԳԹ, 21.11.2014):

ՄԱՏՆԱՀԱՐԴԱՐՈՒՄ

ՄԱՐԳԱՐՏԱՇԱՂ, ած. Մանրիկ ալիքները **մարգարտաշաղ** գորգ են հինել ու ցոլցլում են արեգակի ոսկենման ցնցուղի տակ (Իր., 18.11.2014):

ՄԱՐԳԱՐՏԱՋՈՒՐ, գ. Եվ պահ տվեց հողում մի ափաչափ ոսկի,// **Մարգարտաջուր** շաղեց նա ափերով ....(ԳԹ, 04.10.2013):

ՄԱՐԳԻՆԱԼՈՒԹՅՈՒՆ, գ. Եթե քաղաքական ուժերը ուլտիմատումներ են ներկայացնում, նեղացածի կերպար են ընդունում, ապա դա **մարգինալության** նշան է (Ժամ., 19.11.2014):

ՄԱՐԴԱԲԱՆՈՐԵՆ, ած. Անունները փնտրում ես, փնտրում ու **մարդաբանորեն** ներկայիս մարդկանց հետ առնչություն չունեցող օրգանակերպ բաներ ես տեսնում (Հրապ., 07.05.2014):

ՄԱՐԴԱԲՈՒՐԵԼ, բ.Մարդ /«Գնամ, որ հասնեմ, մարդոտվեմ ինձնով// Եվ Ալևորի խոկուն նայվածքով// Թիկունքս շտկեմ,// Եվ **մարդաբուրեմ** նրա խոսմունքի Քաջախոհությամբ .... (ԳԹ, 25.10.2013/:

ՄԱՐԴԱԹԱՓՎԵԼ, բ. Գիտենք, ու այլևս անզոր է պարտակել այն, որ թելադրված–ծրագրավորված մի ընթացքով, որի հեղինակները մենք չենք, սակայն համահեղինակ ենք դարձել, **մարդաթափվում է** երկիրը .... (ԳԹ, 13.9.2013):

ՄԱՐԴԱԿԵՆՏՐՈՆ, ած. Ազգային բանակի զինծառայողները պետք է ասպետաբար հետևեն մարդու իրավունքների պաշտպանության սկզբունքներին՝ բանակը դարձնելով **մարդակենտրոն** կառույց (ՀԶ, 06.02.2015):

ՄԱՐԴԱՀՈՎՎԵԼ, բ. Կարծում եմ, այլևս չի օգնի անգամ դալար վայրերին **մարդահովվելու** հեռանկարը (Ազգ, 06.06.2014):

ՄԱՐԴԱՄԵԾԱՐ,ած.**Մարդուն մեծարող**: Եվ ի՞նչ գրքեր: Բազմաժանր, բազմաճյուղ, հայարմատ, **մարդամեծար**, հայրենակարոտ, նվիրական, սիրելի անունների հանրագիտարան (Ազգ, 24.10.2014):

ՄԱՐԴ–ԳԱԶԱՆ, գ. …. Այստեղ վերջակետ կդնենք, որովհետև անհնար է վերաշարադրել **մարդ–գազանների** եղեռնագործությունները (ՀՀ, 21.04.2015):

ՄԱՐԴԵՐԵՆ, մկբ. **Մարդկային լեզու:** Դեռևս փոքր ժամանակից տերը նրան սովորեցրել էր հասկանալ **մարդերեն** ու մտածել մարդկային լեզվով (ՀԲ, էջ 9):

ՄԱՐԴՈՏՎԵԼ, բ. Մարդ /«Գնամ, որ հասնեմ, **մարդոտվեմ** ինձնով// Եվ Ալևորի խոկուն նայվածքով//Թիկունքս շտկեմ, Եվ մարդաբուրեմ նրա խոսմունքի Քաջախոհությամբ//…. (ԳԹ, 25.10.2013):

ՄԱՐԶԱՀԱՎԱՔ, գ. Վերջինս հաճախ է տիրոջն ուղեկցում նրա **մարզահավաքներին** և ազատ ժամանակը մեծ մասամբ միասին են անցկացնում (TV մոլ, 23.12.13):

ՄԱՐԶԱՍԱՐՔ, գ. Բացի բռնցքամարտից, նա ամեն օր մի քանի ժամ վազքուղի **մարզասարքով** է պարապում (TV մոլ, 27.04.2015):

ՄԱՐԿԵՏԱՄՈԼԱՅԻՆ, ած. Մայրաքաղաքում մեկնարկած **մարկետամոլային** համաճարակը, Երևանում բավարարելով անհագուրդ ախորժակը, արշավում է դեպի գավառ, մեր հույսերի և հավատի դեռևս անաղարտ շեները, այստեղ էլ ապականելու, խորտակելու և հաստատելու սեփական ճորտատիրական համակարգը (Իր., 07.10.2014):

ՄԱՐԿԵՏՈԼՈԳ, գ. **Մարկետոլոգներն** այն դարձրին ժամանակակից երիտասարդության հագուստի պարտադիր բաղադրիչ (TV մոլ, 09.12.2013):

ՄԱՐՄՆԱԿԵՐՏՈՒԹՅՈՒՆ, գ. Աշոտ Մելոյանը 1992 թվականին շատ լուրջ զբաղվում էր **մարմնակերտությամբ** (կուլտուրիզմ) (TV ալիք, 25.11.2013):

ՄԱՐՄՆԱՀԱՆԴԵՐՁ, Տիեզերքներ՝ **մարմնահանդերձ**, աստղազարդ. //Ներսում մարող մի ասուպ. –Ինչ՞ն է արդյոք լույսն այդ մութ// Կյանքն է մահվան ստվերով….(ԳԹ, 04.07.2014):

ՄԱՐՏԱՎԱՐԱՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ, ած. Պարապմունքների….արդյունքում կրթվում ու դաստիարակվում է զինվորը, ամրապնդվում ու կատարելագործվում են նրա **մարտավա-բամասնագիտական** գիտելիքները (ՀՁ, 19.02.2015):

ՄԱՐՏԱՎԱՐԱՇԱՐԱՅԻՆ, ած. Կրտսեր հրամանատարների ղեկավարությամբ ստորաբաժանումներն սկսեցին **մարտավարաշարային** պարապմունքները (ՀՁ, 19.02.2015):

ՄԱՔՍԱԱՐԱՐՈՂԱԿԱՐԳԱՅԻՆ, ՄԱՔՍԱՍԱԿԱԳՆԱՅԻՆ, ած. Այն (ընդհանուր մաքսային տարածքը) միասնական տարածք է, որը պարտադրաբար ձևավորվում է սահմանակից անդամ երկրների տարածքների միավորումից՝ **մաքսասակագնային** միասնական և **մաքսաարարողակարգային** դյուրացված և պարզեցված միասնական քաղաքականություն իրականացնելու համար (168 ժ., 09.10.2014):

ՄԱՔՐՈՒՀԻ, գ. Մեծահարուստի **մաքրուհին** ամեն օր նրբորեն սրբում էր իմ վրայի փոշին (TV ալիք, 09.12.2014):

ՄԵԳԱՆԱԽԱԳԻԾ, գ. **Չափազանց մեծ՝ վիթխարի չափեր ունեցող նախագիծ:** ....Եթե այդքան համոզված եք, որ ճիշտ ընտրություն է ձեր անդամակցությունը տարածաշրջանային **մեգանախագծին**... (Իրատես, 02.12.2014):

ՄԵԳԱՊՈԼԻՍ

ՄԵԳԱՔԱՂԱՔ

ՄԵԴԱԼԱՎՈՐԵԼ, բ. …. Հայկական գորգարվեստի միջազգային ճանաչմանը նպաստելու համար, ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը 2013թ. Ֆոլքմար Գանցհոնին պարգևատրում է Մովսես Խորենացի մեդալով, ահա թե ում պետք **է մեդալավորել** (Ազգ, 24.10.2014):

ՄԵԴԻԱԴԱՇՏ, գ. Դասընթացը միտված էր երիտասարդ մասնագետներին ընդհանուր պատկերացում տալու թուրքական **մեդիադաշտի** առօրյայի, ուղղությունների ու աշխատանքի վերաբերյալ (Իր., 28.10.2014):

ՄԵԴԻԱԴԵՄՔ, գ. Հետագայում դերասանուհին իր կյանքը կապեց հայտնի **մեդիադեմք** Հրանտ Թոխատյանի հետ (TV մոլ, 07.05.2014):

ՄԵԴԻԱԴՊՐՈՑ, գ. Այս աշուն հայկական լրատվական ուսումնական դաշտը համալրվեց «ՊանԱրմենիան **մեդիադպրոց**» դասընթացներով (TV մոլ, 14.10,13):

ՄԵԴԻԱԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆ, գ. Միսս Փին առաջ անցավ նաև շի-տցու ցեղատեսակի շնից, որի տիրուհին «Hearst» **մեդիակայսրության** ժառանգորդուհի Փերի Հերսթն է (TV մոլ, 02.03.2015):

ՄԵԴԻԱՄԱԳՆԱՏ, գ. Ռայթը 2011-ին խաղաց իր առաջին դերը կինոյում, որը պատմում է **մեդիամագնատի** մասին (TV ալիք, 26.05.2014):

ՄԵԴԻԱՄԱՍՆԱԳԵՏ, գ. Այդ հոլդինգը նպատակ ունի կրթել բանիմաց և որակյալ **մեդիամասնագետների** նոր սերունդ /TV մոլ, 28.10.13/:

ՄԵԴԻԱՄԻՋԱՎԱՅՐ, գ. Մշակութային պատկերացումները հասարակությունից գնում են **մեդիամիջավայր**.... Իրականում այն փակ շղթա է և բաղկացած է բազում օղակներից, որոնցից յուրաքանչյուրն իր պատասխանատվության մասն ունի **մեդիամիջավայրում** գործող կանոնների, մշակութային պատկերացումների ձևավորման գործում (Եր. համ., թ. 9, 2014):

ՄԵԴԻԱՈԼՈՐՏ, գ. Մեր բոլոր մասնագետները ջանալու են իրենց փորձը փոխանցել երիտասարդ սերնդին և այսպիսով բարելավել հայաստանյան **մեդիաոլորտը** (TV մոլ, 14.10.13):

ՄԵԴԻԱՊԱՏԿԵՐ, գ. Ա.Մենեմշյանը «Հայ հասարակության **մեդիապատկերը.** ուրվագծեր» վերտառությամբ զեկույցում մանրամասն ներկայացրեց հայ իրականության մեջ մեդիայի դրսևորումներն ու առկա վիճակը (Եր. համ., թ. 9, 2014):

ՄԵԴԻԱՓՈՐՁԱԳԵՏ, գ. **Մեդիափորձագետ** Սամվել Մարտիրոսյանը երեկ իր բլոգում գրել էր.... (168 ժ., 30.10.2014):

ՄԵԽԱՆԱԼ, բ. Գիտի, որ մեխը մաշվել, ձուլվել է իրեն ու մի քիչ ծառ է դարձել, իսկ ինքը մի քիչ **մեխացել** է (ՀԲ, էջ 3):

ՄԵԾԱՄՏԱԿԱՆ, ած. Հասկանալով իր **մեծամտական** հավակնոտ մարտավարության ձախողումը, Էլդողանը հետ դարձ է կատարել դեպի իր ավանդական դաշնակցային կառույցներին (Ազգ, 18.04.2014):՝

ՄԵՂԵԴԻԱՎՈՐԵԼ, գ. Ես Կոմիտասի գրառած քառյակներով, համապատասխանեցնելով առաջին քառյակին **մեղեդիավորեցի** (TV ալիք, 28.11.2013):

ՄԵՂՎԱԲԱՌ, գ. Ուզում է գտնել իր **մեղվաբառը,** նայել բառի աչքերի մեջ, փայել բառը, շիջել, շշնջալ՝ ո՞ւր էիր, ես քեզ երկ՛ար եմ սպասել (Հրաչօ) (ԳԹ, 20.12.2013):

ՄԵՂՎԱԵՐԳ, գ. ....Դահլիճը լցվել էր Հայկական լեռնաշխարհի «զրնգուն հովերով, ձյունավետ ամպերով, ...Ջոջանց տան դյուցազնալեռներով , ծաղկանվագ **մեղվաերգերով** ....(ԳԹ, 21.3.2014):

ՄԵՂՎԱԽԱՅԹ, ած. Խուտուտ եղող աչքերով վազում է, կանգնում շեմին: Ո՞ւր գնա **մեղվախայթ** բառերով (Հրաչօ) (ԳԹ, 20.12.2013)

ՄԵՂՎԱԿԱԹ, գ. **Այն խառնուրդը, որով մեղուները կերակրում են ապագա մայրերեին: Մեղվակաթն** արժեքավոր դեղամիջոց է, բարելավում է սրտի աշխատանքը, լավացնում ախորժակն ու բարձրացնում օրգանիզմի դիմադրողականությունը (TV մոլ, 13.01.2014):

ՄԵՂՎԱԿՏՆԱՌՔ, գ. Ծաղկավոր բույսերից նեկտար հավաքելու համար են հարմարեցված նրա բոլոր օրգանները՝ թե երկար կնճիթն ու **մեղվակտնառքը,** որտեղ նեկտարը վերածվում է մեղրի, և թե նույնիսկ ազդանշանային բարդ համակարգը (TV մոլ, 05.01.2014):

ՄԵՂՐԱՄՐՋՅՈՒՆ, գ. **Մեղրամրջյուններն** ունեն կենդանի տակառիկներ և մյուս մրջյունները քաղցր նեկտար են մատակարարում նրանց, ասես լցնում են տակառի մեջ (TV մոլ, 10.02.2014):

ՄԵՂՐԱՉՔ, ած. Հացի հետ ո՛նց է կերպավորվում **մեղրաչք** աղջիկը (Հրաչօ) (ԳԹ, 20.12.2013):

ՄԵՆԱՀՆՈՏԻ, Տե՛ս ՀՆԱՀՈՏ-ի օրինակը:

ՄԵՏԱՂԱՋԱՐԴՈՆ, գ. ....21–րդ դարի հայ գրողս խցկվում եմ ավերակված **մետաղաջարդոնի** մեջ, ամեն անգամվա պես զարմանում եմ , թե ինչքան ամուր են կառուցվել սովետի ժամանակներում, որ շարժվելիս, հոնդալիս ոչ մի պտուտակ դուրս չի թռչում....(ԳԹ, 12.09.2014):

ՄԵՏԱՊԱՏՄԱԿԱՆ, ած. .... Սույնը խոր, մոլեկուլյար մակարդակի ու հոգեբանական բնույթի խնդիր է, որն անհնար է լուծել **մետապատմական** պատճառաբանություններով .... (ԳԹ,21.03.2014):

ՄԵՐԿԱՊԱՐ, գ. **Մերկ պար:** «Մերկապար» ֆիլմի պրեմիերայից հետո, որտեղ գլխավոր դերը խաղում էր Դեմի Մուրը, Բրյուսն իսկական **մերկապար** ցուցադրեց (TV ալիք, 13.04. 2015):

ՄԵՐՁՔԱՐԱՅՐԱՅԻՆ, ած. **Քարայրին մոտիկ գտնվող:** Քարայրի՝ ծածկի տակ եղած ընդհանուր մակերեսը 870 քառակուսի մետր է, իսկ մինչև Արփա գետը հասնող և

լանջնիվայր իջնող **մերձքարայրային** հրապարակով հանդերձ՝ մոտ 0,8 հեկտար (ՀՄԵՀ, էջ 184):

ՄԹԵՂԵՆ, ած. Գյուղում ինչ-որ տեղից կանչեց դեռ թաքնված աքաղաղը, որ **մթեղեն** ստվերներն ու լույսի հակակշիռ ուժերը վերադառնան իրենց տեղը (ԼԽ, ՍԳԾԲ, էջ 146):

ՄԻԱԿԱՐԾԻՔ, գ. Խորհրդակցության մասնակիցները **միակարծիք** էին, որ Հայաստանն ունի գիտական մեծ ներուժ .... (ՀՀ, 13.03.2014):

ՄԻԱԿԱՐԾՈՒԹՅՈՒՆ, գ. Շարժմանը վերաբերող բոլոր որոշումներն ընդունվում են բացառապես մեր **միակարծության** (consensus-ի) հիման վրա (Հրապ., 14.11.2014):

ՄԻԱՄԱՆԴԱՏ, …. Բայց ինքը՝ Յարոշը պատգամավոր է ընտրվել **միամանդատ** օկրուգներից մեկում (Ազգ, 31.10.2014):

ՄԻԱՆՇԱՆԱԿՈՐԵՆ, մկբ. Ո՞րն է Սերգեյ Սարինյանի մտքի կարգապահության աղբյուրը: **Միանշանակորեն**՝ ազգային ու անձնական հպարտությունը (ԳԹ, 22.11.2013):

ՄԻԱՍԵՌԱԿԱՆ, գ. Էլթոն Ջոնը պաշտոնապես առաջին բացահայտ **միասեռական** ասպետն էր ողջ կյանքի ընթացքում (Համացանց, 18.02.2014):

ՄԻԳԱՄՇՈՒՇ, գ. **Մեգ և մշուշ**: Բառերը հանձնում նրանց անսահման// Ու սահմանախախտ բնազդին ի պահ:// Նետում եմ դեպի **միգամշուշը,//** Որ սաղմն է գուցե նոր Տիեզերքի // (ԳԹ, 12.12.2014):

ՄԻԳՐԱՆՏ, գ. Հայաստան արտաքսված **միգրանտի** համար պետական աջակցություն նախատեսված չէ (Ժող., 28.10.2013):

ՄԻԳՐԱՆՏԱՏՅԱՑՈՒԹՅՈՒՆ, գ. **Միգրանտներին ատելը:** ՌԴ միգրացիոն ներկայիս իշխանությունները որոշել են գործիքավորել **միգրանտատյացությունը** և քսենոֆոբիան (Ժամ., 21.11.2014):

ՄԻԿՐՈԱԼԻՔԱՅԻՆ, ած. Խոսքը կենցաղի անբաժան մաս կազմող **միկրոալիքային** վառարանների մասին է, որ այսօր մեր երկրում շատ տնային տնտեսություններում կան (ՀՀ, 26.11.2014):

ՄԻԿՐՈԱՎՏՈԲՈՒՍ, գ. Ամենակարճ ժամկետում լուծել ամենաարմատական խնդիրը՝ ձերբազատվել **միկրոավտոբուսներից** (Հրապ., 24.12.2014):

ՄԻԿՐՈԱՎՏՈԲՈՒՍԱՅԻՆ, ած. Նա աշխատել է Երևանի թիվ 89 **միկրոավտոբուսային** երթուղում (ՀԺ., 27.10.13):

ՄԻԿՐՈԲԻԶՆԵՍ, գ. **Փոքր ծավալի բիզնես: Միկրոբիզնեսում** կանանց մասնաբաժինը հասնում է 20–25 տոկոսի…. (Կինը և քաղաքականությունը, սեպտեմբեր, 2014):

ՄԻԿՐՈԲԼՈԳ, գ. Ամերիկյան երգչուհու միկրոբլոգը մեծ արագությամբ շարունակում է նոր ընթերցողներ հավաքել (Ժամ., 28.10.2013):

ՄԻԿՐՈԲՈՂՈՔ, գ. Դե, այսօր էլ արևմտամետների հերթական **միկրոբողոքն** է լինելու ՍԴ շենքի մոտ, ուր քննվելու է ԵՏՄ համաձայնագրի սահմանադրականությունը (Իրավունք, 14.11.2014):

ՄԻԿՐՈՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ, գ. **Փոքր ձեռնարկություն:** ....Առևտրի ոլորտի **միկրոձեռնարկություններում** շրջանառությունը նվազել էր (168 ժ., 28.01.2014):

ՄԻԿՐՈՎԵՐԱՀԱՂՈՐԴԻՉ, ած. Այն մարզային **միկրովերահաղորդիչ** կայաններում տեղադրելու համար ձեռք է բերվել 95 նոր աշտարակ և 150 հեռահաղորդակցման խցիկ (TV մոլ, 27.10.2014):

ՄԻԿՐՈՏՐԱՎՄԱ, գ. **Փոքր վնասվածք:** Ավելորդ քաշը մեծացնում է ծանրաբեռնվածությունը հոդերի վրա և առաջացնում հոդերի **միկրոտրավմաներ** (TV ալիք 25.11.2013):

ՄԻՆԻՄԱՐԿԵՏ, գ. **Փոքր խանութ:** Սուպերմարկետները աճում են սնկերի պես, …խլում են այն փոքրիկ առևտուրը, որ իրականացնում են **մինիմարկետները** (Հրապ., 08,11.2013):

ՄԻՆՉԱՐԲՈՒՆՔԱՅԻՆ, ած. Այդ տիպի տղամարդիկ ոտնձգություն են ունենում **մինչարբունքային** հասակի սեփական երեխաների հանդեպ (Համացանց, Doctors. am կայք):

ՄԻՆՉՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ, ած. **Մինչև ճգնաժամը եղած:** Նախաձեռնության անդամները կառավարությունից պահանջեցին հրատապ միջոցառումներ ձեռնարկել ….առաջին անհրաժեշտության ապրանքների ու ծառայությունների գները **մինչճգնաժամային** մակարդակի բերելու համար (Ժամ., 20.12.2014):

ՄԻՋԱՄՍԱԳՐԱՅԻՆ,ած. **Ամսագրերի միջև եղած:** Միջհրատարակչական, **միջամսագրային** և այլ կապեր են պետք հաստատել տարբեր երկրների հետ (ԳԹ, 13.09.2013):

ՄԻՋԲԱԿԱՅԻՆ, ած. **Բակերի միջև եղած:** Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանների ծրագրով 2014 թ. ասֆալտապատված բակերի և **միջբակային** ճանապարհների թիվը կհասնի շուրջ 1000-ի (TV մոլ, 13.10.2014):

ՄԻՋԲՈՒՀԱԿԱՆ, ած. **Բուհերի միջև եղած:** Հետագայում մեր զրուցակիցը մասնակցել է «Նռնենի» **միջբուհական** երգի մրցույթին (TV մոլ, 09.12.2013):

ՄԻՋԴԱՎԱՆԱԿԱՆ, ած. **Տարբեր դավանանքների միջև եղող՝ ստեղծվող՝ գոյություն ունեցող:** «Կոնգրես» հյուրանոցում նոյեմբերի 28-ին ՀՀ-ում Ղազախստանի դեսպանատունն ու Գլոբալիզացիայի և տարածաշրջանային համագործակցության կենտրոնը համատեղ գիտաժողով էին կազմակերպել «Ազգամիջյան և **միջդավանական** համագործակցության փորձ» թեմայով (Իրատես, 02.12.2014):

ՄԻՋԴԻՍՑԻՊԼԻՆԱՐ, ած. «Էներգաարդյունաբերության ապահովման հիմնախնդիրների հայ-գերմանական **միջդիսցիպլինար** գիտահետազոտական ցանցի ստեղծում» միջազգային ծրագրի մեկնարկը տրվել է հոկտեմբեր ամսվա սկզբին (Եր. համ., թ. 9, 2014):

ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ, ած **Եկեղեցիների միջև եղած**: Ապրիլի 12–ին տեղի ունեցավ Մայր Աթոռ Ս.Էջմիածնի **միջեկեղեցական** խորհրդի հերթական նիստը....(ՀՀ, 15.04.2014):

ՄԻՋԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ, ած. **Խորհրդարանների միջև եղած:** Առաջնահերթ համարվեց.... ինչպես նաև ապակենտրոնացված համագործակցության և **միջխորհրդարանական** կապերի խթանումը (ՀՀ, 03.12.2013):

ՄԻՋՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ, ած. **Հրատարակչությունների միջև եղած**:

Միջհրատարակչական, միջամսագրային և այլ կապեր են պետք հաստատել տարբեր երկրների հետ (ԳԹ, 13.09.2013):

ՄԻՋՆԱԴԱՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, գ. **Պատմագիտության ճյուղ, որ զբաղվում է միջնադարի ուսումնասիրությամբ: Միջնադարագիտությունը** նվիրյալների բնագավառ է (ԳԹ, 20.03.2015):

ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ, ած. Անդրադառնալով **միջնաժամկետ** ծրագրերում տեղ գտած առաջնահերթություններն՝ դեսպան Նազարյանը մատնանշեց կայուն զարգացման նպատակների, կլիմայի փոփոխության .... և կանանց առաջխաղացման հարցերի կարևորությունը ... (ՀՀ, 29.01.2014):

ՄԻՋՆՈՐԴԱՅԻՆ, ած. **Միջնորդի:** Շունը երկնքի ու երկրի, կյանքի ու մահվան միջև հանդես եկող իր **միջնորդային** դերով դարձել է կյանքի, նաև կենսամիջոցների հարուցիչ (ՍՀ, էջ 384):

ՄԻՋՆՈՐԴԱՎՃԱՐ, գ. **Միջնորդային ծառայության համար տրվող վճար:** Ծառայության **միջնորդավճարը** կազմում է ընդամենը 30 դրամ (Ազգ, 27.06.2014):

ՄԻՋՇՏԱԲԱՅԻՆ, ած. Հո չե՞ն մտածում Ծառուկյանի՝ փողոցից հավաքած կուսակցությունների հետ մասնակցել **միջշտաբային** նարդու, շաշկի, շախմատի մրցումներին (Հրապ., 25.11.2014):

ՄԻՋՌԱՍՍԱՅԱԿԱՆ, ած. **Ռասսաների միջև եղած:** Էլվիս Փրեսլին միակ սպիտակամորթն էր, ով սկսեց կոտրել այդ **միջռասսայական** պատը (TV մոլ, 26.01.2015):

ՄԻՋՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ, ած. **Տարածաշրջանների միջև եղած:** .... Ինչպես նաև 2011 թվականի ապրիլից մեկնարկած հայ–ռուսական միջտարածաշրջանային ամենամյա ֆորումների անցկացումը (ՀՀ, 03.12.2013):

ՄԻՋՏԵՐՄԻՆԱՀԱՄԱԿԱՐԳ, գ. **Տերմինային միջհամակարգ:** Շարադրվածից ելնելով՝ տվյալ լեզվի տերմինաբանությունը կարող ենք սահմանել իբրև տերմինահամակարգերի ամբողջություն, որի ստորաբաժանումներն են՝ համընդհանուր տերմինահամակարգը, ճյուղային ընդհանրական տերմինահամակարգերը, տերմինային միջհամակարգերը կամ **միջտերմինահամակարգերը** և բոլոր մասնավոր տերմինահամակարգերը (ԷԱ, էջ 318):

ՄԻՋՏԵՔՍՏԱՅԻՆ,ած. **Տեքստերի միջև եղած:** .... Ուստի նրա տեքստը/համատեքստը երկխոսական «կառուցվածքով» **միջտեքստային** կապերի /ինտերտեքստուալության/ արտահայտություն է (ԳԹ, 28.11.2014):

ՄԻՏՎԱԾ ԼԻՆԵԼ, բ. Ֆրանսուա Օլանդի հայաստանյան այցը երևի թե պետք է **միտված** լիներ փոխելու իրավիճակը (Ժամ.,14.05.2014):

ՄԿԱՆԱՆՅԱՐԴԱՅԻՆ, ած. Դրանց անբավարար խտությունն ընդհանուր թուլության, **մկանանյարդային** խանգարումների պատճառ է դատնում (TV մոլ, 27.04.2015):

ՄԿՆԱԾԱՓ, գ. Մի ձեռքով դատարկ գրպանումդ **մկնածափ** ես տալիս, մյուս ձեռքով անբավ հարստության խառնարանում փողի նոր դեզեր ավելացնում (Ավ.,12.02.2015):

ՄՇԱԿՈՒԹԱԿԵՐՏ, ած. Սրանով հանդերձ, Երուանդը՝ իբրև հրաշածնունդ երկվորյակներից մեկը, օժտված է **մշակութակերտ** հերոսի հատկանիշներով (ՍՀ, էջ 109):

ՄՇԱԿՈՒԹԱԿԻՐ, գ. **Մշակույթ կրող:** Ջեյմս Ջոյսի «Ուլիսեսը» հայերեն հնչեցնելը գրական սխրանք էր, որով նա մեզ նորից դրեց մշակութաստեղծ, **մշակութակիր** ազգերին համահավասար շարքում (ԳԹ, 12.12.2014):

ՄՇԱԿՈՒԹԱՀԵՆՈՒԹՅՈՒՆ, գ. Ուրիշինը յուրացնելու անգերազանցելի տաղանդով՝ թուրքերը հերթական **մշակութահենությունն** են ձեռնարկել (Ավանգարդ, 04.12.2013):

ՄՇԱԿՈՒԹԱՆՎԵՐ, ած. **Մշակույթին նվիրված:** ....Արձակագիր Ա.Ծատուրյանի՝ վերջերս լույս տեսած «Մեր Այվազյանը» հուշագիրքն էր, որն էլ գրողի անվան ու գործի շուրջն էր համախմբել քաղաքի մտավորականներին, գրողներին, **մշակութանվեր** ու մշակութասեր մարդկանց (ԳԹ, 20.09.2013):

ՄՇԱԿՈՒԹԱՊԱՀՊԱՆ, ած. **Մշակույթը պահպանող:** Հայաստանի Թեքեյան միության շուրջ 23–ամյա **մշակութապահպան** գործունեությունը իր ուրույն տեղն է ունեցել հայաստանյան մշակութային կյանքում (Ազգ, 10.10.2014):

ՄՇԱԿՈՒԹԱՍԵՐ, ած. **Մշակույթ սիրող:** .... Հուշագիրքը .... գրողի անվան ու գործի շուրջն էր համախմբել քաղաքի մտավորականներին, գրողներին, մշակութանվեր ու **մշակութասեր** մարդկանց (ԳԹ, 20.9.2013):

ՄՇԱԿՈՒԹԱՍՏԵՂԾ, գ. **Մշակույթ ստեղծող**: Ջեյմս Ջոյսի «Ուլիսեսը» հայերեն հնչեցնելը գրական սխրանք էր, որով նա մեզ նորից ու նորից դրեց **մշակութաստեղծ**, մշակութակիր ազգերին համահավասար շարքում (ԳԹ, 12.12.2014):

ՄՇԱԿՈՒԹԱՍՏԵՂԾՈՒՄ, գ. Մինչդեռ մեր մշակույթի պատմության մեջ թարգմանությունը ոչ միայն լեզվաստեղծում, այլև **մշակութաստեղծում** է եղել (Իրատես, 28.03.2014):

ՄՇԱԿՈՒԹԱՏԻՊԱԲԱՆԱԿԱՆ, ած. Ամպրոպային երևույթի այդ բնակերպ, կենդանակերպ և մարդակերպ պատկերացումները հավասարաձևունակ են և արտահայտում են մտածողության **մշակութատիպաբանական** զարգացման տարբեր աստիճաններ (ՍՀ, էջ 84):

ՄՇՏԱԴԱԼԱՐՈՒԹՅՈՒՆ, գ. Իր **մշտադալարության** պատճառով գիհու և նրան ազգակից մայրու և նոճու հետ էր կապվում մահվան և այն հաղթահարող հավերժական կյանքի սիմվոլիկան (ՍՀ, էջ 267):

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ, գ. Պետական առողջապահական գործակալությունում ստեղծվել է բժշկական օգնության **մշտադիտարկման** և փորձագիտական գնահատման բաժին ....(ՀՀ, 13.2.2014/:

ՄՇՏԱԿԱՐՈՏՈՒԹՅՈՒՆ, գ. .... Հայերիս խաղաղ ու ստեղծագործ աշխատանքին տրվելու **մշտակարոտությունը ,** հրադադարի տարիները, պատերազմի թողած երևույթ

և աներևույթ վերքերը փոքր– ինչ ամոքելու, մեր տունն ու սահմանը նորոգելու ժամանակ դարձրին (ԳԹ, 05.09.2014):

ՄՇՏԱՀԱՅԱՑՈՒԹՅՈՒՆ, գ. Գամլենը, որ տատանվում էր, պարզապես դանդաղորեն համակվում է ռոբեսպիերյան **մշտահայացությամբ** (Հրապ., 30.01.2014):

ՄՇՏԱՄՈՐՄՈՔ, ած. **Միշտ մորմոքող:** Հայոց **մշտամորմոք** 100-ամյա ցավը (Ավ., 12.02.2015):

ՄՇՏԱՎԱՋՔ, ած. Կյանքի **մշտավազք** հոլովույթում հաճախ նժարվում են կորուստն ու սպասումը (ԳԹ, 04.04.2014):

ՄՇՏՆՋԵՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Մշտնջենավոր լինելը:** Եվ միտքս պիտի վառվի ու վառվի ճանապարհներին մշտնջենության... (ԼՄ, ԵՀ, էջ 47):

ՄՈԴԵԼԱՎՈՐՈՂ, գ. Նորաձևության ցուցադրության ընթացքում իրենց հավաքածուները կներկայացնեն **մոդելավորողներ**՝ ինչպես Հայաստանից, այնպես էլ Ռուսաստանից (Իր., 24.10.2014):

ՄՈԴԵՌՆԻԶԱՑՈՒՄ, գ. **Արդիականացում:** Ռոումենը խոսեց ուղիղ 20րոպե…, խոսեց **մեդեռնիզացման** մասին իր կրած պատասխանատվության մասին (TV ալիք, 03.03.2014):

ՄՈԽՐԱԹԵՎ, ած. ….//Որոնում էին դեռ շատ առաջ// Ու չէին կարող իրար գտնել// Քո առավոտը աղավնաչք// Ու իմ երեկոն այս **մոխրաթև** // (ԳԹ, 28.11.2014):

ՄՈՄԱԶՈՒՐԿ, ած. **Մոմից զրկված:** Եկեղեցին **մոմազուրկ**, խնկազուրկ և նամազազուրկ եղած որտեղից պիտի ճանաչեր Մուշեղ թոռ Գուվարենց Ավոյին (ՀԲ, էջ 109):

ՄՈՄԱԼՈՒՅՍ, ած. **Մոմի պես լույս արձակող**: Ինչպես արձակում, չափածոյում էլ Բեգլարյանը բառաշինանար է (լուսագույն փայլ, մամռագանգուր մազեր, ամպագոռ ձայն**, մոմալույս** աչքեր, վետվետող ստվեր , լուսնաքար երազ) ու պատկերահան (ԳԹ, 04.04.2014):

ՄՈՄԱՄԱՏԻՏ, գ. Երբ կարևոր դեպք չկար, դու Վանաձորում էիր, քո **մոմամատիտների**, ծխախոտի ու աշակերտներիդ հետ (Համացանց, 01.12.2014):

ՄՈՆՈՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ, գ. **Մեկ դերասանի միջոցով իրականացող ներկայացում:** Դերասանուհին նույնպիսի տարերքի մեջ խաղաց նաև «Թափոր» **մոնոներկայացումը**՝ 2004-ին Գերմանիայում կայացած միջազգային մոնոփառատոնին (TV մոլ, 20.01.2014):

ՄՈՆՈՓԱՌԱՏՈՆ, գ. **Մոնոներկայացումների փառատոն:** Տե՛ս ՄՈՆՈՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ-ի օրինակը:

ՄՈՏԻՎԱՇԱՐ, գ. **Մոտիվների՝ դրդապատճառների շարքը:** Կորուստ-անհույս որոնում-վիշտ **մոտիվաշարը** կազմում է սգո բոլոր ծիսական արարողությունների կարևոր բաղադրամասը (ՍՀ, էջ 293):

ՄՈՏԻՎԱՑՎԱԾՈՒԹՅՈՒՆ, գ. Ս.Սարգսյանի **մոտիվացվածությունը** Հ. Աբրահամյանին նշանակել վարչապետի պաշտոնում գրեթե զրոյանում է (Համացանց, 12.04.2014):

ՄՍԱՏԵՍԱԿ, գ. ....Ուշադրության կենտրոնում է պահվում նաև բնակչությանը ընտանի կենդանիների **մսատեսակներով** ապահովելը (Ազգ, 14.03.2014):

ՄՍԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ, գ. **Մսարտադրության** հետ կապ չունեցող ճապոնական «Capcom» ընկերությունը այս կերպ որոշել էր գովազդել առաջիկայում թողարկվելիք հերթական խաղը՝ «Չարի արմատը» (Ավ., 12.02.2015 /:

ՄՏԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ, գ. **Մտագործունեությունը** և նոր գիտելիքների կիրառումը դառնում է առաջնայնություն (ՀՀ, 25.03.2014):

ՄՏԱՀՈՍՔ, գ. **Մտքի հոսք**: Արարող ու արարվող հոգիների երթը անընդմեջ վերելք է, նրանք բաց համակարգեր են՝ **մտահոսքի,** գաղափարների, բանական կենսաուժի ընդունիչ–հաղորդիչներ (ԳԹ, 03.10.2014):

ՄՏԱՀՈՒԶԱԿԱՆ, ած. Նրա ստեղծագործությունն արտացոլեց մարդու, հասարակության ու ժողովրդի **մտահուզական** գրեթե բոլոր իրավիճակները (Ազգ, 27.06.2014):

ՄՏԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆ, գ. Նա ներկայի ընթացքը կապում է պատմությանը՝ վերջինից բխեցնելով **մտառկայությունները** (ԳԹ, 06.06.2014):

ՄՏԱՍՐԱՀ, գ. Հիման՝ աներկբայելի, **մտասրահներում**՝ սուգ....(ԳԹ, 25.04.2014):

ՄՏԱՎԱՐԺԱՆՔ, գ. **Մտքի վարժանք**: Ջուր եմ ծեծում, իհարկե, անտեղի **մտավարժանք** է, միայն թե հրահրող եղավ Սուսաննա Հարությունյանն....(ԳԹ, 22.11.2013):

ՄՏՔԱԿՈՒՅՏ, գ. **Մտքերի կույտը:** Երբ ընկղմվում ես գրքի մեջ, կորցնում ես իրականության մասին դարդերի **մտքակույտը** (TV ալիք, 02.12.2013):

ՄՏՔԱՏԵՐ, գ. **Տվյալ մտքի տերը:** Այդպես մտածելը, անմեղսունակ լինի **մտքատերը**, մեղսավոր՝ ստույգ թշնամություն է, ճորտի թշնամություն (Հրապ., 04.11.2014):

ՄՐԳԱԽՅՈՒՍ, գ. **Մրգերի հյութը՝ ծեծված զանգվածի հետ միասին:** Հայաստանից դեպի Ռուսաստան արտահանում են ջեմ, մարմելադ, **մրգախյուս**՝ 223,4 տ (Աղյուսակից, 06.11.2014):

ՄՐԳԱՏՈՆ, Ամեն սեզոնի՝ մի **մրգատոն,** սեզոնի ամեն օրը՝ ստեղծագործական նոր ճառագում.... (ԳԹ, 24.07.2015):

ՄՐՋՆԱԿՈՒՏԱԿ, գ. Եթե զգուշորեն վերցնենք **մրջնակուտակի** մի մասը և հետ տեղադրենք ծառի հակառակ կողմում, նրանք արագ «տնտեսություն» կստեղծեն, իսկ հին մրջնանոցը՝ կնորոգեն (TV մոլ, 17.02.2014):

ՄՐՍԱԿԱՆ, ած. Երեխան հիվանդանում է **մրսական** հիվանդություններով, վերին շնչուղիների բորբոքումներով, գրիպով (TV ալիք, 17.03.2014):

ՄՐՍԿԱՆՈՐԵՆ, ած. Կուրսկի կայարանում դիմավորեց Պարույրը՝ ցրտից ուսերը բարձրացրած, դեմքը իր պես **մրսկանորեն** կծկված (ԱԶ, էջ 463):

ՄՐՑՈՒՆԱԿԱՑԱՎ, գ. Մեզանում գործող **մրցունակացավից** պետք է փորձենք ազատվել (Իրատես, 07.02.2014):

ՄՈՒԼՏԻՄԵԴԻԱ, գ. ….Կոմիտաս վարդապետի 145- ամյակին նվիրված ստեղծվել է ձայնասկավառակ, որը ներառում է հայերեն ու անգլերեն յոթ աուդիո և մեկ **մուլտիմեդիա** սկավառակ (Ժող., 11.02.2015):

ՄՈՒԼՏԻՄԵԴԻԱ, Պատրաստվել է «Հայկական լեռնաշխարհ» առաջին **մուլտիմեդիա** էլեկտրոնային գիրքը, որն ամփոփում է հայ ժողովրդի մշակույթն ու պատմությունը (ՀՀ, 30.01.2014):

ՄՈՒՆՋԱՆԱԼ, բ. **Համբանալ**: –Չհասկացա,– վերջապես լռությունը խզեց Խիկարը և դարձյալ **մունջացավ** (ԳԹ, 10.10.2014):

ՄՈՒՏԱՆՏԱՑՆԵԼ, բ. Համբերատար հայաստանյան ժողովրդին կարողացան այնպես **մուտանտացնել,** որ նա հիմա համարյա ոչնչի չի արձագանքում, ոչնչից չի զարմանում....(ԳԹ, 13.09.2014):

Յ

ՅՈԹՆԱԴԱՐՍ,ած. **Յոթ դարս ունեցող:** Տատս մեկ անգամ էլ բարձրացրեց գոգնոցի փեշը, ու նրա **յոթնադարս** շորերի տակից նորից զգացի բռնոթու կծու բույրը (ԳԹ, 04.04.2014):

ՅՈՒՂԱՓԹԻԹ, ած. ....Դառնալ ջրի գնով ազգային-պետական սեփականությունից ձեռք գցած **յուղափթիթ** կտորի միանձնյա տեր ու տնօրեն (Իրատես, 28.03.2014):

ՅՈՒՐԱՌՃՈՒԹՅՈՒՆ, գ. **Յուրատեսակություն՝ ինքնատիպություն:** Ձեզ ենք ներկայացնում մի հարսանիք, որը միանշանակ աչքի է ընկնում **յուրառճությամբ** և անկրկնելիությամբ (Համացանց, 20.03.2014):

Ն

ՆԱԻՐԻՏՑԻ, գ. Այժմ **նաիրիտցիներին** պայքարի նոր փուլ է սպասվում... (168 ժ., 02.12.2014):

ՆԱԽԱԱՄԻՍ, գ. Ընտրությունների **նախաամիսներին** «Հայ նոր գրականության պատմություն» 4-րդ հատորից Սևակին կարծիքի էր տրվել Ս.Սարինյանի գրած «Մուրացան» և Հր. Թամրազյանի «Շիրվանզադե» գլուխները (ԱԶ, էջ 509):

ՆԱԽԱԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ, ած. **Գեղագիտության՝ որպես գիտաճյուղի ստեղծմանը նախորդող**: Բուն հայկական գեղագիտական մտքի սկզբնավորումը թվագրվում է մ.թ. 4-5-րդ դարերով, թեև Հայաստանի տարածքում **նախագեղագիտական** պատկերացումները վերաբերում են շատ ավելի վաղ ժամանակաշրջանի (ՀՄԵՀ, էջ 508):

ՆԱԽԱԳԾԱՆԿԱՐԵԼ, բ. Եվ սակայն նա մատիտով արագ թղթի վրա **նախագծանկարում** է, հետն էլ, ասես առաջին անգամ, պատմում իր հայրենիքից (ԱԶ, էջ 428):

ՆԱԽԱԴԵՊԱՅԻՆ , ած. /իրավ./ Ներկայացվող գրքերի կարևորությունն այսօր ակնհայտ է վճռաբեկ դատարանի **նախադեպային** իրավունքի հետ աշխատող յուրաքանչյուր իրավաբանի համար (ՀՀ, 04.11.2014):

ՆԱԽԱԴՐՈՒՅԹ, գ. Ամստերդամում առաջ է քաշվել մթերքներում շաքարի պարունակությունը նվազեցնելու պահանջ, ինչպես նաև շաքարի համար հարկ սահմանելու **նախադրույթը** (Տն. առ., թ. 16, 2014 /:

ՆԱԽԱԵՐԿՐԱՇԱՐԺՅԱՆ, գ. Գյումրին կհառնի նորից՝ կնմանվի **նախաերկրաշարժյան** Գյումրիին, ինչպես որդին է բեղ-մորուսի հասնելով՝ նմանվում հորը կամ պապին

ՆԱԽԱԽՈՐՀՐԴԱՐԱՆ, գ. Նախօրեին ՝ ժամը 19:45- ի սահմաններում, **նախախորհրդարանի** քարտուղարության անդամ Ալիկ Ենիգոմշյանը տուն

վերադառնալիս է եղել, երբ նրա ավտոմեքենային են մոտեցել մի խումբ անձինք (Ժամ., 21.10.2014):

ՆԱԽԱՄՐՑՈՒՅԹԱՅԻՆ, ած. **Մրցույթին նախորդող**: **Նախամրցույթային** ժողովին չներկայանալը չի կարող հանդիսանալ հայտի մերժման պատճառ (ՀՀ, 01.11.2014):

ՆԱԽԱՍՏԵՂԾՈՐԵՆ, մկբ. **Ի սկզբանե**: Այդ մարդը **նախաստեղծորեն** ինքնաբավ է, ինքնակա, կատարյալ, քո սիրո, լույսի ու քո գաղափարների մերձավորության կարիքը ամենևին չունի....(ՀՀ, 12.04.2014):

ՆԱԽԱՏԵՂ, գ. Հողն ասես կաթկթում է նրա մատներից, նրա մարմինը ձգում, տանում է նախատեղ (Հրապ., 08.11.2014):

ՆԱԽԱՐԱՐՈՒՄ, գ. Նոր տարվա հնագույն ծեսի իմաստաբանությունն այդ է՝ սրբազան արարողությամբ կանխել տիեզերքի հասունացած կործանումը, ծեսի միջոցով վերարտադրել տիեզերքի **նախարարման** վիճակն ու կարգը (ՍՀ, էջ 446):

ՆԱԽԱՐՄԱՏ, գ. Նկատենք, որ այս երկու բառերի առասպելաբանական նույնության բառիմաստի և հնչյունական մակարդակով համապատասխանում է այդ բառերի միևնույն **նախարմատից** սերելու գիտական ստուգաբանությանը (ՍՀ, էջ 264):

ՆԱԽՈՒՏԵՍՏԱՐԱՆ, գ. **Խորտկարան:** Ամեն ինչ փոխվում է, երբ մայր ու աղջիկ տեղափոխվում են ոչ մեծ մի բնակավայր, որտեղ Ռիտան աշխատանք է գտնում տեղի **նախուտեստարանում** (TV մոլ, 20.09.2014):

ՆԱՂԼԱՊԱՏՈՒՄ, գ.Ս.Աղաբաբյանի տեսակետը,մանավանդ վերջին՝ «Նաղլապատումի հոսանք» բնութագրումը որևէ երկխոսության հնարավորություն չէր ընձեռում…. (ԳԹ, 28.11.2014):

ՆԱՄԱՁԱՁՈՒՐԿ, Տե՛ս ՄՈՄԱՁՈՒՐԿ-ի օրինակը:

ՆԱՎԹԱԴՈԼԱՐԱԲՈՒՅՐ, ած. **Նավթահորերի շահագործումից ստացվող դոլարների բույր ունեցող:** Չկա աշխարհում միակողմանի ոչինչ: Ու **նավթադոլարաբույր** խավիարն այստեղ 64-րդական դեր ունի (Իր., 07.10.2014):

ՆԱՐԿՈԿԱՐՏԵԼ, գ. ԱՄՆ-ում **նարկոկարտելների** կողմից սկսվել էր սկսվել SDL թմրանյութի մեծածավալ արտադրությունը (Համացանց, 02.02. 2014):

ՆԵՏԱՁԱՐԿ, ած. **Նետով զարկված:** .... Տեղափոխվում եմ ձեղնահարկ.// Որտեղ տողը տրոփում է// **Նետազարկ** մի սրտի նման....(ԳԹ, 19.07.2013):

ՆԵՐԱՆՀԱՏԱԿԱՆ ,ած. Հերոսի հոգեբարոյական կառույցը սկզբնապես դիտարկելի չէ **ներանհատական** կամ իրադրական հանգամանքներով (ԳԹ, 21.03.2014):

ՆԵՐԱՌԱՍՊԵԼԱԿԱՆ, ած. Այս փաստերն ուշագրավ են այնու, որ ծեսերը արված են առասպելի մեջ, **ներառասպելաբանական** են (ՍՀ, էջ 304):

ՆԵՐԱՌՎԱԾՈՒԹՅՈՒՆ, գ. Մեզանում առկա բիրտ ու անօրեն// Բարքերի մասին՝// **Ներառվածությամբ** մեզ ցավ պատճառող// Հոգսերով բազում....(ԳԹ, 07.02.2014):

ՆԵՐԲԱԿԱՅԻՆ, ած. Ընդհանուր 2 մլն հազար քառակուսի մետր ասֆալտապատումից 495 հազար քառակուսի մետրը բաժին է ընկնում **ներբակային** ճանապարհներին ու բակային տարածքներին (TV մոլ, 13.10.2014):

ՆԵՐԲԵՌՆԵԼ, բ. ՄոբիԴրամի ծառայություններից կարելի է օգտվել առանց հատուկ ծրագիր ներբեռնելու (Ազգ, 27.06.2014):

ՆԵՐԳՆԱ, գ. Հատկապես Ամանորին հայաստանցիների կողմից գրանցվում է **ներգնա** տուրիզմի աճ (Ժող., 26.11.2013):

ՆԵՐԴՐՈՂ, գ. ՀՀ կառավարությունն անում է հնարավոր ամեն ինչ, որպեսզի հենարան դառնա **ներդրողներին** ու ձեռներեցներին (Իր., 17.10.2014):

ՆԵՐՁԱՏԱԲԱՆ, գ. **Ներքին սեկրեցիայի գեղձերի հիվանդությունների մասնագետ՝ էնդոկրինոլոգ**: Երևանի հիվանդանոցային տարբեր համալիրներից մարզ էին գործուղվել **ներզատաբան,** ակնաբույժ, սրտաբան,ուռուցքաբան....(ՀՀ, 12.04.2014):

ՆԵՐՁԱՏԱԿԱՆ

ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾՈՒԹՅՈՒՆ, գ.Նշենք, որ կին թեկնածուի փոխարեն պետք է լիներ Վիգեն Քոչարյանը, սակայն սեռերի **ներկայացվածության** սկզբունքի ապահովման նպատակով մրցույթային հանձնաժողովի որոշմամբ,…. Վիգեն Քոչարյանը փոխարինվել էր….իգական սեռի մասնակցով՝ Նելիկ Հարությունյանով (Ժող., 15.01.2015):

ՆԵՐԿՐՈՂ, գ.Վերջերս մեքենա ներկրողների միավորման հետ համատեղ ասուլիս տվեցինք (Հրապ., 31.10.2013):

ՆԵՐՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ, գ. **Համակարգի ներսում եղող:** Սա ավելի նոր թափով է բորբոքելու **ներհամակարգային** դիմակայությունը (Ժամ., 26.11.2014):

ՆԵՐՀԱՅԵՑՈՂ, ած. Մայր խոսքի բանվածքի վրա հեղինակը նշողում է գոյության ահեղ կեռմաններ ճակատագրական հանգույցներ, որ խտանում, ահագնանում են, թվում է այդ

ամենին անհաղորդ, հավերժական նինջի ու թմբիրի մեջ **ներհայեցող** բնության խորքում (ԼԽ, էջ 8):

ՆԵՐՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ, ած. **Հիվանդանոցի ներսում եղող:** Գլխավոր բժշկի պաշտոնատար Վիրաբ Մանասյանը դիմել է Սյունիքի մարզպետարան, քանի որ հայտնաբերվել էր **ներհիվանդանոցային** ինֆեկցիա՝ հեպատիտ C (Ժող., 15.01.2015):

ՆԵՐՄԵՐՍԵԼ, բ. Նախ քսուքը **ներմերսեք** ձեռքի ափով՝ գլուխը թեթևակի հետ գցելով և աջ ձեռքի թեթև, սահուն շարժումներով պարանոցի ձախ հատվածը, իսկ ձախ ձեռքով՝ աջ հատվածը (TV մոլ, 30.06.2014):

ՆԵՐՈՐՈՎԱՅՆԱՅԻՆ, ած. Իսկ ճողվածքի հրահրող գործոն կարող է դառնալ նաև երեխայի շատ բարձր, ճչոցով ուղեկցվող լացը, ինչպես նաև այնպիսի վիճակները, որոնք բարձրացնում են **ներորովայնային** ճնշումը՝ հազը, որովայնի փքվածությունը, փորկապությունը (TV մոլ, 17.02.2014):

ՆԵՐՍՈՒՅԶ, Զավեն Ավետիսյանը ակադեմիական ոճի գրականագետ է: Նրա որոնող միտքը **ներսույզ** է երևույթի դեպի էություն, դեպի իրերի բնույթի ճանաչումը (ԳԹ, 15.11.2013):

ՆԵՐՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ, ած. Հայաստանի Հանրապետությունը գտնվում է մի տարածաշրջանում, որտեղ առկա են անցումային ժամանակաշրջանին բնորոշ զարգացումները՝ և՛ **ներտարածաշրջանային**, և՛ արտատարածաշրջանային սպառնալիքներով հանդերձ (Լրատու, էջ 144):

ՆԵՐՔՆԱԿՈՒՏԱԿ, «Լուռ աղոթք» է կոչել քառյակների և քառատողերի բաժինը՝ իրապես իր աղոթքը հղելով ու արտածելով, իր **ներքնակուտակ** տրամադրություններն արտահայտելով , իր զրույցը վարելով իր երկու ես–ի միջև (ԳԹ, 03.12.2013):

ՆԵՐՔՆԱՏԵՍՈՐԵՆ, մկբ. Նրա կայծակե մտքերի շրխկոցը մի պահ խանձել է հարազատների կողմից թաքցրած, սակայն իրեն **ներքնատեսորեն** հայտնի քաղցկեղի ճյուղավորումը (ԳԹ, 07.02.2014):

ՆԵՐՔՆՈԼՈՐ, ած. Իսկ Տիգրան Մանսուրյանի «Օրոր»–ը շատ եթերային էր, գեղեցիկ, **ներքնոլոր** .... (Ազգ, 27.06.2014):

ՆԵՐՕԼԻԳԱՐԽԱՅԻՆ, ած. Ծառուկյանն այլևս առաջվանը չէ, և այս փաստը չի կարող իրեն զգացնել չտալ նաև **ներօլիգարխային** հարաբերություններում (Ժող., 24.03.2015):

ՆԺԴԵՀԱՇՈՒՆՉ, ած. **Գարեգին Նժդեհի շունչն ունեցող:** Եվս մեկ նժդեհաշունչ ասույթ (Իրատես, 29.04.2014):

ՆԻՍՏԱՎԱՐ, գ. **Նիստը վարող:** Մյուս ոչ ցանկալի երևույթը **նիստավարների** «առատությունն» էր (Ազգ, 26.09.2014):

ՆԿԱՐԱՀԱՎԱՔ, գ. **Նկարներ հավաքող**: Արվեստաբան, **նկարահավաք**, հրատարակիչ, ցուցահանդեսների կազմակերպիչ, փորձագետ – կերպարվեստին հավատարմորեն ծառայող խոնարհ մշակ(Շահեն Խաչատրյան) ....(Ազգ, 26.09.2014):

ՆԿԱՐԱՀԱՎԱՔՉԱԿԱՆ, ած. Վեհափառ հայրապետի առաջարկով Շահեն Խաչատրյանը 2006–ից աշխատում է Մայր աթոռ Սբ Էջմիածնի «Խրիմյան» թանգարանում, իրագործում է **նկարահավաքչական** աշխատանքներ և ցուցահանդեսներ կազմակերպում (Ազգ, 26.09.2014):

ՆՄԱՆԱԿՈՂ, գ. Գերմանացի նկարիչ Օտտո Վարկերն, իր մեջ հայտնաբերելով **նմանակողի** տաղանդ, սկսեց կեղծել Վան Գոգի նկարները….(Ազգ, 10.10.2014):

ՆՄՈՒՇԱՌՈՒՄ, գ. Յուրաքանչյուր խմբաքանակից պարտադիր կարգով կատարվում են **նմուշառումներ** (168 ժ., 25.03.2014):

ՆՅԱՐԴԱԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ, գ. Ես **նյարդալեզվաբանական** ծրագրավորման (ՆԼԾ) մասնագետ եմ (TV ալիք, 29.09.2014):

ՆՅԱՐԴԱՀՈԳԵԲՈՒԺԱԿԱՆ, ած. Սյունիքի **նյարդահոգեբուժական** դիսպանսերի հիվանդներն անցնող տարվա ընթացքում պարբերաբար թերսնվել են (Ժող., 17.01.2015):

ՆՅԱՐԴԱՄԱՇԿԱԲՈՐԲ, գ. «Մարիա» քսուքը նպաստում է **նյարդամաշկաբորբի**, մաշկի բորբոքումների ապաքինմանը (Տն. առ., թ. 4, 2014):

ՆՅՈՒԹԱԶԵՐԾ, Ըստ թումանյանական կենսափիլիսոփայության՝ 40–ամյակը մարդու վերելքների գագաթն է, որին հաջորդում է մի երանելի ընթացք՝ ազատագրված հոգով և **նյութազերծ** կեցությամբ….(ԳԹ, 03.10.2014):

ՆՅՈՒԹԱՀԱԼԱԾ, Մենք՝ հայերս, մեր բառապաշարից աստիճանաբար դուրս ենք մղել հոգևոր, **նյութահալած** բովանդակության բառամթերքը և կամ ախտաժերտել ենք դրանց նախնական, բանի–բուն իմաստները (ԳԹ, 21.02.2014):

ՆՅՈՒԹԵՂԱՆԱԼ, Եվ հիմա, հիսուն տարի անց, երբ ներսումդ կրկին **նյութեղանում** է քո հին, խաղալիք բեռնատարը, ուզում ես այն քշել երեխայի ավյունով.... (ԳԹ, 01.11.2013):

ՆՅՈՒՅՈՐՔԱԲՆԱԿ, ած. **Նյու-Յորքում բնակվող:** Irates. am-ը **նյույորքաբնակ** քաղաքագետ Հայկ Մարտիրոսյանից հետաքրքրվեց, թե արդյոք ոչիշխանական եռյակի գործողությունները կարող են հանգեցնել արտահերթ ընտրությունների (Իր., 04.11.2014):

ՆՆՋԱՏՈՒՓ, գ. Դագաղ

ՆՇԱԿԻՐ, ած. Այժմ նրա շահած գումարից ոչինչ չի մնացել, իսկ Կարասին դատավճիռ է սպասում **նշակիր** խաղաթղթերի համար (TV մոլ, 23.01.2014):

ՆՇԱԿՆԻՔ, գ. Եթե ամուսնացած չեք, ապա խզումը հեշտ կլինի, իսկ նրանք ովքեր անձնագիրը զարդարել են **նշակնիքով**, պետք է պատրաստ լինեն կրքերի փոթորկի (Տն. առ. թ.18, 2014):

ՆՇԱՀԱՐԵԼ, բ. Այլ կերպ ասած, ինչպես անտառում յուրաքանչյուր գազան **նշահարում** է իր սահմանը, այնպես էլ, գերտերությունների պարագայում, խաղաղությունը կտևի այնքան ժամանակ, քանի դեռ մեկը մյուսի կենսական տարածքի նկատմամբ ոտնձգություն չի արել (Իրատես, 18.03.2014):

ՆՇԱՆԱՀԱՅԵԼ, բ. Այո, Միկոյանը, որպես քաղբյուրոյի անդամ, ստիպված էր **նշանահայե**լ որոշ ցուցակներ, լռել, երբ պաշտոնանկ էին անում պատասխանատու ղեկավարների (Ազգ, 20.06.2014):

ՆՇԱՆԱՍԵՐՈՒՄ, գ. **Նշանասերումը** նշանի գոյավորման ընթացքն է, հե'նց այդ գոյավորումը՝ սկսած նշանային ենթատարրերի համակցությունից մինչև նշանային միջավայրի՝ նշանոլորտի ապահովում (ՀՀՋՀ, էջ 28):

ՆՇԱՆՈԼՈՐՏ, գ. Семиосфера **Նշանոլորտում** նշանի կենտրոնատեղին նշանն է, որ է բովանդակության և արտահայտության բևեռների ներանցված գոյություն (ՀՀՋՀ, էջ 37):

ՆՈՐԱԼՈՒՅՍ, ած. **Նոր լույս տեսած:** Վերջում Դանիել Երաժիշտի **նորալույս** երգի նոտագրության և ձայնասկավառակի նմուշները հանձնվեցին Հ.Թումանյանի և Ցեղասպանության թանգարանների տնօրեններին (Իրատես, 24.12.2013):

ՆՈՐԱԾՆԱՅԻՆ, ած. **Նորածնի: Նորածնային** խնամքի բուժհաստատությունն աչքի է ընկնում բարձր ծանրաբեռնվածությամբ (Ժող., 17.12.2015):

ՆՈՐԱԾՆՎԵԼ, բ. **Նորից ծնվել:** Այսօր մենք հայոց վերքի և արդար ընդվզումի մեծ երգչիդ եկել ենք ասելու, որ մենք **նորածնվել** և ապրում ենք կրկին (168 ժ., 11.12.2014):

ՆՈՐԱՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ, գ. .... Թատրոնի երևանյան հյուրախաղերն իրապես հետաքրքիր ու բազմաբովանդակ էին՝ մասնավորապես գեղարվեստական ուշագրավ ձևերի ու ոճական **նորահայտնությունների** մասով....(ԳԹ, 29.11.2013):

ՆՈՐԱՀԱՐՍՈՒԹՅՈՒՆ, գ. Լիբանանահայ ընտանիքում հարս եկած մի երևանցի աղջիկ դեռ **նորահարսությունը** վրան, գողացել է իր ամուսնու մոր դրամներն ու ոսկեղենը և թողնելով ամուսնուն՝ փախել է մի ուրիշ տղայի հետ (Համացանց, 08.02.2014):

ՆՈՐԱՀՈՏ, ած. **Նոր:** Գտնվեց խոսուն ու **նորահոտ** բառը՝ «էլիտա» կամ «էլիտար» (Իրատես, 18.03.2014):

ՆՈՐԶԵԼԱՆԴԱԿԱՆ, ած. **Նոր Զելանդիայի:** Քսան մարդուց բաղկացած **նորզելանդական** թիմն արագության ռեկորդ սահմանեց՝ մեկ օրվա ընթացքում լողալով անցնելով 182,5կմ (TV մոլ, 23.12.2013):

ՆՈՐԸՆՏՐՅԱԼ, ած. **Նոր ընտրված**: Հայաստանի ճարտարապետության, շինարարության ազգային համալսարանի **նորընտրյալ** ռեկտոր Գագիկ Գալստյանը չունի արհմիությունների հետ աշխատելու փորձ (Հրապ., 23.12.2014):

ՆՈՐՕՍՄԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. Ինչ խոսք, Ղրիմի հանդեպ Թուրքիայի երկրաքաղաքական հետաքրքրությունը պայմանավորված է **նորօսմանականության** համադրույթի շրջանակներում կիրարկվող քաղաքականությամբ....(ՀՀ, 06.03.2014):

ՆՌՆԱԶԱՐԴ, գ. **Նռով զարդարված:** Սակայն, եթե նկատի ունենանք, որ մի շարք օրինակներում առկա են և նախորդ խմբի մի շարք մանրամասներ (արմավազարդ կամ **նռնազարդ** քիվեր, հյուսածո եզրագոտիներ) .... կարելի է հավաստել, որ խումբն ամբողջովին վերաբերում է 12-րդ դարի երկրորդ կեսին (Հ.Պետրոսյան, էջ 137):

ՆՌՆԱՔԱՆԴԱԿ, գ. **Նռան քանդակ:** .... 12-րդ դարի կեսին խաչքարային արվեստը վավերացնում է մի շարք նվաճումներ, որոնք բնութագրական են դառնում հետագա խաչքարերի և նրանց հորինվածքների համար, խմբակային խաչքարերի կանգնեցնում, քիվի առաջացում, հորինվածքի հիմնական բաղկացուցիչների միջև ելնդավոր թելերի օգնությամբ տեսանելի կապերի ստեղծում .... **նռնաքանդակների** լայն կիրառում (Հ.Պետրոսյան, էջ 141):

ՆՌՆՕՐՀՆԵՔ, գ. **Նուռ օրհնելը:** Ամանորի գիշերը եկեղեցիներում տեղի կունենա **նռնօրհնեք** (Համացանց):

ՆՎԱԶԱՊԱՇՏԱԿԱՆ, ած. **Նվազապաշտական** ոճի են նաև լուսանկարները, որտեղ վենետիկյան ծանոթ տեսարանները և բնորոշ առարկաները զարդարված են Մուրանոյի երկու–երեք ապակե զարդերով….(Ազգ, 03.10.2014):

ՆՐԲԱՍԱՀ, ած. **Նրբորեն սահող**: **Նրբասահ** մատներով // մարմինս դարձնում ես նվագարան, //հմուտ դաշնակահարի նման //հնչեցնում ես սիրո մեղեդին // մարմնիս բոլոր բջիջներում //: (ԳԹ,19.12.2014):

ՆՐԲԱՔՍՈՒՔ, գ. **Նրբացնող՝ փափկեցնող քսուք:** Տանից դուրս գալիս պետք է օգտագործել «ձմեռային» **նրբաքսուքներ** (կրեմներ).... (Իրավունք, 05.12.2014):

ՆՈՒՅՆԱՏԱՐՐ, ած**. Նույն տարրեր ունեցող**: Անտառն ավելի շատ **նույնատարր** է, քան այսօր գրական դաշտը (ԳԹ,13.03.2015):

Շ

ՇԱԳԱՆԱԿԱՎՈՒՆ, Տե՛ս ԹԽԱՍՊԻՏԱԿ-ի օրինակը:

ՇԱՀՈՒԹԱԿԵՐ, գ. Բացի նվիրելուց, ուրիշ բան չի վաճառվում, բացարձակ շահութաբեր չի, նույնիսկ ես կասեի **շահութակեր** է (Հրապ., 28.02.2014):

ՇԱՂԿԱՊԵՆԱԲՈՐԲ, գ. **Շաղկապենու բորբոքում:** Հաճախ ալերգիկ ռինիտը զուգորդվում է նաև աչքի **շաղկապենաբորբով** (Իրավունք, 20.06.2014):

ՇԱՆԹԱՀԵՂ, ած. Տիրոջ կամքով, հրամանով **շանթահեղ**// Պիտի բացվի հայոց ատյանը ահեղ//....(ԳԹ, 06.12.2013):

ՇԱՐԱԴԱՐՍ, Վերջին անգամ բաժանվելիս մտքերի **շարադարսը** դարձել է մարգարտահյուսք խոհեր (ԳԹ, 11.10.2013):

ՇԱՐԱԿՆՈՑԵԼ, բ. Ուզում է գունավոր–գվվան շա՛տ բառեր ունենալ, հուլունք–հուլունք շարել, **շարակնոցել** պարանոցը, բառաբոցել կուրծքը (ԳԹ, 20.12.2013):

ՇԱՐԱՀՐԱՊԱՐԱԿ, գ. Զորամասի տարածքում շահագործման են հանձնվել գումարտակների նոր շտաբ-զորանոցները, ասֆալտապատվել են **շարահրապարակները** (ՀԶ, 19.02.2015):

ՇԱՐԺԱԿԱՅԱՆ, գ. Երվանդը նկարահանող **շարժակայանի** հետ Լենինական էր հրավիրել Վոլոդյա Աբաջյանին, Վերա Հակոբյանին, Սվետլանա Խանումանին…. (Իրատես, 24.02.2015):

ՇԱՐԺԱԿԱՌՔ, գ. ….Մենք ունենք սարքին վիճակում գտնվող **շարժակառք**, որը կանգնած է առանց վարորդի (Ժող., 11.02.2015):

ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. ....Ժան Մաքարոնը շնորհակալություն է հայտնել.... հայ–լիբանանյան մշակութային հարաբերությունների ակտիվացման և **շարունակականության** ապահովման համա (ՀՀ,13.02.2014):

ՇԵՂՅԱԿ, գ. .... Ցած են սահում **շեղյակները** խավարի// հալվում անձուկ ծիրանենու գուռերում....(ԳԹ, 22.11.2013):

ՇԵՐՏԱՆԵՐԿԵԼ, բ. Տե՛ս ԳՈՒՆԵՐԱՆԳԵԼ-ի օրինակը:

ՇԵՐՏԵՐԱՆԳ, գ. Էկզիստենցիան ևս սկսում է խեղդել՝ ճահճի նման քաշելով ներքև, դեպի զորշության ու անզորության հերթական, ավելի խիտ **շերտերանգ**....(ԳԹ, 13.09.2013):

ՇԻԹԱՑԻՐ, գ. Երբեմն էլ կարելի է **շիթացրի** օգնությամբ օդի մեջ ջուր ցանել (TV մոլ, 20.01.2014):

ՇԻԼԱՅԱՆՄԱՆ, ած. Կանաչ սոխի ճյուղերը տրորել, դարձնել **շիլայանման** և դնել կոշտուկի վրա (TV ալիք, 07.03.2014):

ՇԻՆԱՇԽԱՏԱՆՔ, գ. Դադարեցնել տվյալ հանգույցում կատարվող **շինաշխատանքները** (Ժամ., 06.11.2013):

ՇԻՐԻՄԱՏԱԽՏԱԿ, գ. Ու երբ բոլորի կողմից մոռացված Մուրոն մեռնում է, մարդիկ նոր են հիշում նրան ու գերեզմանի **շիրիմատախտակին** գրում . «Էսքանն իմն է» (ԳԹ, 08.11.2013)

ՇՃԱԲԱՆԱԿԱՆ, ած. **Շիճուկաբանական:** .... Հիվանդ կենդանիների հետ շփված անձանցից կատարվել են արյան նմուշառումներ՝ լաբորատոր (**շճաբանական**) հետազոտությունների համար (ՀՀ, 05.06.2014):

ՇՅՈՒՂԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ, գ. **Շյուղերով գործելը: Շյուղագործությունը**, ասեղնագործությունը, հելունագործությունը միշտ էլ լայն տարածում են ունեցել կանանց շրջանում (Զեռ., էջ 3):

ՇՆԱՄԱՍՈՒՐ, գ. **Շնամասուրը**՝ դեղին, բռնկվել է, հեռվից աչք է շոյում նրա կարմիրը (ԼԽ, էջ 136):

ՇՆԱՎԱՅՈՑ, գ. Հիմա... *երկնաքեր բարձրավանդակներում տիեզերադավ է, //* ***շնավայոցներ****, գայլառոնոցներ....(ԳԹ, 25.04.2014):*

ՇՆՉԱԶՈՒՐԿ, ած. Հայրական տանն եմ, լուռ է, **շնչազուրկ:** //Դիվահար եմ դեռ երեսս բռնած ոստայնից սարդի // (ԳԹ, 31.01.2014):

ՇՈՒԿԱՅԱՀԱՆՈՒՄ, գ. «ՀՏԿ» մակնշումը պետք է լինի նախքան խաղալիքի **շուկայահանումը** (ՀՀ, 07.03.2014):

ՇՈՒԿԱՅԱՀԱՆՎԵԼ, բ. Եվ Հայաստանում, և՛ մյուս երկրներում **շուկայահանված** հայկական արտադրանքը կլինի անվտանգ (ՀՀ, 07.03.2014):

ՇՈՒՏԱՍԵԼՈՒԿԱՆՄԱՆ, ած. Դե, կապրենք, կտեսնենք, թե այդ **շուտասելուկանման** բանաձևը ինչքանով կաշխատի և ինչ արդյունք կտա (Իրավունք, 21.03.2014):

ՇՈՒՐՋԱՌՎԵԼ, բ. Հին խրախճանքներից հիշատակ միայն օղու շիշն էր մնացել՝ **շուրջառված** երկու կտոր լիմոնով ու ձիթապտղի յոթը կլոր ցմքած հատիկներով (ԼՋ, էջ 121):

ՇՏՐՈՒԴԵԼ, գ. **Թխվածքի տեսակ:** Սեպտեմբերի 27-ին «Արմենիա Մարիոթ» հյուրանոցի դիմաց կարող եք համտեսել Կովկասի ամենաերկար խնձորի **շտրուդելը** (Եր. ամս., թ. 7-8, 06.2012):

ՇՐՋԱՆԱԲՆԱԿ, գ. **Շրջանում բնակվող:** Ցավոք **շրջանաբնակ** երիտասարդի երաժշտությունը Միլանի պրոֆեսորներին մի փոքր ունայն թվաց (TV ալիք, 17.03.2014):

ՇՐՋԱՆԱԲՈԼՈՐ, ած. ....(Նա) մատնացույց արեց ազատ աթոռը, որ դրված էր **շրջանաբոլոր** հրեշտակակերպերի ուղիղ մեջտեղում (ԳԹ, 02.02.2014):

ՇՐՋԱՓԱԿՎԱԾՈՒԹՅՈՒՆ, գ. Հայաստանն ընդամենը փորձում էր ստեղծել հնարավորություններ, ինչը անհրաժեշտ է ցամաքային **շրջափակվածության** պայմաններում (Ժամ., 20.12.2014):

ՇՓՈԹՎԱԾՈՒԹՅՈՒՆ, գ. **Շփոթված լինելը:** Մի փոքր **շփոթվածություն** կա, որովհետև մենք դեռ չենք վարժվել, որ շուրջբոլորը հայեր են (Հրապ., 12.10.2013):

ՇՓՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Հաղորդակցվելու՝ շփվելու կարողություն:** Փորձեք դիմել դեղինի օգնությանը. այն դրական է ազդում մտավոր ընդունակությունների, **շփվողականության** վրա (TV մոլ, 13.01.2014):

ՇՔԱՊԱՏՇԳԱՄԲ, գ. .... Առաջնահերթ վերանորոգել վթարային վիճակում գտնվող ավելի քան 200 **շքապատշգամբ** (ՀՀ, 21.12.2013):

Ռ

ՈԳԵԶՐՈՒՅՑ, գ. Ես իմ ուսանողների հետ երբեք **ոգեզրույցների** առիթը բաց չեմ թողնում (ՀՁ, 19.02.2015):

ՈԳԵԹՈՒՐՄ, գ. Օրական օգտագործել մինչև 50 կաթիլ **ոգեթուրմ** (Տն Առ. թ. 2, 20.02. 2014):

ՈԳԵԽԵՂՈՒՄ, գ. **Հոգեկան խեղում:** Հայապահպանության գլխավոր կռվան և սպեղանի մայրենիի խաթարման հետ զուգահեռ՝ հայ մանուկները ենթակա են **ոգեխեղման** և ուծացման (ԳԹ, 07.03.2014):

ՈԳԵՍՆՈՒՄ, գ. **Հոգեկան սնունդ տալը: Ոգեսնման** անուշությունը չկա, այն, որ կենսունակ էր պահում նոր կուտակումների համար, որպեսզի ճյուղերն ու արմատը կարողանային խոսել իրար հետ (ԳԹ, 07.11.2014):

ՈՀՄԱԿԱՄԻՏ, ած.

ՈՀՄԱԿԱՅԻՆ, ած. **Ոհմակին բնորոշ՝ հատուկ:** Այս **ոհմակային** գործելակերպը, ցավոք , հետզհետե ավելի ու ավելի ցցուն դրսևորումներ է ունենում նաև Հայաստանում (Ժող., 18.03.2015):

ՈՂԲԱՄԵԾԱՐ, ած. **Ողբացող՝ ողբ մեծարող՝ չարագուշակ:** Ու հանձնվում **ողբամեծար** քամիներին// Եվ իջնում է արեգակը կարմիր–կլոր // Հոգեհանգիստ, հոգեպարար վերջալույսին (ԳԹ, 20.09.2013):

ՈՂԲԵՐԳԱՀԱՐՈՒՅՑ, ած**. Ողբերգություն հարուցող:** Ներառվածությամբ մեզ/ ցավ պատճառող// Հոգսերով բազում,// Հետևանքներով **ողբերգահարույց** (ԳԹ, 07.02.2014);

ՈՃԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ, ած. **Ոճական և հոգեբանական:** Պատմվածքի **ոճահոգեբանական** գույնին չբռնող մի ինքնախոստովանանք ամեն օդի մեջ, խնդրում եմ, փակեք ականջներդ, եթե հանկարծ ձայն լսեք ....(ԳԹ, 20.12.2013):

ՈՃԱՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆ, գ. **Մտածելակերպ, աշխարհընկալում:** Մեղադրանքների և առավելությունների ֆոնին չմոռանանք մի շատ կարևոր բան՝ քննադատն էլ ունի իր **ոճամտածողությունը**, իր նախասիրությունները (ԳԹ, 13.03.2015):

ՈՃԱՊԱՏԿԵՐ, գ. Հնարավոր է, որ այն շուտով նոր **ոճապատկեր** դառնա (TV մոլ, 23-29. 12. 13):

ՈՉԸՆՏԻՐ, ա. **Չընտրված:** Նրանք նախապես հայտարարել էին, որ գնալու են Բաղրամյան և պահանջեն **ոչընտիր** նախագահից հրաժարական ներկայացնել (ՀԺ, 27.10,13):

ՈՍԿԵԲԱՆՎԵԼ, բ. Գերեվար հուշեր և նահատակ իղձ, // Եվ հասակը քո **ոսկեբանված** էջ (ԳԹ, 15.11.2013):

ՈՍԿԵԴԵՂՆԱՎՈՒՆ, ած. **Ոսկեդեղինին տրվող:** Խատուտիկի մեղրը **ոսկեդեղնավուն** է, թանձր, բյուրեղացող (ՀԴ, թ. 1.2014):

ՈՍԿԵԿԱՊՈՒՅՏ, ած. **Դեղնավուն երանգ ունեցող կապույտ գույնի:** Ցրիվ գալով ծովի մակերևույթին, արևի ճառագայթները խաղում էին նուրբ **ոսկեկապույտ** փիրուզյա ջրերում (ՄՍ, էջ 92):

ՈՏՆԱՀԱՐԴԱՐՈՒՄ

ՈՏՆԱՍԵՂՄԱԿ, գ. **Մեքենայի արգելակ:** Մինչդեռ շատ վարորդներ հաշվի չեն առնում դա և խաչմերուկն անցնելուն պես իրենց մարմնի ամբողջ ծանրությունը տեղափոխում են գազի **ոտնասեղմակի** վրա (ՀՀ, 28.06.2014):

ՈՐԴԱՌԱՏ, ած, **Որդերով հարուստ**: Դանդաղ կավերվի **որդառատ** հողում իմ նյութը նորից (ԳԹ, 19.12.2014):

ՈՐՈՆՈՂԱՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ, ած. .... **Որոնողական և փրկարարական:** Միջազգային **որոնողափրկարարական** համակարգի չափանիշների համապատասխան միջին փրկարարական խմբի ստեղծում (ՀՀ,15.02.2014):

ՈՐՈՇԱԿԻԱՅՆԵԼ, բ. .... Ես վերածվել եմ հիդրայի, որն ամեն կողմից փորձում է ընդգրկել այն ինչ **չորոշակիացրեց** կին խմբագիրը ....(ԳԹ, 07.02.2014):

ՈՐՈՇՈՒՄՆԱՌՈՒ, գ. **Որոշում ընդունողը:** Դրա փոխարեն կարելի էր, սակայն, ժամանակին գոնե ճշգրտել և որոշումնառուի իրավունքով ամրագրել ԶԼՄ հապավումի՝ հոգնակիի գործառական ճիշտ ձևը՝ ոչ թե՝ ԶԼՄ-ներ, ինչպես գործածվում է ամենուրեք, այլ ԶԼՄ, ոչ թե՝ հայկական ԶԼՄ-ների, այլ՝ հայկական ԶԼՄ-ի (ՀՄԵՀ, էջ 243):

Չ

ՉԱՐԱՑԱԾՈՒԹՅՈՒՆ, գ. **Չարացած լինելը: Չարացածությունից** անդին հայտնված երկրի խորհրդարանի առաջին փոխխոսնակին մնում է ասել, որ անգամ Ղարաբաղը վերադարձնելու գնով էլ իր երկիրը չի մասնակցի ԵՏՄ-ին (Հրապ., 21.10.2014):

ՉԱՐԵՆՑԱՍԵՐ, ած. **Ե.Չարենցի ստեղծագործությունը սիրող:** Գոհար Բազյան–Ջերահյանը՝ Չարենցի թոռնուհին …. խոստովանեց, որ հպարտություն է զգում , երբ տեսնում է հավաքված աշակերտներին, **չարենցասերներին** (ԳԹ, 20.03.2015):

ՉԱՓԱԳԾԵԼ, բ. .... **Որոշել՝ առանձնանալ՝ հատկանշել:** Փողով **չափագծված** երկրային արքայություն (ԳԹ, 30.05.2014):

ՉՀԱՅՈՒԹՅՈՒՆ, գ. **Հայկականություն չունենալը**: Ու մեր արմատական շահից բխող այդ դիրքորոշման համար ՀՀ նախագահին քարկոծելը դառնում է արդեն պարզապես **չհայություն**՝ անկախ նրանից, թե անձամբ ինչպես են վերաբերվում երկիր ղեկավարի անձի ու գործնեության տարբեր դրվագներին (Իրավունք, 28.03.2014):

ՉՀԱՍԿԱՑՎԱԾՈՒԹՅՈՒՆ, գ. **Չհասկացված լինելը:** Ո՞րն է խնդիրների ու **չհասկացվածության** իրական պատճառը (Համացանց, 19.03.2014):

ՉՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ, գ. **Մասնակցություն չունենալը:** Մնացածի **չմասնակցությունը** բոյկոտ եմ համարում (Իրավունք, 07.02.2014):

ՉՈՉԱՇՈՐ, գ. **Մանկական հագուստ**: Նա գնել է կպչաժապավենով վանիլային **չոչաշորեր** և մոխրագույն կենգուրու-պայուսակ (TV մոլ, 07.05.2014):

ՉՈՐԱԹՈՒԹ, գ. **Չոր թութ, թթի չիր:** .... Արցունքի պես թափանցիկ պղպջակավոր օղի կամ **չորաթութ**, որ ողջ տարին օգտագործում էինք.....(ԳԹ, 11.10.2013):

ՉՈՐԱՀԱՑ, գ. Ցանկացած չոր սննդամթերք՝ չիպսեր, չորահաց , ընդեղեն… նպաստում են լնդերի բորբոքումներին (TV ալիք, 17.02.2014):

Պ

ՊԱԿԱՍՊՌԱՏՈՒԹՅՈՒՆ, գ. Ինչո՞ւ չունենք դիվանագիտություն: Հենց ժողովրդական դիվանագիտություն: Մենք շատ ու շատ **պակասպռատություններ** ունենք (ԳԹ, 13.09.2013):

ՊԱՀԱԴԱՐԱՆ, գ. **Իրեր պահելու տեղ՝ պահարան:**: Այսեգյուլ Բաֆրալին պատմել է, որ հիշում է, թե տատը ինչպես է երբեմն–երբեմն **պահադարանից** հանել ու բացել այդ

ճամպրուկը, բայց քանի որ իրեն դատարկ է թվացել, պատճառը չի հասկացել…. (ԳԹ,13.03.2015)։

ՊԱՀԱՆՋԱՏԻՐՈՒԹՅՈՒՆ, գ. Հիմնական քայլը ակտիվությունն ու քաղաքացու պահանջատիրությունն է (Հրապ., 15.02.2014)։

ՊԱՀԱՆՋԱՐԿՎԱԾՈՒԹՅՈՒՆ, գ. ....Արևմուտքի հետ հարաբերությունների ոլորտում աշխատող ՀԿ–ների և անհատների **պահանջարկվածությունը** նվազելու հետ կապված անհանգստություններ են (Ազգ, 16.05.2014)։

ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ, ած. Կառավարությունն իր **պահուստային** ֆոնդից «Այբ» կրթական հիմնադրամին նվիրաբերության պայմանագրով ....գիտության և կրթության նախարարությանը հատկացրել է 213միլիոն 838 հազար դրամ (ՀՀ, 17.10.2014/)։

ՊԱՇՏԱՄՈՒՆՔԱՏԵՂ, գ. **Սրբատեղ**։ Այս արձանները գտնվել են բարձր լեռնային գոտիներում, բնական կամ ոռոգման ակունքների ափերին, որոնք, սովորաբար ամպրոպի աստծո **պաշտամունքատեղիներին** են համապատասխանում (ՍՀ, էջ 33)։

ՊԱՇՏՈՆԱՅԱՆԿ, գ. Բարձրաստիճան հանդիպումներին նման **պաշտոնացանկը** երկու իմաստ կարող է ունենալ (Հրապ., 12.10.2013)։

ՊԱՍՏԱՌԱԿԻՐ, **Պաստառ կրող:** ....Արդեն քանի օր է, ոմանք ինչ–որ նոր բան են ուզում ասել ու անել, դրոշակակիր ու **պաստառակիր** են դարձել.... (ՀՀ, 06.03.2014)։

ՊԱՏԵԳՈՐԳ, գ. …. Պատվոգիրը նա փակցրել էր ճաշասենյակի նախշուն **պատեգորգին**, թող եկող–գնացողները իրենով հիանան (ԳԹ, 10.10.2014)։

ՊԱՏԺԱՏԵՍԱԿ, գ. **Պատժի տեսակ**։ Դատարանը հաշվի կառնի նաև մեղադրյալի ով լինելը... Գուցե ավելի մեղմ **պատժատեսակ** կիրառի (ԳԹ,19.07.2013)։

ՊԱՏԿԵՐԱՆՅՈՒԹ, գ. Ալբոմ։

ՊԱՏՄԱԲԱՐՈՅԱԿԱՆ, ած. **Պատմական և բարոյական**։ .... Կան խնդիրներ, որոնք պետք է լուծել ժողովրդի **պատմաբարոյական** շահերից ելնելով և ոչ թե գիտության քարացած քերականությամբ (ԳԹ, 08.11.2013)։

ՊԱՏՄԱԻՐԱՎԱԿԱՆ, ած, **Պատմական և իրավական**։ …. ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը դպրոցի ուսուցչական կազմին և աշակերտներին ներկայացրեց ընդհանուր տեղեկություններ, **պատմաիրավական** մի շարք փաստեր 1915 թ. թուրքական իշխանությունների իրականացրած գազանությունների ու խոշտանգումների մասին (ՀՀ, 21.04.2015)։

ՊԱՏՄԱԿԱՆԱՆԱԼ, բ. **Պատմական դառնալ**: Վիշապների և վիշապամարտի մասին վաղնջական առասպելները մ.թ. առաջին դարերում հայ վիպական ավանդության մեջ արդեն սկսել էին խիստ վիպականանալ և **պատմականանալ** (ՍՀ, էջ 178):

ՊԱՏՄԱՀՆԱԳԻՏԱԿԱՆ, ած. Էրեբունի **պատմահնագիտական** արգելոց–թանգարանից մինչև Էրեբունի–Ազատամարտիկներ փողոցների խաչմերուկը մեծ տոնավաճառ էր (ՀՀ, 14.10.2014):

ՊԱՏՄԱՏԻՊԱԲԱՆԱԿԱՆ, ած. Առասպելն, այսպիսով, անցել է **պատմատիպաբանական** փոխակերպումների մի բնականոն ճանապարհ (ՍՀ, էջ 207):

ՊԱՏՄԱՓՈՒԼ, գ. **Պատմաշրջան**, **պատմական փուլ**: «Դա հետաքրքրական **պատմափուլ** էր, որ արվեստի համար ծնեց այլընտրանքներ (Ազգ, 27.06.2014):

ՊԱՏՈՒՀԱՍԵԼԻՔ .... Հեղինակին(Սիամանթո) Սարինյանը հասկացել և մեկնաբանել է իբրև համաշխարհային–կոսմիկական աղետի պատգամախոսի, մարդկությանը **պատուհասելիք** արհավիրքների հանդեպ տիեզերական օրակուլի (ԳԹ, 22.11.2013):

ՊԱՏՈՒՄԱՇԱՐ, գ. **Պատումների շարք**: Երբ կարդում էի «Ճանճի ամիսը», թվում էր,թե որևէ հզոր ցնցում, կատակլիզմային իրավիճակ չի ներկայացվում Ձեր **պատումաշարում**, բայց հանկարծ զարմանքով նկատում էի, որ աչքերիցս արցունք է հոսում (Իր., 24.10.2014):

ՊԱՏՎԱԽՆԴՐՈՐԵՆ, մկբ. . ... Երբ կյանքը ապրում ես **պատվախնդրորեն** ու նվիրումով (Ազգ, 11.04.2014):

ՊԱՏՎԱՎՃԱՐ,գ. **Հոնորար**: ԳՄ–ն ուներ բազմաթիվ պարբերականներ, որտեղ տպագրվում էին հայ գրողների երկերը, ընդ որում **, պատվավճարները** բավականին բարձր էին (ԳԹ, 04.07.2014):

ՊԱՏՎԻՐԱԿԵԼ, բ. **Մասնակցել**: .... Համաժողովին ինքն իրեն **պատվիրակել** էր Ադրբեջանի ԳՄ նախագահ, հայերիս քաջածանոթ, Սումգայիթի եղեռնագործության օրերին մեզ մազոխիստ անվանած Անարը....(ԳԹ, 25.10.2013);

ՊԱՐԱԴԻՐ,գ. **Պարի հեղինակ, պարաստեղծ**: Ջորջիան մեկն է իտալացի այն չորս **պարադիրներից**, որն ընտրվել է մասնակցելու .... ժամանակակից պարի միջազգային նախագծին (Ազգ, 24.10.2014):

ՊԱՐԱՆԱՀՅՈՒՍ, ած. **Պարանի նման հյուսք**: Շիտակ հյուսքի առաջապատի եղանակը կոչվում է նաև պարանահյուս, ալիքավոր, արծվիկահյուս (Ձեռ., էջ 8):

ՊԱՐԱՆՄՈՒՇ,գ. **Պարի նմուշներ**: Կարնո **պարանմուշների** հարուստ գանձարան ունեի (Ազգ, 06.06.2010):

ՊԱՐԱՐՏԱԽԱՌՆՈՒՐԴ, գ.**Պարարտանյութերի խառնուրդը**: Պարարտախառնուրդը օգտագործվում է Հիշողության պուրակում հողի մշակման համար (Ագրոլրատու, 22.04.2014):

ՊԱՐԱՐՏԱԿՈՒՏԱԿ,ած. Հակառակ կյանքի //**Պարարտակուտակ** կարգապահության// Սողոսկում փառքի,// Եվ ընդդեմ՝ բոլոր// Նորարարական թաքստոցներից// Ճանապարհների// Հաշվեկշռվա՛ծ // Կամքի վաճառքի.... (ԳԹ, 13.09.2013):

ՊԱՐԱՖԻՆԱԹԵՐԱՊԻԱ, գ. **Բուժում պարաֆինով, պարաֆինաբուժություն:** Չոր կրունկների , ինչպես նաև չոր մաշկի դեպքում շատ արդյունավետ է **պարաֆինաթերապիան** (TV ալիք, 07.03.2014):

ՊԱՐԶԵՐԳ, գ. **Պարզ, մատչելի երգ** : Այս բանաստեղծություն գրողը չի կարող անկեղծ ու անմիջական չլինել, միամիտ երեխայի պես տունտունիկ չխաղալ, չի կարող ժողովրդի բառուբանով, մորեմերկ ու **պարզերգերի** շարք չունենալ (ԳԹ, 16.05.2014):

ՊԱՐ–ՀՐԱՎԵՐ, Հոգսերն այսօրվա չեն թողնի // հասնեմ//Օրվա ինձ հղած **պար–հրավերին**՝//Զուլվելու խայտող գույներին// կրակ… (ԳԹ, 06.03.2015):

ՊԱՐՍՊԱՔԻՎ, գ. **Պարսպի քիվը:** ...Իմ Կերբերոսը ազնիվ շուն է, խելոք, երևի թաթերի վրա// կանգնում՝ մռութը **պարսպաքիվի** արանքը դրած// զննում է նախարարական նստելավայրը ....(ԳԹ, 20.12.2013):

ՊԱՐՍՎԵԼ, բ. **Հավաքվել, կուտակվել: Պարսված** բառերը գվվալով գալիս ու արթնացնում են նրան (ԳԹ, 20.12.2013):

ՊԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ, ած. **Պարտադրող՝ ստիպող:** Ապավինել որևէ մեկի **պարտադրողական**, հաճախ նաև պատահաբար ընտրված ուժին (ԳԹ, 21.02.2014);

ՊԵՂԱՇՐՋԱՆ, գ. Արենի 1-ին տարբեր հատվածներում ութ **պեղաշրջանների** ընթացքում իրականացված աշխատանքների արդյունքում հաջողվել է բացել ընդհանուր 461մ2 մակերես.... (ՀՄԵՀ, էջ 184):

ՊԵՏԱԿԱՆԱԿԵՐՏ, ած. **Պետություն կերտող**: Հարկ է նշել, որ վրացական պատմության տարբեր ժամանակաշրջաններում հայերը ոչ միայն կարևոր համայնք են եղել այնտեղ, այլև եղել են բառիս բուն իմաստով, **պետականակերտ** ազգ (Ազգ,07.03.2014):

ՊԵՏԱԿԱՆԱՆՊԱՍՏ, ած. **Պետականության նպաստող:** Բացի բիզնեսի ոլորտում ընդհանուր հետաքրքրություններից՝ Վարդանյանն ու Խաչատրյանը փորձել են նաև **պետականանպաստ** գործեր անել (168 ժ., 16.10.2014):

ՊԵՏԱԿԱՆԱՇԵՆ, ած. **Պետականություն ստեղծող**: Վլադիմիր Մովսիսյանը արժանիորեն շարունակեց Խորհրդային Հայաստանի պետական գործիչների՝ Ա.Մյասնիկյանի, Ա.Խանջյանի, Գր. Հարությունյանի, Յա.Զարուբյանի, Ա.Քոչինյանի և Կ.Դեմիրճյանի ազգանվեր գործունեությունը՝ այդ ժամանակահատվածում իր վիթխարի **պետականաշեն** փորձն անմնացորդ ներդնելով ի սպաս Հայաստանի Հանրապետության (Իրավունք, 07.11.2014):

ՊԵՏԱՐԱՐՈՂԱԿԱՐԳ, գ. **Պետական, պաշտոնական արարողակարգ:** Ի պատիվ դեսպան Մարգարյանի՝ ԱՄՆ**պետարարողակարգի** ղեկավարը ....պաշտոնական ընդունելությունների դահլիճում կազմակերպել էր հրաժեշտի ընդունելություն ....(ՀՀ, 28.06.2014):

ՊԵՏՀԱՄԱՐԱՆԻՇ, գ. **Պետական համարանիշ:** Շմավոնը ձեռքի վրայից մի մեքենա էր գնել, որի հին պետ- համարանիշն իրեն շատ էր դուր եկել (Հրապ., 01.02.2014):

ՊԵՏՊԱՀՈՒՍՏ, գ. **Պետպահուստում** կա ….մետաղական արծաթ, պլատին և մի շարք այլ ակնեղեն (Համացանց, 11.04.2014):

ՊԻԼԱՏԵՍ, գ. Մադոննան մշտապես զբաղվում է յոգայով և իսկական պրոֆեսիոնալ է: Նա նաև տարված է **պիլատեսով** (TV ալիք, 18.11.2013):

ՊԻԼՈՏԱՅԻՆ, ած. Այժմ կա **պիլոտային** ծրագիր, որը հնարավորություն է կտա աշխատանք որոնողներին գտնել այն (Հրապ., 29.10.2014):

ՊԻՈՆԱՅԻՆ,**Պիոնային** հիվանդությունների ֆենոմենը շարունակվում է մնալ բավականաչափ չպարզաբանված (ՀՀ, 17.01.2014);

ՊԼՈՄԲԱՆՅՈՒԹ, գ. Տես՛ ՊԼՈՄԲԱՎՈՐՈՒՄ–ի օրինակը:

ՊԼՈՄԲԱՎՈՐՈՒՄ, գ. **Վնասված ատամը պլոմբանյութով լցնելը:** Ասենք՝ ատամի կարիեսի կամ դրա բարդությունների բուժումը, այդ թվում՝ **պլոմբավորումը** լուսակարծրացող ստանդարտ պլոմբանյութով, ատամաքարերի մաքրումը…. (ՀՀ, 19.02.2015):

ՊՂՆՁԱԲՈՍՈՐ, ած. Սիրամարգի երփներանգ «աչքերով» զարդարուն փետուրները շլացնում են, բոցկլտում են **պղնձաբոսոր** «օղազրահը», թրթռում է գլխի ոսկե «թագը» (TV մոլ, 26.01.2015):

ՊՂՊՁԱԿԱՎՈՐ, ած. .... Արցունքի պես թափանցիկ **պղպջակավոր** օղի կամ արևահամ չորաթութ, որ ողջ տարին օգտագործում էինք մեր հարազատների , հարևանների ու հյուրերի հետ....(ԳԹ, 11.10.2013) :

ՊՈԼԻԱՄԻԴԱՅԻՆ, ած. **Պոլիամիդի**: **Պոլիամիդային** շերտերը պատնեշային դեր են կատարում՝ արգելելով տարբեր նյութերի ներթափանցումը, որոնք կարող են փչացնել մթերքը (TV մոլ, 12.05.2014):

ՊՈԿԱԼԻՊՏԻԿ, գ. Հայաստանում պոկալիպտիկ երազներ տեսնող մարդիկ շատ կան (Համացանց,16.02.2014):

ՊՈԿՎԵԼ–ԸՆԿՆԵԼ, բ. Լռություն է պետք, // Որ ծրարելով ժխորն ամբոխի–// Մեր ծարավ ունկը հանդարտիկ շոյի //Երգը աստղային, //Տնքոցը **պոկվող–ընկնող** տերևի,// (ԳԹ, 06.03.2015):

ՊՈՉԱՄԲԱՐ,գ. Եկել ու քամելու են քո երկիրը, ոսկին տանելու են, մեզ են թողնելու **պոչամբարներում** կուտակված մահաբեր թույնը ….(ԳԹ, 24.10.2014):

ՊՏՂԱԹԵՅ, գ. **Պտուղներից ստացած ըմպելիք: Պտղաթեյը** նշանակում են քութեշի, թենտերոկոլիտների ժամանակ (ՀԴ, թ.1,2014):

ՊՏՂԱՏՈՆ, Ամեն **պտղատոնին** աշխարհի բոլոր կողմերից հավաքված արիական հայորդիներն իրենց սրտի թրթիռներով մարդկային մտքի ու հոգու լավագույն արգասիքներն են արարելու, տեսակ-տեսակ պտուղների սեզոնային պտղակալումից ամեն անգամ նոր բերք՝ նոր երկ ու կտավ են ծնելու (ԳԹ, 24.07.2015):

ՊՏՈՒՏԱԿԱԱՔՑԱՆ, գ. **Պտուտակաձև աքցան:** Աշխատանքի ընթացքում Ձեզ անհրաժեշտ կլինի նաև **պտուտակաաքցան**, սրածայր մկրատ, մետաղական օղակներ և փական (Ձեռ., էջ 29):

ՊՐԵԶԵՆՏԱՑԻԱ, գ. Մեր միջազգային խորհրդատուն արտասահմանում պատրաստվում է **պրեզենտացիայի** (Հրապ., 12.02.2014):

ՊՐՈԴՅՈՒՍԵՐԱԿԱՆ, ած. **Պրոդյուսերին վերաբերող**: Նախատեսում ենք մի շարք դասընթացներ՝ հաղորդավարական, **պրոդյուսերական**, օպերատորական գործ, ռեժիսուրա (TV մոլ, 14.10.13):

ՊՐՈՑԵՍԻՆԳԱՅԻՆ, ած.ՎՏԲ Հայաստան բանկի **պրոցեսինգային** կենտրոնում տեղ են ունեցել տեխնիկական խափանումներ (Ժամ., 06.03.2014):

ՊՈՒՏԱՆՏ, գ. Նման բաները **պուտանտները** շուտ են զգում (Հրապ., 11.02.2014):

Ջ

ՋԵՐՄԱՏԱՔԱՑՈՒՑԻՉ, գ. Տուն ինտերնատի թիվ 53 սենյակում էլեկտրական **ջերմատաքացուցիչի** վրա ընկած ծածկոցից տեղի է ունեցել թերայրում, ինչից ծխահարվել և մահացել են 62-ամյա և 81- ամյա երկու կին (Ժող., 16.02.1015):

ՋԵՐՄԻՋԵՑՆԵԼ, բ. **Ջերմությունը իջեցնել դեղամիջոցներով, կամ այլ միջոցներով:** Սխալ է **ջերմիջեցնողների** օգտագործումը 38C-ից ցածր ջերմության դեպքում (Համացանց, 04.03.2014):

ՋԵՐՄՈՒԿՅԱՆ, ած. **Ջերմուկի, Ջերմուկում արված:** Հովիկ Աբրահամյանի **ջերմուկյան** հրովարտակումը.... (Իրատես, 12.12.2014):

ՋԻՊԱԾԻՆ, Բայց օտարին**, ջիպածին** տղերքին հաղթելուց, անգամ մայիսյան եռատոնից ավելի կարևոր է հայի ինքնության մի այլ գիտակցում և ճանաչում, որ համերաշխ է հայի բնությանն առհասարակ….(ԳԹ, 27.03.2015):

ՋՂԱԲԱՑ, ած. Սիրելի Նիկոլ, գիտեմ, որ արդարության և ազնվության համար մղվող քո **ջղաբաց** պայքարում ապավինում ես Հանրապետություն առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի խորաթափանց մտքին, աննկուն կամքին ու առաջատար ուժին (ԼՋ, էջ 90):

ՋՐԱԶՐԿՎԱԾՈՒԹՅՈՒՆ, գ. **Ջրից զուրկ լինելը**: Մաշկի **ջրազրկվածության** դեմ պայքարելու օժանդակ միջոց կարող են հանդիսանալ արյան շրջանառությունը խթանող մերսումները և հակադիր (տաք-սառը) ջրային գործողությունները (TV մոլ, 17.11.2014):

ՋՐԱԼՈՒՅԾ, ած. **Ջրի մեջ լուծվող**: Իսկ **ջրալույծ** վիտամինների կորուստն էլ միանման չէ (TV մոլ, 05.08.2014):

ՋՐԱՃԱՐՊԱՅԻՆ, ած. **Ջրային և ճարպային**: Հատուկ խնամքի կարիք ունի ձեռքերի մաշկը: Քանի որ այս հատվածում ճարպագեղձերը քիչ են, ապա պարզ է, որ **ջրաճարպային** պաշտպանիչ շերտն այստեղ թույլ է արտահայտված.... (Իրավունք, 05.12.2014):

ՋՐԱՄԲԱՐԱՇԻՆԱԿԱՆ, ած. «Գոյություն ունի «Ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենք, որում ամրագրված են առաջիկա 30–37 տարիների ընթացքում մեր **ջրամբարաշինական** ծրագրերը (ՀՀ, 05.06.2014):

ՋՐԱՄԻԱՑՈՒՄ , գ. **Ջրի խողովակների միացումները**: ....Աշխատանքային խումբը.... որոշեց հաջորդ մի քանի օրերին աջակցել նրանց մասնագետներով՝ (....) **ջրամիացումների** և ջրաչափերի տեղադրման գործում (168 ժ., 10.10.2013):

ՋՐԹՈՂՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ, ... Հուլիսի 29–ին ՀՀ Արարատի մարզի Նորամարգ համայնքում շուրջ 80 լ/վ **ջրթողունակությամբ** ապօրինի խորքային հորի լուծարման աշխատանքներ են սկսվել....(ՀՀ, 31.07.2014):

ՋՐԽՄՈՒԹՅՈՒՆ, գ. Սոցիալական ցանցերն ասես **ջրխմության** գնացող հոտ լինեն, որտեղ գազանները նույն եռանդով կուլ են տալիս նույն պղտոր ջուրը (ԳԹ, 19.12.2014):

Ռ

ՌԱԴԻՈԼՐԱԳՐՈՂ, գ. **Լրագրող, որը աշխատում է ռադիոյում:** Կլարա Թերզյան արձակագրի, **ռադիոլրագրողի** հետ ամեն մի հանդիպում դառնում է սիրո, նվիրումի տոնախմբություն (Ազգ, 24.10.2014):

ՌԱԶՄԱԲԺՇԿԱԿԱՆ, ած. **Ռազմական բժշկությանը վերաբերող: Ռազմաբժշկական** ֆակուլտետի պետ Սամվել Գալստյանի խոսքերով՝ այն, ինչ կատարվում է ֆակուլտետում, ամբողջովին նվիրված է մեկ գաղափարի՝ պատրաստել զինվորական բժիշկ.... (ՀՀ, 17.01.2014):

ՌԱԶՄԱԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ, գ. Բանակի պատմության մեջ նա անգնահատելի է համարում նաև **ռազմաբժշկության** դերը (ՀՀ, 17.1.2014):

ՌԱԶՄԱԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ, գ. 1992–ի փետրվարի 17–ը «Արաբո» ջոկատի կողմից իրականացված ռազմագործողությունը ճակատագրական եղավ հայ բնակչության համար (ՀՀ, 18.3.2014):

ՌԱԶՄԱՀԱՆՑԱԳՈՐԾ, գ. **Պատերազմի հանցագործ**: ....Արևմուտքի հովանավորության ներքո գործող **ռազմահանցագործները** մի շարք այլ աղաղակող հանցանքներ ևս գործեցին (Իրատես, 14.03.2014):

ՌԱԶՄԱՀԵՆԱԿԱՅԱՆ, գ. **Ռազմական հենակայան:** Այս պահին, կարծես, բացառված է, որ Թուրքիան **ռազմահենակայան** ունենա Ադրբեջանում (Ազգ,11.04.2014):

ՌԱԶՄԱՇԽԱՐՀ, գ. **Ռազմական աշխարհ:**

ՌԱԶՄԱՊԱՐ, գ. **Ռազմական պար**: Խոսեցիր ռազմապարերի մասին: Արդյոք անհրաժեշտ չես համարում, որ ազգային պարերի, հատկապես **ռազմապարերի** ուսուցում իրականացվի բանակում (Իր., 21.11.2014):

ՌԵԴԵՄԻՍԻԱ, գ. **Հետընդունում:** Հայաստանը ԵՄ պետություններից գրեթե կեսի հետ արդեն իսկ ստորագրել է ռեդիմիսիայի երկկողմանի պայմանագիր (Ժամ., 28. 10.2013):

ՌԵԿԵՏ .... Այս օրենքը պետական մակարդակով իրականացվելիք **ռեկետ** է, իսկ ռեկետահարվողը՝ ՀՀ քաղաքացին (ԳԹ, 22.11.2013):

ՌԵԿԵՏԱՀԱՐՎԵԼ, բ. Տե՛ս ՌԵԿԵՏ–ի օրինակը:

ՌԵՅՏԻՆԳԱՎՈՐԵԼ, բ. Դումանյանը որոշել է **ռեյտինգավորել** հիվանդանոցները, դրա համար չափորոշիչներ կսահմանվեն (Համացանց, 19.11. 2013):

ՌԵՎԵՐԱՆՍԱՅԻՆ, ած. Ամփոփիչ հռչակագրի նախագծում տեղ են գտել բավական **ռևերանսային** ձևակերպումներ Ադրբեջանի հասցեին (Ժամ., 01.11.2013):

ՌԻԹՄՈԼՈԳԻԱ, գ. **Ռիթմաբանություն:** Գևորգ Էմինի մասին ցավոք քիչ են խոսում, նրա **ռիթմոլոգիան** հեշտ չէ (TVալիք, 28.10.2013):

ՌՈԲՈՏԱՏԵԽՆԻԿԱ, գ. **Ռոբոտատեխնիկայի** խմբակներն արդեն գործում են թվով 60 դպրոցներում (Ազգ, 10.10.2014):

ՌՈՒՍԱՍՏԱՆԱԿԵՆՏՐՈՆ, ած. **Ռուսաստանը որպես կենտրոն ունեցող:** .... Արդեն իսկ անհեռանկարային է դարձնում այս միավորումը, քանի որ **ռուսաստանակենտրոն** կազմակերպության դեպքում տնտեսությունը չի եղել ու չի կարող լինել գերակա շահ (Ազգ, 17.10.2014):

Ս

ՍԱԼԱՐԿՂԱՅԻՆ, ած. **Սալից արկղերի մեջ:** Հնարավոր է պատկերացնել, որ դա տեղական մշակույթին հատուկ **սալարկղային** թաղումների ազդեցության արդյունք կամ նմանական փորձ լինի (ՀՄԵՀ, էջ 228):

ՍԱԿԱՎԱԳՈԼ, ած. **Քիչ գոլեր ունեցող**: Հայաստանի բարձրագույն խմբի առաջնության նախորդ տարի խելահեղ, ֆուտբոլային հաշիվներով ավարտված հանդիպումներից հետո թիմերը տասնմեկերորդում հիմնականում եղան **սակավագոլ** (Իր., 28.10.2014):

ՍԱԿԱՎԱՃԱՆԱՉ, ած. **Քիչ ճանաչված:** ....Արվեստաբան Յուրի Եպատկոն տալիս է նաև «սակավաճանաչ նկարիչ Քրիստափոր (Խաչադուր) Գուսիկովի» անունն ու նշում, որ 1884-ի և 1885-ի ամռան ամիսները վերջինս անց է կացրել ուսանողական այդ հանգստավայրում (ՀՄԵՀ, էջ 377):

ՍԱԿՐԱՁԵՎ, ած. **Սակրի ձև ունեցող:** Սրանց մեջ առանձնանում է **սակրաձև** ուլունք-կախիկը.... (ՀՄԵՀ, էջ 224):

ՍԱՀՄԱՆԱԲՆԱԿ, ա. **Սահմանի մոտ բնակվող:** Սա գոտեպնդեց թե **սահմանաբնակին**, թե զինվորին (Իր., 18.11.2014):

ՍԱՀՄԱՆԱԳՈՏԻ, գ. Ցավալի դեպք է գրանցվել Նոյեմբերյանի Բերդավան գյուղի **սահմանագոտում** (Ժամ.,16.04.2014):

ՍԱՀՄԱՆԱՀԱՏՈՒՄ, գ. ՀՀ քաղաքացիների **սահմանահատումներն** ամփոփելիս կարելի է գալ այն եզրահանգման, որ այս տարի…. 47 հազար քաղաքացի արտագաղթել է մեր երկրից (Ժող., 31.01.2015):

ՍԱՂԱՐԹԱՄԵՋ, գ. **Սաղարթների մեջ:** Հավաքվածներս ծխում ենք, ինքը ծխախոտ է վառում, բոլորն էլ վառում են իրենց ծխախոտները, լուսինը՝ **սաղարթամիջից** (ԼԽ, ՍԳԾԲ, էջ 182):

ՍԱՄՀԱՅՆՈՖՈԲԻԱ, գ. Հելոինի հանդեպ տածած սաստիկ և կայուն վախը կոչվում է **սամհայնոֆոբիա** (Համացանց, 01.11.2013):

ՍԱՆԻՏԱՐԱՀԻԳԻԵՆԻԿ, ած. Ոչ միայն ազատավանդակների հետ կապված խնդիրներ կան այգում, այլև բարվոք չեն **սանիտարահիգիենիկ** պայմանները (Հրապ., 30.01.2014):

ՍԱՌԵՑՈՒՄ, գ. **Կասեցում**: (իմ.նորբ.) ....Այս կարգավիճակում, այսինքն՝ այդ ծրագրերի **սառեցումը** և Վաշինգտոնի հետ հակասություններն աչքի առաջ ունենալով՝ թաթարները չգնացին հանրաքվեի շուրջ իրավիճակի սրման....(Իրատես, 18.03.2014):

ՍԱՌՑԱԳԵՏ, գ.Կալիֆոռնիայի համալսարանի **սառցագետ** Էրիկ Պինյոն ասում է, որ այդ շրջանի վեց ամենամեծ սառցադաշտերի հալքը արդեն զգալի չափով նպաստել է օվկիանոսի մակարդակի բարձրացմանը (Ազգ, 16.05.2014):

ՍԱՏԱՆԱՅԱԲՈՒՅՐ, ած. **Սատանայական բնույթ ունեցող՝ չարաբույր, դաժան::** **Սատանայաբույր** երկրաշարժի , ավերոտ, արյունոտ հետքերը գետնի տակ կանցնեն, և Գյումրին կհառնի նորից (Հրապ., 06.12.2014):

ՍԱՏԵԼԻՏ, գ. Մենք տեսնում ենք Ռուսաստանի և քաղաքակիրթ աշխարհի միջև այսօրվա հարաբերությունները, դառնալու ենք «իզգոյ» պետության նման **սատելիտ** մի երկիր (Ժամ., 21.11.2014):

ՍԱՐԴԻՈՆԵ, ած. **Սարդիոնից պատրաստված (օբսիդների կարգին պատկանող դեղնակարմիր գույնի քար):** Հայտնաբերվել է նաև ուղղանկյունաձև **սարդիոնե** կախիկաձև ուլունք.... (ՀՄԵՀ, էջ 224):

ՍԱՐԿԱՊ, ած. **Սարկապ** ձորակում կչկչացող գետակը քչախոս դարձած՝ նմանվում էր կազմահան արված գրքի (ԳԹ, 24.10.2014):

ՍԱՐՅԱՆԱԲԱՐ, մկբ. **Սարյանի նման**: Երբ ես տեսա Սևակի տան դիրքն ու շրջակայքը՝ սքանչելի այգու հեռանկարով, **սարյանաբար** հրապուրիչ հեռաստաններով՝ ծնկներս թուլացան (ԼՀ, էջ 136):

ՍԱՓՈՐԵԼ, բ. Ու որսալ կյանքի ցոլքերը պատիր// **Սափորել** սրտում անցյալի կանչերն // Ու կանգուն պահել որմերն հավատի ....(ԳԹ, 06.12.2013):

ՍԳԱԲԱՐՈՒՐ, ած. **Տխուր՝ տխրալից մտածումներ ծնող:** Իրիկունը **սգաբարուր**, իրիկունը թախծաօրոր փաթաթվել էր եկեղեցու գմբեթներին ....(ԳԹ, 11.10.2013):

ՍԵՂԱՆԱՄԵՐՁ, ած. **Սեղանի շուրջ:** Ալիկ Սարգսյանը իշխանական որոշակի շրջանակների հետ **սեղանամերձ** խոսակցությունների ժամանակ տոն է տվել Ռ. Քոչարյանին վարչապետի կարգավիճակով հետ բերելու խոսակցություններին (Ժամ.,08.04.2014):

ՍԵՌԱՀԱՍՈՒՆԱՑՈՒՄ, գ. **Սեռական հասունացում:** Դեմքի կորյակները սովորաբար առաջանում են **սեռահասունացման** տարիքում (Տն. Առ., թ.7, 2014):

ՍԵՌԱՄՈԼԱԳԱՐ, Հայ հասարակության բաց թողած պատուհանից, պարզ չէ՞, ներս կսողոսկեն աղանդներ, **սեռամոլագարներ**....թրաֆիքինգի մագնատները և էլի շատ ու շատ բաներ (ԳԹ, 30.05.2014):

ՍԵՌԱՎԱՐԱԿ, գ. **Սեռավարակները** սեքսուալ առողջության թշնամիներն են (ԲՀ, թ. 5, 2014):

ՍԵՎԱԿԱՊԱՇՏ, գ. **Պ.Սևակին պաշտող:** Նինա Հովսեփյան անուն-ազգանունը կրող այդ թրթռուն ու երկյուղած **սևակապաշտին** հանդիպել եմ Պարույրենց տանը (ԱԶ, էջ 492):

ՍԵՎԱԿԱՊԱՇՏՈՒԹՅՈՒՆ, գ. **Պ. Սևակին պաշտելը:** Ժողովրդի տարբեր խավերում, շարքային մտավորականության լայն շրջաններում օրը օրին աճում էր նրա հեղինակությունը, որ սովորական հեղինակություն չէր, այլ պարզապես **սևակապաշտություն** (ԱԶ, էջ 529):

ՍԵՎԵՌՆԱՄԻՏ, ած. Պետությունը Նարեկի համար **սևեռնամիտ** գաղափար է (ԳԹ, 14.03.2014):

ՍԵՎԿՈՀԱԿ, ած. **Սև և ալիքավոր:** Սև ծովն այդ գիշեր քո վարսերն էին՝ **սևկոհակ**, ծուփ-ծուփ (ԼՄ, ԵՀ, էջ 24, 2013):

ՍԵՐԻԱԼԱԾԻՆ, գ. **Ֆիլմաշարի՝ սերիալի սցենարիստ: Սերիալածին** Դիանա Գրիգորյանը հիմա էլ անցել է երգելուն (Համացանց, 03.12.2013):

ՍԵՐԻԱԼԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, …. Ընդհանրապես արվեստի գլխավոր արժանիքը եզակիությունն է՝ ընդդեմ շուկայի սերիականության և… մանավանդ **սերիալականության**, որ նվաճել է արդի հայ հասարակությունը (ԳԹ,19.09.2014):

ՍԵՐԻԱԼԱՍԵՐ, ած. **Սերիալներ սիրող:** «Կտակով թագուհին» 20-սերիանոց հեռուստաֆիլմն արդեն իսկ որոշակի հետաքրքրություն է առաջացրել **սերիալասերների** շրջանում (TV մոլ, 21.07.2014):

ՍԵՐՄԱԹԱՐՄԱՑՈՒՄ, գ. **Սերմերի թարմացում:** Մարզում կարևորում են նաև սերմարտադրության, **սերմաթարմացման** և սորտափորձարկմանն ուղղված միջոցառումները (Ագրոլրատու, 05.02.2015):

ՍԵՐՄԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ, գ. Մարզում կարևորվում են նաև հացահատիկի **սերմարտադրության**, սերմաթարմացման և սորտափորձարկման ուղղված միջոցառումները (Ագրոլրատու, 05.02.2015):

ՍԵՐՄՆԱՀՈՏ, գ. **Սերմի հետ**: Նա բարձրացավ ու մեր **սերմնահոտն** առավ, ասաց. «Գուցե ուրիշ ժամանակ անտանելի լիներ» (ԼԽ, ՍԳԾԲ, էջ 196):

ՍԵՐՄՈՒՆՔ, …. Ցողունը պոկում են արմատից, կախ տալիս պատից, նա ոչ թե չորանում է, այլ ապրում է ամիսներ և նույնիսկ ծաղկում ու **սերմունք** տալիս….(ԳԹ, 20.12.2013):

ՍԻԹԱՐԱՀԱՐ, գ. **Սիթար նվագող երաժիշտ**: ....Ելույթ են ունենում Բեռլինի ֆիլհարմոնիկը, հանճարեղ **սիթարահար** Ռավի Շանկալը (Իրատես, 21.01.2014):

ՍԻՄՊԱՐԱԼԻՄՊԻԿ, ած. **Սիմպարալիմպիկ** օլիմպիական խաղերը կանցկացվեն Սոչի քաղաքում (Հրապ., 01.02.2014):

ՍԼԿՏՈՒՆ, ած. Ես գիտեմ, որ պատերը, առաստաղը, հատակը գաղջ ու **սլկտուն** են (ՀԲ, էջ 113):

ՍԿԶԲՆԱԽՈՍՔ, գ. **Նախնական խոսք՝ նախաբան, բացման խոսք:** Ուզում եմ կարևորել տիկին Դոլուխանյանի **սկզբնախոսքում** «մեր ժամանակներում» արտահայտությունը, բայց կուզեմ մի փոքր այլ դիտանկյունից նայել այդ երևույթին (ԳԹ,13.03.2015):

ՍՂՂԱՑՆԵԼ, բ. Շատ անակնկալ տապալեցին խոստացված արտահերթ նիստը, որպեսզի խորհրդարանական կրքերը մարեն ու **սղղացնեն** իրենց ծրագիրը (Հրապ., 19.11.2013):

ՍՄԱՐԹՖՈՆ, գ. **Սմարթֆոնը** հայ սպառողների համար հասանելի կլինի մի քանի գունային լուծումներով (168 ժ., 09.10.2014):

ՍՅՈՒԺԵՏԱԳՈՅԱՑՈՒՄ, գ. **Սյուժեի գոյացում**: Դրանք կազմում են առասպելի **սյուժետագոյացման** կարևոր բաղադրիչ և ապա՝ վկայում քննվող առասպելի ծիսական բնույթը (ՍՀ, էջ 304):

ՍՆԴՈՒՍԱՓԱՅԼ, ած. **Սնդուսի փայլ ունեցող**: **Սնդուսափայլ** բերետով այդ էակը լկտիաբար ժպտալու է ու ձեռնափայտն է թափահարելու՝ իր ողջ տեսքով նախազգուշացնելով ավելորդ սնապարծության մասին (TV մոլ,23.12.2013):

ՍՆՆԴԱԲԱՆ, գ. **Սննդի հարցերով զբաղվող մասնագետ: Սննդաբաններն** ասում են, որ աշնանային շրջանում քաղցրի մի փոքր քանակը մարդուն չի խանգարի (Տն. Առ, թ. 16, 2014):

ՍՆՆԴԱԲԱՆԱԿԱՆ, ած. **Սննդագիտական:** ՌԴ Բժշկական ակադեմիայի սննդի ինստիտուտի մասնագետները մշակել են սննդակարգ, որում հաշվի է առնված **սննդաբանական** գիտության կուտակած փորձը, այն կօգնի ավելի լավ պատկերացնել ճիշտ սնվելու կանոնները և անվերադարձորեն ազատվել «ճնշող» կիլոգրամներից (168 ժ., 12.12.2013):

ՍՆՆԴԱԹԵԼԻԿ, գ. Չյուրացվող **սննդաթելիկները** բարենպաստ ազդեցություն են գործում աղիներով շարժվող սննդի վրա և պահպանում են աղիների օգտակար միկրոֆլորան (TV մոլ, 18.08.2014):

ՍՆՆԴԱՏԵՍԱԿ, գ. **Սննդի տեսակ:** Հիմնական **սննդատեսակների** գները բարձրանում էին ժամ առ ժամ (Հրապ., 18.12.2014):

ՍՆՈՒՑԱԿԱՐԳ, գ. **Սնվելու կարգ:** ...Շատ սերտ զուգահեռ կա հիվանդության համար սահմանված ռեժիմի (**սնուցակարգ)** կամ դիետայի և կրոնական պահեցողության միջև՝ թե նպատակի, թե մեթոդի տեսանկյունից (Իրատես, 18.03.2014):

ՍՆՈՒՑՈՂԱԿԱՆ, ած. Աշխարհի բնակչության շուրջ 20 տոկոսը **սնուցողական** միկրոտարրերի և վիտամինների, մասնավորապես՝ վիտամին Ա–ի, յոդի և երկաթի պակաս ունի ….(ՀՀ, 26.11.2014):

ՍՈՂԱՑՈՒՄ,գ. Այս փողոցի վրա, որի երկարությունը հազիվ 300 մետր է , օրվա բոլոր ժամերին 10–20 րոպեանոց խցանումներ են, առնվազն՝ **սողացումներ** (Ազգ, 17.10.2014):

ՍՈՐՂՈՒՄ, գ. Սորղումը լայն տարածված է Ասիայում. նրա հատիկներից ստանում են ալյուր, օղի (ՀԴ, 12.11.2013):

ՍՈՐՏԱՓՈՐՁԱՐԿՈՒՄ, գ. Տե՛ս ՍԵՐՄԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ-ի օրինակը:

ՍՈՑԱՊՆԱԽԱՐԱՐ, գ. **Սոցիալական ապահովության նախարար:** Վարչապետի այս հայտարարությունից անակնկալի եկավ **սոցապնախարար** Արտեմ Ասատրյանը (Հրապ., 29.10.2013):

ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՈՒՄ, գ. ....Հաճախումների շնորհիվ երեխաների մոտ նկատելի առաջընթաց է արձանագրվել ոչ միայն ակադեմիական գիտելիքների ձեռքբերման մեջ, այլև ինքնասպասարկման ու **սոցիալականացման** առումով (Ազգ, 04.04.2014):

ՍՈՑԻՈՊԱՏ, գ. Կոկաինը մարդկանց դարձնում է **սոցիոպատներ** (Համացանց, 21.01.2014):

ՍՈՑՀԱՐՑՈՒՄ, գ. **Սոցիալական հարցում:** Ես պատկերացնում եմ տնօրենիս դեմքը, երբ կկարդա սեղանից մնացած վերջին **սոցհարցումը**....(ԳԹ, 22.11.2013):

ՍՈՑՑԱՆՑ, գ. Գրողը քաղաքական, կուսակցական զզվռտուքների «հրապարակախոսը» չպետք է լինի այն մակարդակով, որ այսօր ծավալվում է կուսակցական մամուլում ու սոցցանցերում (ԳԹ, 31.01.2014):

ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐԵԼ, բ. Գազի սակագնի տարբերությունը **կսուբսիդավորի** Ռուսաստանի կառավարությունը (Ժող., 13.11.2013):

ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՈՒՄ, Այն վարկառուները, ովքեր գումարներ են ստացել մինչև 2009 թվականի մարտ ամիսը, ավել **սուբսիդավորման** հնարավորություն ունեն (ՀՀ, 07.03.2014):

ՍՈՒՊԵՐԿԱՌՈՒՅՑ, գ. **Գերկառույց:** Ֆինանսների նախարարը **սուպերկառույցի** գլխին է կանգնած (Համացանց, 16.10.2014):

ՍՈՒՊԵՐՄԱՐԿԵՏ, գ. **Մեծ հանրախանութ:** Մարդիկ փող ունենալու դեպքում գնումներ են կատարում **սուպերմարկետներից** (Հրապ., 08.11.2013):

ՍՈՒՏԱՍԵԼՈՒԿ, ած. **Սուտ ասելը:** Կյանքը ինչ է, որ՝ // Մի հին ու տարտամ շուտասելուկ, //**Սուտասելուկ** ու/Սուտանելուկ ու//Սուտապրելուկ (ԳԹ, 20.12.2013):

ՍՈՒՐԾԱՅՐ, ած. **Սուր ծայր ունեցող:** Ադրբեջանցի մոտ հարյուր հոգի կացիններով ու **սուրծայր** երկաթներով «Ազատություն Սումգայիթի հերոսներին» ու թող «կորչեն հայերը,, վանկարկելով ներխուժում են խուտոր (Ավ., 12.03.2015):

ՍՊԻԱԲԻԾ, գ. **Սպիի բիծ՝ հետք:** Մաշկի **սպիաբիծն** ու թուլությունը նիհարած մարդկանց մոտ որոշ խնդիրներ են առաջացնում (TV մոլ, 26.01.2015):

ՍՊԻԱՎՈՐՈՒՄ, գ. **Վերքի սպի դառնալը**: **Սպիավորման** գործողությունը բավական տհաճ է (TV մոլ, 21.04.2014):

ՍՎԱՂԱՇԵՐՏ, գ. **Սվաղի շերտը**: Մինաս Ավետիսյանի «Հայաստան» որմնանկարը ստեղծվել է գաջի կրային սվաղի հիմքի վրա: Բնական, մեխանիկական աղդեցությունների հետևանքով որմնանկարի **սվաղաշերտերը** տեղաշարժվել էին, ներկի շերտը քայքայվել և առաջացել էին տարանջատված, դաղարի հատվածներ (Իրավունք, 12.12.2014):

ՍՏԱՄԲՈՒԼԱԲՆԱԿ, ած. **Ստամբուլում բնակվող:** Ֆիլմի նախադիտմանը ներկա են գտնվել թուրք հայտնի բազմաթիվ կինոաստղեր և **ստամբուլաբնակ** հայ նշանավոր դեմքեր, ինչպես, օրինակ, աշխարհահռչակ լուսանկարիչ Արա Գյուլերը (168 ժ., 06,12.2014):

ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Ստեղծագործականությունը** խթանող և տեխնոլոգիաների ուսուցումը խրախուսող արդի այս դասասենյակների՝ ստեղծագործարանների ստեղծման գաղափարը COAF-ինն է (Ազգ, 20.06.2014):

ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱՐԱՆ, ՎիվաՍել–ՄՏՍ–ի և Հայաստանի մանուկներ հիմնադրամի համագործակցության արդյունքում բացվել է հերթական՝ 3–րդ **ստեղծագործարանը** (Ազգ, 20.06.2014):

ՍՏԵՂՆԱՀԱՐ, գ. **Ստեղնաշարային գործիքներ նվագող երաժիշտ:**

ՍՏԵՆՏԱՎՈՐԵԼ, բ. **Ստենտ դնել:** Մամուլը գրեց, որ Սուրեն Խաչատրյանի սիրտը «Մալաթիա» բժշկական կենտրոնում վիրահատությամբ **ստենտավորել են** (Հրապ., 29.11.2014):

ՍՏԵՐԻԼԻԶԱՑՎԵԼ, բ. Նույնիսկ դասական թագավորությունները 21-րդ դարում տեղ չունեն, էլ ուր մնաց **ստերիլիզացված** դեմոկրատները (Հրապ., 29.10.2013):

ՍՏՈՐԱՄՏՔՈՒԹՅՈՒՆ, գ. **Ստոր մտքեր ունենալը**: Չեմ ասում՝ համբերության բաժակը, այդ բաժակը վաղուց չկա, թե ուր է և ինչպես վերացավ՝ վերացնողները գիտեն միայն, ինչպես նաև գիտեն, թե ինչ **ստորամտքությամբ** այն փոխարինեցին անտարբերությամբ (ԳԹ, 13.09.2013):

ՍՏՈՒԳԱԹԵՐԹ, գ. **Ստուգումների թերթ:** Կառավարության որոշումներով հաստատվել է ՀՀ քաղաքաշինության նախարարության աշխատակազմի քաղաքաշինական պետական տեսչության կողմից իրականացվող ստուգումների **ստուգաթերթը**.....(ՀՀ, 17.01.2014):

ՍՏՈՒԳԱՉԱՓԵԼ, բ. **Ստուգել և չափել:** ....Ընկերությունը նաև ընդառաջեց բնակիչներին ժամկետանց և վերատեղադրվող ջրաչափերը անվարձահատույց (15000 դրամի փոխարեն) **ստուգաչափելու** հարցում (168 ժ., 10.10.2013):

ՍՏՈՒԳԱՉԱՓՈՒՄ, գ. **Ստուգաչափելը:** ....Սպառողների շահերի պաշտպանության որոշ հարցեր կլուծվեն, մասնավորապես հաշվիչների ամենամյա **ստուգաչափում** և այլն....(Ազգ, 11.07.2014):

ՍՐԲԱԶՆԱՑՈՒՄ, գ. **Սրբացում:** Ուշագրավ է նաև անիծող անձանց (լեռներ) **սրբազնացման** աստիճանը, որ արտահայտվել է նրանց տրված անեծքների իրականացման փաստի մեջ (ՍՀ, էջ 199):

ՍՐՈՒՆՔԱԹԱԹԱՅԻՆ, ած. **Սրունքին և ոտնաթաթին վերաբերող:** Ոտնաթաթերը և սրունքի մկաններն ամրացնելու համար կատարեք հետևյալ վարժությունը. ոտնաթաթը **սրունքաթաթային** մասից ձգեք դեպի դուրս և նորից ուղղեք (TV մոլ, 21.07.2014):

ՍՐՏԱՀԱՃ, ած. **Սրտին հաճելի:** .... Համատեղ աշխատանքի պտուղը մի սրտահաճ ձայնասկավառակ է եղել՝ «Ջազնավուր» անունով //(ՀՀ, 05.03.2014):

ՍՐՏԱՊՏԿԱՅԻՆ, ած. Վոլոդյա Նիկոյանը իր ձեռքի դանակով մեկ անգամ հարվածել է որդու կրծքավանդակի ձախ կեսի **սրտապտկային** հատվածին (Համացանց, 21.01.2014):

ՍՐՏԽՓՈՑ, գ. **Առիթմիա:** Ծնեբեկի արմատը օգտագործվում է ժողովրդական բժշկության մեջ՝ ջրգողության, **սրտխփոցների**, ռևմատիզմի Ժամանակ (ՀԴ, թ. 1, 2014):

ՍՐՏՍՈՂՈՍԿ, ած. **Միրտ սողոսկող**: Իմ բաց դռան անդրադարձում ապակե / Սաղարթների սրսփացող ցոլքն է սոսկ,// Որ սրբափայլ սարսուռներով/ **սրտսողոսկ**// Ցոլցլում է որպես ցավոտ ապաքեն…. (ԳԹ, 26.12.2014):

ՍՓՅՈՒՌՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, գ. **Սփյուռքի մասին գիտություն**: ....**Սփյուռքագիտության** ամբիոնը հայ բանասիրության ֆակուլտետից տեղափոխվել է պատմության ֆակուլտետ (Եր. համ., 11.12.2013):

ՍՔԱՆԱՎՈՐՈՒՄ, գ….. Տարանցման ձևակերպման ժամանակ կիրականացվի օտարերկրացիների և քաղաքացիություն չունեցող անձանց ձեռքերի բոլոր մատների նրբագծերի **սքանավորում** (Ազգ, 05.12.2014):

ՍՔԱՆՉԵԼԱԽՈՍ, ած. **Գեղեցիկ խոսող: Սքանչելախոս** ու դրախտի դուռ մեր հայրենիքի ողջ գանձերը մեկ էջում հնարավոր չէ տեղավորել, սակայն գյումրեցի խենթ պոետը գտել է մեկտեղելու հնարը՝ .... (ԳԹ, 21.03.2014):

Վ

ՎԱԽԱԶԵՐԾՈՒՄ, գ. Անգլուխ և անբերան շան այս պատկերը խորհրդանշում է **վախազերծման** գաղափարը (ՍՀ, էջ 425):

ՎԱՂԱԵՓ, ած. **Շուտ եփվող:** Երբ ներս տարա թոքի ու լյարդի **վաղաեփ** կտորներով շամփուրները, նրանք արդեն զրուցում էին (ԳԹ, 18.04.2014):

ՎԱՃԱՌԱՑԱՆՑ, գ, **Առևտրի կետերի ցանց:** ԳԵԼԼԱՓ–ի հարցախույզը «Իդեալ» համակարգը ճանաչել է լավագույն **վաճառացանցը** («Արմնյուզ» հեռուստացույց.):

ՎԱՃԱՌՔԱՅԻՆ, ած. **Վաճառքին վերաբերող:** Կիսանդրին աճուրդում համարվում էր իմպրեսիոնիզմի և մոդեռնիզմի վարպետների ստեղծագործությունների **վաճառքային** գլխավոր լոտերից մեկը (Ժող., 08.11.2013):

ՎԱՅՐԱՄՈՒՂԱՄ, Հանկարծ ամենուր բարձրանում է այդ **վայրամուղամը**…. (ԳԹ, 31.10.2014):

ՎԱՅՐԸՆԹԱՑՈՒԹՅՈՒՆ, գ. **Վայր ընկնելը:** Մշեցիները ընկնելիս միշտ վեր են կենում, դժբախտանալիս մի նոր բախտի են հասնում, **վայրընթացության** մեջ մի նոր վերելք են գտնում և մեռնելիս հառնում են (Հրապ., 06.12.2014):

ՎԱՅՐՈՒՂԻ, գ. Ուր էլ թռչեմ, **վայրուղիս** հոգուս տարածքում է (ԼՋ, էջ 41):

ՎԱՆԴԱԿԱՆԱԽՇ, ած. **Վանդակաձև նախշերով:** Նինան **վանդականախշ** վերնաշապիկով բորբոքում էր երիտասարդների երևակայությունը (TVալիք, 02.12.2013):

ՎԱՌԵԼԻՔԱԼՑԱՎՈՐՈՒՄ, գ Կարդիականացվի **վառելիքալցավորման** կայանը (ՀՀ,15.02.2014):

ՎԱՎԵՐԱԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ, ած.**Վավերագրական և գեղարվեստական**: Խոսելով Լ.Անանյանի հրապարակագրության մասին, որպես մեր ժամանակների լավագույն **վավերագեղարվեստական** իրողություն, հատված կարդաց գրողի «Արմատ և սաղարթ» գրքից (ԳԹ, 31.10.2014):

ՎԱՏԱԲՈՒՅՐ, ած. **Տհաճ հոտ ունեցող**: Արդար հոգիները խնդրում են Աստծուն, որպեսզի իրենք ազատվեն իրենցից փոքր-ինչ ցածր գտնվող **վատաբույր** մեղավորների հոգիների դրկիցությունից (ՍՀ, էջ 435):

ՎԱՐԱԿԱՑԱՎ, գ. **Հիվանդագին ցավ:** Հիման՝ ա՜խ, գիտեմ–// կելնի՞ յուր ներքին **վարակացավից**...// կելնի՞, կըմաքրվի՞.... (ԳԹ, 25.04.2014):

ՎԱՐԺԱՃԱՄԲԱՐ, գ. **Վարժանքների ճամբար:** «Ազատագրական բանակ» ջոկատի հիմնադիր հրամանատար Լեոնիդ Ազգալդյանի հետ ինձ համար բախտորոշ ծանոթությունը 1990թ. տեղի է ունեցել Վարդենիսի շրջանի Փամբակ գյուղի **վարժաճամբարում** (Եր. համ., թ. 9, 2014):

ՎԱՐԿԱԲԵԿՎԱԾՈՒԹՅՈՒՆ, գ. **Վարկաբեկված լինելը:** Կարծում եմ, որ Մոսկվայի համար այստեղ կարևոր են նույնիսկ ոչ այնքան Լևոն Տեր Պետրոսյանի հետ հարաբերությունները, որքան հնարավոր է՝ սա Ռոբերտ Քոչարյանի **վարկաբեկվածության** հետևանքն է , որն իր պլաններն ունի այս խաղում, և որը ևս բավարար հիմքեր ունի ՀԱԿ-ի հետ մտերմանալու հույսեր չփայփայելու (Ժամ., 11.11.2014):

ՎԱՐԿԱՆՇՈՒՄ, գ. (հեռուստ.):

ՎԱՐՉԱԿԵՆՏՐՈՆ, գ. **Վարչական կենտրոն**: **Վարչակենտրոն** տանող ճանապարհը նույն կիսաքանդն է, ինչ տեսել եմ յոթ տարի առաջ (ԳԹ, 6.12.2013);

ՎԱՐՍԱՀԱՐԴԱՐԻՉ

ՎԱՐՍԱՀԱՐԴԱՐՈՒՄ

ՎԱՐՎԵԼԱՌՃ, գ. **Վարվեցողության կերպը՝ ձևը՝ վարվելակերպ:** Մշակութային մարտահրավերը ինքնակամ ընդունում էի և անցնում հակագրոհի՝ ինչ խոսք, պահպանելով քաղաքակիրթ **վարվելառճ** և էթիկա (ԳԹ, 11.10.2013):

ՎԵՆՉՈՒՐԱՅԻՆ, ած. Սինդիկացված վարկեր, երաշխավորություններ, պարտատոմսերի մեջ ներդրումներ, **վենչուրային** ներդրումներ՝ վենչուրային ընկերության հիմնադրման կամ նրանում մասնակցություն ձեռք բերելու միջոցով (Ազգ, 16.05.2014):

ՎԵՐԱԱՄՐԱԳՐԵԼ, բ. **Կրկին ամրագրել:** Ռոբերտ Քոչարյանը մերժում է Սերժ Սարգսյանի առաջարկը և ասում կամ ավելի շուտ ամրագրում է կամ **վերաամրագրում**, որ Ս. Սարգսյանը պետք է իշխանությունը երկրորդ ժամկետից հետո փոխանցի Ռ. Քոչարյանին (Ժամ., 23.04.2014):

ՎԵՐԱԱՐԺԵՎՈՐԵԼ, բ. Ամեն մայիսին մենք **վերաարժևորում** ենք մեր հաղթանակներն ու հաղթության տանող ճանապարհները (Համացանց, 08.05.2014):

ՎԵՐԱԶԱՐԹՈՆՔ, գ. **Կրկին զարթոնք**: 1960-ականները նշանավորվեց Հայաստանի և ողջ աշխարհի հայության **վերազարթոնքով** (TV մոլ, 21.04.2014):

ՎԵՐԱԾԱՅՐԱԿՑԵԼ, բ. **Կրկին ծայրերը կցել**: Եվ հաջողվեց այն հարամել. կադրերը **վերածայրակցելու** ժամանակ տեղ-տեղ կապը կորավ ու այդպես էլ մնաց ֆիլմի մեջ (TV մոլ, 09.12.2013):

ՎԵՐԱԿԵՐՊՈՒՄ, գ. Պետրոսյանը հիացած խոսում է այն մասին, թե ինչպես Գագիկ Ծառուկյանը իշխանության կցորդից հրաշալի **վերակերպումների** միջոցով դարձավ ընդդիմության կցորդ (Համացանց, 21.02.2015):

ՎԵՐԱՀԵՌԱՐՁԱԿՈՒՄ, գ. **Կրկնակի հեռարձակում:** ,,Տավուշ,, մարզային հեռուստաընկերությունը հաղորդումների **վերահեռարձակումը** իրականացնում է Նոյեմբերյանից (Ժող., 18.04.2015):

ՎԵՐԱՁԱՅՆԱԳՐԵԼ, բ. **Կրկին ձայնագրել:** Երգչուհին սովորություն չունի **վերաձայնագրել** հին երգերը (TV ալիք, 18.11.2013):

ՎԵՐԱՆՁՆԱԿԱՆ, գ. Դու երազանք էիր **վերանձնական** (TV ալիք, 27.01.2014):

ՎԵՐԱՆՆԱԽԱԴԵՊ, ած. Կառավարությունն արտաքին միջոցների ներգրավման առումով 2003-ից **վերաննախադեպ** հաջողություններ է արձանագրել (Հրապ., 13.11.2013):

ՎԵՐԱՆՇԱՆԱԿԵԼ, բ. **Կրկին նշանակել:** Ինչ վերաբերում է Սեյրան Օհանյանին ու էդվարդ Նալբանդյանին Ս. Սարգսյանը նրանց արդեն **վերանշանակել** է (Ժամ., 16.04.2014):

ՎԵՐԱՊՐՈՂ, Խոսքը «Հայոց ցեղասպանություն , ականատես **վերապրողների** վկայություններ» գրքի մասին է (ՀՀ, 07.03.2014):

ՎԵՐԱՌԱՋԱԴՐՎԵԼ, բ. Ս. Սարգսյանի կողմից վերահսկիչ պալատի նախագահի պաշտոնում **վերառաջադրված** Իշխան Զաքարյանը երեկ հանդիպել է խորհրդարանական խմբակցությունների հետ (Հրապ., 08.11.2013):

ՎԵՐԱՐԹՆԱՑՆԵԼ, բ. Ամենատարբեր ձևակերպումներով իր մտքում, իր գրչով վերարթնացնում է անցյալի սրբատեղիները, երախտագիտությամբ լցվում իր նախնիների նկատմամբ.....(ԳԹ, 06.12.2013):

ՎԵՐԱՐԺԵՎՈՐԵԼ, բ. **Նորից արժևորելը:** Հավաքվել էին մտավորականներ, գրողներ, աշակերտներ, չարենցագետներ և չարենցապաշտներ՝ **վերարժևորելու** Չարենցի ստեղծագործությունները, խնկարկելու նրա հիշատակը (ԳԹ, 06.12.2013):

ՎԵՐԲԵՌՆՈՒՄ, «Միայն Տաթևի վանական համալիրի **վերբեռնումն** է անվճար, իսկ մյուս եկեղեցիներ «այցելելը» վճարովի է (Հեռ.«Հայկական գանձեր» նախագիծ):

ՎԵՐԲԵՌՆՈՒՄ, գ. Տեղեկացնենք, որ 4G–ն ներբեռման համար ապահովում է տեսականորեն մինչև 150 Մբիթ/վրկ արագություն, իսկ **վերբեռնման** համար՝ մինչև 50 Մբիթ/վրկ (Ազգ, 12.09.2014):

ՎԵՐԶԳԱՅԱԿԱՆ, ած. Իր առարկայական աշխարհի մոտավորությունը նույնքան հեռավորություն է: Ներսն ու դուրսը, **վերզգայականն** ու բարձրագույնը՝ դաշն (ԳԹ, 20.12.2013):

ՎԵՐԺԱՄԱՆԱԿՅԱ, ած. **Ժամանակակից վեր եղող:** Բարձր եմ գնահատում նրան, Արմեն Մարտիրոսյանը **վերժամանակյա** երևույթ է… (ԳԹ, 13.03.2015):

ՎԵՐՆԱՀՈՆՔ, գ. **Հոնքի վերևի մասը**: Կարմիր **վերնահոնքով** և սպիտակ ենթապոչով ցախաքլորները պակաս գեղեցիկ չեն (TV մոլ, 26.01.2015):

ՎԵՐՆԱՊՈՉ, գ. **Կրկնապոչի վերևի մասը:** Իրականում դա բնավ էլ պոչ չէ, այլ **վերնապոչ**. սիրամարգի պոչը փոքր է, ընդամենը 40-45 սմ երկարությամբ (TV մոլ, 26.01.2015):

ՎԵՐՊԵՏԱԿԱՆ, …. Մասնակի կամ նույնիսկ առանցքային դեմքերի փոփոխության տեսքով, քանի որ հնարավոր չի լինի խուսափել զանազան **վերպետական** թելադրանքներից (Ազգ, 31.10.2014):

ՎԵՐՋԱԿԵՐՏՎԱԾ, Այն շարադրված է կարճ, գրագետ, համեմված կամ **վերջակերտված** միայն մեկ բառով կամ ժողովրդական ասացվածքով (ԳԹ, 07.02.2014):

ՎԵՐՋՆԱԿԱՆԳԱՌ, գ.**Վերջին կանգառը**: Միայն **վերջնականգառներում** լինելով հնարավոր չէ ամբողջությամբ տիրապետել տիրող վիճակին.... (ՀՀ, 24.06.2014):

ՎԵՐՋՆԱՕՂԱԿ, գ. **Վերջին օղակ**: Ո՞ւր ես գնում, իմ ընկեր Ռ,Ռոմո, Ռոմիկ Սարդարյան: Մեր հին «գվարդիաի» **վերջնաօղակ,** որի շղթան կամաց–կամաց փակվում է.... (ԳԹ, 05.09.2014):

ՎԵՑՇԵՐՏԱՆԻ, ած. **Վեց շերտ ունեցող**: Հետո այն ակնթարթաբար սառեցնում են և լցնում **վեցշերտանի** հերմետիկ տուփի մեջ (TV մոլ, 12.05.2014):

ՎԹԱՐԱՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ, գ. **Վթարի հետևանքները վերացնելը**: Նա(տնօրենը) հավաստիացրել է, որ իրենց ուժերով կիրականացնեն աշխատանքներ հոսքի դադարեցման և **վթարավերականգնման** ուղղությամբ (ՀՀ, 24.03.2015):

ՎԻԴԵՈԽԱՂ, գ. **Տեսախաղ:** Նա առաջին դերասանն էր, ով խաղաց **վիդեոխաղում** (TV ալիք, 20.02.2014) :

ՎԻԴԵՈՔԱՐՏ, գ. **Տեսաքարտ:** Ի տարբերություն նախորդ տարբերակիչների՝ այն չի պահանջում տվյալ ստանդարտի ապահովման նոր **վիդեոքարտ** ձեռք բերել (168 ժ., 25.03.2014):

ՎԻԶՈՒԱԼ, ած. **Երևակայական:** Մարդիկ երբ որևէ երաժշտություն են լսում, այդ երաժշտության հետ կապված որևէ գունային, վիզուալ **ասիոցիացիաներ** են ընկալում /TV ալիք, 20.02.2014 /:

ՎԻՇԱՊԱԲԱՐՈ, ած. **Վիշապանման՝ վիշապի բարք ունեցող՝ ոլորապտույտ:** **Վիշապաբարո** շառավիղների,// Տների մասին հրաճարակված// Եվ ժամանակի, որ ստիպում է //ապրել կույչ եկած:// Ես կգրեի, դավաճանում է//սակայն ձեռքս ինձ (ԳԹ, 10.10.2014):

ՎԻՇԱՊԱՄԱՅՐ, գ. **Վիշապի մայր**: Լրացուցուցիչ, բայց մեր թեմայի համար կարևոր մոտիվ է վիշապի կնոջ կամ **վիշապամոր** գերեվարումը վիշապամարտիկի կողմից (ՍՀ, էջ 177):

ՎԻՇԱՊԱՄԱՐՏԻԿ, գ. «Սասնա ծռերում» Դավիթը ծովածին, ամպրոպային հերոս և **վիշապամարտիկ** Սանասարի թոռն է, Առյուծաձև Մհերի որդին (ՍՀ, էջ 182):

ՎԻՇԱՊԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Վիշապին սպանելը**: Այն նույն առյուծասպանության սյուժեն է, փոխարինված **վիշապասպանությամբ** (ՍՀ, էջ 179):

ՎԻՊԱԿԱՆԱՆԱԼ, բ. Վիշապների և վիշապամարտի մասին վաղնջական առասպելները մ.թ. առաջին դարերում հայ վիպական ավանդության մեջ սկսել էին խիստ **վիպականանալ** և պատմականանալ (ՍՀ, էջ 178):

ՎԻՊԱՇԱՐ, գ. Վիպերի շարք: Դուք գուցե կգրեիք «Խաղամոլ խնամիները» **վիպաշարը**….(Հրապ., 06.02. 2013):

ՎԻՊԱՊԱՇՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. ....Երբ հենց իմ ու շատերի աչքերի առջև փլուզվում– ավերվում է այն երկիրը, որի մասին խոսելիս սիրում ենք տրվել **վիպապաշտականությանը**, շքեղ բառերի հեղեղին .... (ԳԹ,13.09.2013):

ՎԻՊԱՍՔԱՅԻՆ, ած. **Վիպասքին հատուկ:** Իհարկե, ինչպես ասացինք, առկա են **վիպասքային** տարրերը, խորհրդանշանները.... հեթանոս երանգները.... (ԳԹ,23.05.2014):

ՎԻՏԱՄԻՆԱՑՎԵԼ, բ. Դեղատներում մասուրի պտուղները բաց են թողնվում չորացած վիճակում, **վիտամինացված** օշարակի, հաբերի ձևով (ՀԴ, թ.1, 2014):

ՎԻՐԱԿԱՐ, գ. **Վերքի կար:….** Տասը **վիրակարերից** միայն հինգն են քանդել (Իրատես, 17.03.2015):

ՎԻՐՏՈՒԱԼ, ած. Շահում են այն երկրները, որոնք կարողանում են հնարավորինս ակտիվ լինել **վիրտուալ** տիրույթում՝ լայնորեն ներկայացնելով իրենց մտքի արդյունքը կամ տեղեկատվական արտադրանքը (ՀՀ, 30.01.2014):

ՎԻՐՏՈՒԱԼ, ած. **Երևակայական**: Դրա ամենավառ դրսևորումը 100-ների հեղափոխությունն էր, որ 100 տոկոսով ցանցային իրողությունն էր **վիրտուալ** տարածքում հաջողության հասած ու կայացած (Հրապ., 06.11.2013):

ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ, գ. **Վճարահաշվարկային** կազմակերպությունների աշխատակիցները փոխանցել են, որ այս պատկերն է իրենց հաճախորդների 10-20 տոկոսի մոտ (Համացանց, 31.01.2014):

ՎՇՏԱԿՈՐՈՒՅՍ, ած. **Վշտահար: Վշտակորույս** մայրը նորից է երեխա ունեցել. այժմ փոքրիկ տղան վեց ամսական է (Հրապ., 21.05.2014):

ՎՇՏԱՊԱՏՈՒՄ

Տ

ՏԱԲՈՒԱՎՈՐՎԵԼ, բ. **Սքողվել՝ գաղտնագրվել:** Բացի այդ, պտղաբերության գաղափարը **տաբուավորված** ձևով արտահայտվել է առասպելական անձանց հարաբերությունների մեջ, հատկապես կին/տղամարդ սեռային հակադրություններում (ՍՀ, էջ 74):

ՏԱԳՆԱՊԱՅՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Տագնապի զգացողություն**: Կոֆեինը ջրազրկում է առաջացնում, իսկ շատ խմելը կարող է բարձրացնել **տագնապայնության** զգացողությունը (TV մոլ, 02.03.2015):

ՏԱԳՆԱՊԱՇԱՏ, ած.

ՏԱԳՆԱՊԱՍՈՒՅԶ , ած. **Տագնապալից՝ տագնապով լեցուն՝ մտահոգ:** Նույնանուն թերթն եմ առնում և նույն հեղինակի տագնապախռով**, տագնապասույզ,** տագնապահունչ ձայնն եմ լսում. «Ոչնչացման վտանգի տակ են մեր գյուղերն ու քաղաքները» (ԳԹ, 24.10.2014):

ՏԱՂԱՍՐԱՀ, գ. Զգվում ըստ տաղանդի/ պատվանդանին անգո**,// Տաղասրահ** բացում/ Փանդիռ–ծնծղաների բամբ նվագի տակ....(ԳԹ, 11.10.2013):

ՏԱՊԱՆՔԵԼ, բ. **Հողին հանձնել**: Մայրը **տապանքում** էր վերջին զավակին՝ հագուստի վերջին պատառիկներով (ՄՍ, էջ 154):

ՏԱՌԱԽԱՉՔԱՐ, գ. Արևշատ երազանքում նաև մարդկանց զբաղվածության հարց է լուծվում, կազմակերպվում են բնապահպանական, բժշկական, գիտակրթական միջոցառումներ, դպրոցականների այցելություններ հարևանությամբ գտնվող Օշական Մաշտոցի շիրիմին, որտեղ այցելուներին դիմավորում է **տառախաչքարերի** պուրակը (ԳԹ, 24.07.2015):

ՏԱՌԱՊԱԲԱՂԶ, ած. **Տառապալից՝ մտահոգ:** Մեր մեծերի մասին տասնյակ ու տասնյակ **տառապաբաղձ** գրքեր են գրվել (ԳԹ, 18.04.2014):

ՏԱՌԱՍՏԵՂԾ, գ. **Տառ ստեղծող անձ:** Մրցույթին ներկայացված էր 74 աշխատանք՝ 15 երկրների 62 **տառաստեղծներից**, այդ թվում նաև տառաստեղծման հռչակավոր կազմակերպություններից.… (ԳԹ, 10.10.2014):

ՏԱՏԱՆՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Տատանվելը:** Այս ցուցանիշներից ցանկացածի **տատանողականությունը....** կարող է բերել վնասաբերության ցուցանիշի փոփոխության (ՀՀ, 18.03.2014):

ՏԱՐԱԶԱՆ, ած. **Բազմազան՝ տարբեր:** ....Եվ որի վրա **տարազան** լուսանկարներ կային՝ կարկառուն բոլշևիկների ու մտավորականների դիմանկարներով....(ԳԹ, 01.11.2013):

ՏԱՐԱԶԳ, ած. **Տարբեր ազգերի պատկանող՝ բազմազգ**: ....Նաթանյահուն կալանում է **տարազգ** անձնակազմով....Պանամայի դրոշով նավարկող նավը.... (Իրատես, 21.03.2014):

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ, ած. **Տարածաշրջանին հատուկ՝ վերաբերող:** Դավիթ Տոնոյանը Ամստերդամում մասնակցել է «Խաղաղության ու պաշտպանության ապահովում, ՄԱԿ-ի խաղաղապահ գործողությունների միատեղման զորություն» թեմայով եվրոպական **տարածաշրջանային** համաժողովին (ՀԶ, 19.02.2015):

ՏԱՐԱՆԱԽԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ, գ. **Տարբեր նախասիրություններ:** Քննադատությունը համակարգ է և ձևավորվում է տարբեր, տարաճաշակ, **տարանախասիրություն** ունեցող քննադատների ընդհանուր աշխատանքի կամ գործունեության արդյունքում (ԳԹ, 13.03.2015):

ՏԱՐԱՆՋԱՏԻՉ, ած. Գոլանի բարձունքներում տեղաբաշխված ՄԱԿ–ի խաղաղարարները սկսել են լքել Իսրայել–Սիրիա **տարանջատիչ** գոտում գտնվող իրենց դիրքերը (Ազգ, 19.09.2014):

ՏԱՐԲԵՐԱԿԱՅՆՈՒԹՅՈՒՆ, գ. **1.Տարբերակների առկայություն: 2. Տարբերակային լինելը:** Տ'ես ՏԵՐՄԻՆԱՏԱՐԲԵՐԱԿ-ի օրինակը:

ՏԱՐԸՆԹԵՐՑՈՒՄ, գ. Ռեպորտաժի հեղինակները անենայն խնամքով էին պատրաստել **տարընթերցումը՝** հոգ տանելով Սերժ Սարգսյանի ննջած լինելու հանգամանքին (ՀԺ, 29.10.2013):

ՏԱՐԻ–ՕՐ, Ամառվա **տարի–օրը** անցնում է՝ էլի գործ չեմ անում (ԳԹ, 13.09.2013):

ՏԱՐՀԱՆՈՒՄ, գ. Պետք է առաջ քաշեն նոր խնդիրներ՝ ապահովելու ազգաբնակչության **տարհանումը** համալիրից (TV ալիք, 23.12.2013):

ՏԱՐՓԱԾԻՆ, գ. Սիրելիդ ձգտում է ակտիվորեն ներգործել քո **տարփածին** գոտու վրա (TV ալիք, 23.12.2013):

ՏԵԽՆԱԾԻՆ, ած. **«Տեխնածին** բնույթի դեպքերի մեջ գերակշիռ թիվ են կազմում ճանապարհատրանսպորտային պատահարները. ....(ՀՀ,15.02.2014):

ՏԵԽՆՈՄԱՐԿԵՏ

ՏԵԽՕԳՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Տեխնիկական օգնություն**: Ակումբի անդամներին առաջարկվում է ճանապարհներին **տեխօգնության** տրամադրում (TV մոլ, 10.02.2014):

ՏԵՂԱԴՈՓՅՈՒՆ, գ. Թերևս սա **տեղադոփյունի** մի ձև է, չեմ սիրում այդ բառը՝ այնքան անկարևոր, որ ենթակա է ուշադրության չարժանանալու վտանգին (ԳԹ, 06.12.2013):

ՏԵՂԱՎԱՅՐ, գ. (իմ նորբ.) **Բնակավայր:** ....Սվազլյանը գրառել, ձայնագրել, տեսագրել և հրապարակել է պատմական Հայաստանի ավելի քան 150 **տեղավայրերից** բռնի տարագրված, Հայաստանում և սփյուռքում բնակություն հաստատած ականատես վերապրողների վկայությունները, պատմական բնույթի երգերը (Իրատես, 13.12.2013):

ՏԵՂՈՐՈՇԻՉ, գ. **Տեղը որոշող, տեղը գտնող**: Ամերիկյան ռազմական դելֆինները կփորձարկեն նոր հակառադար , որը նախատեսված է «թշնամու **տեղորոշիչների** ապակողմնորոշման համար....(Ազգ, 16.05.2014/:

ՏԵՆԴԱԲՇՏԻԿ, գ. **Տենդից առաջացող բշտիկ:** Վիրուսը (ցիտոմեգալո) պատկանում է տենդաբշտիկի վիրուսի խմբին /Տն. առ., թ. 8, 2014):

ՏԵՍԱԲԱՑԻԿ, գ. Մեր մասնակիցները Վիեննայից եվրատեսիլի կազմակերպիչներից **տեսաբացիկի** անակնկալ փաթեթ են ստանում (Համացանց, 08.04.2005):

ՏԵՍԱԳՐԱՆՑԵԼ, բ.

ՏԵՍԱԴՐՈՒՅԹ, գ. Ս. Մուրադյանը հիմնավորում է իր տեսակետը, **տեսադրույթը**.... (ԳԹ, 24.10.2014):

ՏԵՍԱԶԱՆԳ, գ. Լոնդոնից ուղիղ **տեսազանգով** զեկույցը ներկայացնում էր Թուրալ Ահմեդզադեն (Հրապ., 17.10.2013):

ՏԵՍԱԶԱՎԵՇՏ, գ. Ամենաթարմ **տեսազավեշտը** ընդդեմ ընտենական բռնության գովադդ- հակագովազդն է՝ «ծեծված դեմքերի» կատարմամբ (Հրապ., 08.10.2014):

ՏԵՍԱԶՐՈՒՅՑ, գ. Երգչուհին անվերապահորեն հերքել է կայքերից մեկի **տեսազրույցում** հնչած վարկածը, թե ամուսնալուծության պատճառը ամուսնու դավաճանությանն է եղել իր ընկերուհու հետ (TV մոլ, 09.02.2015):

ՏԵՍԱԼՈՒՍԱՆԿԱՐԱՀԱՆՈՒՄ, գ. Զննվել է դեպքի վայրը, կատարվել են դեպքի վայրի **տեսալուսանկարահանումներ** , այլ անհրաժեշտ քննչական գործողություններ....(ՀՀ, 24.06.2014):

ՏԵՍԱԽԱՂ, գ. 2013-ի փետրվարին հայտնի դարձավ, որ Ուոքերը նկարահանվելու է «Հիթմեն» **տեսախաղի** հիման վրա ստեղծվող նոր ֆիլմի գլխավոր դերում (TV մոլ, 09.12.2013):

ՏԵՍԱԽՑԻԿԱՊԱՏԵԼ, բ. Երևանը **տեսախցիկապատելու** քաղաքապետարանի որոշման մասին «Իրավունքը» զրուցեց Երևանի քաղաքապետարանի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ Արթուր Գևորգյանի հետ (Իրավունք, 14.03.2014):

ՏԵՍԱԿԱԴՐ, գ. Նախապես պատրաստվել էին… տեսահոլովակներ, ուր հեղինակի ընթերցմամբ բանաստեղծություններ էին հնչում համապատասխան **տեսակադրերի** համադրմամբ (Իրատես, 24.02.2015):

ՏԵՍԱԿԱՄՈՒՐՋ, գ. ....Երեկ **տեսակամուրջ** էր կազմակերպվել Երևանի, Մոսկվայի, Կիևի, Քիշնևի և Աստանայի միջև (ՀՀ, 13.02.2014):

ՏԵՍԱԿԱՊ, գ. Պրոֆեսոր Գուստավ Կասանիցկին **տեսակապով** գնահատականներ տվեց դերասան Վարդան Պետրոսյանի մասնակցությամբ տեղ ունեցած վթարին (Համացանց, 26.03.2014):

ՏԵՍԱԿՐՊԱԿ

ՏԵՍԱՀՈՐԻԶՈՆ, գ. Տարեցտարի կարծիքս, **տեսահորիզոնս** փոխվում է (TV ալիք 27.10.2014):

ՏԵՍԱՀՍԿԵԼ, բ. Տարածքը տեսահսկվում է (Ցուցանակից):

ՏԵՍԱՁԱՅՆԱՅԻՆ, ած. ....Եվրոպական խոշորագույն կազմակերպությունները կատարել են « Ա.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի բեմական , լուսային և **տեսաձայնային** համակարգերի .....վերազինման» ծրագիրը (ՀՀ, 05.06.2014):

ՏԵՍԱՆԵՐԱԾՈՒՄ,գ. **Տեսախցիկով ներածումը**: ....Դիմումներին կից ներկայացվող փաստաթղթերի **տեսաներածման** ստորագրությունների իսկության ճանաչմամբ գործարքների կնքման աշխատանքները (ՀՀ, 11.06.2014):

ՏԵՍԱՆԿԱՐ, գ. Խախտում եղել է միայն ձայնային ազդանշանի կարգով, որը հետո **տեսանկարով** կպարզենք (Իր., 06.12.2013):

ՏԵՍԱՆԿԱՐԱՀԱՆԵԼ,բ. **Տեսախցիկով նկարահանել**: **....Տեսանկարահանող** և լուսանկարահանող սարքերով հայտնաբերված իրավախախտումների վերաբերյալ ամբողջական տեղեկատվություն կարելի է ստանալ համացանցով....(ՀՀ, 30.01.2014):

ՏԵՍԱՌԻՂԵՐՁ, գ. Նրանք **տեսաուղերձ** են հրապարակել, որում իսլամիստները կանգնած են հին խորհրդային կործանիչի ֆոնին....(Լուրեր Հայաստանից, Թերթ.am)

ՏԵՍԱՎԵՐԱՀՍԿՈՒՄ, գ. **Տեսախցիկով վերահսկումը**: ՍՊԿ–ի անվտանգ գործունեությունն ապահովելու համար այն հագեցվել է պահուստային էլեկտրասնուցման՝ 150 ԿՎտ/Ժ հզորությամբ գեներատորով և ....հրդեհաշիջման, **տեսավերահսկման** ....էլեկտրոնային վերահսկման համակարգերով (Ազգ, 05.09.2014):

ՏԵՍԻԼՔԱՎՈՐ,ած. Աշնան այդ առավոտ նա հասցրեց տեսնել իր թիկունքից նայող գարունները անդարձ, զավակների նման իր գիրկն առավ **տեսիլքավոր** բարուրները նրանց ....(ԳԹ, 11.10.2013):

ՏԵՄՆԵԼ–ԱՌՆԵԼ, բ. Ամեն մի ահաբեկյալ, մարզ ու շրջանում էնքան հանքեր կան, որ տիրյալները աղի–անալի համը **տեսնել–առնելով**… վաղուց համը հանում են, բայց ձեն–ծպտուն հանող չկա ….(ԳԹ, 14.11.2014):

ՏԵՐՄԵՆՀՈՔՍ, գ. **Նվագարան**: Նշենք, որ **տերմենհոքսը** աշխարհում միակ երաժշտական գործիքն է, որը նվագում են օդում (Ազգ, 13.06.2014):

ՏԵՐՄԻՆԱԲԱՂԱԴՐԻՉ, գ. **Տերմինի բաղադրիչ**: Հետագայում պերիոդիզացիա, սիստեմ օտար **տերմինաբաղադրիչները** փոխարինվեցին շրջանաբաժանում, համակարգ հայերեն համարժեքներով (ՋԸ, էջ 35):

ՏԵՐՄԻՆԱԶՈՒՅԳ, գ. **Տերմինների զույգ**: Շնչեղ ձայնեղներ-ձայնեղ շնչեղներ, շնչեղ խուլեր-խուլ շնչեղներ **տերմինազույգում** առկա է փոխատեղում բառակապակցության շրջանակում (ՋԸ, էջ 40):

ՏԵՐՄԻՆԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ, գ. **Տերմինի կառուցվածք**: **Տերմինակառուցվածք** ասելով հասկանում ենք տերմինների բառակազմական կառուցվածքն իր բոլոր կողմերով (ԷԱ, էջ 337):

ՏԵՐՄԻՆԱՏԱՐԲԵՐԱԿ, գ. **Տերմինի տարբերակ**: Ինչ վերաբերում է լեզվաբանության բնագավառում գործածվող տերմինների տարբերակայնությանը, ապա կարելի է նշել, որ այստեղ զուգաձևերը, **տերմինատարբերակները** ավելի շատ են, քան կարող է թվալ առաջին հայացքից (ՀՄԵՀ, էջ 246):

ՏԵՐՄԻՆԱՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆ, գ. **Տերմինների փոխառություն:** Տերմինաշինությունն ու **տերմինափոխառությունն** իրենց պատմությունն ունեն (Ռ.Իշխ., էջ 8): Ինչ վերաբերում է հատկապես **տերմինափոխառության** պատմությանը, ապա դրան ներկա ակնարկում մենք անդրադարձել ենք ավելի փոքր չափով.... (Ռ.Իշխ., էջ 9):

ՏԵՐՄԻՆԱՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ, գ. Տե՛ս ԵԶՐԱԳՈՐԾԱԾՈՒՄ-ի օրինակը:

ՏԵՐՈՒՆԱՊԱՏՎԵՐ, ած. **Տերունատուր**: .... Նորին սրբությունը հորդորեց տոնի խորհրդով զորացած շարունակել իրենց **տերունապատվեր** առաքելությունը ....(ՀՀ, 27.02.2014):

ՏԻԵԶԵՐԱԽՈԿ, ած. Հիմա...տիեզերքը խռովք ու ալեբաշ է, հավերժ՝սրսփուն,//.... անհասանելի, **տիեզերախոկ**, տիեզերամռունչ, անժամանակելի....(ԳԹ, 25.04.2014):

ՏԻԵԶԵՐԱԿԱԶՄԱԿԱՆ, ած. **Տիեզերակազմական** նման պատկերացման դեպքում ահա հասկանալի է դառնում մեջքը պարուրող գոտու նախնական իմաստը (ՍՀ, էջ 214):

ՏԻԵԶԵՐԱՄՌՈՒՆՉ, ած. Տե՛ս ՏԻԵԶԵՐԱԽՈԿ–ի օրինակը:

ՏԻԵԶԵՐԱՊԱՏԿԵՐ, գ. .... Միքայելը նրա ուշադրությունը դարձրեց Շենգավիթի դամբարաններից հայտնաբերված քրեղանին՝ առաջարկելով մեկնաբանություն գտնել Քրիստոսից առաջ երրորդ հազարամյակի կեսերի այդ կավե ափսեի **տիեզերապատկերներին** (ԳԹ, 31.10.2014):

ՏԻԿՆԻԿԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ, գ. Թե ինչ ապագա կունենա Հայաստանում պրոֆեսիոնալ **տիկնիկագործությունը** ապագայում, դժվար է ասել.... (Ազգ, 04.04. 2014):

ՏԻՐՅԱԼ, Ամեն մի ահաբեկյալ, մարզ ու շրջանում էնքան հանքեր կան, որ **տիրյալները** աղի–անալի համը տեսնելով –առնելով… վաղուց համը հանում են, բայց ձեն– ծպտուն հանող չկա ….(ԳԹ, 14.11.2014):

ՏԽՐԱՌԻՐԱԽ, ած. **Միաժամանակ տխուր և ուրախ:** Հիշում եմ Սարիկի ծննդյան 40-ամյակի **տխրաուրախ** օրը՝ 1957 թվականի հունվարի 26-ը (ԱԶ, էջ 422):

ՏՈԼԵՐԱՆՏ, գ. Եվրոպան վաղուց է ցույց տվել, որ ինքը **տոլերանտ** է նման բաների նկատմամբ (Հրապ.,13.05.2014):

ՏՈԼԵՐԱՆՏՈՒԹՅՈՒՆ, գ. Համաձայն չե՞ք այն կարծիքին, որ այդ քվեարկությամբ Եվրոպան ցույց տվեց իր **տոլերանտությունը** (Հրապ., 13.05.2014):

ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐ, գ. **Տոկոսի գումարը:** .....Սահմանել մարման 5–ամյա ժամկետ՝ առանց **տոկոսագումարների** հաշվառման (ՀՀ, 11.06.2014):

ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔ, գ.**Տոկոսի չափը:** «Երկինք համբարձվել ցանկացողները// Կարող են համբարձվել ապառիկ, // Առանց կանխավճարի և զրո **տոկոսադրույքով....»** (ԳԹ, 28.02.2014):

ՏՈՂ–ԽՈՐԱՆ, Եվ կա **տող–խորան**,// ուր հիշողության մոմեր են վառում՝ սերնդեսերո՛ւնդ (ԳԹ, 11.10.2013):

ՏՈՆՈՒՍԱՎՈՐԵԼ, բ. Խատուտիկը օգտագործվում է որպես ջերմիջեցնող, օրգանիզմը **տոնուսավորող** և քրտնամուղ միջոց (ՀԴ, թ. 1, 2014):

ՏՈՏԵՄԱՅԻՆ, ած. **Զարգացման ցածր աստիճանի վրա գտնվող մի շարք ժողովուրդների հավատալիքներում՝ ցեղի նախահորը և հովանավորողը համարվող և պաշտամունքի առարկա դարձած կենդանուն վերաբերող**: Տոհմային նախնիների **տոտեմային** ծագման վերապրուկները պահպանվել են հայ հին ավանդության մեջ (ՍՀ, էջ 279):

ՏՈՒՏՈՒՓԵՏ, ... Հաչոց–մաչոցով մատնում է պահմտոցի խաղացող սուսիկ–փուսիկ աղջիկների տեղը կամ էլ սլանում է տղաների շպրտած **տուտուփետի**, գլխարկի ու գնդակի ետևից .... (ԳԹ,04.10.2013):

ՏՈՒՐԱՐՏԱԴՐԱՆՔ, գ. Դիտվում է նաև **տուրարտադրանքի** դիվերսիֆիկացում, ինչը կառավարության առաջնահերթություններից է (ՀՀ, 13.02.2013):

ՏՈՒՐՊՐՈԴՈՒԿՏ, ... Աշխատանքներ են տարվում զբոսաշրջային նոր հոսքեր ներգրավելու և, հետաքրքիր **տուրպրոդուկտներ** առաջարկելու ուղղությամբ (ՀՀ, 13.02.2014):

ՏՈՒՐՕՊԵՐԱՏՈՐ, գ. ....Պետք է միաժամանակ աշխատանքներ տարվեն և **տուրօպերատորների**, և համայնքների բնակիչների հետ (ՀՀ, 01.11.2014):

ՏՐԱՄԱԴՐՎԱԾՈՒԹՅՈՒՆ, գ. Ամեն ինչ կախված է մեր ընկալումից և տրամադրվածությունից (TVալիք, 25.10.2014):

ՏՐԱՆՇԵՐ, գ. Այլ **տրանշերով** կառուցված հատվածներում նախատեսվում է ճանապարհների շերտերի լայնացում (Հրապ.,12.10.2013):

ՏՐԱՆՍՎԵՍՏԻՏ, գ. Այս տարի երկրների մեծ մասը հրաժարվում է Ավստրիայի **տրանսվեստիտ** մասնակցի պատճառով (Ժող., 28.11.2013):

Ց

ՑԱԽԱՀԱՎԱՔ, գ. Արեգ երրորդը կրտսեր դուստրն է մի այրիացած աղքատ **ցախահավաքի**, որը որոշում է գնալ օտարություն, փող վաստակել և թեթևացնել հոր հոգսերը (ՍՀ, էջ 54):

ՑԱՅՏՆՈՏԱՅԻՆ, ած. Իրավիճակը կկարգավորվի, փոխարժեքը կկանոնակարգվի, և ապրանքների գների **ցայտնոտային** դրությունը կկայունանա (Ժամ.,19.12.2014):

ՑԱՆՑԱԼԱԹ, գ. Ասեղնագործության համար շատ հարմար կտոր է բամբակյա կամ ծակոտկեն **ցանցալաթը** (Զեռ., էջ 36):

ՑԱՆՑԱԿԱՌՈՒՑՈՒՄ, գ. .... Այս հասցեական ութ տարածքի **ցանցակառուցմամբ** քաղաքի ոռոգման ընդհանուր ցանցը կավելանա ևս քսաներկու կիլոմետրով (ՀՀ, 28.03.2014):

ՑԱՆՑԱՀԵՆ, գ. «Հզբոլլահի» և Իսրայելի հերթական հակամարտության՝ Լիբանանի երկրորդ պատերազմի ժամանակ **ցանցահենները** գրոհեցին իսրայելական կայքերը (Ազգ, 16.05.2014):

ՑԱՏԿԱԶՈՒԿ, գ. Տղմային **ցատկաձուկը** կարող է կրծքային լողակներով ցատկոտել ու նույնիսկ ծառերի բներով մի քիչ վեր բարձրանալ (TV մոլ, 13.10.2014):

ՑԵԽԱՆՄԱՆ, ած. Որոշ ժամանակ անց, երբ **ցեխանման** հացի համար երկար հերթեր էին գոյանում, ես գնացի հաց գնելու (Իրատես, 21.03.2014):

ՑԵՂԱԿՑՈՐԵՆ, մկբ. Տարածքային առումով միևնույն առասպելը գործել է Հայոց աշխարհին սահմանակից հնդեվրոպական հին Փորք Ասիայում՝ Փռյուգիայում, որի էթնիկական կազմի հետ **ցեղակցորեն** կապված էին հայերը (ՍՀ, էջ 371):

ՑԵՂԱՆՈՒՆ, գ. **Ցեղի անուն**: Ուրեմն, հավաստվում է Արամ անվան գերակա նշանակությունը, և այդ նույն առասպելաբանական մտածողությամբ այն դիտված է իբրև **ցեղանվան** և երկրանվան հիմք (ՍՀ, էջ 376):

ՑԵՂԱՆՎԱՆԱՏՈՒ, ած. **Ցեղին անուն տված:** Արդ, հայ հին ավանդությամբ՝ Արա Գեղեցիկը որդին է Արամ **ցեղանվանատու** նահապետի, որը միանգամայն համախոս է Պլատոնի հաղորդած փոքրասիական մեռնող-հառնող Էրի առասպելի տվյալներին (ՍՀ, էջ 377):

ՑԵՂԱՍՊԱՆԱԳԵՏ, գ. ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտն այս տարվանից պատրաստում է **ցեղասպանագետներ**՝ մագիստրոսի որակավորմամբ (Եր. համ., թ. 11, 12.2013):

ՑԵՂԱՍՊԱՆԴ, գ. **Ցեղասպանություն**: **Ցեղասպանդի** հուշը յուրաքանչյուրիս մեջ է (Ռադիո, 25.04.2015):

ՑԵՑԱԿԻՐ, ած. **Ցեց կրող,ցեցը կերած:** Համոզված էի, որ այլևս ընդունելի չի լինելու, չէի ուզում կորցնել այն, քանզի ծաղիկներ էի ասեղնագործել **ցեցակիր** տեղերին (ԳԹ, 20.09.2013):

ՑԼԱԾԻՆ, ած. **Ցլից ծնված :** Հայոց հին վեպերում Երուանդը հանդես է գալիս իբրև **ցլածին**, հրաշածնունդ երկվորյակներից մեկը, որը, դարձյալ ըստ այդ վեպի, օժտված է գերբնական հատկանիշներով (ՍՀ, էջ 105):

ՑՆՈՐԻՉ, ած. **Ցնորեցնող:** Իսկ ժամանակի **ցնորիչ** ճախրը շարունակվում է հորիզոնից անդին (ԳԹ, 28.02.2014):

ՑՈՂՈՒՆԱԹԵՐԱՊԻԱ, գ. Գուցե **ցողունաթերապիայի** արդյունքում նրա հիշողությունը ջնջվե՞լ է (ՀԴ.թ.1, 2014):

ՑՐՈՂԱԿԱՆ, ած. **Խուսափողական:** Հոկտեմբերի 28-ին իր հերթական նամակի **ցրողական** պատասխանն է ստացել…. Դավիթ Հարությունյանից (Հրապ., 31.10.2013):

ՑՈՒԳՑՎԱՆԳԱՅԻՆ, ած.Եթե իրավիճակը լիներ իսկապես **ցուգցվանգային**, Հայաստանի համար, ապա Ս. Սարգսյանը ինքը հրաժարական կտար (Ժամ., 01.11.2013):

ՑՈՒՑԱՆԱԿԱԿԻՐ, գ. **Ցուցանակակիր** բոլոր աշխատասենյակների դռները թակելով բացել, գլխավոր բժշկին չեմ գտել (ԼԽ, էջ 17):

ՑՈՒՑԱՊԱՏՎԱՆԴԱՆ, գ. Դեկտեմբերի 10-ին Հայաստանի ազգային գրադարանի մեծ ցուցասրահում տեղի ունեցավ.... «Գրիգոր և Կարապետ Մելքոնյան» հիմնադրամի գործնուեության՝ մասնավորապես 1933-1939թթ. Հայաստանի ազգային գրադարանի թամանյանական մասնաշենքի կառուցման և ֆինանսավորման վերաբերյալ **ցուցապատվանդանի** բացումը (Իրատես, 12.12.2014):

ՑՈՒՑԱՓԱԿ, գ. Հիմա ... տարաժամ է, մահատարաժա՛մ է// մարդկային դժխեմ **ցուցափակերում**....(ԳԹ, 25.04.2014):

ՈՒ

ՈՒԺԱՎԵԿՏՈՐԱՅԻՆ, ած ..... Եվ կամ հեռահաշվարկի համար վերլուծական կարողությունները կաղում են, **ուժավեկտորային** սանդղակն էլ հեղհեղուկ է....(ԳԹ, 14.02.2014):

ՈՒԼՈՒՆՔԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ, գ. **Ուլունքագործության** մեջ օգտագործում են հատուկ տեսակի ամուր թելեր (Ձեռ., էջ 29):

ՈՒԽՏԱՎՈՐԱԲԱՐ, մկբ. **Ուխտավորի նման:** Տոնի առիթով ս.պատարագին **ուխտավորաբար** ներկա էր ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը,ինչպես նաև քաղաքապետ Տարոն Մարգարյանը....(ՀՀ, 24.06.2014):

ՈՒԿՐԱԻՆԱԲՆԱԿ, ած. **Ուկրաինայում բնակվող**: Ուկրաինայից Ռուսաստան տեղափոխված մոտ 180 հազար **ուկրաինաբնակների** մեջ շատ են նաև հայ ընտանիքները (168 ժ., 21.10.2014):

ՈՒԿՐԱԻՆԱՀԱՅ, գ. **Ուկրաինայում բնակվող հայ:** Սփյուռքի նախարարությունը, իբրև նախադեպեր ունենալով իրաքահայերի և սիրիահայերի օրինակները, **ուկրաինահայերի** դեպքում նույնպես կատարում է նույն քայլերը՝ օժանդակություն փաստաթղթային, դպրոցի, կացարանի, աշխատանքի, ինտեգրման և այլ հարցերում (168 ժ., 21.10.2014):

ՈՒՂԵԱՆՑ, գ. ....Կոյուղու ջրերը ողողել էին Չարենցի փողոցը և դեպի Հերացի փողոց տանող ստորգետնյա **ուղեանցը....(**ՀՀ, 17.09.2014):

ՈՒՂԵԳՐԵԼ, բ. Զինակոչիկների կողմից առարկությունների դեպքում հանձնաժողովը **նրանց ուղեգրում է** ստուգիչ հանձնաժողով (Հրապ., 01.03.2014):

ՈՒՂԵԳՐՈՒՄ, գ. ՀՀ առողջապահության նախարարի հրամանով կանոնակարգվել են մարզերից Երևանի ծննդատներ հղիների **ուղեգրումները** (ՀՀ, 30.01.2014):

ՈՒՂԵԳՐՎԵԼ, բ. Հայտարարված առողջապահական միամսյակի ընթացքում 2427 կին **ուղեգրվել** է լրացուցիչ հետազոտության (ՀՀ, 17.01.2014):

ՈՒՂԵԿՑՈՐԴՈՒՀԻ, գ. **Կին ուղեկցող:** Վալերիկ Դ-ն անպարկեշտ վերաբերմունք է դրսևորել բոլոր **ուղեկցորդուհիների** նկատմամբ (Համացանց, 21.11.2013):

ՈՒՂԵՂԱԼՎԱՑՈՒՄ, գ. Չեմ ուզում,որ մամուլի ազատության անվան տակ, արտասահմանյան ֆինանսավորմամբ, հակազգային և հակապետական **ուղեղալվացում** իրականացնեն (Իրավունք, 05.12.2014):

ՈՒՂԵՂՆԱԲՈՆԱԲԱՐԻՉ, գ. Հարգելի Դիանա, վերջակետ դրեք հայկական **ուղեղնաբոնաբարիչ** սերիալներին (Համացանց, 31.10.2013):

ՈՒՂԵՎՈՐԱԿԱՄՐՋԱԿ, գ. **Ուղևորների համար կամրջակ**։ Նստեցման ելքերի քանակը կավելանա ևս 4–ով՝ կավելանան երկու **ուղևորակամրջակ** և ուղևորասանդուղքով նստեցման 2 կայանատեղի (ՀՀ, 15.02.2014)։

ՈՒՂԵՎՈՐԱՍԱՆԴՈՒՂՔ, գ. **Սանդուղք ուղևորների համար։**

Տե՛սՈՒՂԵՎՈՐԱԿԱՄՐՋԱԿ–ի օրինակը։

ՈՒՂԵՎՈՐԱՍՊԱՍԱՐԿՈՒՄ, գ. **Ուղևորների սպասարկումը**։ Օդանավակայանի **ուղևորասպասարկման** թողունակությունը կհասնի տարեկան 4 միլիոնի (ՀՀ, 15.02. 2014)։

ՈՒՂԵՎՈՐԱՓՈԽԱԴՐԵԼ, բ. «Էյր Արմենիա» ավիաընկերությունը…. մինչև անցած տարվա դեկտեմբերը միակ հայկական **ուղևորափոխադրողն** էր (Ժող., 31.01.2015)։

ՈՒՌԿԱՆԱՎՈՐՎԵԼ, բ. ....Փողի հոտն առած մատուցողուհիների խատուտիկ վտառը խմիչքի գոլորշիներում լողում ու **ուռկանավորվելու** տենդով էր բռնվել.... (ԳԹ, 30.05.2014)։

ՈՒՌՈՒՑՔԱՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. Ինձ մոտ՝ **ուռուցքահոգեբանության** խմբում, շատերը ուրիշ մարդ դառնալու անհրաժեշտության առջև էին կանգնել (TV մոլ, 03.03.2014)։

ՈՒՍԱԲԱՐՁԻԿ, գ. **Ուսի համար բարձիկ**։ Հորանց տանը մի անգամ կարել էր տվել **ուսաբարձիկներով** վերարկու և հագից չէր հանում (ՀՄ, էջ 91)։

ՈՒՍԱՆՈՂ–ՓՈՐԽՆԱԿ, Առաջարկվել է աշխատանքային/հարկային օրենսդրությամբ հստակ սահմանել **ուսանող–փոխնակների** կարգավիճակը ....(ՀՀ, 16.07.2014)։

ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ, ած. Դպրոցներում շատ ավելի մարդ է աշխատում, քան դրույքների թիվն է, իսկ ընթացող կրճատումների հիմնական մասը վերաբերում է վարչական **ուսումնաօժանդակ** ու տնտեսական անձնակազմերին (Համացանց, 09.02.2014)։

ՓԱԹԵԹՎԱԾՔ, գ. **Փաթեթավորում:** ....Պահանջվող տեղեկատվությունը պետք է տպված լինի խաղալիքի **փաթեթվածքի** վրա կամ դրան ուղեկցող փաստաթղթերում (ՀՀ, 07.03.2014):

ՓԱԹԻԼԱԲՈՒՅՐ**, ած. Փաթիլի բույր ունեցող: Փաթիլաբույր** գիշեր… մի նորաթուխ, զզզված փաթիլ ներս է ընկնում, նստում ծաղկամանի եզրին (TV ալիք, 24.11.2014):

ՓԱԿՈՒՂԱՅԻՆ, ած. Բայց դրանք էլ լիովին մերկացրին Արևմուտքի անզորությունը և առաջին հերթին այն **փակուղային** վիճակը, որում Արևմուտքը հայտնվեց Սիրիայի առթիվ ԱՄՆ-ի որդեգրած հիմար դիրքորոշման պատճառով (Իրատես, 14.03.2014):

ՓԱՅԱԲԱԺԻՆ, գ. Ամբիոններին կոթնած, ուրանո՛ւմ են, կեղծում// Հանուն **փայաբաժնի**, հանուն, հանուն , հանուն.....(ԳԹ,15.11.2013):

ՓԱՅԼԱՆԱԽՇ, ած. ....Կետազարդարման, փորագրման և փայլեցման տեխնիկայով պատկերված են սուր ծայրերով վեր ուղղված հավասարասրուն եռանկյունիներ՝ լցված **փայլանախշ** գծերով (ՀՄԵՀ, էջ 225):

ՓԱՌԵՐԳ, գ. **Փառաբանող երգ:** Չարենցի այս բանաստեղծությունը **փառերգի** համար չէ (Համացանց, 16.12.2014):

ՓԱՍՏԱԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ, ած. ....Իմ «Գիրք վշտի և հպարտության» մատյանը, որը արցախյան զոյամարտում զոհված և անհայտ կորած 105 քաջորդիների կյանքի **փաստա–գեղարվեստական** պատումն էր (ԳԹ,11.10.2013):

ՓԱՍՏԱԹՂԹԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ, գ. **Փաստաթղթերի շրջանառություն:** ՀՀ տարածքային կառավարման նախարարի հանձնարարականով համայնքներում **փաստաթղթաշրջանառությունը** պետք է իրականացվի էլեկտրոնային եղանակով (Ժող., 17.10.2013):

ՓԱՍՏԱՎԱՎԵՐԱԳՐԱԿԱՆ, ած. **Փաստերով վավերացնող:** Իմ համերգների ընթացքում… ցուցադրում եմ ցեղասպանության մասին **փաստավավերագրական** նյութեր (TV ալիք, 28.04.2014):

ՓԱՐԹԻ, գ. **Միջոցառում:** Բոլոր հնարավոր երեկոներին, հարսանիքներին, **փարթիներին** անպայման ներկա եղեք (Հրապ., 12.10.2013):

ՓԱՓԼԻԿՈՒԹՅՈՒՆ, գ. **Փափլիկ լինելը:** Մարդագայլ հարսը, գայթակղվելով տղամարդ հյուրի մարմնի սպիտակությունից և **փափլիկությունից**, գիշերով կամենում է նրան ուտել, որի համար պատժվում է (ՍՀ, էջ 74):

ՓԵՏՐԱԾԱԾԿ, գ. **Փետրաածաձկույթ:** Դրանք բոլորը միասին ստեղծում են **փետրաածաձկի** այն գեղեցկությունը, որով հռչակված է սիրամարգը (TV մոլ, 02.02.2015):

ՓՇԱՎԱՐԴ, գ. Հայկական տարանունները, առվուկ, մասպար, մասրավարդ, վայրի վարդ, **փշավարդ** (ՀԴ, թ. 1, 2014):

ՓՇԵՋՈՒՐ /բսբ./ Տե՛ս ՓՐՓՐՈՒԿ–ի օրինակը:

ՓՈԹՈՐԿԱՇԱՏ, ած. **Անկայուն՝ անհանգիստ: Փոթորկաշատ** մեր ժամանակներում Լևոն Անանյանը իր նավը վարեց հմուտ նավավարի իմացությամբ (ԳԹ, 06.09.2013):

ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑԱՅԻՆ, ած. **Փոխադրամիջոցներին հատուկ**: Այս պատճառով էլ կամուրջները ոչ միայն որպես **փոխադրամիջոցային** գործառույթ ունեին, այլև շինարարության համար լրացուցիչ տեղ էին (TV մոլ, 07.05.2014):

ՓՈԽԱՆՑԱՏՈՒՓ, գ. **Փոխանցման տուփ:** Ձեռքի **փոխանցատուփի** լծակը սահուն ենթարկվում էր դաստակիս շարժումներին.... (Իրատես, 21.03.2014):

ՓՈԽԱՆՑԱՓԱՅՏԻԿ, գ. ....Ուկրաինական ճգնաժամը, գլոբալացմանը զուգահեռ ազգայնական գերզարգացումները, համաշխարհային տնտեսության խաչմերուկներում դրամական արժեզրկումների խցանումները **փոխանցափայտիկի** պես փոխանցվելու են 2015–ին (ԳԹ, 26.12.2014):

ՓՈԽԱՐԺԵՔԱԽԱՂ, գ. **Փոխարժեքի տատանումները**: Հայաստանյան բանկերի «տարօրինակ» **«փոխարժեքախաղերը»** (Իրավունք, 05.12.2014):

ՓՈԽԲԱՑԱՌՈՒՄ, գ. **Փոխադարձ բացառելը**: ....Ընտրվում է ամենակարճ ու նվազ կենտրոնացում պահանջող ճանապարհը՝ **փոխբացառումի** հանգեցրած փոխլրացումից դեպի կողմնորոշում (ԳԹ, 21.02.2014):

ՓՈԽԳՈՐԾՈՒՆԱԿ, ած, **Փոխադարձ կերպով գործունակ:** Եվ պատահական չէ, որ այսօր Հայաստան աշխարհն ունի անկախ պետականություն, տարածաշրջանում **փոխգործունակ,** մարտունակ և մրցունակ բանակ .... (ՀՀ, 21.04.2015):

ՓՈԽԴԵԿԱՆ, գ. **Դեկանի տեղակալ**: ....ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի **փոխդեկան**, թուրքագետ Ռուբեն Մելքոնյանը նախ նշեց, որ իր կարծիքով այս այցը

պայմանավորված չէ Թուրքիայի արտաքին քաղաքականության ներսում էական փոփոխությունների հետ.... (Իր.,10.12.2013):

ՓՈԽԴԵՍՊԱՆ, գ. **Դեսպանի տեղակալ:** Հանդիպմանը մասնակցել են ԱՄՆ-ի **փոխդեսպան** Փրայս Քլարկը և Քրիստոֆեր Անդերսոնը (Ժամ., 16.04.2014):

ՓՈԽԶԻՋՈՒՄԱՅԻՆ, ած. **Փոխադարձ զիջելը :** .... Ինչը ենթադրում է հարցի **փոխզիջումային** լուծում (ՀՀ, 18.03.2014):

ՓՈԽԸՆԿԱԼՈՒՄ, գ. **Իրար փոխարեն ընկալելը**: Մահը՝ քուն, քունը մահ **փոխընկալումը** արտահայտություն է գտել նաև լեզվի մեջ (ՍՀ, էջ 387):

ՓՈԽԽՄԲԱԳԻՐ, գ. **Խմբագրի տեղակալ: Փոխխմբագիր**՝ Գառնիկ Գևորգյան (168 ժ., 28.01.2014):

ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾՈՒԹՅՈՒՆ, գ. **Փոխադրաձ կապակցվածություն:** Դուք հակված եք մեղադրել շրջապատի մարդկանց, ինչն էլ նպաստում է փոխկապակցվածությանը (Համացանց, 27.02.2014):

ՓՈԽԿԱՊԱԿՑՎԵԼ, բ. **Փոխադարձաբար կապակցվել**: Ես առաջարկում եմ այս օրենքում **փոխկապակցված** անձանց հասկացություն, որ եթե մեկը մյուսի քավորն է , չի կարող պատահել, որ քավորը կամ սանիկը լինի հիմնարկի ղեկավար (Համացանց, 09.02.2014):

ՓՈԽՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ, գ. **Փոխադարձ համագործակցություն:** Դմիտրի Մեդվեդևը նշել է «Ձեր գործունեության ավարտին կուզեի իմ երախտիքի խոսքն ասել Ձեզ՝ ՀՀՌԴ մեր **փոխհամագործակցության** համար» (Համացանց, 18.04.2014):

ՓՈԽՀԱՋՈՐԴՈՒՄ, գ. **Իրար հաջորդելը:** Եթե նկատի առնենք այս փոխհակադրության ոչ թե իրական, այլ սիմվոլիկ փոխաբերական առումները, ապա պարզ կդառնա դրանց **փոխհաջորդումն** ու փոխակերպումը (ՍՀ, էջ 285):

ՓՈԽՆԵՐԹԱՓԱՆՑՈՒՄ, գ. **Փոխադարձ ներթափանցում**: Մենք սահմանային **փոխներթափանցումների** երկիր ենք (ԳԹ, 29.11.2013):

ՓՈԽՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ, գ. **Ներկայացուցչին փոխարինող անձ:** Աշխատանքի և սոցիալական հարցերի պաշտոնը զբաղեցնում է ՀՅԴ գերագույն մարմնի **փոխներկայացուցիչ** Արսեն Համբարձումյանը (Ժող.,26.11.2013):

ՓՈՂԱԲԵՐ,ած. **Փող բերող, շահույթաբեր**: .... Բայց՝ շատ զգույշ, առանց հանրությանը տեղյակ պահելու, այլապես խոստովանեին էկոնոմիկան **փողաբեր** չէ.... (ԳԹ, 15.11.2013):

ՓՈՂՈՑԵՓՈՂՈՑ, գ. **Փողոցից փողոց:** Փուչիկի նման թեթև, շենքերի գույնզգույն կտուրների վրայով **փողոցեփողոց** է թռչում օրվա արդեն պղնձագույն, թանձր արևը (ԼԽ, էջ 21):

ՓՈՍԱՆՈՐՈԳՈՒՄ, գ. **Փոսալցում, ճանապարհի փոսերը լցնելը:** Կիրականացվեն նաև **փոսանորոգումներ** (Հայլուր, 30.01.2014):

ՓՈՐԱԳՐԱՔԱՐ, գ. **Փորագրված քար:** Ինչպես տեղեկացել ենք, գիշերային ժամերին հատվել են ծառեր, կոտրել են «Ծիծեռնակաբերդ» գրության **փորագրաքարը** (Ժամ., 06.11.2014):

ՓՈՐԱՓՔԱՆՔ, գ. Մսից հրաժարվելով՝ Երրորդ ռայխի առաջնորդը հույս ուներ ձերբազատվել **փորափքանքից** (TV մոլ, 19.01.2015):

ՓՈՐՁԱԳԵՏ-ՎԵՐԼՈՒԾԱԲԱՆ, գ….. «Իրատես»-ի հարցերին պատասխանում է տարածաշրջանային հարցերով **փորձագետ- վերլուծաբան** Սարգիս Հայրապետյանը (Իրատես, 27.03.2015):

ՓՈՐՁԱԳՆԴԱԿ, գ. Ձեռքի հետ **փորձագնդակ** են գլորում՝ գուցե Հայաստանում կամ Արցախում մեկը կուլ կտա՞ խայծը (Հրապ., 31.10.2014):

ՓՈՐՁԱՔՐԵԱԳԻՏԱԿԱՆ, ած. Տեղայինը կվարեն մարզային վարչությունների **փորձաքրեագիտական** բաժանմունքները կամ խմբերը....(ՀՀ, 28.03.2014):

ՓՈՔՐԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ, ած. Քուփերը շարունակում էր նկարահանվել սերիալներում և **փոքրբյուջետային** ֆիլմերեում (TV մոլ, 09.02.2015):

ՓՐԿԱԼՈՒՅՍ, ած. **Փրկիչ լույս:** Հրաշալի հանգաբանությունից առավել՝ այնտեղ կգտնեք անեղծ ու տառապյալ հոգի, որում ճակատագրի կամոք խտացած խավարից բանաստեղծությունը բացվում է իբրև **փրկալույս** պատուհան (Հրապ., 21.05.2014):

ՓՐԿԱՎԱՅՐ, գ. **Փրկության վայր:** Միակ **փրկավայրս** ձեղնահարկն էր, որտեղ թաքնվում էի բոլորից (TV ալիք, 13.01.2014):

ՓՐԿԱՐԱՐԱՈՐՈՆՈՂԱԿԱՆ, ած. **Փրկարարաորոնողական** աշխատանքները շարունակվում են (Համացանց, 13.03.2014):

ՓՐԿՉԱԲԱՆԱԿԱՆ, ած. Սակայն առասպելը, հետագայում կապվելով **փրկչաբանական** մտահայեցողություններին, կապվել է վախճաբանական առասպելների գաղափարաբանությանը (ՍՀ, էջ 456):

ՔԱՀԱՆԱՅԱՏՈՀՄ, գ. **Քահանայի տոհմ:** Իհարկե թե' որպես մեծ մարդ ու մարդասեր, հայ ու հայրենասեր, թե' որպես պապենական **քահանայատոհմի** զավակ՝ հենց նա պիտի հնչեցներ այսպիսի հոգեհանգիստ, բանաստեղծական այսպիսի պատարագ, որը միայն ցավի ու ընդվզումի խոսք չէր (ՀՄԵՀ, էջ 469):

ՔԱՂԱՔԱԲՆՈՒՅԹ, ած. Նա իր ամբողջ նկարագրով իմացական ու **քաղաքաբնույթ,** օտար բառերով ասած՝ ինտելեկտուալ և ուրբանիստական արվեստի երդվյալ կողմնակիցն էր (ԼՀ, էջ 14):

ՔԱՂՏԵԽՆՈԼՈԳ, գ. Որպես **քաղտեխնոլոգներ** դիմել ենք ոչ միայն Աշոտ Մանուչարյանին, այլև Վարդան Խաչատրյանին (Հրապ., 31.10.2013):

ՔԱՂՑԱԴԻՄԱՑԿՈՒՆ, ած. **Քաղցին դիմացող:** …. Մեր ցրտադիմացկուն, մեր **քաղցադիմացկուն** , անգթության ու անտարբերության սովոր ճնճղուկները…. (ԳԹ, 10.10.2014):

ՔԱՄԱՆԻ, գ. **Նվագարան:** Մարինե Ասատրյանը վստահեցնում է, որ ուղը, քամանչան, **քամանին** փոշոտ անկյուններից դուրս կբերվեն (Հրապ., 29.02.2014):

ՔԱՅԼԱԿ, գ. **Տեղաշարժման խնդիրներ ունեցող անձանց համար հատուկ սարք, որի օգնությամբ նրանք քայլում են: Քայլակներից** և սայլակներից օգտվող հաշմանդամություն ունեցող բոլոր անձինք պետք է անպայման հաճախեն դպրոց և ստանան լիարժեք կրթություն (Իրատես, 07.03.2014):

ՔԱՅԼԱՐՇԱՎԵԼ, բ. **Քայլելով արշավել:** ....**Քայլարշավում** ենք դեպի Երասխավան (Իրատես, 07.02.2014):

ՔԱՆԴԱԿԱՆԱԽՇԵԼ, բ. **Քանդակներով նախշազարդել:** Խաչքարային արվեստի երկրորդ ուղղությունը նույնպես, ըստ էության, օգտագործում է սալը բազմաթիվ խաչերով հարդարելու պարզ հիմնաձևը, սակայն այն ձգտում է անպայմանորեն **քանդականախշել** եզրագոտին, ոչ բարդ հյուսածո զարդերով ու վարդյակներով լրացնել խաչանշաններից ազատ համարյա ողջ տարածքը (Հ.Պետրոսյան, էջ 202):

ՔԱՌՍԱՑՎԵԼ, բ. **Քառսի վերածվել:** Բանաստեղծն այս կերպ բոյկոտում է **քառսացվող** իրականությունը, գուցե հոգու խորքում փայփայելով մի հույս՝ նոր կերպարանքով վերադառնալ մաքրված աշխարհ (ԳԹ, 20.06.2014):

ՔԱՌԱԼԻՔ, գ. **Քառակի ալիք:** Երեկ համարյա ինքնամոռացության գրկից հանկարծ օդի մեջ հրավառվում է մայդանական ընդվզման **քառալիքը** (Հրապ., 21.01.2014):

ՔԱՌԱՏՈՆ, գ. **Քառակի տոն**: ....Երկու անգամ նկարչական ցուցահանդես բացեցին՝ նվիրված մայիսյան եռատոնին, որը Մարտակերտում շարունակվեց որպես **քառատոն**, քանի որ հունիսի 28-ին Մարտակերտի ազատագրման 20-ամյակն էր (Իրավունք, 19.02.2014):

ՔԱՐԱԲԵՏՈՆԵ, ած. **Քարաբետոնից:** Ապակուց պատրաստված երկհարկանի կառույց էր՝ **քարաբետոնե** օժանդակ շինություններով (Ազգ, 04.04.2014):

ՔԱՐԱԳՐԵԼ, բ. Այն, ինչ Հրանտ Մաթևոսյանը մանրակրկիտ ու սիրով **քարագրում** էր մեծ աշխարհի իր անկյունում. Օվկիանոսից այն կողմ, ճիշտ նույն ժամանակ անում էր և Գաբրիել Գարսիա Մարկեսը իր մոգական ռեալիզմով (ԳԹ, 14.02.2014):

ՔԱՐԱԹԱՓ, գ.Կկառուցվեն արտաքին ու ներքին արգելապատնեշներ՝ ժայռի և ճանապարհի, ձորի և ճանապարհի միջև՝ **քարաթափներից** պաշտպանվելու նպատակով (ՀՀ, 29.01.2014):

ՔԱՐԱԹԱՓՈՒՄ, գ. ....Վանաձոր–Ալավերդի ճանապարհահատվածի մի քանի մասերում էլի փլուզումներ ու քարաթափումներ եղան վերջին օրերին, որոնց հետևանքները արագ վերացվել են (ՀՀ, 05.06.2014):

ՔԱՐԱԹՈՌ, գ. **Քարից աթոռ:** Արգամը.... քարշ գալով, առանց հենակի դուրս էր գալիս տնից ու հենվելով պատին տեղավորվում **քարաթոռին** (ԳԹ, 08.11.2013):

ՔԱՐԱԿՈԾՎԵԼ, բ. Սուլում է հին ցավի միջից,// Հոգին՝ աստղերից պայծառ, // Մի երգ է հիշել պոետը, // Քեզ նման **քարակոծված** իմ ծառ.... (ԳԹ,13.12.2013):

ՔԱՐԱՆԱԽՇ, ած. Հազնում եմ **քարանախշ** կոշիկներս// ու շտապում մասնակցելու առաջիկա Ջրհեղեղին.... (ԳԹ,19.07.2013):

ՔԱՐԵԿԱԶՄ, գ. Քարից կազմված: Մեր **քարեկազմ** հրատարակությունները գրքի միջազգային շուկայում եզակի են (Ազգ, 21.11.2014):

ՔԱՐՈԶՉԱՆՅՈՒԹ, գ. **Քարոզելու նյութ**: **Քարոզչանյութը** բերելու համար բեռնատար էր տարել, բայց ամոթ չէր, որ նման շքեղ աթոռ ունեցողը բեռնատարի խցիկում, վարորդի կողքին նստեր (ՀԲ, էջ 125):

ՔԱՐՏԱՊԱՆ, գ. **Քարտատեր:** ....Արարատբանկը հրապարակում է Diners Clab եռամսյակային ամսագիր **քարտապանների** համար՝ նրանց տեղեկացնելով

Հայաստանում և աշխարհում իրենց հասանելի արտոնությունների ու նոր առաջարկների մասին (Իր., 12.06.2013):

ՔԵՐԱԿԱՆԱԹԱՓ, ած. .... Հայոց լեզվի ողնաշարը ջարդելու գնով առաջարկեց իր էքսպերիմենտալ դպրոցի «Ծուղրուղու» այբբենարանը, վրադիր էլ՝ **քերականաթափ** մյուս դասագրքերը (ԳԹ, 06.12.2013):

ՔԹԱՀՈՍՈՒԹՅՈՒՆ, գ. **Քթից հոսելը:** Ալերգիաները ի հայտ են գալիս ծաղկման շրջանում, սկսվում է **քթահոսություն** և արցունքահոսություն (Տն առ., թ.18, էջ 14, 2014):

ՔԹԱՅԻՆ, ած. **Քթով կատարվող**: Քթի կոտրվածքի դեպքում վնասված հատվածը այտուցվում և ցավում է, ... դժվարանում է **քթային** շնչառությունը (TV մոլ, 14.07.2014):

ՔԹԱՇՐԹՈՒՆՔԱՅԻՆ, ած. **Քթին և շրթունքին վերաբերող**: Եթե շատ հուզվելիս, վախից կամ ընկճվածությունից սկսում են առատ քրտնել մարդու մարմնի առանձին հատվածներ (ձեռքի ափերը, անութները, **քթաշրթունքային** հատվածը, թիկունքը), ապա պատճառը դյուրագրգիռ նյարդային համակարգն է (TV մոլ, 07.05.2014):

ՔԻԴՆԵՓԻՆԳ, գ. **Երեխաներ առևանգողներ:** Վտանգ կա, որ այսօրվա ծծակագողերը վաղը կարող են գործիք դառնալ **քիդնեփինգի**՝ երեխաներ առևանգող հանցախմբերի ձեռքին (ՉԻ., 28.11.2013):

ՔՆԱԿԱՐՈՏ, ած. **Քնի կարոտ:** .... Եվ «մահացավ»....չկարողացա մարսել, չէի ուզում, որ այն շոշափելի իրողություն դառնա, ինչպես դեռ տաք, **քնակարոտ** անկողինս, ու հեռախոսը, որ սառել–մնացել էր իմ դողացող ձեռքում (ԳԹ, 06.12.2013):

ՔՆԱՐԱԷՊԻԿԱԿԱՆ, ած. **Քնարավիպերգական:** Գիրք է այն՝ քնարական ու **քնարաէպիկական** փոքրիկ պատումներով ամբողջացած, ինքնատիպ մի կառույց.... (ԳԹ, 31.01.2014):

ՔՆԱՐԱԿՈԼՈՐԻՏԱՅԻՆ, ած. **Կանացի ձայնի տեսակ:** 1922 թ. այս օրը Կահիրեում ծնվել է Գոհար Գասպարյանը՝ հայ օպերային արվեստի մեծագույն **քնարակոլորիտային** սոպրանո, ԽՍՀՄ ժողովրդական արտիստուհի (Ժող., 14.12.2013):

ՔՎԱԶԻՊԵՏՈՒԹՅՈՒՆ, գ. **Կեղծ պետություն:** Սադրանքի իմաստի քննությունը զուտ Ադրբեջանի պետական շահի տեսակետից անիմաստ է, քանզի դա ոչ թե իրական պետություն է, այլ «Բրիթիշ Պետրոլիումին» կից **քվազիպետություն**, որի կառավարումն արտաքին է (Իրավունք, 14.11.2014):

ՔՎՈՏԱՎՈՐԵԼ, բ. Ելույթների քանակը խիստ **քվոտավորված** է և սահմանափակ... (168 ժ., 28.11.2014):

ՔՎՈՏԱՎՈՐՎԵԼ, բ. …. Հայաստանի բողոքավոր զանգվածը ստիպված է բավարարվելու փոփոխությունների այն փշրանքներով, որ առաջարկում է բուրժուազիան՝ զոհելով մենաշնորհի և **քվոտավորված** բիզնեսի արդյունքում վաստակած միլիարդներից որոշ մաս,(Ազգ, 07.11.2014):

ՔՐԴԱԽՈՍ, ած. **Քրդերեն խոսող**: Գավառների հայերը հիմնականում **քրդախոս** են (Իր., 19.12.2013):

ՔՐԵԱՕԼԻԳԱՐԽ, գ. Խոսքը **քրեաօլիգարխների** մասին է (Ժող., 26.11.2013):

ՔՐԵԱՕԼԻԳԱՐԽԻԿ, գ. ՀՀ-ում առկա է **քրեաօլիգարխիկ** ոստիկանական ռեժիմ (Հրապ., 08.11.2013):

ՔՐԻՍՏՈՍԱՀԻՄՆ, գ. **Քրիստոսի հիմնած**: …. Զանգերի ղողանջների ներքո թափորով առաջնորդվել են **Քրիստոսահիմն** Մայր Տաճար, ուր իջման ս.սեղանի առջև կատարվեց միասնական գոհաբանական աղոթք (ՀՀ, 14.10.2014):

Օ

ՕԳՏԱՀԱՇԻՎ, գ. **Օգտատերի հաշիվը համացանցում:**

ՕԴԱՋՏԻՉ, գ.....Շրջակա միջավայրի աղտոտվածության պատճառով ստիպված է եղել մշտապես գնել շնչադիմակներ, ինչպես նաև ձեռք բերել **օդազտիչ** և վազքուղյակ (Ազգ, 07.03.2014):

ՕԴԱՊԱՇՏՊԱՆԻՉ, ած. **Օդում եղած վարակներից պաշտպանող:** Այդ գործողությունը կատարում են օդապաշտպանիչ դնչկալով, առանց որի անհնար է աշխատել /Հրապարակ, 13.11.2013 /:

ՕԴԻՈԶ, Ու անգամ այնպիսի **օդիոզ** կերպար, ինչպիսին Վարդան Ղուկասյանն է, նրանց մասին ռիսկ չի անի ասի՝ էնքան խաղեր են խաղացել, որ հիմա քաղաքականապես հարուստ մարդն էլ չի հասկանում, թե նրանք ի՞նչ են ուզում ընդհանրապես (Ազգ, 17. 10.2014):

ՕԹԵՎԱՆԱՏՆԱՅԻՆ, ած. Ընդհանրապես **օթևանատնային** բիզնեսը, ըստ զրուցակցիս, կրում է սեզոնային բնույթ (ՀՀ, 01.11.2014):

ՕԹԵՎԱՆԱՏՈՒՆ, գ . …. Դսեղում այս պահին լիարժեք գործում է 4–5 **օթևանատուն** (ՀՀ, 01.11.2014):

ՕԼԻԳԱՐԽԱԹԱՓԵԼ, գ. **Օլիգարխներից ազատել:** Սերժ Սարգսյանը ….ցանկանում էր օլիգարխաթափել քաղաքական դաշտը /Իրատես,17.03.2015 /:

ՕԼԻԳԱՐԽԱՀԵՆ, ած. …Ոչ մեկի անձնական փիարը չիրականացնող թերթ ունենալն այսօր ավելորդ շռայլություն է մեր **օլիգարխահեն** ու բևեռացված, բարիկադավորված հասարակության համար (Ազգ, 14.03.2014):

ՕԼԻԳՈՊՈԼԻԱ, Տիգրան Սարգսյանի հռչակած **օլիգոպոլիաների** դեմ պայքարը նույնպես քիչ արդյունավետ էր (Ազգ, 11.04.2014):

ՕՂԱԿԱՊԱՏԵԼ, բ. **Օղակներով պատել:** Չնայած այժմ այդ վայրերում վագրեր վաղուց չկան, սակայն պարանոցը և ոտքերը **օղակապատելու** սովորույթը մնացել է (TV մոլ, 07.05.2014):

ՕՄՈՆԱԿԱՆ ,(ռազմ). Օդակայանում տիրություն էին անում աղրբեջանական **օմոնականները**, որոնք ձերբակալեցին ինձ (ԳԹ, 29.11.2013):

ՕՊՏԻՄԱԼՈՒԽԱՅԻՆ, ած. Անցած ուստարում համալսարանական ցանցից **օպտիմալուխային** կապով միացավ նաև 8-րդ մասնաշենքը (Եր. համ., թ. 11, 12.2013):

ՕՋԱԽԱՅԻՆ, ած. **Թոքաբորբի տեսակ**: **Օջախային** թոքաբորբը կարող է այդպես ծանր չսկսվել…. (TV մոլ, 20.01.2014):

ՕՏԱՐԱՀԱՃ, ած. **Օտարներին հաճոյառող**: Օ՜, մայր լեզու, հույժ տիրական իմ բարբառ, //նետված անհոգ ընչաքաղցին՝ **օտարահաճ** ու կծծի,// Այսօր արդեն կուլ ես գնում/ հանապազօրյա հացին….// (ԳԹ, 31.01.2014):

ՕՏԱՐԱՍՏԵՂԾ, ած. **Օտարների ստեղծած:** …Որ երեխաները, թոռները նորմալ հայկական թեմայով մուլտֆիլմեր նայեն, ոչ թե ստիպված բավարարվեն միայն **օտարաստեղծ** մուլտֆիլմերով՝ ճապոնական Նարուտո, իսլամական Ալադին կամ ռուսական «Մաշան և արջը» և այլն (Իրատես, 14.03.2014):

ՕՏԱՐԱՏՈՒՐ, ած. Դրանից էլ բաղադրվել են Արմէն և Արմէնիկք երկրի ու ցեղի **օտարատուր** անունները (ՍՀ, էջ 376):

ՕՐԱԳՐՈՒՄ, Տե՛ս ՀՈՒՇԱՅԻՆ-ի օրինակը:

ՕՐԱՀԱՑ, գ. **Օրվա հաց:** Մեր երկրի ամեն մի բնակչի համար, որոնք ունեն սովորական օրահացի խնդիր, իրոք կենսական նշանակության հարց է, թե ի վերջո ի՞նչ է մեզ խոստանում ՄՄ-ն և կարող է այն առաջ բերել թանկացումներ (Իրավունք, 07.02.2014):

ՕՐԱՉԱՓ, գ. **Դրամի կանխիկացման օրական Սահմանաչափ:** Սահմանեք **օրաչափ:** Սահմանելով կանխիկացման օրական ոչ մեծ սահմանաչափ՝ Դուք ապահովագրում եք Ձեր գումարը հնարավոր հափշտակումից (168 ժ., 16.10.2014):

ՕՐԳԱՆԱԿԵՐՊ, ած. Անունները փնտրում ես, փնտրում ու մարդաբանորեն ներկայիս մարդկանց հետ առնչություն չունեցող օրգանակերպ բաներ ես տեսնում (Համացանց, 07.05.2013):

ՕՐԻՆԱՀՆԱԶԱՆԴ, ած. **Օրենքին հնազանդ:** ....Կդառնա **օրինահնազանդ** հրաշալի քաղաքացի... (Իրատես, 07.02.2014):

ՕՐԻՆԱՃԱՆԱՉ, ած. **Օրենքը ճանաչող**: Մոսկվայում **օրինաճանաչ** ներգաղթյալների թիվը հասել է 2.1 միլիոն մարդու (168 ժ.,16.10.2014):

ՕՐ–ԿԵՆԴԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Կենդանության օրոք, կենդանի ժամանակ**:

ՕՖՇՈՐԱԳԵՏ, գ. (հեգն.) **Օֆշորի հետ ունեցած կապերով հայտնի:** Դե իհարկե, ուրախ կլինեն, և ինչպես ուրախ չլինել, եթե վարչապետի նման մեծն օֆշորագետը ՍԴՀԿ-ն իրենով անի /Ժողովուրդ, 28.11.2014 /:

ՕՖՇՈՐԱՅԻՆ, ած.

Ֆ

ՖԱՆՏԱՍՄԱԳՈՐԻԱ, գ. Ա.Այվազյանի ստեղծագործական ողջ դաշտն է կառուցապատված իրականության, **ֆանտասմագորիայի** և աբսուրդի իր իսկ թրծած աղյուսներով (ԳԹ, 22. 11.2014):

ՖԱՇԻՍՏԱԲԱՐՈ, ած. **Ֆաշիստի բարք ունեցող:** Ֆաշիստաբարո ջարդարարներին չեն զսպում անգամ փոքրիկի աղեկտուր ճիչերը (Իրատես, 12.12.2014):

ՖԱՇԻՍՏԱՄԵՏ, ած. **Ֆաշիստամետ** արմատական Դմիտրի Յարոշի «Աջ հատվածը» ստացել է 2 .տոկոսից պակաս քվեներ….(Ազգ, 31.10.2014):

ՖԱՐՄԱՏԵԽՆԻԿԱ, Երրորդ փուլն ավելի շատ կապված է **ֆարմատեխնիկայի** հետ, ...(ՀՀ, 15.03. 2014)։

ՖԵՅՍԲՈՒՔ, **«Ֆեյսբուք»** սոցիալական կայքում գործում է նաև երիտասարդության հարցերի խորհրդի էջը (ՀՀ, 13.03. 2014)։

ՖԵՅՍԲՈՒՔԱՀԱՅՈՒՀԻ, գ. **Ֆեյսբուքից օգտվող հայուհի:** Սիրելի **ֆեյսբուքահայուհի**, շնորհավորում եմ ձեզ մարտի 8-ի առիթով ու մաղթում կանացի երջանկություն՝ իր բոլոր հաճելի պտուղներով (Համացանց, 08.03.2014)։

ՖԵՅՍԸՆԿԵՐ, գ. **Համակարգչային face look ծրագրից օգտվող անձ**: Ես անցա օֆշորա և այլ ցավերից տապակվող, բիոզուգարաններից բան չհասկացող ու անվերջ շատախոսող իմ **ֆեյսընկերների** մոտով (ԳԹ, 22.11.2013)։

ՖԵՅՔԵՐ, ... **Ֆեյքերին** թողեցի չթարմացրած հաշիվս .... (ԳԹ,22.11.2013)։

ՖԻԼԵՄԱՏՈԼՈԳԻԱ, գ. Այն գիտությունը, որը զբաղվում է համբույրի ֆենոմենի ուսումնասիրությամբ, կոչվում է ֆիլեմատոլոգիա /Համացանց, 29.11.2013 /։

ՖԻԼՄԵՐԳ

ՖԻՍԿԱԼ, ած. Գրանտային միջոցների նկատմամբ վերահսկողությունը չպետք է ֆիսկալ բնույթի լինի /Հրապ., 23.10.2013 /։

ՖԻՏՈՍԱՆԻՏԱՐԻԱ, Միասնական կանոններ պետք է ներդրվեն նաև **ֆիտոսանիտարիայի** բնագավառում .... (ՀՀ,05.03.2014)։

ՖԼԵՇՄՈԲ, Ֆեյսբուքում ինչ–որ մեկը նախաձեռնել է **ֆլեշմոբ,** ըստ որի օգտատերը ընդունում է մեկ այլ իրեն «ընկեր» օգտատերից հրավերը և գրում իր կարդացած և իր վրա մեծ տպավորություն թողած 10 գրքերի ցանկը (Ազգ,19.09.2014)։

ՖՈՆԴԱՊԱՀ, գ. **Ֆոնդերը պահող, պահպանող**: .... **Ֆոնդապահն** էլ ավելի խիստ հսկողություն է սահմանում իրեն վստահված հնագույն արժեքների վրա (ՀՀ, 29.01.2014)։

ՖՈՆԴԱՍԵՆՅԱԿ, գ. **Ֆոնդերի համար սենյակ**: Նոր նախագծով կկառուցվի **ֆոնդասենյակ,** գրապահոց, վարչական մաս.... (ՀՀ, 30.01.2014)։

ՖՈՏՈԱՄՐԱԳՐՈՒՄ,գ. Ոստիկանական ամենօրյա լրահոսում քանի՞ դեպք է արձանագրվում՝ Գագիկ Շամշյանի հարեհաս **ֆոտոամրագրումով** (ԳԹ, 12.12.2014)։

ՖՈՏՈԱՐԽԻՎ, գ. Մշկվանք, ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտի **ֆոտոարխիվ** (Հ.Պետրոսյան, էջ 364)։

ՖՈՏՈԳՐԱՖԻԱԿԱՆ, Չեմ սիրում այդ ֆոտոգրաֆիական նկարագրությունները /TV ալիք,13.01.2014 /:

ՖՈՏՈԳՐՈՀ, գ. Ինտերնետի գոյությունն առաջին հերթին ազդեց վիզուալ դաշտի վրա: Ահռելի քանակի պատկերներ լցվեցին մեր կյանք՝ խճճելով այն: Այս **ֆոտոգրոհն** ինչպես ազդեց մեդիադաշտի վրա (168 ժ., 20.11.2014):

ՖՈՏՈԴՊՐՈՑ, գ. Մեր մեդիադաշտի խնդիրներից մեկը, ըստ Գերման Ավագյանի, լրագրողի և հատկապես ֆոտոլրագրողի մասնագիտության արժեզրկումն է: Նաև դա փոխելու նպատակով էլ նա ցանկանում է Երևանում **ֆոտոդպրոց** բացել (168 ժ., 20.11.2014):

ՖՈՏՈԼՈՒՐ, գ.

ՖՈՏՈԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ, գ. Սիրիայում 1930թ. ծնված Հարի Գունդակջյանը փոքր տարիքում տեղափոխվել է Լիբանան, որտեղ էլ դպրոցն ավարտելուց տարիներ հետո սկսել է զբաղվել լուսանկարչությամբ և **ֆոտոլրագրությամբ** (168 ժ., 29.04.2014):

ՖՈՏՈԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ, գ. **Լուսանկարչական ծառայություն**:

ՖՈՏՈՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ, գ.**Լուսանկարներով հաշվետվություն**: Նկարահանումների հրապարակներից նրան **ֆոտոհաշվետվություններ** է ուղարկում նրանցից հեռու անցկացրած ժամանակի մասին (TV մոլ, 09.02.2014):

ՖՈՏՈՀՐԱՑԱՆ, գ. Հեղինակի **ֆոտոհրացանի**՝ նկարչական գործիքի նկարահանումներն արվեստի գործեր են՝իրենց գեղապատկերներով ու ինքնատիպ բովանդակությամբ (Ազգ, 21.03. 2014):

ՖՈՏՈՆԱԽԱԳԻԾ, գ. **Լուսանկարչական նախագիծ**: Գերման Ավագյանն աշխատել է և որպես ֆոտոլրագրող (նաև միջազգային համբավ ունեցող CNN -ի համար), և սեփական հեղինակային վավերագրական **ֆոտոնախագծեր** է ստեղծել (168 ժ., 20.11.2014):

ՖՈՏՈՆԱՅԻՆ, ած. **Լուսաքվանտային:** Այս ջրապտույտներն ունեն, այսպես կոչված, **ֆոտոնային** ջրագիծ, որը հատուկ է սև անցքերին (TV մոլ, 14.10.2013):

ՖՈՏՈՇԱՐՔ, գ. **Լուսանկարների շարք**: Հորդանանի Հուսեյն թագավորի հարսանեկան **ֆոտոշարքի** (1978թ.), Յասեր Արաֆաթի՝ երեխաներով շրջապատված լուսանկարի և Հռոմի պապ Պողոս 6-րդի՝ Երուսաղեմ, Պակիստան և Թուրքիա կատարած առաջին այցի ֆոտոռեպորտաժի համար Հարի Գունդակջյանը «Iife» և «Time» ամսագրերի կողմից ստացել է հեղինակավոր մրցանակներ (168 ժ., 29,04.2014):

ՖՈՐՍՄԱԺՈՐԱՅԻՆ, ած.Սահմանված են նաև պարտավորություններին, **ֆորսմաժորային** իրավիճակներին վերաբերող դրույթները (ՀՀ, 05.06.2014)։

ԳԱԼՍՏՅԱՆ ԱՆԱՀԻՏ ՍԵՐԳԵՅԻ
ՀՈՎՍԵՓՅԱՆ ԳԱՅԱՆԵ ԿԱՌԼԵՆԻ
ՍԱՀԱԿՅԱՆ ԱԼԱ ԳՐԻԳՈՐԻ
ՍԱՀԻՆՅԱՆ ԼՈՒՍԻԿ ԵՐՎԱՆԴԻ

ՆՈՐ ԲԱՌԵՐ

Ա պրակ

Համակարգչային էջադրումը՝ Վ. Պապյանի